Էջմիածին



ՌՆԸ

ԺԵ ՏԱՐԻ

Հոկտեմբեր-Նոյեմբեր

ԷՋՄԻԱԾԻՆ

697

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ժ-ԺԱ

1958



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Գաճճ ու Գաճակալը	3
Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի քառասունմեկերորդ տարեդարձի առթիվ Վեհափառ Հայրապետի եղած շնորհավորական հեռագրերը և ստացված պատասխանները . .	6
Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի ծննդյան հիսնամյակի և գաճակալության երրորդ տարեդարձի առթիվ ստացված շնորհավորական հեռագրեր	8
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ եռամյա գործունեության զեկույցը	11
ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԹԱԲՅԱՆ— Վեհափառ Հայրապետի ծննդյան հիսնամյակին և գաճակալության երրորդ տարեդարձին նվիրված հոբելյանական հանդիսությունները Մայր Աթոռում . . .	31
Եպիսկոպոսական հանդիսավոր սուրբ պատարագ Մայր Տաճարում և շնորհավորություններ Մաղկյա դահլիճում	39
Հոբելյանական հաշվետվություն	51
Հայրապետական հանդիսավոր պատարագ և քարոզ Մայր Տաճարում և Լուսավորչի շքանշանի տվչություն Մաղկյա դահլիճում . .	81
ԽՈՐԵՆ ՄԵՑԽԱՆԱՋՅԱՆ, ՆՈՒՊԱՐ ՊԱԼՅԱՆ — Զոհ Վեհափառ Հայրապետին . .	90
Պաշտոնական ընդունելություն ի պատիվ հոբելյար Վեհափառ Հայրապետին՝ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի կողմից	92
Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի այցելությունը Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ պարոն Անտոն Քոչինյանին	93
Եպիսկոպոսական ժողով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում . . .	94
Պաշտոնական շնորհավորություններ Սփյուռքից Վեհափառ Հայրապետի հոբելյանի առթիվ	97
Մասնավոր վարդապետական գավազանի իշխանության տվչություն .	99
Գերաշնորհ Տ. Զգոն եպիսկոպոս Տեր-Հակոբյան	100
Գերաշնորհ Տ. Գնել եպիսկոպոս Ճերեճյան	102

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1958 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԱՑ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ՀՈՒԲԵԼԵԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԸ

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԻ
ԹՈՒ ԳՍՍՌԵՆՏՐ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԳԱՀՆ ՕՐ ԳԱՀԱԿԱԼԸ

Մայր Աթոռում հոկտեմբեր ամսի 11—24 օրերին, համազգային շքով ու խանդավառ մթնոլորտում, հանդիսավորությամբ տոնվեց Նորին Ս. Սծություն Ամենայն Հայոց Կաթողիկոս Հայրապետի ծննդյան հիսնամյակը և գահակալության երրորդ տարեդարձը:

Վեհափառ Հայրապետի ծննդյան հիսնամյա և գահակալության երրորդ տարեդարձի բարեպատեհ առիթով կատարված արտաքուստ տոնակատարությունների մեջ Ազգն ու ժողովուրդը, Եկեղեցին և Հայրենիքը միացել էին իրենց սերն ու հարգանքը դեպի Ս. Էջմիածինը և նրա արժանավոր Գահակալը:

Այդ ուրախ առիթով, հոբելյանական հանդիսություններին մասնակցելու համար, կրոնական և հայրենասիրական զգացմունքներով Մայր Աթոռ Ս. Էջմիածին էին ժամանել երկրագնդի բոլոր կողմերից հոգևորական և աշխարհական բազմաթիվ պատգամավորներ, ուխտավորներ և հյուրեր, միաժամանակ համբուրելու էությանորոշի արժանավոր հաջորդի Ս. Աջը, Հայրենի սրբազան Հողը և ողջագուրվելու Մայր Հայրենիքում ապրող իրենց հարազատների հետ:

Մի անգամ ևս մեր նախնյաց ու ներկա Սրբություն Սրբոց Ս. Էջմիածինը, հայ քրիստոնյա մարդու լույսի և հավատի այդ անխորտակելի ամրոցը, իր սրբություններով, մեր ներկա պանծալի Մայր Հայրենիքը իր պատմական հուշարձաններով և այսօրվա պայծառ առօրյայով, որպես մագնիսական ուժ, հեռուներից քերել և Հայրենի հողի վրա և Ս. Էջմիածնի շուրջ համախմբել էին ողջ հայության տարբեր խավերի ներկայացուցիչներին:

Մայր Աթոռ ժամանած Կիլիկյան օրինապահ միաբանության պատվիրակությանը գլխավորում էր անձամբ Կիլիկյան Աթոռի Տեղապահ ամենապատիվ խոր արքեպիսկոպոս Աշպահանյանը: Պատվիրակության կազմի մեջ էին Դամասկոսի առաջնորդ գերաշնորհ Տ. Նավարշ եպիսկոպոս Գույումճյանը, Կիլիկյան Աթոռի միաբաններ հոգեշնորհ Տ. Գնել ծայրագույն վարդապետ Ճերեճյանը, Տ. Գյուտ և Տ. Գևորգ աբեղաները, Դամասկոսի Գավառական ժողովի առաջնորդ պր. Ժիրայր Գոյանյանը:

Հոբելյանական հանդիսություններին անձամբ մասնակցում էին Եգիպտոսի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը և թեմական խորհրդի ատենապետ պր. Հովհաննես Քեչյանը, Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը և Կենտրոնական վարչության ատենապետ պր. Երվանդ Աղաճանյանը, Կալիֆորնիայի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոս Վարժապետյանը, Ֆրանսիայի առաջնորդ և Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյանը և Կենտրոնական վարչության ատենապետ մեծր Սեդրակ Քարյանը, Հրեական Ամերիկայի և Մայրագույն Արևելքի Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը, Բաղդադի առաջնորդ հոգեշնորհ Տ. Զգոն ծայրագույն վարդապետ Տեր-Հակոբյանը, Հունաստանի առաջնորդ հոգեշնորհ Տ. Խսաճակ վարդապետ Ղազարյանը, Երուսաղեմի Պատրիարքության Իսրայելի ներկայացուցիչ հոգեշնորհ Տ. Բարգեն վարդապետ Ապատյանը, Հաբեշստանի հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Զավեն աբեղա Արզումանյանը, Ռումինիայի

հայոց թեմից՝ արժանապատիվ Տ. Իգնատիոս ավագ քահանա Քիլիմյանը և թեմական ժողովի ներկայացուցիչ պր. Հովհաննես Գալֆամյանը և պր. Կարամ Հակոբը, Հարավային Ամերիկայից՝ Սան-Պավլոյից արժանապատիվ Տ. Եղնիկ ավագ քահանա Վարդանյանը:

Ներքին թեմերից հանդիսությանց մասնակցում էին Վրաստանի թեմական գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարյանը, Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը, Բաքվի թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը, Հյուսիսային Կովկասի և Նոր-Նախիջևանի առաջնորդ հոգեշնորհ Տ. Գարեգին ծայրագույն վարդապետ Տեր-Հակոբյանը, Մոսկվայի հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը, իրենց թեմական խորհուրդների հոգևորական և աշխարհական ներկայացուցիչներով:

Հոբելյանական հանդիսություններին մասնակցող հյուրերի թվումն էին Լոնդոնից տեր և տիկին Նուպար և Մարի Կյուլպենկյանները, տեր և տիկին Սարգիս և Աստղիկ Քյուրքճյանները, Միլանոյից Երվանդ Հյուսիսյանը, դոկտ. Երվանդ Արգումանյանը և նկարիչ Գրիգոր Շիլբյանը, Ֆրանսիայից հարտարապետ Եղվարդ Ուրուճյանը, մտավորականներ Արշակ Ալպոյաճյանը, Հակոբ Տեր-Հակոբյանը, մեր Հրաչ Սեդրակյանը, Արսեն Կիտուրը, Վահե-Վաճյանը, տիկին Սիրան-Սեզա Քյուփելյանը, Անդրանիկ Ծառուկյանը, Գրիգոր Կյոնճյանը, Հովհաննես Ցազրճյանը և ուրիշներ:

Վրացական Ուրթոդոքս եկեղեցու պատվիրակությանը գլխավորում էին գերաշնորհ Տ. Զինովի և գերաշնորհ Տ. Լիոնիդ եպիսկոպոսները:

Անդրկովկասի մուսուլմանների Կրոնական վարչության նախագահ Շեյխ-ուլ-Իսլամի ներկայացուցիչն էր Շեյխ Ռզայևը:

Հոբելյանական այդ օրերը հանդիսացան համազգային ուրախության և ցնծության օրեր՝ Հայ եկեղեցու և հայ հավատացյալ ժողովրդի համար:

Հայ եկեղեցին և հայ ժողովուրդը ամեն տեղ, Գանգեսի ափին թե Նեղոսի հովտում, հեռավոր Ամերիկաներում թե Ծայրագույն Արևելքում, հյուսիսի ցուրտ երկնքի տակ թե հարավի շերմ արևի ներքո, որդիական երախտագիտությամբ նշեցին Վեհափառ Հայրապետի ծննդյան հինգամյակը և գահակալության երրորդ տարեդարձը:

Այդ կրկնակի տոնախմբությունը մի անգամ ևս վերածվեց դեպի Ս. Էջմիածինը հայ հավատացյալ ժողովրդի ունեցած սիրո, երախտագիտության, հարգանքի մի վառ ապացույցի:

Մեր ժողովուրդը իր հոգու բովանդակ ջերմությամբ սիրում է Ս. Էջմիածինը: Ս. Էջմիածինը անուն է, խորհուրդ է, պատգամ է, ոգեկանություն է, որը մարմնավորվում է, տեսանելի և շոշափելի է դառնում Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր անձնավորության մեջ, որով Ամենայն Հայոց Հայրապետը խորհրդանշանն է հանդիսանում Հայ եկեղեցու հավերժության, անսասանության, մեր ազգային-եկեղեցական միասնականության:

Առաքել Դավրիժեցի հայրենասեր պատմիչը կարողացել է գեղեցկորեն խտացնել հայ ժողովրդի համար Ս. Էջմիածնի արժեքն ու պատմական նշանակությունը հետևյալ սրտառուչ տողերի մեջ. «Ի վերայ Աչոյն և Էջմիածնի ամենայն Ազգն Հայոց կապեալ կան»: Արդարև, հազարամյակներ այդպես է հավատացել և ապրել հայ ժողովուրդը:

Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության Աթոռն ու Աթոռակալը, Գահն ու Գահակալը հայ ժողովրդի զգացմունքների առաջ միաձուլվել ու կազմել են մի սրտառուչ ամբողջություն, մի անսպառ աղբյուր ազգային-եկեղեցական արժանապատվության, հայրենասիրության, ներշնչման և կորովի: Ս. Էջմիածինը աստվածային պարգև է դարերի պատմությամբ նվիրագործված և խորապես արմատ ձգած հայ ժողովրդի հոգում:

Ս. ԷՋՄԻԱԾԻՆԸ ՀԱՅ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԺՈՂՈՎՐԴԻ ԽՈՂՃՆ Է, ԶԳԱՅՈՒՆ ՍԻՐՏԸ, ՊԱՏԻՎՆ ՈՒ ՊԱՔՈՒԱՆՔԸ:

1955 թվականի սեպտեմբեր ամսին, «Կամոքն Աստուծոյ և ընտրութեամբ Ազգին», Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվեց Ռումինիայի և Բուլղարիայի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոսը:

Նորընտիր Վեհափառ Հայրապետի ընտրությունը բովանդակ հայ ժողովրդի կողմից ընդունվեց անվերապահ հարգանքով, սիրով և սրտառուչ միասնականությամբ: Նրա գահակալությունը հանդիսացավ մեր նորագույն ազգային-եկեղեցական պատմության բացառիկ և անմոռանալի տարեթվերից մեկը:

Երեք տարիներ են անցել Վեհափառ Հայրապետի գահակալությունից, տարիներ, որոնք արդյունավետ են եղել հոգևոր, մշակութային, վանական-վարչական, շինարարական-կազմակերպչական օգևորիչ և բեղմնավոր իրագործումներով:

Ավելի նուսադրիչ և պայծառ են հեռանկարները:

Այս բոլոր իրագործումներն ու ծրագրերը իրավունք են տալիս վստահությամբ և խորին համոզմունքով հայտարարելու, թե Նորին Ս.

Օծությունն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի բարեբաստիկ գահակալությամբ մի նոր ու խոստումնալից էջ է բացվել Հայաստանյայց Եկեղեցու հետագա կազմակերպման և հոգևոր վերազարթոնքի հանապարհի վրա:

Անցնող երեք տարիների գործունեությունը ցույց է տվել, որ այսօր, հանձին Վեհափառ Հայրապետի, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ունի իր գոնարերվող, իր ազնվագույն հայրապետներից մեկին, որն իր պայծառ մտքով ու սրբազան հավատով, իր սուրբ ձեռքերում է պահում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու գերագույն ղեկավարությունը և արիաբար ու Իր պարտքի խորունկ գիտակցությամբ Իր ուսերի վրա է կրում Ամենայն Հայոց Հայրապետության ծանր լուծը և այն կրում է խոր լավատեսությամբ, հավատով դեպի Իր ժողովուրդը, Եկեղեցին ու նրա պայծառ ապագան:

Այսօր բովանդակ հայությունը իր հայվածքը սևեռել է դեպի Ս. Էջմիածին ու մեր պանծալի Հայրենիքը՝ Սովետական Հայաստանը:

Մայր Հայրենիքում մեր պատվական, մեր հերոս, մեր տաղանդավոր ու աշխատասեր ժողովուրդը, իր խաղաղ աշխատանքով ու քրտինքով բուժում է անցյալ հազարամյակների իր վերքերն ու ցավերը, փյունիկի նման հարություն առած մոխիրներից, և քարերը վերածում՝ հացի, լույսի և կյանքի, և Արարատի դիմաց, Արարատյան դաշտի սրտի վրա կերտում է ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՍՈՒՐԲ ՕՋԱԽԸ, որպեսզի նա երբե՞ք, երբե՞ք չավերվի ու չքանդվի:

Իսկ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ, մեր վերածաղկող Հայրենիքի ծոցում, Վազգեն Ա Հայոց Հայրապետը, Լուսավորչի տեսիլքով, Սահակ-Մեսրոպյան շնչով, Վարդանանց և Ղևոնդյանց ոգով, մի անգամ ևս ԼՈՒՅՍ Է ԻՋԵՑՆՈՒՄ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱԶԱՐԱՄՅԱ ՔԱՐԵՐԻՆ ԵՎ ՇԻՆՈՒՄ, ՊԱՅԾԱՌԱՑՆՈՒՄ Է ՀԱՅ ՀԱՎԱՏԻ ԱՆԽՈՐՏԱԿԵԼԻ ՎԵՄ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆԸ:

Ահա թե ինչու ամեն մի փորձ, ամեն մի ձեռնարկ, որ նպատակ ունի բուլացնելու Ս. Էջմիածնի նվաստն ու հեղինակությունը, ջլատելու նրա բարոյական ուժն ու հոգևոր հեղինակությունը, ազգադավ գործունեություն է, որն ընդհանուր ոչինչ չունի այս օրերին մեր ժողովրդի գերագույն շահերի հետ:

Որով Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԴԵՄ, ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԱՄԵՆ ՄԻ ՀԱՐՎԱԾ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՍՐՏԻՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՐՎԱԾ Է:

Վեհափառ Հայրապետի ծննդյան հիսնամյակի և գահակալության բարեբաստիկ տարեդարձի առիթով ընծայված համազգային մեծարանքի, սիրո և հավատարմության արտահայտությունների մեջ կար նաև լռին, բայց միակամ դատապարտությունը բոլոր նրանց, որոնք շարունակում են համառել Ազգն ու Եկեղեցին պառակտող իրենց տխուր աշխատանքի մեջ:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի ծննդյան հիսնամյակի և գահակալության երրորդ տարեդարձի առիթով բովանդակ հայության սրտագին մաղթանքն այն է, որ Նրա Հայրապետական Գահը լինի անսասան ու հավերժական Մասիս սարի նման, Նրա կյանքի օրերը լինեն անհատնում ու քաղցր՝ Արարատյան դաշտի անուշահամ մրգերի նման, իսկ Նրա կյանքի արևը լինի պայծառ, լինի անմար՝ Արագածի կատարին շողացող Լուսավորչի անշեջ կանթեղի նման:

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ԳԱՌԱՍՈՒՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՂԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԵՐԸ ԵՎ ՍՏԱՑՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հանեցեք ընդունել Մեր սրտագին շնորհավորանքները և լավագույն բարեմաղթությունները Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության 41-րդ տարեդարձի առիթով անփամբ Ձեր և Կառավարության բոլոր անդամների առաջադիմության և գործոց հաջողության համար: Աղոթում ենք սովետական ժողովուրդների բարգավաճության և մեր Մեծ Հայրենիքի հետագա ծաղկման և ամբողջ աշխարհում խաղաղության հաղթանակի համար:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության 41-րդ տարեդարձի առիթով հանեցեք ընդունել Մեր սրտագին շնորհավորանքները և լավագույն բարեմաղթությունները անձամբ Ձեր և Կառավարության բոլոր անդամների հաջառաջիմության և գործոց հաջողության համար: Աղոթում ենք մեր Մեծ Հայրենիքի հետագա ծաղկման, սովետական ժողովուրդների բարգավաճության և ամբողջ աշխարհում խաղաղության ամրապնդման համար:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հանեցեք ընդունել Մեր անկեղծ շնորհավորանքները և ջերմագին բարեմաղթությունները Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության 41-րդ տարեդարձի առիթով: Ի սրտե մաղթում ենք սովետական ժողովուրդների բարեկեցություն ու առաջադիմություն և ամբողջ աշխարհին խաղաղություն:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության և անձամբ իմ անունից ճայտնում ենք ջերմագին շնորհակալություններ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 41-րդ տարեդարձի առթիվ եղած Ձեր սրտագին շնորհավորանքի և բարեմաղթությունների համար:

ԱՌՈՒՇԱՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Սովետական Հայաստանի կառավարության և իմ անունից ճայտնում ենք մեր ջերմագին շնորհակալությունը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 41-րդ տարեդարձի առթիվ եղած Ձեր անկեղծ շնորհավորանքների և բարեմաղթությունների համար:

ՔՈՉԻՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի և իմ անունից ջերմագին շնորհակալություն եմ ճայտնում Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 41-րդ տարեդարձի առթիվ եղած Ձեր շնորհավորանքների համար:

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՍՈՒՐՔՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ ՀԻՍՆԱՄՅԱԿԻ ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՐԻՈՒԴ ՏԱՐԵԳԱՐՁԻ ԱԹԹԻՎ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հայկական ՍՍՌ կառավարության և անձամբ իմ անունից լավագույն ցանկություններով շնորհավորում եմ Ձեր ծննդյան հիսնամյակը: Մենք բարձր ենք գնահատում Ձեր հայրենասիրական գործունեությունը և խաղաղության համար տարվող պայքարին Ձեր մատուցած ծառայությունները: Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն և նորանոր հաջողություններ Ձեր այդ գործունեության մեջ:

Ա. ՔՈՉԻՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

Սովետական Միության Մինիստրների Սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների խորհրդի և անձամբ իմ անունից ողջունում եմ Ձեզ Ձեր ծննդյան հիսնամյակի առթիվ և եղում լավագույն բարեմաղթություններ: Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն և հաջողություններ Հայ եկեղեցու կողմից խաղաղության ամրապնդման և ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդման գործում մղվող պայքարում:

ՊՈՒԶԻՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՄՈՍԿՎԱ

Ձերդ Սրբություն, սիրելյալ Հովվապետ և եղբայր Մեր ի Քրիստոս.

Հանձնեք ընդունել Մեր ամենասրտագին բարեկամական բարեմաղթությունները Ձեր ծննդյան հիսնամյակի առթիվ: Ցանկանում ենք բազում տարիներ, երջանիկ կյանք և բեղմնավոր գործունեություն՝ ի փառս Ս. Եկեղեցու:

Անկեղծ սիրով Ձեր եղբայր ի Քրիստոս՝

ԱԼԵՔՍԻ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ

ՄՈՍԿՎԱ

Անձամբ Մեր և Բուլղար եկեղեցու Սրբազան Սինոդի անունից եղբայրաբար և ի սրտե ողջունում ենք Ձերդ Սրբության ծննդյան հիսնամյակը և գահակալության երրորդ տարեդարձը: Աղոթում ենք առ Քրիստոս Աստված՝ բաշխելու Իր ողորմությունը Ձեր հաջառողջության և բարեհաջող գործունեության համար՝ ի պայծառություն Ձեր Ս. եկեղեցու:

ԿԻՐԻԼ
ՊԱՏՐԻԱՐՔ ԲՈՒԼՂԱՐԻՈ

ՍՈՖԻԱ

Վեհիդ օծման երրորդ տարեդարձի առիթով ընդունեցեք ամենուս ջերմագին շնորհավորանքն ու սրտագին մաղթանքները Ձեր կյանքի արևշատության և Ձեր բոլոր եկեղեցանվեր ձեռնարկներուն ու ծրագիրներուն հաջողության համար:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱԶԱՏՈՒՐՅԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈ

ՍՏԱՄԲՈՒԼ

Ձեր ծննդյան հիսնամյակի և գահակալության երրորդ տարեդարձի առթիվ խոնարհ շնորհավորություններ: Կաղոթենք Տիրոջ մեր եկեղեցվո խաղաղության, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության, Ձեր բոլոր գավակներուն հավատարմության համար:

Երկար կյա՜նք և աստվածային օգնությո՛ւն Ձերդ Սրբության:

Խորին հարգանքով՝
ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆ

ԲՐՅՈՒՍԵԼ

Ձերդ Սրբության ծննդյան հիսնամյակի առթիվ հաճելի պարտականություն ունենք սրտագին ողջունելու Ձեզ և աղոթագին մաղթելու աստվածային օրհնություն: Կամենում ենք Ձեզ արևշատություն, հաջառողջություն ու հոգեկան կարողություններ՝ Ձեր հովվապետական բեղմնավոր գործունեության ասպարեզում:

ՅԱՆ ԿԻԳՎԻՏ
ԷՍՏՈՆԱԿԱՆ ՍՍՌ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՏԱԼԼԻՆ

Ձեր ծննդյան հիսնամյակի և գահակալության երրորդ տարեդարձի առթիվ մեր ամենաջերմ մաղթանքները Ձեր առաքելության շարունակության համար:

Խորին հարգանքներով՝
ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԼԻՍԱԲՈՆ

Ձեր ծննդյան հիսնամյակի ուրախ առիթով, ջերմագին շնորհավորում եմ Ձեզ Սրբությանը:

Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն և երջանկություն:

Լավագույն բարեմաղթություններով՝

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄՈՍԿՎԱ

Վեհափառ Հայրապետի ծննդյան հիսնամյակի և գահակալության երրորդ տարեդարձի բարեբաստիկ առիթով ստացվել են հայրենավոր շնորհավորական հեռագրեր, գրություններ՝ անայլայլ հարգանքի և սիրո զգացմունքներով և հոբելյար Հայրապետի արևաշատ կյանքի ու բազմարդյուն գործունեության սրտագին մաղթանքներով՝ թեմական առաջնորդներից, ազգային-եկեղեցական իշխանություններից, արվեստի, գրականության ներկայացուցիչներից, հայրենակցական միություններից, երիտասարդական կազմակերպություններից, ազգային և օտար ծանոթ դեմքերից:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ի պաշտոնե լիազորված է ամենաջերմ շնորհակալություն հայտնել Վեհափառ Հայրապետի ծննդյան հիսնամյակի և գահակալության երրորդ տարեդարձի առիթով ստացված բոլոր շնորհավորական հեռագրերի և գրությունների համար:

ԱՄԵՆՆՍՅՆ ՀԵՏՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՊՍՄՈՍ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑԸ

(ԿԱՐԴԱՑՎԱԾ 1958 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ)

Գերաշնորհ սրբազա՛ն հայրեր, հոգեշնորհ վարդապետներ, հարգելի՛ պատգամավորներ և հյուրեր.

Տիրոջ ողորմությամբ, Ազգային-եկեղեցական ժողովի ընտրությամբ և Մայր Տաճարիս մեջ օծման սրբազան արարողությամբ, 1955 թվականի հոկտեմբերին կոչվեցաք կրելու ծանր բայց փառքի լուծը Ամենայն Հայոց Հայրապետության:

Զեզմե շատեր կհիշեն անշուշտ այն ջերմ ու խանդավառ մթնոլորտը, որ ստեղծված էր այստեղ այդ օրերուն, երբ տեղի կունենար ընտրությունը և օծումը նոր Կաթողիկոսին, օրհնությունը Սրբալույս Մեռոնի և եպիսկոպոսական շնորհաբաշխություններ:

Այդ օրերը սակայն արագ անցան, պատգամավորները մեկնեցան և Մենք մնացինք այստեղ, դեմ հանդիման աշխատանքի մը, որ վեր էր Մեր ուժերեն, դեմ հանդիման կացության, որոնք մեծ մասամբ անծանոթ էին Մեզ՝ իբրև արտասահմանեն եկած հոգևորականի, և վերջապես դեմ հանդիման բազում հարցերու, այլազան խնդիրներու, որոնք Մեր առաջ կդրվեին՝ հոգևոր, կրթական, վարչական, կազմակերպչական և տնտեսական, ինչպես նաև արտասահմանի մեր հոգևոր կեդրոններու հետ փոխհարաբերության տեսակետեն:

Միայն Աստված գիտե, թե ինչքան ծանր ճնշեցին Մեր գիտակցության վրա այդ բոլորը, և ինչքան տկար զգացինք Մենք զՄեզ Մեր գործունեության առաջին ամիսներուն:

Մայր Աթոռեն ներս և Մայր Աթոռի շուրջ, և ներքին թեմերու մեջ, ամեն ինչ պետք էր վերակազմակերպել և վերակառուցել թե՛ հոգևոր, թե՛ վարչական, թե՛ տնտեսական իմաստով:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը նոր ժամանակաշրջան մը սկսավ ապրիլ, ներքին և արտաքին նոր պայմաններու և նոր իրադրության ներքև: Այս նոր շրջանը կպահանջեր ղեկավարման նոր ոգի, գործելու նոր եղանակ և մանավանդ նոր մարդիկ:

Հեռու Մեզմե այն մտածումը, թե Մեր առջև դրված բոլոր հարցերը կարողացանք լուծել և հասնիլ այսօրվան Զեզ բոլորիդ հայտնի արդյունքներուն, Մեր անձնական կարողություններուն շնորհիվ:

Մենք իրապես կհավատանք, և երբեմն կարծեք նույնիսկ ֆիզիկապես կզգանք, որ Մեր սիրտն ու միտքը և Մեր աշխատանքը ղեկավարողը Մեր անձեն դուրս և վեր գտնվող անհերևույթ զորություն մըն է, որ կներշնչե Մեզ և բոլոր անոնք, որոնք այստեղ Մեր շուրջը կգործեն:

Մենք հստակ կերպով կզգանք, թե այդ զորությունը մեկ մասնիկն է այն ոգեղեն իմանալի փառաց լույսին, որ այստեղ շողաց Միածնի էջքով:

Մեր զորության երկրորդ աղբյուրը, նույնքան կենարար, մեր հայրենի ժողովուրդի հոգվույն մեջ միշտ կենդանի հավատքի սուրբ ավազանն է, որուն անհասանելի և անիմանալի ակունքներեն, մեր օրերուն, ա-

վելի և ավելի ջինջ ու վճիտ, առատ ջուրեր ալիք-ալիք կարձրանան ու կճորդին, կտարածվին մեր շուրջ, կճոսին մեր սրտերեն ներս, արգասավորելով հոգիները մեր բոլորին, հոգիները մեր ժողովուրդին բոլոր զավակներուն, մինչև հեռավոր ափերը աշխարհի:

Մայր Աթոռի վերակենդանությունը և վերաշինությունը պայմանավորող մեկ ուրիշ կարևոր ազդակ կճանդիսանա կրոնական կյանքի նկատմամբ մեր Հայրենի Պետության լայնախոհ և բարյացակամ վերաբերմունքը, որ կարտահայտվի իրավական և գործնական ձևերով, որով մեր եկեղեցական նյութը, հատկապես Մայր Աթոռը, հետզհետե, քայլ առ քայլ կվերաշինվի, կկազմակերպվի ու կծաղկի:

Սրտի մեծ գոհունակությամբ պետք է անկեղծորեն հայտարարենք, թե Պետական Իշխանությանց և Մայր Աթոռի փոխհարաբերությունները շատ ավելի բնականոն կերպով ընթացան և շատ ավելի արդյունավետ ելան հոգուտ եկեղեցվո, քան Մենք կակրեկայեինք Մեր ընտրության առաջին օրերուն:

Մեր Հայրենի կառավարությունը եղավ և է նշմարիտ բարեխնամ կառավարություն մը, միշտ ուշադիր, միշտ հարգալից և բարյացակամ Մեր անձին և Մեր եկեղեցաշեն գործին նկատմամբ:

Մեր բոլոր ձեռնարկներուն և իղձերուն իրականացման հանապարհին, զգացինք և հաստատեցինք Սովետական Միութենական Կառավարության և Սովետական Հայաստանի Պետական Իշխանության արդարադատ ոգին և իմաստուն քաղաքականությունը եկեղեցական գործերու վերաբերյալ:

Կխորհինք, թե այս սրբազնամար ժողովը, երախտագիտության զգացումով, իր աղոթքն ու սրտագին բարեմաղթությունները պիտի միացնե Մեր մաղթանքներուն՝ վասն բարգավաճության և վասն խաղաղության մեր Հայրենի երկրին:

Ա) ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեր գործունեության առաջին իսկ օրերուն, Մեր հայացքը ուղղեցինք նախ դեպի Մայր Աթոռիս միաբանությունը: Մեր շուրջը տեսանք հին սերունդի փոքրաթիվ, ծերունազարդ հոգևորականներ, որոնց առաջացած տարիքը թույլ չէր տար Մեզ ծանրաբեռնել զանոնք նոր աշխատանքներով:

Մեր շուրջ կային նաև երիտասարդ միաբաններ՝ 7 աբեղաներ Հոգևոր Ճեմարանեն շրջանավարտ, որոնք հավատարիմ իրենց ուխտին, մնացեր էին Ս. Աթոռին մեջ, սպասելով այն օրվան, երբ իրենց ևս պիտի վստահվեին պատասխանատու պաշտոններ:

Երիտասարդ միաբանները Մեզ մոտեցան երկչոտությամբ և նոր հույսերով ոգեշնչված:

Անոնց հոգիներեն ներս Մենք տեսանք կայծերը սուրբ իղձերու, և կոչումի մը գիտակցությունը: Զգուշությամբ և սիրով սկսանք աշխատանքը՝ անեցնելու համար լույսը իրենց մտքին, ջերմությունը իրենց սրտին և սրբության զգացումը իրենց կամքին, այն վստահությամբ, թե իրենց հոգիներու կայծերը շուտով պիտի վերածվին հուրի, գիրենք մղելով դեպի եկեղեցաշեն աշխատանք:

Կազմեցինք Ս. Էջմիածնի միաբանության առժամյա կանոնադրություն մը, հիմնված վանական կյանքի կանոններու վրա, պատշաճեցված մեր տեղական պայմաններուն, ու վերակազմակերպեցինք հերքին կյանքը՝ հաստատելով միաբանական կյանք, սեղանատուն, և ամեն մեկի համար պարտադիր աշխատանքի դրություն, պատասխանատվության զգացումի, կարգապահության և անպայմանավոր հնազանդության պայմաններու ներքև:

Երեք տարվան գործունեությենեն վերջ, Մենք ուրախությամբ կրնանք Ձեզ հայտնել, թե այս աշխատանքը իր արդյունքներով Մեզ կրավարարե, և վստահ ենք, թե մեր երիտասարդ միաբանները, հետզհետե առավել նվիրումով ու եռանդով պիտի շարունակեն իրենց վստահված գործը և լրիվ կերպով պիտի արդարացնեն մեր բոլոր հույսերը:

Այսօր Մայր Աթոռի միաբաններու ընդհանուր թիվն է 29:

Բ) ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

Վերջին Ազգային-եկեղեցական ժողովը, իր Դ նիստին մեջ, ընտրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը հետևյալ կազմով.

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐ

1) Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյան.
2) Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյան.

3) Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյան.

4) Տ. Եզնիկ եպիսկոպոս Ազնավուրյան:

ԱՇԽԱՐՀԱԿԱՆՆԵՐ

1) Պրոֆ.-դոկտ. Աբարատ Ղարիբյան.

2) Պրոֆ. Առաքել Առաքելյան.

3) Դոցենտ Արտաշես Տիրացյան.

4) Ուսուցիչ Արամ Աղաջանյան:

Գերագույն Հոգևոր խորհուրդի աշխարհական անդամներեն վերջին երեք նախկին Գևորգյան ճեմարանի աշակերտներեն են:

Գերագույն Հոգևոր խորհուրդի որպես պատվո անդամներ ընտրված էին նաև մեծատաղանդ բանաստեղծ, անմոռանալի Վարպետը՝ Ավետիք Իսահակյան և ծանոթ երկրաբան և ազգային գործիչ Ստեփան Կամսարականը: Վերջինը դժբախտաբար Մեր ընտրությենեն քանի մը օր հետո իր հոգին կավանդեր երկար հիվանդությենե մը վերջ, իսկ Վարպետը երկու տարիներ շարունակ կանոնավոր կերպով մասնակցելե հետո Գերագույն Հոգևոր խորհուրդի նիստերուն, իր աչքերը նավետ փակեց 1957 թվականի հոկտեմբեր 17-ին:

Գերագույն Հոգևոր խորհուրդը այս երեք տարիներու ընթացքին գումարած է 78 նիստեր, Կաթողիկոսի նախագահության տակ, լուծելով հերթական կերպով իր առաջ դրված բոլոր հարցերը, բյուր Մայր Աթոռի գործերու, ըլլա արտասահմանի բեմերու վերաբերյալ:

Գերագույն Հոգևոր խորհուրդը երեք տարիներու ժամանակաշրջանին, իր աշխատանքներով մեծապես օգտակար եղած է Մեզ՝ իբրև խորհրդատու և գործակից մարմին:

Այս հանդիսավոր առիթով, Մենք պարտ կզգանք Մեր շնորհակալության արտագին խոսքը ուղղելու Գերագույն Հոգևոր խորհուրդի Մեզ սիրելի բոլոր անդամներուն:

Գ) ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆ

Հոգևոր Ճեմարանը Մեր սրտին ամենամոտ և հայրապետական գուրգուրանքին առարկա հաստատությունն է:

Մենք Մեր գահակալության առաջին իսկ օրեն վառ հույսեր կապեցինք մեր Հոգևոր Ճեմարանին, և մեծ ակնկալություններ ունինք անկե, այսօր մանավանդ, երբ մեր նկեղեցին կանգնե իր վերագարթոնքի շրջաններեն մեկը:

Մեր հայրապետական անդրանիկ կոնդակին մեջ Ճեմարանի մասին գրած էինք, որ «Հայրական հոգածությամբ պիտի նվիրվինք Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի մակարդակի բարձրացման, որպեսզի ան առավելագույն չափով արդարացնե իր գոյությունը, և այսօրվան մեր համեստ և երկչոտ պատանիները, տարիներ հետո՝ մարմնով աճած ու հոգիով սնած, հավատքով և շնորհներով լի, նվիրյալ մշակներ դառնան Տիրոջ այգիին մեջ»:

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը իր ետին ունի դարերու պատմություն մը: Ս. Էջմիածնի կամարներուն տակ ի վաղուց անտի գտություն ունեցած է «աղբիւր գիտութեան Աստուծոյ», որ կնագեցներ ծառայեր Ավետարանի գիտության կարոտ հոգիներու:

Դարերու ընդմեջեն եկող այս հոգևոր դպրանոցը, ԺԹ դարու 70-ական թվականներուն, կոչվեցավ Գևորգյան Ճեմարան: Անիկա ամենափայլուն կրթարանը հանդիսացավ ամբողջ Հայաստան աշխարհին մեջ, և բազմակողմանիորեն պատրաստված սերունդներ տվավ նկեղեցիին, հայ գրականության, գիտության ու արվեստներուն:

Առաջին համաշխարհային պատերազմին և անոր հաջորդող տարիներուն ստեղծված պայմաններու պատճառով, Գևորգյան ճեմարանը իր դռները փակեց և 28 տարիներ հետո, 1945 թվականին, երանելահիշատակ Գևորգ Զ Կաթողիկոսի ջանքերով և Հայրենի կառավարության բարեհաճ թույլտվությամբ, նորեն բացվեցավ ան՝ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան անվան տակ:

Հոգևոր Ճեմարանի ուսանողներուն թիվը այս երեք տարիներու ընթացքին 45—55-ի միջև տատանվեցավ:

Հոգևոր Ճեմարանը իր ուսումնական ծրագրով գիշերօթիկ բարձրագույն ընծայարան մըն է, ուր ուսանողները կստանան ձրի կրթություն, սնունդ և հանդերձանք: Առաջին տարիներուն ունեինք միայն դասարանական 3 և լսարանական 1 բաժին: Այժմ լսարանական բաժինը ևս 3 դասարաններ ունի, արդարացնելով Հոգևոր Ճեմարանի բե՛ կոչումը և բե՛ անունը:

Մեր Ճեմարանի ծրագրին համաձայն աշակերտներ կընդունվին բե՛ մեր Հայրենիքեն և բե՛ արտասահմանեն: Ճեմարանի լրիվ դասընթացը 6-ամյա է, զոր հաջող կերպով ավարտողը, եթե իր վարքով ու բարքով օրինակելի նկատվի, կրնա ձեռնադրվիլ կուսակրոն կամ ամուսնացյալ քահանա, Մեր հարմար նկատած ժամանակին:

Ստորև կներկայացնենք 1958—1959 դպրոցական տարվան ուսուցչական կազմը՝ իրենց դասավանդած նյութերով միասին.

1) Կաթողիկոսը կդասավանդե հոգեբանություն, տրամաբանություն, փիլիսոփայություն և քարոզախոսություն:
2) Գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տ. Հովհաննիսյան՝ եկեղեցական տոմարագիտություն:
3) Գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյան (վերատեսուչ)՝ Ս. Գիրք, գրաբար և ծիսագիտություն:
4) Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անքաբյան (փոխ-տեսուչ)՝ Հայ եկեղեցվո պատմություն և գրականության պատմություն:
5) Արժանապատիվ Տ. Կոմիտաս քահանա Շիրինյան՝ եկեղեցական երաժշտություն:
6) Արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյան՝ հայոց լեզու և կրոնագիտություն:
7) Գր. Համո Հարությունյան՝ հայ ժողովրդի պատմություն:
8) Գր. Վարագ Առաքելյան՝ հայերեն գրաբար:
9) Գր. Արթուն Հատիտյան՝ աստվածաբանություն, հայ եկեղեցական մատենագրություն և մեկնություն Գործք Առաքելոցի:
10) Գր. Սարգիս Կոնսուլյան՝ Ս. Գրոց ներածություն և մեկնություն:
11) Գր. Գարգև Շահբազյան՝ Հայոց լեզու և գրականություն:
12) Տիկ. Մարիա Գրոխոլսկայա՝ ռուսաց լեզու:
13) Գր. Գեղամ Շահինյան՝ ֆրանսերեն և անգլիերեն:
14) Գր. Եղիշե Վարդերեսյան՝ պատմություն Ընդհանուր Եկեղեցվո, ֆրանսերեն և քրիստոնեական վարդապետություն:
15) Գր. Գրիգոր Գյուլյան՝ հայոց լեզու և հայոց պատմություն (ավանդական):
16) Գր. Մովսես Շարբաթյան՝ երաժշտություն (սոլֆեժ):
17) Գր. Գառնիկ Քեռյան՝ տոմարակալություն (հաշիվ):
18) Գր. Հարություն Սիմոնյան՝ մարմնակրթանք:

Ինչպես գիտեք, մեկ տարի է արդեն Մեր հրավերով Մայր Աթոռ ժամանեց Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանի նախկին տեսուչը՝ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյան և ի մեծ գոհունակություն Մեզ՝ ստանձնեց Հոգևոր Ճեմարանի վերատեսչությունը, իրեն օգնական ունենալով Մայր Աթոռի միաբան հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անքաբյանը՝ որպես փոխ-տեսուչ:

Մեր ուսանողների օրը կսկսի ժամը 6.30-ին: Ժամը 7—7.20 մարմնամարզով զբաղելե վերջ, ժամը 7.30-ին բոլորը կմասնակցին առավոտյան ժամերգության, գոհանալու կերպով: Ժամը 8.30-ին կնախաճաշեն, իսկ ժամը 9-ին կենչե դասի զանգակը: Օրական ունին 6 ժամ դաս: Դասերը կավարտին ժամը 2.30-ին: Ճաշեն հետո ժամը 3—5 ուսանողների հանգստյան ժամն է: Ժամը 5-ին հեմարանցիները կմասնակցին երեկոյան ժամերգության: Ժամը 5.45—7.30 տեղի կունենա սերտողություն, ապա ընթրիք՝ ժամը 7.30-ին: Իսկ ժամը 8.10-ին կշարունակվի սերտողությունը:

Հոգևոր Ճեմարանի վերատեսչության կարգադրությամբ ամեն հինգշաբթի կեսօրե վերջ ժամը 4—5 տեղի կունենա դասախոսական հավաքույթ, ուր բանախոսության կհրավիրվին մասնագետ դասախոսներ Երևանեն, գիտական և գրական նյութերու շուրջ: Իսկ շաբաթ երեկոները տղաքը իրենց ուժերով կկազմակերպեն գրական-գեղարվեստական հավաքույթներ: Հանախ տեղի կունենան նաև կինոնկարներու դիտումներ Ճեմարանի սեփական մեքենայով: Մեր ուսանողությունը երբեմն կկատարե զբոսապտույտներ դեպի պատմական և հնագիտական արժեք ներկայացնող բանգարաններ և հուշարձաններ: Տարին քանի մը անգամ հեմարանցիները խմբով կտարվին Երևան կամ էջմիածին՝ ներկա ըլլալու թատերական ներկայացումներու, համերգներու կամ օպերա:

Հոգևոր Ճեմարանը ունի նաև իր գրադարան-ընթերցարանը 12 000 գրքերով, որ բաց է ուսանողներուն առջև իր որոշ ժամերուն: Ուսանողները իրենց ազատ ժամերուն կզբաղին նաև մարզական խաղերով՝ վոլեյբոլ և պինգպոնգ:

Դ) «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳԻՐ

Մեր մտածումը եղած է և է Հայ եկեղեցվո վերականգնման և զորացման աշխատանքներուն մեջ կարևոր և պատասխանատու դեր մը հատկացնել ընդհանրապես հայ կրոնական մամուլին և ի մասնավորի Մայր Աթոռի պաշտոնաթերթին:

Ամսագրի խմբագրության առաջ Մենք խնդիր դրած ենք՝ հոգևոր սնունդ տալ հայ ժողովուրդին, պատկերել Մայր Աթոռի կյանքը իր բոլոր երեսներով, լայն կերպով արձագանգել Սփյուռքի և ներքին թեմերու մեր ազգային-եկեղեցական կյանքին և հատուկ

տեղ տալ նաև պատմա-բանասիրական ուսումնասիրությանց, որոնք որոշ աղերս ունին մեր Ս. եկեղեցվո անցյալ և ներկա կյանքին հետ:

Մայր Աթոռի պաշտոնաթերթը, պր. Արքուն Հատիտյանի խմբագրությամբ, աշխատած է ընթանալ Մեր գծած ճանապարհով, և կխորհինք, թե արդյունքները ավելի քան գոհացուցիչ են: Մեր ամսագրի հիմնական թերությունը, որ թերությունն է նաև մեր ամբողջ կրոնական մամուլին, աստվածաբանական, կանոնագիտական, եկեղեցական պատմության, եկեղեցական մատենագրության ու արվեստներուն նվիրված լուրջ հոդվածներու և ուսումնասիրություններու նվազությունն է: Մեր հղձն է, որ Մայր Աթոռի պաշտոնաթերթը հետզհետե դառնա նաև հայ աստվածաբանական մտքի զարգացման հանդես մը: Այս հարցը Մենք ամենայն կարևորությամբ կհանձնենք սրբազնազարդ ժողովիդ ուշադրության:

Գոհունակությամբ այստեղ կարող ենք հայտարարել, թե Մեր գանակալության վերջին երկու տարիներու ընթացքին ավելցավ ամսագրի տպաքանակը:

Երբ 1955 թվականին ամսագրի տպաքանակը եղած էր 2000 օրինակ, 1958 թվականին այն բարձրացավ 3500-ի:

Մենք պիտի փափագեինք ժողովիդ ուշադրությունը հրավիրել Նիյուորքի մեջ ամսագրի բաժանորդագրության հարցի վրա, զայն ա՛լ ավելի կանոնավոր և արդյունավետ դարձնելու համար:

Ե) ՏՆՏԵՍԱԿԱՆ

Ուրախությամբ պետք է հաստատենք, թե վերջին երեք տարիներուն ընթացքին Մայր Աթոռի և ներքին թեմերու տնտեսական կյանքի պատկերը ավելի քան հուսադրիչ է, և գերազանցված են Մեր նախատեսությունները՝ նորանոր հեռանկարներ բանալով մեր առաջ:

Թույլ տվեք Ձեզ ներկայացնել Մայր Աթոռի տնտեսական կյանքի պատկերը հետևյալով.

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԵՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԵՆ, ըստ տարիներու, եղած են այսպես.

1955	թվականին՝	1 314 400	ռուբլի.
1956	»	1 772 000	»
1957	»	2 228 000	»
1958	»	2 540 000	»

Գոհունակությամբ կհայտնենք Ձեզ, որ սույն տարվան նախատեսությունները պիտի գերազանցվին 20—25 տոկոսով: Այսինքն այս տարվան մեր ներքին եկամուտները պիտի բարձրանան մոտավորապես 3 000 000 ռուբլիի:

Կխորհինք, թե այս թվերը ինքնին կխոսին ճստակ կերպով Մայր Աթոռին և ներքին թեմերու ֆինանսական գործունեության մխիթարական վիճակի մասին:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 1958 թվականի եկամուտներու և ծախսերու նախահաշիվը եղած է 3 281 100 ռուբլի, որուն դեմ, ինչպես տեսանք, նախատեսված է ներքին եկամուտներէ 2 540 000 ռուբլի, տարբերությունը կներկայացնէ Հոգևոր Ճեմարանի ծախսերը, որ կհոգացվին արտասահմանի նվիրատվություններով:

Մայր Աթոռի 1958 թվականի եկամուտներու և ծախսերու նախահաշիվը հրատարակված է «Էջմիածին» ամսագրի ապրիլ ամսվան համարին մեջ:

Մայր Աթոռը այսօր գրեթե ինքնաբավ դարձած է և յայն հնարավորություններ ունի արտասահմանյան նվիրատվությունները տրամադրելու շինարարական հատուկ նպատակներու և Մայր Աթոռի Հոգևոր Ճեմարանին:

Վերջին երեք տարիներուն ընթացքին արտասահմանի թեմերեն և այլ նվիրատվություններեն ստացված գումարները եղած են հետևյալները.

1955	թվականին՝	850 000	ռուբլի.
1956	»	2 060 000	»
1957	»	1 896 000	»
1958	»	2 987 000	»

Այսօր Մայր Աթոռի վարչական, տնտեսական և գրասենյակային աշխատանքներու անձնակազմը կբաղկանա 76 աշխարհական աշխատակիցներե:

Զ) ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

1958 թվականին Ազգային-եկեղեցական ժողովը, Գերագույն Հոգևոր խորհուրդի կողքին, ընտրեց նաև 3 հոգիներե բաղկացած Վերստուգիչ հանձնաժողով մը, հանձինս հոգեշնորհ Տ. Մաշտոց աբեղա Թաչիրյանի, պր. Եփրեմ Ալեքսանյանի և պր. Գրիգոր Բեքմեզյանի, անոնց վրա պարտականություն դնելով պարբերաբար քննել Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական գործունեությունը և հաշվապահական գործերը, ապա զեկուցելու համար արդյունքները Ամենայն Հայոց Կաթողիկոսին և Գերագույն Հոգևոր խորհուրդին:

Անկեղծ գոհունակությամբ կհայտնենք, որ Մայր Աթոռի Վերստուգիչ հանձնաժողովը իր պարտքը կատարած է ամենայն բարեխղճությամբ և ձեռնհասությամբ, մեծապես սատարելով մեր տնտեսա-ֆինանսական կյանքի կարգավորման և կանոնավորության:

Վերստուգիչ հանձնաժողովը այս տարի ձեռնարկեց և գլուխ բերավ մեծ աշխատանք մը ևս, այն է՝ ստուգումը և ցուցակագրումը և ճառուկ մատյաններու մեջ արձանագրումը Մայր Աթոռի ամբողջ գույքի:

Ամփսներ տևող այս աշխատանքը արժանի է մեր գնահատանքին:

Է) ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՕԺԱՆԴԱԿ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գեղարդի վանքին մեջ Մայր Աթոռը ունի 2 տնտեսություն.

1) ՄԵՂՎԱԲՈՒԾԱՐԱՆ, 160 փեթակներով, նվիրատվություն լոնդոնաբնակ մեծանուն տեր և տիկին Սարգիս և Աստղիկ Քյուրճյաններու: Մեղվաբուծարանը Մայր Աթոռին կհայթայթե տարեկան շուրջ 1 500 կիլոգրամ մեղր ամենարնտիր տեսակներ:

2) ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՄԸ, բաղկացած այսօր 150 գլուխ անասուններե, որ կապահովե Մայր Աթոռի սեղանատան տարեկան պահիրը և մասամբ նաև միսը:

Անասնապահական այս տնտեսութենեն տարեկան կստացվի նաև մոտավորապես 100 կիլոգրամ բուրդ:

Ը) ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ինչպես հայտնի է Ձեզ, Մեր ընտրության հաջորդ օրերուն իսկ հապճեպ կերպով պատրաստեցինք և Ազգային եկեղեցական ժողովի վերջին նիստին ներկայացուցինք շինարարական աշխատանքներու ծրագիր մը իր բնդհանուր գծերով և Մեր անդրանիկ կոնդակով Մեր սրբազան պարտականություններեն մեկը նկատեցինք վերանորոգել՝ «մեր հայրենի սրբավայրերը՝ վանքեր և եկեղեցիներ, ինչպիսին են Ս. Հռիփսիմեն, Ս. Գայանեն, Խոր Վիրապը, Օշականը, Գեղարդը և ուրիշներ, որոնք մեր հոգևոր կյանքի սյուները կհանդիսանան ու հոչակված տաճարները աղոթքի և ոփտի, և գմայլելի հուշարձանները հայ հարտարապետության փառքի» :

Այսօր, 3 տարի վերջ, հոգեկան բավարարության զգացումով մը Ձեր և Մեր Ազգի առաջ կներկայացնենք ցուցակը Մեր օրով ցարդ կատարված շինարարական աշխատանքներուն.

ա) Ս. Էջմիածնի հողամասի վրա.

1) Մայր Տաճարի հատակի մարմարապատում.
2) Մայր Տաճարի դասի մարմարյա բազրիքներու կառուցում.
3) Մայր Տաճարի շրջափակի սալաճատակում տուֆ քարով.
4) Սինոդի շենքի բակի ձեավորում բազալտե աստիճաններով.
5) Մայր Տաճարի շրջափակի գլխավոր ճանապարհներու ասֆալտապատում.
6) Ս. Էջմիածնի հողամասի շրամատակարարման և կոյուղիի անցկացման աշխատանքներու 50 տոկոսի կատարումը.
7) Ս. Էջմիածնի արևմտյան, արևելյան և հյուսիսային սահմաններու վրա սրբատաշ տուֆ քարե պարսպի կառուցում 850 մետր երկարությամբ, 5—6 մետր բարձրությամբ, որուն մեջ առնված է նաև Վեհարանի նոր շենքը.
8) Երեմիայի շենքի մասնակի վերանորոգում, քարե աստիճաններ մուտքերու առաջ և մայրերու ասֆալտապատում.
9) Տպարանի շենքի առաջին հարկի վերանորոգում.
10) Այլևայլ մաներ վերանորոգումներ Վեհարանի, Հոգևոր Ճեմարանի և ուրիշ շենքերու վրա.

Կատարված այս բոլոր աշխատանքներուն համար ծախսված է շուրջ 3 500 000 ռուբլի:

բ) Շինարարական կատարված աշխատանքներ Ս. Էջմիածնի հողամասի սահմաններեն դուրս.

1) Ս. Հռիփսիմեի տաճարի ներքին վերանորոգումը.
2) Ս. Հռիփսիմեի վանքի շրջափակի սալապատումը, նոր քարե աստիճաններու կառուցումը և վանական շենքի վերանորոգումը.
3) Թլենի Ս. Աստվածածին եկեղեցվո վերանորոգումը.
4) Թիթեղապատում Օշականի եկեղեցիի և մասնակի ներքին վերանորոգում.
5) Մասնակի վերանորոգումներ Երևանի Ս. Հովհաննես, Ս. Սարգիս և Ս. Զորավոր եկեղեցիներուն վրա.
6) Փոքր վերանորոգումներ Գեղարդի վանքին մեջ.

7) Թիրեղապատում և փոքր նորոգում Դալարագյազի Ս. Խաչ վանքին մեջ.
8) Թիրեղապատում Լենինականի, Ստեփանավանի, Ռոստովի, Կրասնոդարի եկեղեցիներու տանիքներուն:

Այս աշխատանքներուն ընդհանուր արժեքը կհասնի մոտ մեկ միլիոն ռուբլիի:

Խորին երախտագիտությամբ այս առիթով անգամ մը ևս կհիշենք ստորագրուն նվերը Լոնդոնի մեր հայ հավատացյալներուն, որոնց լումաներով վերանորոգվեցավ Թշնիի պատ-

Այժմ կուզենք քանի մը խոսքով այստեղ կանգ առնել նաև մեր շինարարական ապագա աշխատանքներու ծրագրին վրա:

ա) Մայր Տաճարի վրա ծրագրած ենք կատարել հետևյալ աշխատանքները.

1) Մարմարապատում բեմի և ավանդատան և կառուցում մարմարե Ավագ Սեղանի: Ավագ Սեղանի շինության մարմարը ստացած ենք արդեն Իտալիո Մոնտե-Կազինիի հանքերեն՝ Ռոզ-դե-Պորտոգալիո տեսակեն: Ավագ Սեղանը պի-

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԶՆԿՈՒՅՑՈՒՄ Է

մակաե Ս. Աստվածածին եկեղեցին, իսկ միլանաբնակ ազգայիններ տիար Երվանդ Հյուսիսյանի և Օննիկ Մանուկյանի նվիրատվությամբ կվերանորոգվի, կպայծառանա մեր հարտարապետության հրաշալիքներեն Ս. Հռիփսիմեն, իսկ Ղազարոսյան եղբայրներու նվերով ճիմնովին պիտի վերանորոգվի Օշականի Ս. Մեսրոպի եկեղեցին՝ առաջիկա տարի: Եվ ինչպես պիտի տեսնենք միշ հետո, առաջիկա տարվան ծրագրին մեջ նախատեսած ենք նորոգությունը Ս. Շողակարի վանքին՝ նվիրատվությամբ հալեպաբնակ տեր և տիկին Սուրեն և Շաֆե Գալենտերյաններուն:

տի կառուցվի հայոնի արվեստագետ-հարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի նախագծով.

2) Վերակառուցում Իշման Սեղանի նոր մարմարով, քանդակազարդ, շրջապատված մարմարյա բազրիքներով.
3) Վերակառուցում Մայր Տաճարի հարավային փլած գմբեթի.
4) Վերակառուցում Մայր Տաճարի ամբողջ տանիքի, նոր տուֆ քարով.
5) Նոր մետաղյա լուսամուտներ.
6) Քանդակազարդ մետաղյա նոր չահեր Մայր Տաճարի համար.

ՀԱՅԿ ԳԱՆՁԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

7) Ներքին նկարազարդում Մայր Տաճարի՝ Հայ եկեղեցվո հատուկ արքապատկերներով, հայկական ոճով.
8) Վերանորոգումներ հիմքերու վրա և արտաքին պատերուն մեջ.
9) Էլեկտրական ամբողջական նոր սարք.
10) Կեդրոնական ջեռուցում:

բ) Ս. Էջմիածնի հողամասի վրա.

1) Պարսպապատում հարավային սահմանի, մեջն առնելով նաև Ղազարապատը իր բոլոր շենքերով, շուրջ 150 մետր երկարությամբ.
2) Կառուցում նոր շքամուտքի և աշտարակի՝ մեծ ժամացույցով, հյուսիսային կողմը.
3) Վերակառուցում տպարանի շենքի երկրորդ հարկի.
4) Կառուցում երկրորդ հարկի մը Հոգևոր Ճեմարանի շենքի երկու թևերու վրա.
5) Հիմնական վերանորոգում Երեմիայի շենքի.
6) Ամբողջացում ջրամատակարարման խողովակներու և կոյուղիի գետեղման աշխատանքներու, ամբողջ հողամասի վրա և բոլոր շենքերուն մեջ.
7) Կեդրոնական ջեռուցում բոլոր շենքերուն մեջ.
8) Կառուցում մեծ կաթսայատան մը.
9) Վերանորոգում և կահավորում նոր Վեհարանի շենքի.
10) Վերանորոգում Խրիմյան թանգարանի շենքի.
11) Վերանորոգում և կահավորում Ղազարապատի բոլոր շենքերու.
12) Վերանորոգում հին Վեհարանի շենքի, որ կոչված է վերածվելու հանգուցյալ կաթողիկոսներու հիշատակին նվիրված թանգարանի.
13) Կառուցում էլեկտրական ենթակայանի մը՝ հատուկ Ս. Էջմիածնի համար.
14) Էջմիածնի հողամասի բոլոր շենքերու էլեկտրական ցանցի փոխարինումը նորով, բակի մեջ գետեղում էլեկտրական մեծ լամպերու՝ հատուկ սյուներու վրա հաստատված, գեղարվեստական ձևավորումով.
15) Հեռախոսային նոր ցանցի անցկացում, ստորերկրյա խողովակներու սիստեմով.
16) Կառուցում բուժարանի, դեղատան և հիվանդանոցի նոր շենքի մը՝ Մայր Աթոռի միաբանության, պաշտոնեության և ուսանողության համար.
17) Նոր հանրակացարանի մը կառուցումը ճեմարանին համար:

գ) Շինարարական ծրագրեր Ս. Էջմիածնի հողամասեն դուրս.

Այստեղ մեծ կարևորությամբ կուզենք Ձեր և Մեր ամբողջ ժողովուրդի ջերմագին ուշադրությունը հրավիրել մեծ և պատմական նշանակություն ունեցող եկեղեցական-ազգային այն գործին վրա, որ վերաշինությունն է մեր հնադարյան պատմական հուշարձան-վանքերու և եկեղեցիներու:

Ինչպես հաստատեցիք, այդ ծրագիրը արդեն գործադրության դրված է, և առաջին պատմական եկեղեցին՝ Բջնիի Ս. Աստվածածինը վերանորոգված է:

Վերանորոգման ընթացքի մեջ են այս պահու Ս. Հռիփսիմեի փառավոր տաճարը և Դալարագյազի Ս. Խաչ վանքը:

Հաջորդ տարի կվերանորոգվին Ս. Շողակաթը և Ծաղկանի Ս. Մեսրոպ եկեղեցին:

Մեր ծրագիրը կընդգրկի վերանորոգությունը նաև Ս. Գայանեի, Ս. Խոր Վիրապի, Ս. Գեղարդի, Հառիճա, Հաղարծինի և Տաթևի պատմական վանքերու, ինչպես նաև վերանորոգումը շարք մը եկեղեցիներու, և առաջին հերթին՝ Նոր Բայազետի Ս. Աստվածածնի, Մուղնու Ս. Գևորգի, Բասարգեչարի, Ռոստովի մոտ գտնվող Ցայդիր, Թոփտի և Մեծ-Սալա գյուղերու եկեղեցիներու:

Ուրախությամբ կարձանագրենք, թե մեր արտասահմանյան թեմերեն երկուքը խոստացած են իրենց վրա առնել վերանորոգումը մեկական պատմական վանքի և արդեն իսկ աշխատանքի սկսած այս նպատակով: Կակնարկենք ֆրանսահայ թեմին, որ ստանձնած է Ս. Գայանեի վերանորոգումը և Միացյալ Նահանգներու Կալիֆորնիո թեմին, որ ստանձնած է Ս. Խոր Վիրապի վերանորոգումը:

Ծրագրված այս բոլոր շինարարական աշխատանքները պիտի արժեն այսօրվան նախատեսություններով շուրջ 40 000 000 ռուբլի:

Թ) ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐ

Ներքին թեմեր ըսելով կհասկնանք մեր եկեղեցական թեմական կազմակերպությունները՝ Հայաստանի և Սովետական Միության մեջ:

Այսօր Հայաստանի սահմաններեն ներս ունինք պատմական երկու թեմեր՝ Արարատյան և Շիրակի, որոնց կեդրոններեն են երևան և Լենինական: Արարատյան հայրապետական թեմը իրև առաջնորդական փոխանորդ ունի հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարյանը:

Թեմը ունի իր թեմական խորհուրդը, կազմված 1958 թվականի գարնան ամիսներուն, և որ, առաջնորդական փոխանորդի հետ հա-

մախորդուդ, կղեվակարե թեմի եկեղեցական-հոգևոր կյանքը:

Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդն է հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը:

Հայաստանի սահմաններեն դուրս մեր ներքին թեմերն են.

1) ՎՐԱՍՏԱՆԻ ԹԵՄԸ, որուն թեմական առաջնորդն է գերապատիվ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյան: Թեմը ունի իր թեմական խորհուրդը, որ անցյալ տարի վերակազմվեցավ:

2) ԱԳԵՐԵՋԱՆԻ ԵՎ ԹՈՒՐՔԻՍՏԱՆԻ ԹԵՄ: Առաջնորդական փոխանորդն է հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյան, որ կգործե թեմական խորհրդի աշխատակցությամբ:

3) ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԵՎ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԹԵՄ: Թեմի առաջնորդն է հոգեշնորհ Տ. Դարեգին ծայրագույն վարդապետ Տեր-Հակոբյան: Թեմը ունի իր թեմական խորհուրդը, նախագահությամբ առաջնորդ հայր սուրբին:

4) ՄՈՍԿՎԱՅԻ ՀՈՎՎՈՒԹՅՈՒՆ: Առժամյա հոգևոր հովիվն է հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյան: Այստեղ տարիներե ի վեր կպաշտոնավարե արժանապատիվ Տ. Խաչատուր քահանա Հարությունյան: Հոգևոր հովվի կողքին կա եկեղեցական խորհուրդ:

Ժ) ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԹԵՄԵՐ

Արտասահմանի մեր թեմերն են հետևյալները.

1) ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԹԵՄ. կեդրոն՝ Թավրիզ: Առաջնորդական տեղապահ՝ Տ. Կարապետ ավագ քահանա Մանուկյան:

2) ԹԵՀՐԱՆԻ ԹԵՄ. կեդրոն՝ Թեհրան: Հոգևոր հովիվ և թեմական գործակալ՝ Տ. Հովհաննես ավագ քահանա Հանյան:

3) ՍՊԱՀԱՆԻ ԹԵՄ. կեդրոն՝ Նոր-Ջուղա: Կրոնական խորհրդի փոխ-նախագահ՝ Տ. Ներսես ավագ քահանա Դավթյան:

4) ԵԴԻՊՏՈՍԻ ԹԵՄ. կեդրոն՝ Կահիրե: Առաջնորդ՝ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյան:

5) ԻՐԱՔԻ ԹԵՄ. կեդրոն՝ Բաղդադ: Առաջնորդ՝ Տ. Զգոն ծայրագույն վարդապետ Տեր-Հակոբյան:

6) ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԹԵՄ. կեդրոն՝ Փարիզ: Հայրապետական պատվիրակ և առաջնորդ՝ գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյան:

7) ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԹԵՄ. կեդրոն՝ Աբեճ: Հայրապետական պատվիրակ և առաջնորդ՝ Տ. Խաչիկ վարդապետ Ղազարյան:

8) ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄ. կեդրոն՝ Նյու-Յորք: Առաջնորդ՝ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայան:

9) ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎՄԵՏՅԱՆ ԹԵՄ. կեդրոն՝ Լոս-Անջելոս: Առաջնորդ՝ գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոս Վարժապետյան:

10) ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԹԵՄ. կեդրոն՝ Բուենոս-Այրես: Հայրապետական պատվիրակ և առաջնորդ՝ գերաշնորհ Տ. Սիրոն արքեպիսկոպոս Մանուկյան:

11) ԱՆԳԼԻԱՅԻ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎՎՈՒԹՅՈՒՆ. կեդրոն՝ Լոնդոն: Հայրապետական պատվիրակ՝ գերաշնորհ Տ. Գսակ եպիսկոպոս Թումայան:

12) ՄԱՆՉԵՍՏՐԻ ՀԱՄԱՅՆՔ. կեդրոն՝ Մանչեստր: Հոգևոր հովիվ՝ արժանապատիվ Տ. Աշոտ քահանա Տեր-Հարությունյան:

13) ՎԻԵՆՆԱՅԻ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎՎՈՒԹՅՈՒՆ. կեդրոն՝ Վիեննա:

14) ՌՈՒՄԱՆԱՀԱՅ ԹԵՄ. կեդրոն՝ Բուխարեստ: Թեմական խորհուրդ:

15) ԲՈՒԼԳԱՐԱՀԱՅ ԹԵՄ. կեդրոն՝ Սոֆիա: Թեմական խորհուրդ:

16) ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԹԵՄ. կեդրոններ՝ Կալկաթա և Սիդնեյ: Հայրապետական պատվիրակ և առաջնորդ՝ գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյան:

Մայր Աթոռը բնականոն հարաբերություններու մեջ կգտնվի իր բոլոր թեմերուն հետ. համաձայն Հայ Եկեղեցվո կանոններուն և ավանդությանց:

Վերջերս միայն անբնական ու կեդրոնախույս որոշ երևույթներ հանդես եկան Պարսկաստանի, Հունաստանի և Ամերիկայի թեմերուն մեջ, իբր հետևանք Անթիլիասի հերձվածողներու տխուր գործունեության:

Ժամանակագրական կարգով առաջին նման երևույթը հայտնվեցավ Ամերիկայի Միացյալ Նահանգներուն մեջ, երբ 1956 թվականի աշնան Մայր Աթոռի և օրինավոր առաջնորդարանները հեղինակության չենթարկվող քանի մը անչափայլ եկեղեցիներ, հրապարակային հայտարարությամբ մը փորձեցին իրենք գիրենք պաշտոնապես բաժնված նկատել Հայ Եկեղեցվո միակ կեդրոն բազմադարյան Ս. Էջմիածնեն և կապվիլ Անթիլիասի հերձվածող Աթոռին, որ ապօրինի կերպով կգործե Կիլիկիո Կաթողիկոսության անունով:

Մենք մեր 1957 թվականի դեկտեմբեր 20 թվակիր կոնդակով, ինչպես գիտեմ, հենլով մեր Եկեղեցվո սուրբ կանոններուն, ավանդություններուն և պատմականորեն ճշված իրավասությանց սահմաններու դրության վրա, ինչպես և մեր համայն հայ ժողովուրդի

գիտակցության վրա, չեղյալ հռչակեցին այդ բաժանումը, իսկ Անթիլիասի հերձվածողներու արարքը՝ դատապարտելի ոճնգություն և հափշտակություն: Մենք միաժամանակ կոչ արին բաժնվող եկեղեցիներուն՝ անդրադառնալ իրենց սխալին վրա և ընդմիշտ մնալ Հայ եկեղեցվո սիրո միության մեջ, ամենայն հայոց Ս. էջմիածնի շնորհներուն ներքև:

Անթիլիասի գործունեությունը սակայն շարունակվեցավ և փորձեց իր ձեռքերը երկարել Պարսկաստան, պարտադրելով այնտեղ հոգևոր դասին և հավատացյալ ժողովուրդին ձևական բաժանում մը Ս. էջմիածնեն, առանց ունենալու որևէ հիմք կամ պատճառ բաժանման:

Ի պատասխան Թեհրանի բեմական խորհուրդի մարտ 29 թվակիր գրության, Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր խորհուրդը իր 2 մայիս 1958 թվակիր պաշտոնական նամակով հստակ կերպով պարզեց այս արարքի տխուր պատկերը, հերքելով բոլոր այսպես կոչված «հիմունք»-ները, որոնք իբր հիմք էին ծառայեր Թեհրանի բեմի բաժանման փորձին: Այս պարագային ալ Մայր Աթոռը բաժանման այդ փորձը հռչակած է չեղյալ և հրավիրած է Թեհրանի բեմական իշխանությունը՝ վերահաստատել իր պատմական բնականոն կապերը Մայր Աթոռ Ս. էջմիածնի հետ:

1958 թվականի հուլիս 24-ին հույնահամակրություն մը ստացանք նաև Թավրիզի բեմական խորհուրդեն, որուն Մեր 1 սեպտեմբեր 1958 թվակիր պատասխանը եղավ նույնը, ինչպես Թեհրանի բեմի պարագային:

Հատկանշական է այն պարագան, որ ոչ Թեհրանի և ոչ ալ Թավրիզի ժողովներուն որոշումներուն տակ ստորագրած չէ ոչ մեկ հոգևորական:

Վերջերս շփոր կացություն մը ստեղծվեցավ նաև Հունաստանի մեր բեմին մեջ, նույն հերձվածող Անթիլիասի գործունեությամբ, որով Աթենք ուղարկվեցավ Անթիլիասի միաբան աբեղա մը, առանց որևէ օրինավոր հիմքի, նպատակ ունենալով տիրանալ էջմիածնական հունահայ բեմին, չեզոքացումով օրինավոր Մեր ներկայացուցչին, ա՝ 1957 թվականի հուլիս 7-ի պաշտոնագրով Հայրապետական պատվիրակ և ժամանակավոր առաջնորդ էր նշանակված հունահայ բեմին:

ԺԱ) ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐՈՒՆ

Մեր ընտրության իսկ օրերուն, արտասահմանեն շատ մը պատգամավորներ՝ Լոնդոնեն, Ամերիկայի Միացյալ Նահանգներեն և Եգիպտոսեն փափագ էին հայտնած, որ մեր ժողովուրդի հոգևոր-ազգային կյանքի Սփյուռքի պայմաններուն մեջ անհրաժեշտ էր հայրապետական այցելություն մը կազմակերպել, ավելի ևս ամրապնդելու համար հոգևոր կապը Մայր Աթոռի և Մեր հավատի կեդրոն Ս. էջմիածնի միջև, առավել ևս կենդանության շունչ տալու համար Սփյուռքի ցիրուցան մեր ժողովուրդի հայկական գիտակցության:

Եվ իրոք, Մենք ևս համոզվեցանք, որ նման հովվապետական այցելություն մը անհրաժեշտ էր և օգտակար, մանավանդ որ Մեր հայրապետական գործունեության առաջին իսկ ամիսներեն հայտնի դարձավ, որ մեր եկեղեցին կգտնվեր նոր ժամանակաշրջանի մը սեմին և նոր հեռանկարներ կբացվեին մեր առջև, ստեղծված ներքին և արտաքին նպաստավոր, առարկայական պայմաններուն բերումով:

Մեր պարտքն էր օգտագործել բոլոր այս նպաստավոր պայմանները՝ ի շինություն մեր եկեղեցվո և Մայր Աթոռի:

Մենք արտասահման գացինք՝ ունենալով երեք հստակ նպատակներ.

1) Ամրապնդել Սփյուռքի հայության կապը Ամենայն Հայոց Հայրապետության Մայր Աթոռ Ս. էջմիածնի հետ, լույս և հույս բաշխելով մեր ժողովուրդին՝ Լուսավորչի անմար կանթեղեն:

2) Ապահովել Մայր Աթոռը սուտաբուխ նվերներով մեր ժողովուրդին, կենսագործելու համար Մեր շինարարական ծրագիրները:

3) Անձամբ մասնակցիլ Տանն Կիլիկիո Կաթողիկոսի ընտրության և օծման, իբր պատասխան այդ՝ 1945 թվականի հունիսին Տանն Կիլիկիո Կաթողիկոս երջանկահիշատակ Տ. Տ. Գարեգին Հովսեփյանցի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության մասնակցության:

Երջանիկ ենք հաստատելու, որ առաջին Մեր երկու նպատակները լիուլի կենսագործվեցան և մենք բոլորս, Հովվապետ և ժողովուրդ, ցնծության և հոգեկան միխիթարության պատմական օրեր ապրեցանք, Մեր արտասահման այցելության ամբողջ հանապարհի երկայնքին:

Նույն ուրախությամբ պետք է հաստատենք, թե իրականացավ նաև Մեր երկրորդ իղձը: Գրեթե ամեն տեղ ուր Մենք գտնվեցանք, մեր ժողովուրդի հարազատ զավակներեն շատերը առատորեն իրենց հոգվո պար-

գեր ընծայեցին մեր շինարարական ձեռնարկներու հաջողության համար:

Փա՜ռք և պատի՜վ հայ ժողովուրդին:

Մեր ճանապարհորդությունը տևեց ավելի քան երեք ամիս՝ 1 փետրվարեն մինչև 20 մայիս: Այցելեցինք հետևյալ հայ գաղութները. Փարիզ, Բեյրութ, Կահիրե, Աղեքսանդրիա, Միլան, Վենետիկ, կրկին Փարիզ, Մարսել, Լիոն, ապա Լոնդոն, Մանչեստր, նորեն Փարիզ և Մոսկվա:

Ամեն տեղ ուր գացինք, արժանացանք մեր ժողովուրդի խոր հարգանքին և սիրույն, ու միաժամտնակ վայելեցինք հարգանքն ու բացառիկ ուշադրությունը պետական ամենաբարձր իշխանություններու, հայր եկեղեցիներու բարձրաստիճան հոգևոր պետերու և մեր այցելած երկիրներուն մեջ ապրող ժողովուրդներու:

Ինչպես հայտնի է Ձեզ, Մեր ճանապարհորդության նկարագրությունը, բոլոր մանրամասնություններով, առարկան դարձավ այդ նպատակին նվիրված ստվար հատորի մը, որ կրե «ՀԻՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ» անունը, և որ լույս տեսավ Ս. Էջմիածնի մեջ 1957 թվականին, իսկ երկրորդ տպագրությունը՝ Բեյրութ, 1958 թվականին:

Արտասահմանյան մեր մյուս բեմերը այցելելու կրկնակի հրավերներուն ընթացք տալու Մեր ալ ցանկությունը հետաձգելով մոտիկ ապագային, հարմար և անհրաժեշտ գտանք 1957 թվականին հովվապետական այցելության կոչել մեր ներքին բեմերը:

Մեր հովվապետական առաջին այցելությունը տվինք Շիրակի բեմին 1957 թվականի ապրիլ 26-ին: Արժանացանք Շիրակի հավատացյալ ժողովուրդի ջերմ և խաղաղ ընդունելության: Պատարագեցինք և քանիցս քարոզեցինք Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցիին մեջ, այցելեցինք մոտակա Հառիճա և Մարմաշենի վանքերը և հոգեպես միխիթարեցինք Մեր հավատացյալ հոտը:

Մեր հովվապետական երկրորդ այցելությունը տվինք Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի բեմին մայիս 17-ին: Այդ օրերը պատմական օրեր եղան բեմի հայ հավատացյալ ժողովուրդին համար: Մատուցվեցավ սուրբ պատարագ Ռոստովի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիին մեջ և կատարվեցան փառավոր հանդիսություններ ժողովրդական խանդավառ և ջերմ մթնոլորտի մը մեջ: Այցելեցինք նաև պատմական Ս. Խաչ վանքը և մոտակա Թոփտի, Զայդրը և Մեծ-Սալա հայ գյուղերու եկեղեցիները, ուրախացնելով հեռավոր այդ ափերուն վրա ապրող Մեր հոտը:

1957 թվականի հուլիս 5-ին Մեր հաջորդ հովվապետական այցելությունը կատարեցինք դեպի Վրաստան, որպես հյուրը Համայն Վրաց պատրիարք և կաթողիկոս Նորին Սրբություն Մելիքսեդեկ Գ-ի: Այստեղ ևս ականատես եղանք հայ և վրաց ժողովուրդներու ջերմ ընդունելության և համաժողովրդական խանդավառության: Պատարագեցինք և քարոզեցինք Թբիլիսիի հայոց պատմական ուխտավայր և առաջնորդանիստ Ս. Գևորգ եկեղեցիին մեջ, ապա «Էջմիածին» եկեղեցիին մեջ: Աղոթեցինք նաև վրաց Ս. Սիոն Մայր Տաճարին մեջ: Ուխտ կատարեցինք նաև վրաց հնագույն պատմական վանք Մցիխեթայի տաճարին մեջ:

Սեպտեմբեր 20-ին այցելեցինք Բաքվի հայոց բեմը և տեղվույն հայոց Ս. Գրիգոր եկեղեցվո մեջ սուրբ պատարագի մատուցմամբ և Բանին կենաց քարոզությամբ մխիթարեցինք Մեր հոգևոր հոտը: Այցելեցինք ապա Կիրովաբադի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին՝ բազմանազար ժողովուրդին տալով ողջույնն ու օրհնությունը Մայր Արոռ Ս. Էջմիածնին: Ինչպես ամեն տեղ, այստեղ ևս ականատես եղանք ժողովրդական խանդավառ և հուզիչ ցույցերու՝ ի նշան հոգեկան ուրախության:

Սեպտեմբեր 25-ին այցելեցինք լեռնային Ղարաբաղի ինքնավար հայաբնակ մարզը, արժանանալով Ղարաբաղի հայ ժողովուրդի ջերմ ընդունելության: Տեսանք պատմական Շուշիի ավերակները, անոր հոյակապ Ս. Ամենափրկիչ եկեղեցին՝ կիսավեր վիճակի մեջ, անցյալի տխուր դեպքերու հետևանքով: Տեսանք նաև Ղարաբաղի մայրաքաղաք հորակերտ Ստեփանակերտը, ուր կապրի մոտ 18 000 հայ բնակչություն մը՝ խաղաղ ու բարգավաճ ու շինարար կյանքով:

Սեպտեմբեր 26-ին այցելեցինք նաև պատմական Դանձասարի վանքը, Երբեմնի Աղվանից Կաթողիկոսության կեդրոնը: Դանձասարի եկեղեցին, հայ ճարտարապետության հոյակապ կորող մը, այսօր ալ կանգուն և լավ վիճակի մեջ է, գուրգուրանքի առարկա մոտակա վանք գյուղի հայ ժողովուրդին:

Սեր վերջին այցելությունը կատարեցինք 1957 թվականի դեկտեմբեր 8-ին Երևան, Արարատյան հայրապետական բեմին, ուր պատարագեցինք առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցիին մեջ և ապա կարճ արարողություններ կատարեցինք Երևանի Ս. Հովհաննես և Ս. Զորավոր եկեղեցիներուն մեջ:

Ներքին մեր բոլոր բեմերուն տված վերոհիշյալ այցելություններուն ընթացքին ուրախությունը ունեցանք վայելելու նաև հարգանքը և բացառիկ ուշադրությունը պետական ամենաբարձր իշխանություններու, Մեր այցելությունները առիթով անոնց կազմակերպած ընդունելությանց ընթացքին:

ԺԲ) ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՎԵՐԱԲԱՑՈՒՄ

Իր ժամանակին, այսինքն 1956 թվականի վերջերը՝ այնուհետև, Մենք զանազան առիթներով ճայտնեցինք այն մասին, թե Սովետական կենդրոնական Կառավարության մեծարգո Վարչապետի 1956 թվականի մայիս 12-ի մեր ունկնդրության իբրև արդյունք, սկզբունքային համաձայնություն տրված էր, որպեսզի Հայաստանի և դրացի հանրապետություններու մեջ ճայկական նոր եկեղեցիներ վերաբացվին, համաձայն օրենքի տրամադրություններուն, հավատացյալներու գիմումներուն ճիման վրա:

Մենք երախտագիտությամբ ողջունեցինք պետական այս բարյացակամ բարձր վերաբերմունքը և աշխատեցանք կենսագործել զայն Մեր ճնարավորությանց և միջոցներուն ներած չափով, որովհետև եկեղեցիներու վերաբացումը անհրաժեշտորեն կապված է եկեղեցական շենքերու վերանորոգման և բացվող եկեղեցիները ճոգևոր պաշտոնյաներով օժտելու ճարցերուն ճետ:

Ցարդ վերաբացվեցան կարգ մը եկեղեցիներ և վանքեր Հայաստանի մեջ, որով մեր երկրին մեջ այսօր կգործեն 36 եկեղեցիներ, վանքեր և ուխտատեղիներ:

Մենք ճույս ունինք, որ երկու տարի առաջ առաջադրված եկեղեցիներեն կվերաբացվին շարք մը նոր եկեղեցիներ նաև Վրաստանի, Ադրբեջանի, Հյուսիսային Կովկասի և Անդրկասպյան երկրներուն մեջ, Պետական իշխանության բարյացակամությամբ, ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովուրդի և ի գոհունակություն Մեզ:

ԺԴ) ԿԱՀԻՐԵԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Արտասահման Մեր ճանապարհորդության գլխավոր արդյունքներեն մեկը եղավ Կահիրեի մեջ գումարված Եպիսկոպոսական ժողովը 1956 թվականի մարտ 5—8 օրերու ընթացքին:

Մեր նախագահության տակ գումարված Եպիսկոպոսական այս ժողովին մասնակցեցան մեր նվիրապետական բոլոր Աթոռները՝ Կոստանդնուպոլսի պատրիարք ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոսը, Երուսաղեմի պատրիարքական տեղապահ Տ. Եղիշե սրբազանը և գրեթե մեր բոլոր թեմական առաջնորդները:

Եպիսկոպոսական ժողովին մասնակցեցավ նաև Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը իր եպիսկոպոսական դասով, Աթոռի տեղապահ Ե. Խորեն եպիսկոպոս Հարությանի գլխավորությամբ:

Սույն ժողովին մասնակցող արքեպիսկոպոսներու և եպիսկոպոսներու թիվը 18 էր:

Եպիսկոպոսական ժողովին քննության առնվեցան հետևյալ ճարցերը.

1) Ընդհանուր զեկուցում Մայր Աթոռի ներկա կացության մասին:
2) Հայաստանյայց Առաքելական եկեղեցվո սահմանադրության ճարց:
3) Հայաստանյայց եկեղեցվո Կանոնագրքի կազմության ճարց:
4) Ս. Գրքի տպագրության 300-ամյակի առթիվ Աստվածաշունչի աշխարհաբար թարգմանության ճարց:
5) Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի առավել կազմակերպության ճարց:
6) Արտասահմանեն ճոգևորականներ Էջմիածին ճրավիրելու ճարց:
7) Մայր Աթոռի կողքին ճոգևոր կանոն մը ստեղծելու ճարց:
8) Ս. Էջմիածնի և նվիրապետական մյուս Աթոռներու փոխհարաբերության ծրագիր մը պատրաստելու ճարց:
9) Հայաստանյայց եկեղեցվո բարեկարգության ճարց:
10) Քրիստոնեական այլ եկեղեցիներու ճետ ճարաբերության ճարց:
11) Կիլիկիո կաթողիկոսի ընտրության ճարց:

Եպիսկոպոսական սրբազումար ժողովը, քննության առնելով այս ճարցերը, ընդունեց ճամապատասխան որոշումներ, որոնցմե ոմանք ցարդ արդեն իրագործված են, իսկ կարգ մը ուրիշ որոշումներ կմնան մոտիկ ապագային իրագործելի:

Մենք կուզենք այս առթիվ անգամ մը ևս շեշտել սիրո և միասնության այն ոգին, որ ստեղծվեցավ Եպիսկոպոսական ժողովի գումարման առթիվ, ի պատիվ ժողովին մասնակցող բարձրաստիճան մեր ճոգևորականության: Մենք կաղոթենք, որ այդ ներքին սերը և միասնությունը ամուր և տևական մնան մեր Եկեղեցիին մեջ, որպեսզի կարենանք առավել շենցնել և զորացնել այս պատմական պատկառելի սուրբ հաստատությունը և պաշտպանել զայն ամեն տեսակ փորձություններու և կեղրոնախույս ձգտումներու դեմ:

Մենք կառաջարկենք, որ Եպիսկոպոսական ժողովը ևս, որուն կանդամակցին Ձերդ Սրբազնությունները, վերստին իր ուշադրության առարկա դարձնե Կահիրեի Եպիսկոպոսական ժողովի օրակարգի ճարցերը, վերջին երկու տարիներու փորձի լույսի տակ, նպատակ ունենալով գործնական նոր թելադրություններ կատարել արված որոշումներու կենսագործման ճամար:

ԺԴ) ԿԻԼԻԿԻԱՅԻ ԱԹՈՌԻ ՏԱԳՆԱՊԸ

Վերև նիշեցինք, թե արտասահմանի Մեր նանապարհորդության տուն տվող նպատակներեն մեկն էր նաև Մեր մասնակցությունը Կիլիկիո կաթողիկոսի ընտրության և օծման:

Դժբախտաբար ուրախությամբ չենք կրնար խոսիլ այս հարցի մասին, որովհետև Անթիլիասի մեջ ստեղծված մթնոլորտը այդ օրերուն հեռու էր քրիստոնեական սիրո և ազգային միասնության պատվիրաններեն:

Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի Պատրիարքական մեր Աթոռներու և այնտեղ հավաքված բոլոր եպիսկոպոսներու, ինչպես և Կիլիկյան Աթոռի եպիսկոպոսներու մեծամասնությամբ՝ համերաշխության կոչերը, ինչպես գիտեք, լսելի չեղան Կիլիկյան երեք եպիսկոպոսներու կողմե, որոնք, մոռնալով իրենց հավատարմության ուխտը, խորացուցին անհասկացողություններ, որ գոյություն ունեին արդեն Կիլիկյան Աթոռի միաբանության և ժողովրդի ծոցին մեջ:

Մենք Անթիլիաս մեկնելով, հույս ունեինք մեղմել ներքին հակամարտություններ, և փոխադարձ հասկացողության և խաղաղության մթնոլորտի մեջ կատարել Կիլիկիո նոր կաթողիկոսի ընտրությունը: Մեր հույսերը, սակայն, ի դերև ելան և Մենք վշտով տեսանք և հաստատեցինք, թե երկփեղկումը ողբերգական իրականություն մըն է, անկախ Մեր կամքեն և հակառակ Մեր կամքին:

Ստեղծված այս պայմաններուն մեջ Մեր ներկայությունը Անթիլիասի մեջ այլևս անհնպատակ դառնալով: Մեր վերջին հայրապետական հորդորը և հայրական օրհնությունը տալով Աթոռին և ժողովուրդին՝ մեկնեցանք դեպի Կահիրե:

Մեր մեկնումեն հետո, Անթիլիասի մեջ երկփեղկումը առավել տագնապալի դարձավ, միակողմանի ընտրությամբը Զարեհ եպիսկոպոս Փայասլյանի:

Կահիրեի եպիսկոպոսական ժողովը, անդրադառնալով Կիլիկյան Աթոռին մեջ ստեղծված տագնապին, իր ե նիստին մեջ 1956 թվականի մարտ 7-ին, Անթիլիասին առաջարկեց ձեզ ծանոր Համաձայնագիրը, դարմանելու համար տագնապը և Աթոռին ներս վերահաստատելու համար միությունը և ներքին խաղաղությունը:

Եպիսկոպոսական ժողովի կազմած Համաձայնագիրը ոչ միայն մերժվեցավ, այլ նույնիսկ փոքր մը չեղավ Զարեհ եպիսկոպոսի կողմե, Համաձայնագրի մեկ ուրիշ բանաձևով մը փոխադարձ հասկացողության և խաղաղության հասնելու:

Այնուհետև մինչև 1956 թվականի սեպտեմբեր 2-ը հորդորներ և կոչեր բազում անգամներ հնչեցին Մայր Աթոռեն, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Պատրիարքարաններեն և բարձրաստիճան հոգևորականներեն, ինչպես նաև ողջամիտ և սրտցավ ազգայիններեն, բայց այդ բոլորը մնացին «ձայն բարբառոյ յանապատի»:

Այսպիսով 1956 թվականի վերջվա։ 20-ին, Անթիլիասի Ս. Տաճարեն դուրս կատարված միակողմանի ընտրության հետևանքով 1956 թվականի սեպտեմբեր 2-ի ոչ կանոնական արարողությունը Տ. Զարեհ եպիսկոպոսի վրա, մասնակցությամբ 2 հայ եպիսկոպոսներու և մեկ ասորի եպիսկոպոսի:

Մենք Մեր 1957 թվականի դեկտեմբեր 20-ի կոնդակով հրատարակեցինք Մայր Աթոռի և մեր եկեղեցվո դիրքը, հայտնելով ի գիտություն Հայ եկեղեցվո հոգևոր դասին և մեր ժողովրդյան, թե նման արարողություն մը մեր Ս. Եկեղեցվո կանոններուն և ավանդությանց լույսին տակ, հնարավոր չէ կաթողիկոսական օծում նկատել:

Միայն եկեղեցվո լրությամբ, նվիրապետական բոլոր Աթոռներու գործակցությամբ և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հեղինակությամբ կազմված բանաձևի մը հիման վրա կարելի կրնա դառնալ Զարեհ եպիսկոպոսի կաթողիկոսության օրինականացումը:

Հոլորիս ծանոր է, թե Կիլիկյան Աթոռի անցյալին մեջ, անոր պատմության փայլուն էջերու կողքին, կան նաև բազմաթիվ խոսուր էջեր, որտեղ արձանագրված են ապօրինի և ոչ կանոնական ձեռնադրություններ և կաթողիկոսական օծումներ, որոնք իրավամբ երբեք այ վավերական չեն նկատված Հայ եկեղեցվո նվիրապետության և պատմության դատաստանի առջև: Նման արարքներ եղած են ու կմնան պարզ անկարգություններ՝ զուրկ որևէ հոգևոր, բարոյական և ազգային նշանակությունեն:

Այդպիսին է և այդպիսին կմնա նաև՝ Մեր օրերուն Տ. Զարեհ եպիսկոպոս Փայասլյանի պարագան, երբ ինքը և իր շուրջինները իմաստությունը չունենան դառնալու իրենց անհույս ճամբեն:

Այստեղ չի վերջանար սակայն Մեր խոսքը Անթիլիասի մասին, որովհետև Զարեհ եպիսկոպոսի և իր գործակիցներու արարքը, իր հետևանքներով, ավելի քան մեկ տարիե ի վեր անա, Կիլիկյան Աթոռի սահմաններեն դուրս եկած է, և իր կատարած ոտնձգություններով Ամերիկայի Միացյալ Նահանգներու մեր երկու թեմերուն և Իրանի երկու թեմերուն մեջ, կգերազանցե Կիլիկյան Աթոռեն ներս անցյալին մեջ կատարված հակականոնական արարքները:

Մեր հաջորդներուն հավանաբար անհավատալի կթվի, թե ինչպես Հայ եկեղեցվո բարձրաստիճան երկու-երեք հոգևորականներ, իրենց իրև միակ զենք ընտրած ըլլալով քաղաքական անխիղճ վերագրումները Ս. Էջմիածնի և Մայր Աթոռի հավատարիմ մեր հոգևորականության և ժողովուրդի դեմ, կոգտագործեն պարզապես ժամանակավոր հերոպով ստեղծված միջազգային քաղաքական իրադրությունը, գործադրության դնելու համար արտասահմանի Հայ եկեղեցիի հիմքերը քանդելու սանմանված և Սիյոնիզմի ցիրուցան հայ ժողովուրդը իր Սրբություն Սրբոց Ս. Էջմիածնեն հոգեպես անջատելու ծրագիրը:

Սակայն դառն ճշմարտությունը այս է: Այս. ճշմարտություն է Զարեհ և Խորեն եպիսկոպոսներու այդ փորձը: Ճշմարտություն չէ սակայն այդ փորձի իրականացումը:

Մենք չենք կրնար հավատալ երբեմ այդպիսի արարքներու հաջողության: Անհնար է, որ արտասահմանի մեր հարազատ ժողովուրդը նման դավադրական փորձերու զոհ երթա, ինչքան ատեն ան հպարտությամբ հայու պանծալի անունը կիրե և անարատ կպահե իր քրիստոնեական հավատքը՝ Քրիստի իշման տեսիլքով լուսավորված:

Այս հանդիսավոր տիրոջ, Մենք անգամ մը ևս կհայտարարենք, թե Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին մի է և անբաժան, իր գլուխը ունենալով աստվածակառույց Ս. Էջմիածինը, և, մեր սուրբ կանոններու, ավանդության և Հայ Ազգի խղճի առջև հնարավոր չէ անջատվիլ Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն:

Մեր բոլոր նվիրապետական Աթոռները, պատմական իրավասությանց իրենց սահմաններուն մեջ, և հայոց բոլոր եկեղեցիները և համայն հավատացյալ ճաշ ժողովուրդը անխտիր կան և կմնան հոգևոր իշխանության ներքև Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության:

Հայ ժողովուրդի հոգևոր և ազգային կյանքի անխորտակելի կանոնն է այս, աստվածային նախախնամությամբ և Մեր Ազգի վառավոր պատմությամբ նվիրագործված:

Կիլիկյան Աթոռի այս ախուր տագնապի մասին խոսելե հետո, Մեզ համար հույժ մխիթարական է հաստատել օրինապահ, կորովի կեցվածքը Տանն Կիլիկիո միաբանության և հավատացյալ ժողովուրդի մեծամասնության, ի պաշտպանություն եկեղեցական կանոններու, ավանդություններու և ի պաշտպանություն մանավանդ Հայ եկեղեցվո միության և ներքին համերաշխության սրբազան սկզբունքներուն:

Այդ օրինապահ միաբանության և հավատարիմ ժողովուրդի գլուխը կանգնած է Կիլիկյան Աթոռի տեղապահ ամենապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոս Աջապահյանը, իբրև պահապանը և պաշտպանը Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի լավագույն ավանդություններուն և արժանավոր հաջորդը Աջապահյաններու տոհմին:

Մենք սիրով կաղաչենք Նորին Սրբազնության ներկայությունը մեր մեջ մեր այս ուրախության օրերուն, վստահ ըլլալով, որ Աստուծո օգնականությամբ և մեր ժողովուրդի կազմակերպված կամքով վերջ կդնեն Կիլիկյան Աթոռի տագնապը, հուրախություն Կիլիկյան օրինապահ միաբանության, ի մխիթարություն մեզ բոլորիս և ի շինություն մեր Ս. եկեղեցվո:

ԺԵ) ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆ

Մեր հայրապետության այս երեք տարիներու եկեղեցական կյանքի վերազարթոնքի և վերելքի հանապարհին, Անթիլիասի տագնապի կողքին, վիշտը ունեցանք ականատես ըլլալու նաև մեկ ուրիշ ներքին տագնապի, որ զարգացավ Երուսաղեմի հայոց Պատրիարքական Աթոռեն ներս: Երուսաղեմի Աթոռի դեպքերը իրենց բոլոր մանրամասնություններով ծանոթ են ձեզ բոլորիդ և մեր ամբողջ ժողովուրդին:

Երուսաղեմի Պատրիարքական Աթոռի միաբանության և նախկին տեղապահ Եղիշե Եպիսկոպոս Տերտերյանի միջև ծագած անհամաձայնությունները հետզհետե խորանալով, հանգեցան այն կացության, որ միաբանությունը, իր ճնշող մեծամասնությամբ, 1956 թվականի հոկտեմբեր 2-ի և 13-ի Միաբանական ժողովներուն որոշումով պաշտոնանկ հոչակեց զայն տեղապահական և լուսարարապետական պաշտոններեն՝ ծանր ամբաստանություններու ներքև:

Այդ օրերուն Եղիշե սրբազանը կգտնվեր Մայր Աթոռ: Մենք, ծանոթանալով կացության, հորդորեցինք զինքը ժամանակ մը չվերադառնալ Երուսաղեմ և ատենի մը համար մնալ Ս. Էջմիածին, ի շահ Երուսաղեմի Աթոռի վարկին և իր իսկ անձնական հեղինակության: Եղիշե սրբազանը Մեզ խոստացավ որևէ դժվարություն չհարուցել, և ավելցուց նույնիսկ, թե պիտի քաշվի բուռ գործերեն: Այս խոստումներով ան բռնվեցավ Մեզմե նոյեմբեր 6-ին:

Դժբախտաբար սակայն հետագա դեպքերը հակառակը ցույց տվին և Երուսաղեմի Պատրիարքական Աթոռը շատ տխուր տագնապներ անցուց և մինչև այսօր ալ այս տագնապը

կշարունակվի ի վնաս մեր Եկեղեցիին և Երուսաղեմի Արոռին:

Երուսաղեմի Ս. Արոռի Միաբանական ընդհանուր ժողովը 1957 թվականի մարտ 5-ի իր որոշումով ընդունեց եպիսկոպոսը ազատ արձակեց միաբանության շարքերեն, Մայր Արոռ ուղարկելով ապացույցներ և փաստաթղթեր, որոնք կխոսին անոր դեմ:

Հենելով այդ բոլորի վրա, Մենք, ցավ ի սիրտ, ստիպված եղանք 1957 թվականի ապրիլ 13-ի հայրապետական Մեր վճռով փիլոնազրկման պատիժ սահմանել եղիշե եպիսկոպոսի համար, կարգադրելով միաժամանակ, որ հաշվի Ս. Բերդենեմի վանքը, մինչև հոգևոր ժողովի մը գումարումը, ուր անոր նկատմամբ ճշտվեր վերջնական վերաբերումնք:

Եղիշե եպիսկոպոս Տերտերյանը Բերդենեմ չգնաց և երկար բացատրագրով Մեզ գեկուցեց, որ Բերդենեմ չերթալու պատասխանատվությունը կծանրանա Տ. Տիրան պատրիարքի վրա: Իսկ Տիրան պատրիարքեն ստացվեցավ ուրիշ բացատրագիր մը, ուր ցույց կտրվեր, թե Եղիշե սրբազանը ինքն է մերժած Բերդենեմ երթալու հայրապետական հրահանգը:

Անցան ամիսներ, և Մենք, տեսնելով անիմաստ և վնասակար շարունակությունը տագնապին, պետական դատարաններու ալ առաջ, հարմար նկատեցինք Եղիշե եպիսկոպոսը կանչել էջմիածին: Եղիշե եպիսկոպոսը իր 27 հունվար 1958 թվակիր հեռագրով խոստացավ գալ, բայց մինչև այսօր չներկայացավ Մայր Արոռ և ոչ հսկ նամակով մը կամ հեռագրով մը Մեզ հայտնեց իր չգալուն պատճառները:

1957 թվականի մարտ 20-ին, Երուսաղեմի Միաբանական ընդհանուր պատկառելի ժողովը Երուսաղեմի Արոռի վրա պատրիարք ընտրեց գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոսը: Մենք, ապրիլ 25-ի Մեր հայրապետական կոնդակով, շնորհավորելով հաստատեցինք Տ. Տիրան արքեպիսկոպոսի ընտրությունը Ս. Երուսաղեմի Պատրիարքական Արոռի վրա:

Այսօր այ սակայն Երուսաղեմի Պատրիարքության կացությունը կմնա շփոթ և անմխիթար, ինչպես 1—2 տարի առաջ: Հորդանանի պետական իշխանությունը, միաբանական ներքին տագնապները, դատական գործողությունները և արտաքին անարդար միջամտությունները հետևանքով չհաստատեց Տիրան պատրիարքի ընտրությունը, և այս օգոստոսի վերջերուն ան բռնի կերպով հեռացվեցավ Երուսաղեմի իր Արոռեն և Հորդանանեն:

Կխորհինք, թե եպիսկոպոսական սրբազան ժողովը ինքնուրույն կարնե Երուսաղեմի Պատրիարքական Արոռի ներքին տագնապը, առաջնորդված անկողմնակալ և արդարամիտ ոգիի մը, Ս. Արոռի և մեր Եկեղեցվո շահերուն գիտակցությամբ:

ԺԶ) ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆ

Կիլիկյան Արոռի և Երուսաղեմի Պատրիարքական Արոռի այս տագնապալի և հույժ ցավալի պատկերի կողքին, մեծ մխիթարություն մը ունինք հաստատելու խաղաղ և շինարար կյանքի ընթացքը Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքության, իմաստուն և բարի հովվապետության ներքև ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանի:

Մեզ կոգևորե մանավանդ Նորին Ամենապատվությունը շանքերով և հոգևոր անմիջական հսկողության տակ հաստատված Սկյուտարի Ս. Խաչ Դպրեվանքը, ուր հայ պատանիներ կդաստիարակվին քրիստոնեական ամբոխ շունչով, հայ հավատացյալ ժողովուրդին և մեր Եկեղեցիին ծառայելու սրբազան ուխտով: Մեր հարաբերությունները Նորին Ամենապատվության հետ եղան ի սկզբանե անտի սիրալիր և շինարար, ի պահպանություն մեր Ս. Եկեղեցվո միության սուրբ կանոնին և ի պաշտպանություն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո միակ Գլուխ քրիստոսանիմն էջմիածնի:

ԺԷ) ՄԱՅՐ ԱԹԱՌԻ ՏՊԱՐԱՆԸ

Արտասահմանի մեջ հոգևոր Ս. էջմիածնի կազմված և աշխատող հանձնախումբերու շարքին իր արժանի և փայլուն տեղը կգրավե Ամերիկայի Միացյալ Նահանգներու Արևելյան բեմի առաջնորդարանի կողքին կազմված Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆԻ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ, ընդ նախագահությամբ տիար Երվանդ Աղաճանյանի և անդամակցությամբ աստվածասեր բազմաթիվ ազգայիններու:

Մայր Արոռի տպարանի հանձնախմբի գանձապահն է տիար Ջորջ Գարակյոզյան:

Շնորհիվ սույն հանձնախմբի եռանդուն գործունեության և հատկապես պր. Երվանդ Աղաճանյանի անհնարին անձնուրաց և անհոգնաբեկ աշխատանքին, և ամե-

ռիկաճա՝ հավատացյալ մեր ժողովուրդի առատաձեռնության, հաջողությամբ պսակվեցավ Ս. Էջմիածինը արդիական սպարանով մը օժտելու համար կազմակերպված ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՇԱՎԸ:

Սուրբ գործ մը իրականություն դարձավ:

Մեր բոլոր նախատեսությունները գերազանցվեցան, հանգանակության արդյունքը բարձրացավ 152 000 դոլարի:

Տպարանի մեքենաները, հանձնաժողովի որոշման համաձայն և Մեր այ համաձայնությամբ, ապսպրված են Ամերիկա և Գերմանիա:

Յարդ Մայր Աթոռ ստացված է ապսպրված մեքենաներու մեկ երրորդը, մաս մը դեպի Էջմիածին ճանապարհի վրա է, իսկ մաս մըն ալ տակավին պատրաստության մեջ:

Ըստ նախատեսված ծրագրի, մինչև 1959 թվականի գարունը պիտի ստացվին տպարանի բոլոր մեքենաները և Աստուծո ողորմությամբ շատ հավանաբար հառաջիկա տարի ամռան կսկսի գործել Մայր Աթոռի տպարանը:

Մայր Աթոռի տպարանին մեջ պիտի տպագրվին մեր պաշտոնաթերթը, օրացույցը, կրոնական-եկեղեցական գրքեր և մեր միաբանության ու առնատարակ հայ հոգևորականներու եկեղեցագիտական, կրոնաբարոյախոսական ու գիտական գրքերը:

Մայր Աթոռի նորահաստատ տպարանի փառավոր և մնայուն գործը պիտի ըլլա տպագրությունը Աստվածաշունչի աշխարհաբար թարգմանության, Աստվածաշունչի գրաբար տպագրության 300-ամյա հոբելյանի առիթով:

Թող Աստված օրհնե Ս. Էջմիածնի տպարանը, անոր հանգանակիչ հանձնաժողովի անդամները և եկեղեցասեր բոլոր նվիրատուները:

ԺԸ) ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՕԺԱՆԴԱԿ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

Արտասահմանի զանազան նվիրատվությունների գոյացած գումարները տպահով պահպանելու և լավագույնս օգտագործելու համար և ի շինություն Մայր Աթոռիս, Մեր առաջարկով և վավերացումով Լոնդոնի և Բեյրութի մեջ կազմված են, ազնիվ և անձնվեր ազգայիններե բաղկացած, Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՕԺԱՆԴԱԿ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ:

Նյու-Յորքի, Փարիզի և Կալիֆորնիայի առաջնորդարաններու կողքին և այլ թեմական եպիսկոպոսներու մեջ, թեմական առաջնորդներու նախագահության տակ, կազմված են նույնպես օժանդակ հանձնաժողովներ, որոնք մեծապես օգտակար աշխատանք կատարեն հոգուտ Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական կարիքներու բավարարման:

Այս առթիվ Մեր և Գերագույն Հոգևոր խորհուրդի անունով Մեր երախտագիտական խոսքը և հայրապետական օրհնությունը կուղղենք վերոհիշյալ հանձնաժողովներու պատվական բոլոր անդամներուն և մեր թեմական սրբազան առաջնորդներուն:

ԺԹ) ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵՆ

Ինչպես նկատեցիք մեր տնտեսական կյանքին վերաբերյալ այս զեկուցումեն, Մայր Աթոռը, իր շուրջ 3 000 000 ռուբլի տարեկան բյուջեով, գրեթե ինքնաբավ տնտեսական միավոր մը դարձած է, այս կերպով ճնարավորություն ունենալով արտասահմանի մեր թարեբարներու նվիրատվությունները ամբողջովին օգտագործելու Մայր Աթոռի շինարարական մեծ ձեռնարկներու համար, ինչպես նաև հոգուտ Հոգևոր Ճեմարանի:

Վերջին երեք տարիներու ընթացքին կարևոր նվիրատվություններ ստացանք արտասահմանեն՝ տիար Երվանդ Հյուսիսյանեն (Միլանեն), տեր և տիկին Սարգիս և Աստղիկ Քյուրքճյանեն (Լոնդոնեն), տիար Օննիկ Մանուկյանեն (Գամոյեն), Ղազարոսյան եղբայրներեն (Միլանեն), տեր և տիկին Սուրենեն և Շաֆե Գալենթերյաններեն (Հալեպեն), օղբաշյալ Ներսես Կալպակյանեն (Մանչեսթրեն), օղբաշյալ Մարտն Գազարճյանեն (Մանչեսթրեն), պարոն Հակոբ Թոփալանեն (Փարիզեն) և ուրիշ ազգայիններու:

Մայր Աթոռս կանոնավոր կերպով ստացած է Լոնդոնի Ազգային հիմնադրամի տարեկան հատկացումները:

Հոգևոր Ճեմարանը այսօր ունի 13 բարերարներ, որոնցմե յուրաքանչյուրը արդեն գրած է սաներ մեր Հոգևոր Ճեմարանեն, յուրաքանչյուր ուսանողի համար տարեկան 500 դոլարի վճարումով:

Այս հանդիսավոր առիթով, Մայր Աթոռիս բոլոր նվիրատուներուն կհայտնենք Մեր շնորհակալություններ և հայրապետական օրհնություններ:

Թող Տերը վարձատրուց ըլլա անոնց բոլորին:

Ի) ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ ԿՏԱԿ

Մանոթ է սրբազնամար ժողովիդ Մայր Աթոռիս Մեծ Բարերար՝ ողբացյալ Գալուստ Կյուլպենկյանի կտակը, վերանորոգելու և բարեկարգելու նպատակով Ս. Էջմիածինը, 350 000—400 000 դոլարի նվիրատվությամբ մը:

Շուրջ երկու տարի տևող բանակցություններ հետո Մայր Աթոռիս և Լիսաբոնի մեջ հաստատված Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության միջև, երջանկահիշատակ կտակարարի ուխտը սկսավ իրականություն դառնալ, շնորհիվ վերոհիշյալ հիմնարկության ղեկավարներու բարյացակամ և օրինավոր գործելակերպին:

Անցյալ տարի օգոստոս 15-ին հանձնարարեցինք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մեջ ընդունելու Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության կտակակատար մարմնի ներկայացուցիչները, հանձինս պրոֆ. սըր Սիդնի Քեյնի և հարտարապետ պրոֆ. Եդվարդ Ուրուճյանի, որոնք ծանոթացան տեղվույն վրա կտակի գործադրության օրինական և գործնական պայմաններուն և իրենց վերադարձին զեկուցեցին Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության իրենց եզրակացությունները, տանելով միաժամանակ նաև Մեր հուշագիրը, ուղղված Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերդիկաոյին, օգոստոս 2 թվակիր:

Իբր հետևանք այս բոլորին, շատ ժամանակ չանցած, 1958 թվականի 21 մայիս թվակիր պաշտոնագրով մը Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունը, Մեր ներկայացուցած փաստաթղթերու հիման վրա, կատարեց առաջին հատկացումը՝ 80 000 դոլար, որ փոխանցվեցավ Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան բեմի առաջնորդարանին՝ Մայր Աթոռի տրամադրության ներքև:

Վերոհիշյալ 80 000 դոլարի այդ հատկացումը կատարվեցավ ի հաշիվ մինչև 1957 թվականը կատարված շինարարական աշխատանքներուն:

1958 թվականի ընթացքին կատարվող և կատարվելիք աշխատանքներուն նախագծերը և նախահաշիվները ուղարկեցինք այս տարվան հուլիս ամսուն և ի պատասխան, սեպտեմբեր 4-ին Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունը կատարեց իր երկրորդ հատկացումը 50 000 դոլարի գումարով մը, որով ցարդ Մայր Աթոռ Գալուստ Կյուլպենկյան ընդհանուր ստացած է 130 000 դոլար:

Երկու կողմերու փոխադարձ հասկացողությամբ հաստատված կարգի մը համաձայն, Մայր Աթոռը տարվե-տարի պիտի ներկայացնե կատարվելիք շինարարական աշխատանքներու նախահաշիվներ և Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունը, բնելով ցանոնք, պիտի կատարե համապատասխան նոր հատկացումներ, մինչև ամբողջական կենսագործումը Գալուստ Կյուլպենկյան կտակի:

Մեր խղճի պարտքը կնամարենք այստեղ, Իջման Ս. Տաճարին մեջ, միշտ ադոթելու վասն հոգվո հանգստյան և խաղաղության Մայր Աթոռիս մեծանուն Բարերար ողբացյալ Գալուստ Կյուլպենկյանի և իր կողակցի հիշատակին, ու նաև Մեր երախտագիտությունն ու օրհնությունը հայտնելու Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության մեծարգո ղեկավարներուն, նախագահ պր. դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերդիգաոյին և Կյուլպենկյան գերդաստանի հարգարժան անդամներուն՝ տիարք Նուպար և Ռոբերտ Կյուլպենկյաններուն, ինչպես նաև տեր և տիկին Գևորգ Եսայաններուն:

Երանի՜ անոնց, որ սուրբ հիշատակ մը ունին արձանագրված Ս. Էջմիածնի հազարամյա այս քարերուն և հայ ժողովուրդի սրտին վրա:

ԻԱ) ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Համայն մեր Ս. եկեղեցվո հայրերու և Մեր հոխորդ հայրապետներու Քրիստոնեական սիրո ոգիին և լայնախոհ մտածելակերպին, Մենք ևս շարունակեցինք և հետապնդեցինք եղբայրական սիրո կապերը պահպանել և առավել ևս զարգացնել քրիստոնեական քույր եկեղեցիներու հետ:

Առաջին հերթին մեծ ուրախությամբ կնշենք ավանդական բարեկամության ջերմագին ու սերտ կապերը ռուսական Պրավոսլավ Մեծ Եկեղեցիին հետ և ի մասնավորի անոր Գահակալ Մոսկվայի և Համայն Ռուսիոյ Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքի:

Իբրև արտահայտություններին մեկը մեր երկու Եկեղեցիներու և ժողովուրդներու սերտ բարեկամության, Նորին Սրբություն հատուկ պատվիրակություններով Իր մասնակցությունը բերավ Մեր ընտրության և օծման հանդիսություններուն 1955 թվականի հոկտեմբեր ամսին և անցյալ տարի, Մեր Գահակալության 2-րդ տարեդարձի տոնախմբություններուն:

Այս տարի մայիսին Մենք ալ պատասխանելով Նորին Սրբության սիրո հրավերին, անձամբ մասնակցեցանք Մոսկվայի սեր կայացած Լուսաւորչաւոր Եկեղեցիներու Պատրիարքության վերահաստատման 40-ամյակի հանդիսություններուն:

Հոգեկան մեծ զգնունակություն պատճառեց մեզ Մեր հանդիպումը Ալեքսի Պատրիարքին հետ, ինչպես նաև Մեր հանդիպումն ու ծանոթացումը օրթոդոքս եկեղեցիներու գրեթե բոլոր արտաքսակներուն հետ, որոնք այդ առթիվ հավաքված էին Մոսկվա իբրև հյուր Լուսաւորչաւոր Եկեղեցիին:

Նույնպիսի եղբայրական ջերմ կապեր մեզ կմիացնեն Վրաց Ուղղափառ Եկեղեցիին և անոր ալեզարդ Հովվապետ Նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոսի հետ:

Ինչպես վերև հիշեցինք, 1957 թվականի օգոստոսին, երբ այցելեցինք Թբիլիսիի մեր թեմը, հյուր եղանք Նորին Սրբության, միատեղ աղոթելով վրացական և հայկական եկեղեցիներու սուրբ սեղաններու առաջ: 1957 թվականի հոկտեմբերին, Համայն Վրաց շնորհազարդ Հայրապետը անձամբ մասնակցեցավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մեջ Մեր գահակալության երկրորդ տարեդարձի հանդիսություններուն, Վրաց Եկեղեցվո և ժողովուրդի և Ս. Մցխեթայի ողջույնը բերելով Ս. Էջմիածնին և հայ ժողովուրդին:

Ուրախությամբ կնշենք նաև մեր բարեկամական կապերը Անդրկովկասի և Ադրբեջանի Մուսուլմաններու կրոնական վարչության պետ Շեյխ-ուլ-Իսլամ Հաֆիզզադե Դերիրովի հետ, որուն ծանոթացանք 1957 թվականի սեպտեմբերին, Մեր Բաքու այցելության ժամանակ, փոխադարձ համակրանքի և հարգանքի մթնոլորտի մը մեջ:

Երջանիկ ենք հիշելու այստեղ Մեր անկեղծ սիրո կապերը Ռումանական և Բուլգարական Օրթոդոքս եկեղեցիներու և անոնց արժանավոր Դասակալներուն՝ Ռումանիոյ Պատրիարք Նորին Ամենապատվություն Հուստինիանի և Բուլգարիոյ Պատրիարք Նորին Ամենապատվություն Կիրիլի հետ:

Դարավոր բարեկամությունը՝ Հայ, Ռումեն և Բուլգար եկեղեցիներու և ժողովուրդներու միջև առավել կենդանություն կտանա մեր օրերուն, բարի արդյունքներով, ի միխիթարություն բոլորիս:

Եվ մենք գնծությամբ ողջունեցինք Հուստինիան և Կիրիլ պատրիարքներու այցելությունը Ս. Էջմիածին, այս տարի, մայիսի վերջերուն:

Մեր գործունեության այս երեք տարիներու շրջանին մասնավոր տեղ մը գրավեցին Հայ Եկեղեցվո և հատկապես Մայր Աթոռիս հարաբերությունները Անգլիական Եկեղեցվո և Ձեզ բոլորիդ ծանոթ՝ Անգլիական Եկեղեցվո գլուխ Քենտրբերիի Արքեպիսկոպոս գերաշնորհ դոկտ. Ջեոֆֆրի Ֆիշերի հետ:

Հայտնի են ձեզ բոլորիդ վերջին քանի մը տասնամյակներուն հետզհետե զարգացող բարեկամական կապերը Հայ և Անգլիական եկեղեցիներու, մանավանդ Ս. Տեղյաց մեջ՝ Երուսաղեմ:

1956 թվականին արտասահման Մեր այցելության առթիվ, երջանիկ եղանք ընդունելու Քենտրբերիի Արքեպիսկոպոսի եղբայրական սիրո հրավերը, և Տ. Սերովբե և Տ. Պսակ եպիսկոպոսներուն հետ չորս օրեր, Լամբեթի պալատին մեջ, հյուր եղանք Անգլիական եկեղեցվո մեծանուն Հովվապետին:

Այդ չորս օրերուն ընթացքին, ի պատիվ Մեզ փառավոր ընդունելություններ կազմակերպվեցան Քենտրբերիի Արքեպիսկոպոսին կողմե՝ Լոնդոնի Ուեսթմինիսթրի աբբայարանին և Քենտրբերիի պատմական տաճարին մեջ, իսկ Լոնդոնի հայոց Ս. Սարգիս եկեղեցիին մեջ վայելեցինք ներկայությունը Նորին Գերաշնորհության, մեր սուրբ պատարագի մատուցման պահուն:

Մեր այս հանդիպումը և մեր ունեցած տեսակցությունները առավել ևս ամրապնդեցին մեր կապերը և մեր մեջ առավել ամրացավ համոզումը թե, մեր երկու Եկեղեցիներու եղբայրությունն ի Քրիստոս հետզհետե ավելի և ավելի պաղատու պիտի դառնա:

Հետևաբար տպով երկու կողմերու փոխադարձ փափագներուն, հարմար նկատեցինք, որ ապագային կիսապաշտոնական հանդիպումներ տեղի ունենան Հայ և Անգլիական եկեղեցիներու ներկայացուցիչներուն միջև, նպատակ ունենալով փոխադարձ ճանաչումը և մշակումն ու բանաձևումը այն հարցերուն, որոնք հետագային կրնան քննարկման առարկա դառնալ մեր երկու եկեղեցիներու իրավասու մարմիններու կողմե:

Համաձայնած էինք Քենտրբերիի Արքեպիսկոպոսին հետ, որ այդ նպատակով առաջին հանդիպումը տեղի ունենա Երուսաղեմի մեր Պատրիարքարանին մեջ՝ 1957-ի աշնան: Դժբախտաբար սակայն, Երուսաղեմի մեր վանքի ձեզ ծանոթ կացության հետևանքով, այդ բանակցությունները հետաձգվեցան անորոշ ժամանակով:

Մենք հույս ունինք, որ ապագային, ժամանակը և պարագաները բոլորատու կդառնան Մեր աստվածահաճո նպատակները իրագործելու համար:

Ուրախ ենք, որ Ամերիկայի Միացյալ Նահանգներուն մեջ ալ նույնպիսի փոխադարձ գործակցության մթնոլորտ մը ստեղծված է Հայ և Անգլիկան եկեղեցիներուն միջև: Այդ ստեղծված մթնոլորտի արտահայտությունը եղավ «Նեշրը» Կառնսի ավ Ջրչս ավ Քրայստ» կազմակերպության Ամերիկյան սկսեցվող անդամակցությունը:

Մենք սիրով արձանագրեցինք Կիլիկիոյ Սպիսկոպոսական ժողովը որոշումին՝ մերձենալու և գործակցության գետին մը ստեղծելու արևելքի և հատկապես մեզ դավանակից Ասորի, Հարեշ և Հնդիկ Մալաբար եկեղեցիներուն միջև:

Մեր իղձերեն մեկը կմնա մոտիկ ապագայի մեջ կենսագործումը Եպիսկոպոսական ժողովի այդ որոշման:

ԻՐ) ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Ինչպես ծանոթ է Ձերդ Սրբազնությանց Մեր սաստկաբուռ, անարժանությունը և օգտակարությունը շեշտած էինք Եպիսկոպոսական ժողովի մը գումարման այստեղ, այս օրերուն, Մայր Արոռին մեջ, ներկա նստդիսությունները առիթով:

Ուրեմն վերջացնելէ առաջ Մեր զեկուցումը, ձեր ուշադրության կոչնչենք ձեզ ալ ծանոթ այն պարագան, որ 1956 թվականի Կանիրեի Եպիսկոպոսական ժողովի կարգ մը որոշումները ինչ-ինչ պատճառներով չիրագործվեցան, իսկ ուրիշ որոշումներ գործադրության ընթացքի մեջ կգտնվին:

Որով ստիպողական անհրաժեշտությամբ կդրվի այդ խնդիրներուն նորեն անդրադառնալու հարցը, ի հարկին նոր որոշումներ ընդունելու առաջադրությամբ:

Այստեղ կուզենք առանձնացնել հետևյալ հարցերը, առաջարկելով, որ անոնք Եպիսկոպոսական ժողովին ենթության առարկան դառնան: Այդ հարցերն են՝

1) Քննարկում Ազգային-եկեղեցական Սահմանադրության նախագծի.

2) Ազգային-եկեղեցական ժողովի գումարման խնդիր.

3) Ասվածաշունչի աշխարհաբար բարգմանության և տպագրության խնդիր.

4) Կիլիկյան Արոռի տագնապ.

5) Երուսաղեմի Հայոց Պատրիարքական Արոռի կացություն և նրանց Եպիսկոպոս Տերտերյանի հարց.

6) Հայ և Անգլիկան եկեղեցիներու հարաբերության խնդիր.

7) Ապրիլյան եղեռնի նահատակներուն հիշատակը սրբացնելու հարց.

8) Հայ եկեղեցական երաժշտության հատատակության խնդիր:

Ինչպես նկատեցիք, Մեր առաջարկած օրակարգի մեջ կան երեք նոր հարցեր, որոնք են՝ Երուսաղեմի կացությունը, ապրիլյան նահատակներու սրբացման խնդիրը և հայ եկեղեցական երաժշտության հրատարակումը:

Եթե Ձերդ Սրբազնությունները ունենան ուրիշ հարցեր ևս, անշուշտ կրնան Մեզ առաջարկել:

Սրբազա՛ն եղբայրներ, սիրելի՛ պատգամավորներ.

Մեր ծննդյան հիսնամյակը և գահակալության երրորդ տարեդարձը Մենք կնկատենք հաշվետվության օր, այս երեք տարիներու Ձեր գործունեության: Հաշվետու և պատասխանատու ենք Աստուծո և Մեր խղճի առաջ, հաշվետու և պատասխանատու ենք մեր եկեղեցիին ու մեր Ազգին առաջ:

Մենք, Մեր ներկա զեկուցագրով, ներկայացուցիչ՝ ձեզ, և ձեր սիրոցով մեր Ս. եկեղեցիին և համայն հայ հավատացյալ ժողովուրդին՝ ընդհանուր պատկերը անցնող երեք տարիներու Մեր աշխատանքին, պատկերը Մայր Արոռի ներկա վիճակին, ներքին ու արտաքին մեր թեմերուն, ինչպես նաև կարևոր հարցերը, որ կդրվին այս պահուս մեր եկեղեցիին առաջ:

Օգտակար և անհրաժեշտ կհամարենք, որ Ձերդ Սրբազնությունները ուշադրությամբ և խղճի մտոն ձեր դատողությունն ու քննարկման առարկան դարձնեք այդ հարցերը և հետ կարծիքներու փոխանակման, ձեր եզրակացություններ հանիր բանաձևել ու ներկայացնել Մեզ:

Մեր Ս. եկեղեցին հուզող հարցերը բազմաթիվ են և ոմանք անհամբերանորեն ծանրակշիռ: Հետևաբար մեր գործունեության մեջ մեզմե ամեն մեկես կպահանջվի աշխատություն, իմաստություն և հեռատեսություն, մանավանդ՝ մեր եկեղեցվո և ժողովուրդի գերագույն և տևական շահերու արթուն գիտակցություն, ու գործելու պայծառ. խաղաղ վճռականություն:

Մեր բոլոր դժվարությունները անցողական երևույթներ են, արդյունք անկարգ ծգտումներու, շփոթ տեսողություններու և սխալ ենթադրություններու, որոնք պահ մը տպավորությունը կրողուն հիմնված բլլալու

արտասահմանի որոշ պայմաններու առարկայական կացութիւնի վրա: Եվ սակայն, այդ առարկայական երևացող կացութիւնները իրականութիւնի մէջ մեր կյանքի հետ ազերս ունեցող, միջազգային քաղաքական ժամանակավոր իրադրութիւններ են, որոնք պարզապես կօգտագործվին ու կշահագործվին ափ մը ուղեկորույսներու կողմէ, որոնք Հայ Եկեղեցվո և հայ ժողովուրդի հերկա ապրումներեն և իրական կյանքի ճարցերեն հետզհետէ կենռանան ու կոտարանան:

Մեր պարտքն է ամուր և անսասան կանգնիլ Հայ Եկեղեցվո սուրբ հանոններու և ավանդութիւնց պատվանդանին վրա, մնալ հավատարիմ մեր Սրբութիւն Սրբոց Ս. Էջմիածնին, մեր ժողովուրդին և մեր Մայր Հոգին: Այս իսկ է իսասար Մեր աշխատանքին, Մեր կյանքին և գրավականը Մեր սուրբ գործի հաղթանակին:

Թող Աստված լուսավորե Մեր համբան, թող Աստված զորացնե բարին գործելու Մեր կամքը և մնա Մեզ օգնական և մարտակից այժմ և միշտ:

Կեցցե՛ն հայ ժողովուրդը և իր Ս. Եկեղեցին:

Հավե՞տ անսասան մնա, բարձրանա, ծաղկի ու փառավորվի մեր աչքի լույս Ս. Էջմիածինը Ամենայն Հայոց:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ ՀԻՍՆԱՄՅԱԿԻՆ ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՐԻՑՈՒԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Տոն է Մայր Աթոռում։

Ս. Էջմիածինը ցնծում է։ Շարժում ու եռուզեռ, խոսք ու խոկում կա անգամ հնամյա այս մամռոտ պատերի մեջ։ Տոն է Հայաստանյայց Եկեղեցու, տոն է նախամեծար Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, տոն է Ամենայն Հայոց Հայրապետության լուսավորչազարմ Գահակալին և, վերջապես, հրաշափառ տոն է հանուր կրոնապաշտ հայ հոգիներին։ Լո՜ւյս, աստվածային շնորհապարգև լույս է հագել Մայր Աթոռը Լուսավորչի մըշտավառ կանթեղի շողերից, ողջունելու համար իր Մեծ Հայրապետի օրհնյալ հոբելյանը։

Երախտագիտական խորունկ հուզումների թելադրությամբ, ժրաջան աշխատանքի են անցել Հոբելյանական կենտրոնական հանձնաժողովը և բոլորը՝ իրենց սիրելյալ Հովվապետին մատուցելու իրենց սրտի և կարողությունների ամենաթանկագինն ու լավագույնը։

Հոբելյանական խարդիկներն ավետվել են ի Սփյուռս աշխարհի և պատգամավորկոմունկների շարանները հեռուներից ձգվել են դեպի մեր հոգիների մեջտ տաքուկ և հյուրընկալ բույնը, դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին։

ԺԱՄԱՆՈՒՄ.— Հոկտեմբերի 2-ն է։ Պատգամավորները ժամանում են Երևան։ Առաջինը ինքնաթիռից իջնում է Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի բարեջան առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը։ Սրբազանը դիմավորվում է ըստ պատշաճի։ Հաջորդ օրերին Մայր Աթոռ են ժամանում Կիլիկիայի Կաթողիկոսության ուխտապահ միաբան հոգեշնորհ Տ. Գնել ծայրագույն վարդապետ Ճերեճյանը և հոգեշնորհ Տ. Գյուտ աբեղա Նագաշյանը։

Այնուհետև հեռավոր Ամերիկայից ժամանում է Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի թեմական խորհրդի ատենապետ և Ս. Էջմիածնի տպարանի հանգանակության հանձնաժողովի նախագահ պր. Երվանդ Առաջանյանը, ընկերանեղությամբ պր. Հարրի Թադեոսյանի և պր. Մայքլ Բարսեղյանի, Բաղդադից՝ Իրաքի թեմի առաջնորդ հոգեշնորհ Տ. Զգոն ծայրագույն վարդապետ Տեր Հակոբյանը։

Հոկտեմբերի 9-ն է, հինգշաբթի։ Վաղ առավոտյան Մայր Աթոռը պատրաստ է ամենայն պատշաճությամբ դիմավորելու Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ծերունազարդ ու քաջակորով Տեղապահ Տ. Խաչ արքեպիսկոպոս Ասլանյանին իր շքախմբի հետ, որի կազմի մեջ էին Դամասկոսի առաջնորդ գերաշնորհ Տ. Շավարշ եպիսկոպոս Գուլումճյանը, գավազանակիր հոգեշնորհ Տ. Գևորգ աբեղա Կարպիսյանը և գավառական ժողովի ատենապետ պր. Ժիրայր Գոյաճյանը։

Հյուրերն պատշաճորեն դիմավորեցու համար Երևանի օդանավակայանն էին մեկնել գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը և գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը, Գեղարդույն Հոգևոր Խորհրդի անդամները, հյուրընկալներ՝ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարյանը, հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը և Հոբելյանական կենտրոնական հանձնաժողովի անդամները։

Նորին Սրբազնությանը բերող ինքնաթիռը խուլ աղմուկով վայր է իջնում հայոց բարձր լեռներից և կանգնում Հայրենի սրբազան Հողի վրա։ Ընդում են ծափերը և տեղի են ունենում սրտառուչ ողջագուրումներ։ Գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը, հանուն Վեհափառ Հայրապետի, բարի գալստյան սրտագին խոսք է ասում։ Տեղապահ Տ. Խաչ արքեպիսկոպոսը, զգացված, շնորհակալություն է հայտնում ջերմ և եղբայրական դիմավորության համար և ապա Վեհափառ Հայրապետի ինքնաշարժով առաջնորդվում է Մայր Աթոռ։ Նորակառույց դարբասի մոտ Նորին Սրբազնությունը դիմավորվում է Մայր Աթոռի միաբանության, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմի և ուսանողության ու ժողովրդի կողմից բուռն ծափերով։

Ապա եկեղեցական թափորով, «Հրաշափառ շարականի երգակցությամբ Նորին Սրբազնությունը առաջնորդվում է Մայր Տաճար։ Հուզիչ երկյուղածությամբ Տեղապահ սրբազանը ծունր է դնում Իշման Ս. Սեղանի առաջ և մրմնջում Իր աղոթքը։

Հանդիսավոր լռության մեջ Նորին Սրբազնությանը բարի գալուստի խոսքով ողջունում է գերաշնորհ Տ. Սահակ սրբազանը՝ ընդգծելով նրա երջանիկ ժամանման առթիվ բոլորի ուրախությունը և հայտնելով լավագույն բարեմաղթություններ։

Ամենապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոսը իր հուզիչ պատասխան խոսքի մեջ հայտնում է իր սրտի անհուն փափունակությունը՝ Վեհափառ Հայրապետի կողմից իրեն ուղղված հրավերի համար և չնայած իր առաջացյալ տարիքին և ճանապարհորդության դժվարություններին ու հոգնությունների, ի՛ր Մայր Աթոռ գալու ցանկությունը ընդգծում է որպես իր հավատարմության արտահայտությունը դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին և նրա արժանավոր Գահակալն ու նրա բոլոր հրավերներն ու հրահանգները։ Մայր Աթոռից ներս խոսելով իր անդրանիկ տպավորությունների մասին, Նորին Սրբազնությունը ի մասնավորի հիշում է իր խորին գոհունակությունը Մայր Աթոռի արտաքին տեսքի մեծ փոփոխությունների կապակցությամբ և ամենուրեք կատարված շինարարական աշխատանքների մասին 1955—1958 թվականների ընթացքում։ Վերջում սրբազանը նորից հայտնում է իր գոհունակությունը իրեն ուղղված հայրապետական հրավերի և ցույց տրված ջերմագին ընդունելության համար։

Ապա Տեղապահ սրբազանը առաջնորդվում է Վեհարան, որտեղ սրտագին ընդունվում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կողմից խորապես հուզումնալից և սրտառուչ ողջագուրումով և բարի գալուստի հոգեբուխ խոսքերով։

Նույն օրը ավելի ուշ Մայր Աթոռ է ժամանում Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևմտյան թեմի (Կալիֆոռնիայի) պատվիրակությունը գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոս Վարժապետյանի գլխավորությամբ։

Հոկտեմբերի 10-ին, ուրբաթ առավոտյան, ժամանում են Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ գերապատիվ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը՝ ընկերակցությամբ Կահիրեի թեմական խորհրդից պր. Հովհաննես Քեհյայանի և տիկնոջ, Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ գերապատիվ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյանը՝ ընկերակցությամբ Կենտրոնական վարչության առենապետ մեծար Սեդրակ Քարյանի, պր. Հակոբ Տեր-Հակոբյանի, Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Իսրայելի ներկայացուցիչ հոգեշնորհ Տ. Բարգեն վարդապետ Ասպատյանը, Սան-Պավլոյից՝ արժանապատիվ Տ. Եղնիկ ավագ քահանա Վարդանյանը և ներքին թեմերի հոգևորական և աշխարհական պատգամավորները։

Հոկտեմբերի 11-ին, շաբաթ օր, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեցին Մայր Աթոռի Մեծ Բարերար հանգուցյալ Գալուստ Կյուլպենկյանի որդին՝ պր. Նուպար Կյուլպենկյանը իր ազնվափայլ տիկնոջ՝ Մարի Կյուլպենկյանի հետ, տեր և տիկին Սարգիս և Աստղիկ Քյուրքճյանները (Լոնդոն), պր. Երվանդ Հյուսիսյանը և դոկտ. Երվանդ Արզումանյանը (Միլանո), ճարտարապետ պր. Եդվարդ Ուլթուճյանը (Փարիզ), ռումինահայ թեմի պատվիրակությունը՝ հանձինս արժանապատիվ Տ. Իգնատիոս ավագ քահանա Քիլիմյանի, պր. Հովհաննես Գալփաքյանի և պր. Արամ Հակոբի։

Նույն օրը ավելի ուշ Մայր Աթոռ ժամանեց Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբազնություն Մելիքսեդեկ Գ-ի և Վրաց եկեղեցու պատվիրակությունը, որի կազմումն էին գերապատիվ Տ. Լիոնիդ և գերապատիվ Տ. Զինոնի եպիսկոպոսները և պր. Բուլիանին։

Նույն օրը ժամանեց նաև Անդրկովկասի մուսուլմանների կրոնական վարչության նախագահ Շեյխ-ուլ-Իսլամի պատվիրակությունը հանձին Ռզայև Ալի Արասի և Հաքիմոս Ալի Աղայի։

Հոկտեմբերի 12-ին, կիրակի, ժամանեց նաև Հնդկաստանի և հեռավոր Արևելքի թիմի Հայրապետական պատվիրակ և առաջնորդ գերաշնորհ Տ. Աստղիկ եպիսկոպոս Ղազարյանը, ընկերակցությամբ տեր և տիկին Նեստոն և Անհա Բազիլների, պր. Վանեկարիչ պր. Գրիգոր Շիլթյանը (Միլանո), Հարեշիստանի հարց հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Զավեն արեղա Արզումանյանը, մեթր Հրաչ Սեդրակյանը (Թեյրութ), բանաստեղծ Վահե-Վահյանը (Թեյրութ) և ուրիշներ։

Վեհափառ Հայրապետի ծննդյան և դահակալության հանդիսություններին մասնակցելու համար Մայր Աթոռ էին ժամանել նաև պր. Արշակ Ալպոյաճյանը, (Կահիրե), տեր և տիկին Արծրունի և Էլիզ Զրբաշյան-

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՄՊՇՈՎԱՆՈՒ ՏԱԿ ԱՌԱՋՆՈՐԴՎՈՒՄ Է ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

հան Փոլադյանի, պր. Հ. Մատաթյանի, պր. Մ. Սարգիսյանի, պր. Վ. Սարգիսյանի և օրիորդ Մարի Կարապետյանի։

Նույն օրը Մայր Աթոռ ժամանած հյուրերի թվումն էին գրագիտուհի և «Երիտասարդ հայուհի» պարբերաթերթի խմբագիր տիկին Սիրան-Սեզա Քյուսիելյանը (Թեյրութ), և Թեյրութի «Արարատ» թերթի խմբագիր պր. Արսեն Կիտուրը։

Հոկտեմբերի 13-ին, երկուշաբթի, Մայր Աթոռ ժամանեց «Նայիրի» թերթի խմբագիր, բանաստեղծ պր. Անդրանիկ Ծառուկյանը (Թեյրութ)։

Այնուհետև, հաջորդ օրերին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեցին հանրահայտ

ները (Մարսիլ), տեր և տիկին Վահե և Սիրարփի Արթինյանները (Ալեքսանդրիա), պր. Անդրանիկ Ջպուքճյանը, պր. Ռուբեն Պետրոսյանը (Հալեպ), պր. Նիկոդոս Փեսոյանը (Լոս-Անջելոս), և ուրիշներ։

Հոբելյանական հանդիսություններին մասնակցելու համար Մայր Աթոռ էին ժամանել նաև մեր ներքին թեմերի թեմական առաջնորդներն ու թեմական խորհուրդների հոգևորական և աշխարհական ներկայացուցիչները։ Վրաստանի թեմից ժամանել էին թեմական առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը և պր. Սուրեն Ավշյանն ու պր. Սամվել Խաչանյանը, Արարատյան թեմից՝ առաջնոր-

դական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարյանը, արժանապատիվ Տ. Սարգիս քահանա Անդրեասյանը և պր. Պարգև Շահբազյանը։ Ադրբեջանի թեմի պատվիրակությանը գլխավորում էր առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը։ Պատվիրակության կազմի մեջ էին արժանապատիվ Տ. Վահան ավագ քահանա Գրիգորյանը, պր. Սիխայիլ Գրիգորի Կայլաովը և պր. Սերգեյ Թաղդասարյանը։ Շիրակի թեմից՝ առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը, արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Քելամյանը և պր. Ներսես Ներսեսյանը։ Հյուսիսային Կովկասի և Նոր-Նախիջևանի թեմից՝ առաջնորդ հոգեշնորհ Տ. Գարեգին ծայրագույն վարդապետ Տեր-Հակոբյանը, արժանապատիվ Տ. Գևորգ ավագ քահանա Դարբինյանը և պր. Վլադիմիր Սրմաքեշլյանը։ Մոսկվայի հոգևոր հովվությունը ներկայացնում էր հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը։

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՀԻՇԱՏԱԿԻՆ ԵՎ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ.— Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա Վեհափառ Հայրապետի ծննդյան հիսնամյակի և գահակալության երրորդ տարեդարձի հանդիսությունների ծրագիրն սկսվեց կենսագործվել հոկտեմբերի 11-ին, Սրբոց Թարգմանչաց տոնին։

Այդ օրը, առավոտյան ժամը 10-ին, Մայր Աթոռ ժամանեցին նաև բոլոր պատգամավորները, հյուրերը, ինչպես նաև Մայր Հայրենիքում այդ օրերին գտնված սփյուռքահայ ուխտավորները, ներկա լինելու համար սրբազան պատարագին, Մայր Աթոռի ժամացույցի աշտարակի հիմնօրհնեքին և Հոգևոր Ճեմարանում Թարգմանչաց հիշատակին կազմակերպված գրական-գեղարվեստական հանդեսին։

Զվարթագին և տոնական դողանքում են Մայր Տաճարի զանգերը, ավետելով սկզբնավորումը հոբելյանական արարողությանց և հանդիսությունների։

Հանդիսավոր թափորով Տաճար է առաջնորդվում Վեհափառ Հայրապետը։

Օրվա տոնի առթիվ եպիսկոպոսական հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում Հյուսիսային Ամերիկայի Հայոց Արևելյան թեմի բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը։ Սուրբ պատարագը երգում է Հոգևոր Ճեմարանի երգչախումբը։

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է պատարագիչ սրբազանը՝ ընդգծելով Սրբոց Թարգմանչաց մեծ վարդապետների՝ Ս. Մեսրոպի, Եղիշեի, Մովսես Խորենացու, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու և Ներսես Կլայեցու եկեղեցաշեն, ազգանվեր և մշակութային մեծ գործունեությունը։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ տեղի է ունենում հոգեհանգիստ երջանկահիշատակ Գևորգ Զ Կաթողիկոսի հիշատակին, նրա շիրմի առաջ։

ՀԻՄՆՕՐՀՆԵՔ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԺԱՄԱՑՈՒՅՑԻ ԱՇՏԱՐԱԿԻ.— Հավարտ սուրբ պատարագի, եկեղեցական, թափորով, խնկով ու աղոթքով, շարականների երգակցությամբ և պատգամավորների մասնակցությամբ, Նորին Վեհափառությունը առաջնորդվում է դեպի Մայր Աթոռի հյուսիսային մուտքը՝ կատարելու համար ժամացույցի աշտարակի հիմնօրհնեքը։

Արարատյան դաշտի ոսկի օրերից մեկն է. պայծառ ու ջերմ։

Հնչում է Նորին Ս. Օծության ձայնը՝ «Օրհնեսցի և պահպանեսցի և հաստատուն պահեսցի հիմունք աշտարակի Մայր Աթոռոյս, այս նշանաւ...», հաստատուն հավատով և լավատեսությամբ խաչակնքում է սրբատաշ քարի վրա, խառնում կավը և ապա հուզումով տեղադրում տյառնագրված քարը հիմքի մեջ։ Ո՜վ հայոց բարի Աստված, Հայաստանյայց Ս. Եկեղեցուն դու մի՞շտ, մի՞շտ պարգևիր այսօրինակ շինարար ժամեր։

Բոլոր պատգամավորները, հյուրերը և ուխտավորները շրջապատել են Վեհափառ Հայրապետին և ապրում են նրա հուզմունքներով և ուրախությամբ։

Ավարտված է արդեն Մայր Աթոռի ժամացույցի աշտարակի հիմնօրհնեքը։ Վեհափառ Հայրապետը, պատգամավորների և հյուրերի հետ, առաջնորդվում է Վեհարան։

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԼԱՆՋԱԽԱՉԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ.— Սրբոց Թարգմանչաց տոնի օրը և Իր ծննդյան ու գահակալության հանդիսությունների բարեբաստիկ առիթով, Վեհափառ Հայրապետը մի շատ հաճելի անակնկալով ուրախացրեց Մայր Աթոռի միաբանությանը և պատգամավորներին՝ Մայր Աթոռի չորս վարդապետներին շնորհելով վարդապետական լանջախաչ կրելու իրավունքը։

Հայրապետական բարձր գնահատության արժանացան Մայր Աթոռի երիտասարդ միաբանների Արարատյան թեմի Հայրապետական ներկայացուցիչ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարյանը, Հոգևոր Ճեմարանի փոխ-տեսուչ և «Էջմիածին» ամսագրի քարտուղար հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանը, Մայր Տաճա-

ի փոխ-լուսարարապետ հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը և Գեղարդի վանքի վանահայր հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։

Վեհափառ Հայրապետը Իր ձեռքով խաչերը անցկացնելով նրանց վզերին, խոսեց մի գեղեցիկ խրատական, դրվատելով նաև վարդապետական լանջախաչի արժանացած վարդապետների աթոռանվեր աշխատանքն ու փորձությունը, նրանց նվիրվածությունը Ամենայն Հայոց Հայրապետին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, անպայմանավոր հավատարմությամբ և հնազանդությամբ։ Ապա օրհնելով վարդապետներին, քաջալերիչ հայրական Իր համբույրը դրոշմեց նրանց ճակատներին։

Վեհափառ Հայրապետի պարգևատրությունը ողջունվեց խանդավառ ծափերով։

Լանջախաչի արժանացած վարդապետների կողմից երախտագիտության խոսք ասաց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանը.

«Վեհափառ Տե՛ր, գերաշնորհ սրբազան հայրե՛ր և հարգարժան պատգամավորնե՛ր ու հյուրե՛ր.

Այսօր այս սուրբ խաչը հանձնվեց մեզ ոչ միայն իբրև պարգևատրություն մեր համեստ աշխատանքի համար, այլ մանավանդ իբրև նոր լուծ, նոր պարտք ու պարտականություն հանդեպ Հայաստանյայց Ս. Եկեղեցու և մասնավորապես Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և նրա արժանափոր Գահակալի։

Մենք մեր երդումը ծնրադիր մատուցել ենք մեր հայրերի Աստուծուն, մեր սիրեցյալ Վեհափառ Հայրապետին և ամբողջ հայ հավատացյալ ժողովրդին՝ մեր ձեռնադրության օրերին։ Այսօր մի անգամ ևս կրկնում ենք մեր ուխտը և հավաստիացնում Ձերդ Վեհափառությանը, սրբազան հայրերին, հարգարժան պատգամավորներին և Ձեզանով համայն հայ հավատացյալ ժողովրդին, որ կբազմապատկենք մեր խոնարհ կարողությունները, մեր բոլոր ունեցածը իբրև եռանդ ու ջանասիրություն, իբրև կորով ու անձնվիրություն, իբրև հավատ և ավանդապահություն, իբրև հույզ, սիրտ, հոգի՝ անվերապահորեն նվիրվելու համար մեր Ս. Եկեղեցուն, Ամենայն Հայոց Հայրապետության նախամեծար Մայր Աթոռ Ս. Էջմիա-

ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ ԱՌԱՋՆՈՐԴՎԵԼԻՍ

ծին, մեր հարազատ Երկրին ու հավատացյալ ժողովրդին։

Խաչը, որ մեզ է հանձնված, կլինի մեր հետագա կյանքի սուրբ ուղենիշը, և անսայթաք հավատքն ունենք, որ նրա առաջնորդությունը մեզ կտանի միմիայն դեպի աստվածահաճո գործունեություն։

Պատրաստ ենք շարունակելու մեր բոլորանվեր աշխատանքը և նույնիսկ տալու մեր արյան վերջին շիթն անդամ Եկեղեցու և մանավանդ մեր պատմության, մեր ազգային նկարագրի, մեր պատվի և հավատի այս սուրբ ու անխորտակ պատվանդանին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին։

Այնուհետև բոլոր ներկաները սրտագին շնորհավորեցին վարդապետական լանջախաչի արժանացած վարդապետներին։

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ.— Կարճատև դադարից հետո, ժամը 1.30-ին, Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, բոլոր պատգամավորներն ու հյուրերը առաջնորդվում են Հոգևոր Ճեմարան՝ ներկա լինելու համար Սրբոց Թարգմանչաց խնկավետ հիշատակին նվիրված հանդեսին։

Վեհափառ Հայրապետը, Գերաքույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, պատգամավորներն ու հյուրերը Հոգևոր Ճեմարանի շեմքին ջերմորեն դիմավորվում են ուսանողության ծափողջույններով։ Ապա Վեհափառ Հայրապետը տեղ է գրավում նախագահական Իր աթոռի վրա, շուրջն ունենալով հոգևորական և աշխարհիկ ներկայացուցիչներ։

Ճեմարանի հանդիսասրահում հնչում է Սովետական Հայաստանի Պետական Հիմնի նվագը, որն ունկնդրվում է հոտնկայս և հարգալից։

Ապա Հոգևոր Ճեմարանի սաները խանդավառորեն երգում են Սրբոց Թարգմանչաց նվիրված ՀՈՐՔ զարդարեցին» շարականը։

Թարգմանչաց հիշատակին նվիրված բացման խոսքն ասելու համար ամբիոնին է մոտենում Հոգևոր Ճեմարանի փոխ-տեսուչ եպիսկոպոս Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանը.

«Վեհափառ Տե՛ր, սրբազան և գերաշնորհ հայրե՛ր, սիրելի հյուրե՛ր և հանդիսականնե՛ր.

Պատմական անեղծ ճշմարտություն է, որ փոքրիկ մեր ժողովուրդը, թեև ահավոր արհավիրքներից ու մարտնչումներից մաշված ու հյուծված, այնուամենայնիվ դարերի հեռավոր խորքերից մարդկությանը մատուցել է բոլորին հարդանք պարտադրող հարուստ և հիասքանչ իր մշակույթը։ Հաճախ մարտիրոսված, բայց միշտ կենդանի հայ ժողովուրդը իր ճակատի արդար քրտինքով, իր կոշտացած բաղուկների մեծ ճարտարությամբ, իր պայծառ հոգով և մտքով մեզ ընծայաբերել է հայ գիտության շահը, հայ գեղարվեստի հմայքը, հայ գրականության փառքը։

Մեծ է սուրբ Թարգմանիչների երախտիքը մեր ամբողջ պատմության մեջ։

Թարգմանիչներով աճեց ու կազմակերպվեց մեր կրոնապաշտ ոգին, մեր ազգային ինքնագիտակցությունը, մեր մշակույթը իր բոլոր մարզերով ու շառավիղներով, սկսեցինք ճանաչել զիմաստությունն և դիտաստ, իմանալ զանս հանճարոյ, փարթամորեն սկզբնավորվեց մեր տոհմիկ դպրությունը, Աստուծո շունչը մեր Ս. Եկեղեցու բեմերից և խնկաբույր մագաղաթներից լցվեց մեր հոգիների մեջ։ Նրանց շնորհիվ դարձանք քաղաքական ճանաչողության տեր ժողովուրդ, և եթե դեպքերի դժբախտ բերումով մերթ ընդ մերթ շղթա անցկացրին մեր պարանոցներին, մեր շրթներին դրին կապանքներ, փղերով ու կեռ թրերով փորձեցին առևանգել մեր ազատությունը, մենք մեր կյանքը չսակարկեցինք ու չվաճառեցինք մեր ազատատենչ հոգին, մենք իմացանք «մեռնել» երբեմն ու դրանով միայն մնացինք միշտ կենդանի, մինչ այսօրվա մեր Երկրի պայծառ իրականությունը։

Թարգմանիչները, մեր Եկեղեցու կողմից տարբ հայտարարված այդ «գերազանցելի» քան զամենայն, մտօք ծննդական, բանիւք պայծառ, գործովք ժուժկալ, խորհրդակցությամբ մեծ, հաւատով ուղիղ մարդիկ մեծ երազներ ու լուսեղեն տեսիլներ բերին մեր ժողովրդին, որոնց կենսագործմանը հետևողականորեն հետամուտ եղավ նա դարից դար և հասավ իր այսօրվա վերջնական ու ապահով հանդրվանին, դեթ Հայրենի Հողի վրա։

Պատմական այս մեծ ծառայությունները բերելով Հայաստանյայց Եկեղեցու շինության, պայծառության, հայ մշակույթի և գրականության կազմակերպման ու ճոխացման, ինչպես նաև հայ ժողովրդի ազգային ինքնորոշման և ինքնապահպանման նվիրական գործին, կենդանի մնացին դարից դար մեր ժողովրդի հետ, նրա սրտի ու գիտակցության մեջ։

Ահա այս համոզմունքների թելադրությամբն էլ կազմակերպված է այս փոքրիկ հանդեսը, որը ձեր բոլորի թույլտվությամբ հայտարարվում է բացված։

Այնուհետև Ա լսարանի ուսանող Կարապետ Սուքիասյանը ընթերցում է Կորյունից մի հատված՝ նվիրված գրերի գյուտին և Թարգմանչաց գործունեությանը։

«Ո՞վ մեծասքանչ դու լեզուս հոգեզմայլ երգը ապրումով և հուզումով երգվում է Հոգևոր Ճեմարանի սաների կողմից։

Ապա վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը խոսք է տալիս Բաղդադի թեմի առաջնորդ նոգեշնորհ Տ. Զգոն ծայրագույն վարդապետ Տեր-Հակոբյանին, որը ողեկոչելով հիշատակը մեր թարգմանիչ վարդապետների ասում է.

«Այսօր ամենքս ալ շատ երջանիկ ենք և շնորհապարտ, որ առիթը կունենանք միասին պանծացնելու գործն ու հիշատակը մեր տուրբ թարգմանիչներուն, որոնք առավելաբար Ս. Էջմիածնի այս տուրբ տեղին վրա երկնեցին և կերտեցին հայ մշակույթը, ներշնչված Ս. Էջմիածնի լուսավորչյան տեսիլքեն։

Որո՞նք էին թարգմանիչները, ի՞նչ եղավ անոնց գործը, ի՞նչ էին անոնց մտահոգությունները ու նպատակը։

Թարգմանիչները անոնք են, ըստ սրբազան քերթողի,

«Որ զարդարեցին տնօրինաբար
զիմաստս Աստեղին,
Հաստատելով յերկրի զգիր կենդանի,
Հովուել զհօտ նոր Իսրայէլի»։

Թարգմանիչ անունը տրված է մեր պատմության այն անմոռան ղուլգին, որ հրաշակերտեց հայերեն այբուբենը, 404-ին։

Թարգմանիչ կկոչվին այն բոլոր անձերը, որոնք բաժին մը ունեցան Աստվածաշունչի հայերեն ոսկեդիմիկ թարգմանության մեջ, 404—434 տարիներուն։

Թարգմանիչ կորակվին նաև այն անձերը, որոնք մայր ու դայակ եղան, կնքահայր ու գործավոր դարձան հայ մշակույթի ծննդյան ու բարգավաճումին ե—ԺԸ դարերուն—Սահակ, Մեսրոպ, Եղիշե, Դավիթ Անհաղթ, Մովսես Խորենացի, Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի և շատ ուրիշ գործակիցներ ու հետևորդներ։

Թարգմանիչները բարձր հարացույցի, գեղեցիկ տեսիլքի և ստեղծագործական աշխատանքի նվիրված դեմքեր եղան մեր մեջ։ Անոնք հայության մեջեն ընտրյալներն եղան Աստուծո։ Ամենքն ալ կրոնավորի ուխտ կատարեցին, վանական կնքուղ ստացան, Աստուծո Տաճարին, Մեծ և Փոքր Հայոց, հայ նախարարական և մյուս շեն ու գեղջուկ բոլոր տուներուն լուսարար դարձան, գիտակից, հավատարիմ, անձնվեր և մաքրակենցաղ լուսարար։

Երջանիկ գյուտն է ան հայ նշանագիրներուն։ Աստվածաշունչ հայացումն է ան տիեզերական մեծ Մատյանին։ Հրաշալի ծնունդն է ան հայ մշակույթին։ Առարկայական ապացույցն է ան քրիստոնյա հայուն տաղանդին, հայուն հոգեկան և ֆիզիկական գոյության։

Ուստի անկեղծությամբ և սիրով կխոնարհինք Ս. Թարգմանչաց անվան, գործին և հիշատակին առջև, մտքի և զգացումներու հորդարուխ զեղումով։

Դարերու մշուշին մեջեն երբ հիմակ կդառնանք ու կնայինք իրենց, լուսապսակ կդրտնենք իրենց գլուխները և կոթողային՝ իրենց գործը դասական։ Անոնց պատկերին առջև կեցած կզմայլինք իրենց կյանքերուն գեղեցկության, իրենց կատարած գործի որակին ու քանակին, տարողության վրա։ Սքանչելի ծառայություն մատուցին անոնք խոստացված «Երկնից արքայության» ի Հայաստան հաստատումին, և հայ ցեղին իբր ազգային միավոր պահպանության և հավերժացման համար։

Թարգմանիչները ամեն կարգի նեղություն և չարչարանք հանձն առին այն վստահությամբ, թե իրենց ստեղծագործած գրերը կենդանի խորհրդանշաններ պիտի դառնային Աստվածային խոսքին, մոգական բանալիներ՝ Անոր կամքին և գաղտնիքներու դարբասին, որ Ս. Գիրքն է։ Անոնք գիտեին, թե հայերեն գրերը նշանակ և խթան պիտի հանդիսանային Ազգին ստեղծագործ ոգվույն, որ կայծ առած էր Քրիստոսի՝ երկրի վրա ձգած հուրեն։

Թարգմանիչները կհավատային, թե հայկական սիղոբաները հայերեն Աստվածաշունչին հետ հավիտենական ամրոցներ պիտի դառնային մեր Ազգի գոյության և պահպանության։

Արշակունյաց խարխլած գահին տեղ, Սահակ-Մեսրոպյան կաճառը հայերեն գրերուն գյուտով և Աստվածաշունչի թարգմանությամբ ուղեց Ազգին գլխուն դնել բանականության թագը, ուզեց Հայաստան աշխարհին և հայ սրտերուն վրա հաստատել Քրիստոսի թագավորության սիրո գահը, որպեսզի անոր հովանվույն ներքև Աստուծո շունչով թե ու թռիչք առնե հայ հանճարը, արևու լույսին և հանուր մարդկության առջև բացվի հայ միտքը, որպեսզի եղբայրության սիրով լեցվին հայ սրտերը, հրեշտակային ոգևորությամբ գեղեցկանա հայ երգը, հավիտենականին բնակությանը համար երկնչանանա հայկական տաճարը... որպեսզի ծլի, ծաղկի, հասունանա և պտղաբերի հայ մշակույթը, մեր թարգմանիչներուն աղոթքին ու երկունքներուն այդ անդրանիկ զավակը, գեղեցիկ, կենսունակ, խոստումնալից այն գերդոր տղան, որուն օրինավոր խնամակալն է Հայաստանյայց Եկեղեցին՝ թարգմանիչներու կրոնական դավանանքին և հայրենասիրական առողջ ոգվույն հավատարիմ գտնվող հայությունը։

Թարգմանիչները այնքան իրապաշտ էին որքան գաղափարապաշտ։

Մենք կտեսնենք անոնց գեղեցիկ հույսերուն և երազներուն շոշափելի արդյունքները, մենք կվայելենք անոնց ստեղծագործ աշխատանքի անմահական պտուղները։ Ուստի արդար է, որ ամեն տարի փառահեղ շուքով և խանդավառությամբ տոնախմբենք Թարգմանչաց հիշատակը, որուն հուշարձանն է հայերեն Աստվածաշունչը, վեմն ու խարիսխը հայ մշակույթին»։

Հոգեշնորհ Տ. Զգոն վարդապետի Թարգմանչաց հիշատակի ոգեկոչման նվիրված խոսքերը ընդունվում են խանդավառ ծափերով։

Այնուհետև Ճեմարանի երգչախումբը երգում է «Ամանեալ Մովսիսի» շարականը։

Ապա անվանի լեզվաբան և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ պրոֆ-դոկտ. Արարատ Ղարիբյանը հանդես եկավ «Հայերեն լեզուն և բարբառագիտությունը» թեմայով դասախոսությամբ, որը լսվեց հարաճուն հետաքրքրությամբ և մեծ ուշադրությամբ։

Սիամանթոյի «Ս. Մեսրոպ» պոեմից «Գյուտին փառքը» հատվածի արտասանությամբ հանդես եկավ Բ դասարանի ուսանող Սեդրակ Էվրիկյանը։ Վահան Թեքեյանի «Տաղ դրաբարին» քերթվածը արտասանեց Գ դասարանի ուսանող Գեորգ Բաղդիշյանը։

Թարգմանիչ վարդապետների հիշատակին նվիրված հանդեսում Վեհափառ Հայրապետը տվեց Իր օրհնությունը ուսանողության և ներկա հանդիսականներին։

Սրբոց Թարգմանչաց հոամեծ վարդապետների հիշատակին նվիրված գրական-գեղարվեստական հանդեսն ավարտվեց Տերունական աղոթքով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով։

Ժամը 4-ին Վեհարանում պատգամավորների և հյուրերի պատվին տրվեց ճաշկերույթ, որտեղ եղան բարի գալուստի խոսքեր, բաժակաճառեր, սրտագին բարեմաղթություններ Հայաստանյայց Եկեղեցու, հայ ժողովրդի և Հայրենի երկրի պայծառության, երջանկության և շինության համար։

Երեկոյան բոլոր հյուրերը ներկա եղան «Դավիթ բեկ» օպերայի ներկայացմանը։

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԹԱԲՅԱՆ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԵՎ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆԻ ԾԱՂԿՅԱ ԴԱՇԼԻՃՈՒՄ

Կիրակի է, հոկտեմբերի 12-ը։ Մայր Աթոռը ողողվել է Հայաստանի աշնանային արևի շողերով։ Ժողովուրդը խումբ-խումբ հավաքվում է Մայր Տաճար և բակի մեջ։ Ամեն կողմ տոնական եռուզեռ է և ուրախություն։

Ժամը 9.30-ից ինքնաշարժերի շարասյունը ներս է մտնում ավագ դարբասից, բերելով պատվարժան պատգամավորներին, հյուրերին և Սփյուռքահայ ուխտավորներին։

Ավարտվել է առավոտյան ժամերգությունը։ Փոքր դադարից հետո վերստին ղողանջում են Ս. Էջմիածնի զանգերը, և տարածվելով Արարատյան դաշտի վրա, հասնում են մինչև հեռուները՝ լցվելու համար բոլոր հայ հոգիների մեջ անխտիր...

Ժամն է եպիսկոպոսական հանդիսավոր պատարագի։ Պատարագում է Նորին Սրբազնություն ամենապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոս Աջապահյանը՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Տեղապահը։

Պատկառելի եկեղեցական թափորը հանդիսավորությամբ, ժողովրդական խանդավառ արտահայտություններով միջով հոբելյար Վեհափառ Հայրապետին առաջնորդում է Մայր Տաճար։ Վեհափառ Հայրապետի ամպհովանին կրում են պր. Նուպար Կյուլպենկյանը, պր. Սարգիս Քյուրքճյանը, պր. Երվանդ Հյուսիսյանը և պր. Երվանդ Աղաճանյանը։

Հավատացյալ ժողովրդի հսկա զանգվածը բաժանված է երկուսի և երկյուղած ու սրտառուչ հայացքով հետևում Նորին Ս. Օծության ու գլխահակ ընդունում Նրա օրհնությունները։ Տաճարի երկու դասերում տեղ են գրավել հայ և օտար պատգամավորներ, հյուրեր և պաշտոնական անձնավորություններ և ուխտավորներ։

Սրբազան պատարագը շարունակվում է հոգեզմայլ թավշությամբ, գերելով բոլոր-բոլորի հոգիները։ Երգում է Մայր Տաճարի երգչախումբը նկմալյան սուրբ պատարագը՝ խմբավար պր. Հրանդ Գևորգյանի ղեկավարությամբ։

«Հայր մերդ-ի պահին խանդավառ ու գեղեցիկ քարոզ է խոսում Եգիպտոսի հայոց թեմի բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը.

«Ցորքան ժամանակս իցեմ հեթանոսաց առաքեալ, զպաշտօնն իմ փառաւոր առնեմ։

(ՀՌՈՄ. ԺԱ 13)

«Հանդիսավոր առիթով մը առաքյալն Պողոս այս խոսքերը ուղղելով հռոմայեցի հավատացյալ ժողովուրդին կըսեր. «Ցորքան ժամանակս իցեմ հեթանոսաց առաքեալ, զպաշտօնն իմ փառաւոր առնեմ։

Նույն այդ խոսքերը կրնա արտասանել հանդիսավոր օրվան մեջ և այս պահուս մեր անմոռաց Հայրապետը, առաքյալի հավատքով և առաքյալի հուզումով՝ Իր հիսնամյա հոբելյանին և գահակալության երրորդ տարեդարձին առիթով.

«Իբրև Հայրապետ և Կաթողիկոս Ամենայն Հայոց և Գահակալ լուսավորչահաստատ Հայրապետական Աթոռին՝ պաշտոնս պիտի փառավորեմ»։

Ցնծության մեջ է այսօր բովանդակ հայոց ժողովուրդը Հայաստանեն ներս ու դուրսերու մեջ, վասնզի երջանիկ բախտը վիճակված է իրեն տոնելու և տոնախմբելու հիսնամյա հոբելյանն ու գահակալության երրորդ տարեդարձը իր սիրեցյալ Հայրապետի՝ Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն Կաթողիկոսին Ամենայն Հայոց։

Նորին Ս. Օծությունը մոռցավ աշխարհը իր բազմապիսի առավելություններով, արհամարհեց աշխարհի փառքերն ու մեծությունները, Իր ազգանվեր ու հայրենանվեր գործը չշփոթեց երբեք նյութի ու նյութականի հետ, Իր պարծանքի առարկան Քրիստոսի խաչը նկատեց և տոնական և փառավորումի այս հանդիսավոր պահուն մեր սիրեցյալ Հայրապետը արդար հպարտությամբ Իր խաչը ի ցույց կդնե աշխարհին և մեզի ամենուս և կհայտարարե արդար հպարտանքով մը. «Ես պարծանքի միակ առարկա մը ունիմ, այն ալ Քրիստոսի խաչն է»։

Գաղափարի մարդը եղավ ու մնաց մեր անզուգական Հայրապետը, Իր փառքը, Իր վարձատրությունը փնտռեց ու գտավ միշտ Իր հոգևոր զավակաց երջանկության մեջ, Հայաստանյայց Եկեղեցվո պայծառության մեջ, Իր Հայրենիքին վերակառուցման մեջ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի շինության ու շենության մեջ և ամենը ունենալու համար չխնայեց ոչ մեկ ջանք ու աշխատանք, տված Իր անձը, հոգի դրավ Իր գործին մեջ, սիրտ ու զգացում դրավ Իր աշխատանքին մեջ, սերմեր նետեց պարարտ հողերու վրա, որոնք սկսան աճիլ և պտղաբեր դառնալ և այս ամոր համար, որ Հայոց աստվածարյալ Հայրապետը եղավ ամեն բանե առաջ և ամեն բանե ավելի հավատքի մարդու և իբր այդ կեցած Աստուծո և Իր խղճմտանքին առջև, կեցած Իր հոգևոր զավակներուն առջև հոգեկան անդորրությամբ և անխղճահար առաքյալին պես ու առաքյալի հավատքով պիտի կարենա ըսել.

«Իբրև Հայրապետ և Կաթողիկոս Ամենայն Հայոց, իբրև պահապանը Հայրապետական Աթոռին Հայոց պիտի փառավորեմ պաշտոնս»։

Հավատացյա՛լ սիրելիք, 1955 հոկտեմբերին հայոց ազգային-եկեղեցական պատմության մեջ բացվեցավ նոր դարագլուխ մը, որ հատկանշական եղավ իր բարերար արդյունքներով, շնորհիվ մեր երիտասարդ, հավատավոր, կորովի, ազգանվեր, եկեղեցանվեր և հայրենասեր Հայրապետին՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի։

Որքա՜ն տխուր էր երեկը, սակայն փա՜ռք նախախնամության հուսատու և լուսատու է մեր այսօրը։

1955 սեպտեմբեր—հոկտեմբերին գումարված հայոց Ազգային-եկեղեցական ժողովը իմաստություն ունեցավ Հայոց Հայրապետական Գահոն վրա բազմեցնելու եկեղեցանվեր և հայրենանվեր եկեղեցական մը, հանձին Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Սրբազագույն Կաթողիկոսի։

Փոխվեցավ դրությունը Մայր Աթոռն ներս, շինարարական աշխատանքը սկսավ ուժգին թափով ամեն մարզերեն ներս։ Ջարկ տրվեցավ երջանկահիշատակ Գևորգ Զ Կաթողիկոսով սկսված ճեմարանական աշխատանքին և Մայր Տաճարի նկարազարդման և բարեզարդման աշխատանքներուն։

Կազմակերպվեցավ միաբանական կյանքը՝ երիտասարդ և հավատավոր վարդապետներ, օժտված կրոնական խնամյալ դաստիարակությամբ, մեկնեցան զանազան վիճակներ՝ հավատքի հուրը վառելու համար մեր հավատավոր ժողովուրդի հոգիին մեջ։

Գլխավոր կեդրոններուն մեջ, մեր շնորհազարդ Հայրապետի ջանքերուն շնորհիվ և մեր Կառավարության բարեհաճ թույլտվությամբ բացվեցան մեր եկեղեցիները և մեր հավատավոր ժողովուրդը ծնրադիր աղոթեց Լուսավորչի, Սահակ-Մեսրոպի Աստուծուն, որ զինք պահած, պահպանած և հասցուցած էր այս երջանիկ թվականին։

Աղոթեց հայոց ժողովուրդը ծնրադիր իր Աստուծուն, որ իրականացուցած էր իր դարավոր երազը, Հայրենիք տված էր իրեն, խոհական, իմաստուն և հայրենաշեն Կառավարություն տված էր իրեն։

Փաստ այս ճշմարտության՝ այս հսկայաքայլ հառաջդիմությունը ամեն մարզերու մեջ և շինարարական այս հսկա աշխատանքը, որ կատարվի մեր Կառավարության վերին հսկողությամբ։ Երևանը, մեր անմոռաց և սիրուն Երևանը կենդանի փաստն է այս ճշմարտությանց։

Հայոց ժողովուրդը ծնրադիր աղոթեց Միածնաէջ այս հոյակերտ Տաճարին մեջ իր Աստուծուն, որ շնորհած էր իրեն հրաշագործ Հայրապետ մը՝ հոբելյար Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն Կաթողիկոսը, որուն օրհնյալ շունչին տակ և հզոր կամքով և իմաստուն

ղեկավարությամբը իրականություն դարձան Իր կազմած բոլոր շինարարական աշխատանքները։

Հայրենիքեն հեռու, Լիբանանի, Եգիպտոսի, Իտալիոյ, Ֆրանսայի և Անգլիոյ մեջ դադար առած Հայաստանյայց Եկեղեցվո զավակները չեն կրնար մոռնալ երբեք կրոնական խանդավառությամբ օծուն այն գեղեցիկ օրերը, որոնք ապրեցան շնորհաբեր այցելությամբը Հայոց աստվածարյալ Հայրապետին։

պահուն, կեցած Իր ժողովուրդի և Իր խրդեմբտանքին առջև, կրնա հայտարարել հավատքով և անխռով խղճմտանքով.

«Իբրև Հայրապետ և Կաթողիկոս Ամենայն Հայոց պաշտոնս պիտի փառավորեմ ծառայելով բոլորանվեր Աղգիս, Հայրենիքիս, Եկեղեցիս և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի»։

Ահա թե ինչու այսօրվան հոբելյանական հանդիսությունը բացառիկ նշանակություն ունի մեզի համար, վասնզի մեր սիրեցյալ Հայրապետը բացառիկ դեմք մը կոչված է

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՆԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ ՊԱՏԱՐԱԳՈՒՄ Է ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Նորին Վեհափառությունը հավատքի հուրը վառեց հավատքի մեջ թուլցած հոգիներեն ներս, Հայրենիքի սերը արծարծեց հայրենակարոտ հայորդիներուն մեջ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի սերը հրահրեց հավատավոր հայորդիներու խղճմտանքին մեջ։ Գաղութահայը անգամ մը ևս հայացավ, արիացավ ներկայությամբը իր անմոռաց Հայրապետին, որուն հովվական այցելությունը բարիք մը, օրհնություն մը և ուրախություն և հպարտանքի պատճառ մը եղավ գաղութներու մեջ ցրված հայության համար։

Ու այս ամենեն վերջ, մեր սիրեցյալ ու անդուլական Հայրապետը Իր հիսնամյա Հոբելյանին և Իր գահակալության երրորդ տարեդարձին առիթով և այս հանդիսավոր

ընկալ մեր եկեղեցական-ազգային պատմության մեջ։

Որքան գեղեցկորեն կպատշաճին շարակնոցի վարպետ դրչին սա գեղեցիկ տողերը մեր երանաշնորհ Հայրապետին. «Հայրապետ սուրբ և անբիծ և ընտրեալ յորովայնէ»։

Հավատավոր ժողովուրդ հայոց. այս հանդիսավոր օրվան մեջ և այս հանդիսավոր պահուն, համախմբված Միածնալոյս այս հոյակերտ Տաճարին խնկարույր կամարներուն տակ, կխնդրենք բազկատարած Աստուծմե վասն արեշատության մեր սիրեցյալ Հայրապետին, Իր հիսնամյա հոբելյանական և գահակալության երրորդ տարեդարձին առիթով։ Նաև նվիրական պարտք կզգանք մեր անսահման երախտագիտությունը հայտնելու

Հայաստանի Կառավարության, որուն խոհական քաղաքականության և շատ բարյացակամ թույլտվության շնորհիվ կատարվեցան և ի դուռն հասցեցան այս բոլոր դեղեցիկ գործերը Մայր Աթոռին ներս և թեմերու մեջ։

Աստված անփորձ պահե մեր անմման Հայրենիքը՝ արևաշող Հայաստանը իր Կառավարությամբ, իր բանակով և իր ժողովուրդով միշտ և հավիտան։

դրոքներից մեկը՝ Մայր Աթոռի անսասանության և իր պաշտելի Հայրապետի երկարակեցության և արևշատության համար.

«...Լսի՛ր այս ձայն, ո՞վ Աստված.
Երկա՞ր կյանք տուր Հայրապետին,
Երկա՞ր օրեր Հայոց Հոր.
Տի՛ր, անսասան պահիր Դու միշտ
Քո խսկ ճիմնած Մայր Աթոռ...»։

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՀՅՈՒՐԵՐԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳԻ ԺԱՄԻՆ

Աստված անսասան պահե Հայոց Հայրապետական Աթոռը և բազմապատկե թանկագին կյանքին օրերը հոբելյար մեր սիրեցյալ Հայրապետին՝ ի փառս հայոց ժողովուրդին, ի պայծառություն Հայաստանյայց Եկեղեցիին և ի շինություն ու շենություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, ամենս։

Հավարտ պատարագի Ս. Իշման Սեղանի առաջ կատարվում է Հայրապետական մաղթանք։ Միրանի և ոսկեհյուս շուրջառներով, մուգ-կարմիր շապիկներով կիսարտոր կանգնել է հոգևորականների ու դպիրների դասը Իշման Ս. Սեղանի շուրջ։ Կենտրոնում Հայոց Հայրապետն է, արծվենշան հովվապետական գավազանը ձեռքին ու սրբազան ապրումներ՝ իր մեծ հոգու մեջ...։

Հայ հավատացյալ ժողովուրդը ծնկի է եկել և մրմնջում է իր ամենասրտառուչ աղոթքները՝ Մայր Աթոռի անսասանության և իր պաշտելի Հայրապետի երկարակեցության և արևշատության համար.

Հանդիսավոր վեհությամբ, անվարան լավատեսությամբ ու հավատով հնչում են սույն խոսքերը Հայրապետական մաղթանքի վերջում, «Էջ Միածինն ի Հօրէ» հոգեզմայլ շարականից և Տերունական սուրբ աղոթքից հետո։

Ապա երկար թափորը ձգվում է դեպի Վեհարան, երգելով «Որ զխորհուրդս» և «Որ զշնորհս» շարականները։ Վեհափառ Հայրապետի ամպհովանին կրում են պր. Արծրունի Զրբաշյանը, պր. Եդվարդ Ուլուճյանը, պր. Հարրի Թադեոսյանը և պր. Հովհաննես Քեհյայանը։ Վեհափառ Հայրապետը, երջանիկ և աստվածարյալ Հոբելյարը, դեպի Վեհարան Իր Ճանապարհի վրա բաշխում է Իր հայրապետական օրհնությունները Իր հավատացյալ ժողովրդին։ Բոլորը սրտագին

բարեմաղթություններ են առաքում առ Աստված։

Թափորը հասնում է Մաղկյա գահլեճ, ուր Հայրապետական Գահի վրա է բազմում Վեհափառ Հայրապետը։

Պատմական այս գահլիճում տեղի են ունենում պաշտոնական շնորհավորությունները։

Հանդեսության ժամին, հանում Մայր Աթոռի միաբանության խոսք ասաց Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը.

«Սիրելի և թանկագին մեր Հայր.

Այսօր հայ հոգևորականությունը և համայն հայ հավատացյալ ժողովուրդը, սրտի անհուն բերկրանքով, շնորհավորում են Ձերդ Սրբության ծննդյան հիսնամյակը և կաթողիկոսության երրորդ տարեդարձը։

Երեք տարի առաջ Ձերդ Սրբության միաձայն ընտրությունը ամբողջ հայության սիրտը լցրեց բերկրանքով ու հրճվանքով։

Անցան երեք տարիները և մենք մեր աչքերով տեսանք, որ աստվածային բարեհաճությունը ամեն րոպե Ձեզ հետ է Ձեր անձնվեր աշխատանքի համար։

Ահա թե ինչու օրավուր ավելի սիրելի ու ավելի պաշտելի եք դառնում հայ հավատացյալ ժողովրդի համար։

Ձեր սրտին հատուկ է սերը, սեր առ եկեղեցին, սեր առ Հայրենիքը, սեր առ հավատացյալ ժողովուրդը։

Ձեր եռամյա կաթողիկոսության ընթացքում, հավատացյալ ժողովրդի սերը, հարգանքը անչափ բարձրացավ և ջերմացավ։ Բոլորը հանձին Ձեզ տեսնում են իրենց սիրելի Հորը և հարազատին։

ՀՅՈՒՐԵՐՆ ՈՒ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԺԱՄԻՆ

Հանում Մայր Աթոռի միաբանության շնորհավորելով Ձերդ Սրբության ծննդյան հիսնամյակը և գահակալության երրորդ տարեդարձը, ի սրտե ցանկանում ենք երկար տարիներ Ձեզ բազմած տեսնել Հայրապետական գահի վրա։

Թող երկնային Տերը բազմապատկի Ձեր եռանդը ի պայծառություն Հայաստանյայց եկեղեցու, հուրախություն հայ հավատացյալ ժողովրդի և ի խաղաղություն համայն աշխարհի։

Ողջ եղեք, Վեհափառ Տե՛ր։

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Սարգիս Գասպարյանը, խանդավառ ծափերի մեջ ողջունելով Վեհափառ Հայրապետին, ասաց.

Զերդ Վեհափառություն.

Զեր ծննդյան հիսնամյակի առիթով, մեր Հայրենի Կառավարության, Հայ Եկեղեցու գործերի խորհրդի և անձամբ իմ կողմից բերում եմ Ձեզ մեր ջերմ շնորհավորությունները և լավագույն ցանկությունները: Այսօր այս հանդիսավոր իրադարձության մեջ միաժամանակ նշվում է Ձեր գահակալության երորդ տարեդարձը, որ նշանավորվում է չափազանց արդյունավետ և հայրենանվեր գործունեությամբ: Այս տոնակատարությանը ներկա են արտասահմանի հոգևորականության բարձրաստիճան ներկայացուցիչները՝ Նեձի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Տեղապահ Խադ արքեպիսկոպոս Աջապահյանը. Սփյուռքի թեմական առաջնորդներ և արտասահմանի գրականության, արվեստի, մշակույթի և գործարար շրջանների ներկայացուցիչներ: Նրանք բերել են իրենց և մեր տարագիր եղբայրների սիրո և նվիրվածության զգացմունքները դեպի մեր սիրելի, մեր պաշտելի Սովետական Հայաստանը և դեպի Ս. Էջմիածինը:

Այս հանդիսավոր իրադարձության մեջ ես պետք է ասեմ, որ այժմ բոլորի համար պարզ է, որ հայ ժողովուրդը, Սովետական Հայաստանը այլևս հին Հայաստանը, խեղճ ու անօգնական Հայաստանը չէ: Նա այժմ ուժեղ է, կանգուն, շրջապատված բազում բարեկամներով, Սովետական Միության ժողովուրդների մեծ ընտանիքում: Հայ ժողովուրդը այս կարճ ժամանակամիջոցում կարողացել է դրսևորել իր ստեղծագործական հանճարը, գեղեցկացնել ու շքեղացնել իր սիրելի Հայրենիքը: Այժմ բոլորիս համար, յուրաքանչյուր հայ մարդու համար պարզ է, որ հայ ժողովուրդը կարող է բարգավաճել, կառուցել իր Հայրենիքը միայն խաղաղության պայմաններում: Այդպես է նաև աշխարհի բոլոր ժողովուրդների համար: Դրա համար մեզ կյանքի պես անհրաժեշտ է խաղաղությունը և ժողովուրդների բարեկամությունը:

Դուք այս անցած տարիների ընթացքում Զեր բարձր հեղինակությամբ չափազանց գնահատելի գործ կատարեցիք խաղաղության ամրապնդման գործում: Այդ Զեր գործունեությունը բարձր են գնահատում հայ ժողովուրդը, մեր Կառավարությունը և մենք բոլորս:

Ես դարձյալ շնորհավորում եմ Զեզ, Զեր ծննդյան հիսնամյակը և Զեր գահակալության երորդ տարեդարձը: Միաժամանակ ուզում եմ օգտվել այս երջանիկ առիթից, որպեսզի հաղորդեմ Զեզ, որ մեր Հայրենիքի մայրաքաղաքում ավարտվեց Զեզ համար կառուցված հարկաբաժինը, իրև նվեր մեր, Զեր այս հանդիսավոր օրվան կապակցությամբ:

Պր. Ս. Գասպարյանի խոսքերն ու հայտարարությունը ընդունվեցին սրտագին ծափահարություններով և սրտագին բարեմաղթություններով, ի պայծառություն Մայր Հայրենիքի և ի բարգավաճումն մեր Հայրենի կառավարության:

Ապա խոսք առավ Մաղկյա դահլիճում Կիլիկյան Աթոռի Տեղապահ ամենապատիվ Տ. Խադ արքեպիսկոպոս Աջապահյանը և ասաց.

Վեհափա՛ռ Տեր.

Զեր ծննդյան հիսնամյակի և գահակալության երորդ տարեդարձի տոնակատարության ուրախ առիթով, պան մը կանգ կառնեմ Զեր երեք տարվան աթոռաշեն և ազգաշեն գործունեության վրա:

Ազգընտի՛ր Հայրապետ.

Ս. Էջմիածնի բազմադարյան Մայր Աթոռի վրա Զեր գահակալությունը առիթ կընծայե մեզ՝ անգամ մը ևս վերանորոգելու մեր հավատարմական ուխտը հանդեպ Էջմիածնի Ս. Աթոռին: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո կեդրոն Մայր Աթոռը, ուրախ ենք հայտնելու, որ Զերդ Վեհափառության օրով առավել ևս կդառնա եկեղեցական և ազգային կյանքի կեդրոն, լույսի փարոս, աշխարհի հեռավոր երկրները ցիրուցան մեր Ազգի բեկորները, խաղաղության, երջանկության, բարօրության առաջնորդող:

Մայր Աթոռ Ս. Էջմիածին կոչդ այսօր իր հայացքները մանավանդ Սփյուռքի հայրենաբաղձ և էջմիածնասեր հայությունը, որ կրաղձա լսել միշտ վերածաղկիլը Մայր Հայրենիքի և Մայր Աթոռի:

Ազգային և եկեղեցական տոներու առիթով Զերդ Վեհափառության օրհնյալ պատգամները, այնքան իմաստալից և ոգեշունչ քարոզները և հայրական շինիչ հորդորները հավատացյալ Զեր զավակներուն սրտերուն մեջ կստեղծեն հոգևոր ապրումի և ոգևորության երջանիկ պահեր:

Վեհափա՛ռ Տեր.

Զեր գահակալության երեք տարվան կարճ շրջանին Աթոռին ներս շինարարական, կազմակերպչական, կարգապահական, բոլոր վարչական ձեռնարկներու մեջ ձեռք բերած հաջողություններով կրնամ արժանավոր հաջորդը հանդիսանալ մեծագործ և մեծահամբավ մեր հայրապետներուն, սկսյալ մեր Հայր Գրիգոր Լուսավորչեն մինչև Զերդ Վեհափառությունը, որոնք շինած, ծաղկեցուցած, բարեզարդած են հոգևոր լույսի, հավատքի, տեսիլքի կեդրոն Ս. Էջմիածինը. անոնց կարգին ներեցեք հիշել, Վեհափառ Տե՛ր, ներսես Աշտարակեցիներ, Գևորգ Դ-եր, Խրիմյան Հայրիկներ, Գևորգ Զ-եր: Նման

Ձեր նախորդներուն, Ձերդ Վեհափառությունը, արիացած հոգվո զորությամբ, տոգորված Ազգի սիրովը և ծառայության ազնիվ ոգիովը և պատրաստակամ զոհաբերության, այսօր փայլուն դիրք մը կգրավեք Մայր Աթոռի հայրապետաց շարքին մեջ: Վեհափա՛ռ Տեր.

Ձեր խնամակալ հոգածության տակ, ուրախ ենք, որ ստեղծված է միաբանական բնականոն և ցանկալի կյանք: Սրբավայրը դարձած է աղոթքի և մեղվաջան աշխատանքի հիմերն, ուր իր բարձր կոչումին և պարտականության գիտակից օրինապահ միաբաններ, Ազգին և Եկեղեցիին սիրովը տոգորված, միշտ պատրաստակամ և անձնվեր Ձերդ Վեհափառությանը ծառայելու, և իր կարգին Ազգին և Եկեղեցիին ծառայելու համար:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը վերածաղկումի և վերակառուցման նոր շրջան մը կբոլորե: Ժամանակավոր փակված Հոգևոր Ճեմարանը բացված է և Ձերդ Վեհափառության անմիջական հսկողության տակ կհառաջդիմե: Ավելի քան 50 ուսումնատենչ և խոստումնալից ուսանողներ կդաստիարակվին մասնագետ ուսուցչական կազմին բարեխիղճ հսկողության տակ, Ազգին և Եկեղեցիին հաճելի հանդեպ: Ազգովին հպարտ ենք, տեսնելով, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիմագիծը այսօր նիմնովին փոխված է, բարեզարդված և ծաղկազարդված են պատմական արժեք ներկայացնող հնադարյան վանքեր ու եկեղեցիներ, հսկա կոթողները մեր նախնյաց: Կրոնասեր և եկեղեցասեր ոգին սկսած է նույնպես վերանորոգվիլ Ձերդ Վեհափառության հոգածության շնորհիվ:

Ձեր ծննդյան հիսնամյակի և գահակալության երրորդ տարեդարձի առթիվ հանուն Կիլիկիո Կաթողիկոսության օրինապահ միաբանության և հավատացյալ ժողովուրդին, ի սրտե կմաղթեմ Ձերդ Վեհափառության ամար արժանավոր մշակներ ըլլալու: Ուրախ ենք, որ առաջնորդական թեմերն ալ կկազմակերպվին և առաջնորդական պատասխանատու պաշտոններ կտրվին պատրաստված հայ եկեղեցականներուն:

Տիեզերական հսկա աշխատանքներուն մեջ ձեռք բերված հաջողություններ արդյունք պետք է նկատել Ձերդ Վեհափառության ազգանվեր անձին հանդեպ հայ ժողովուրդին ունեցած անվերապահ սիրո և հավատարմության և Հայաստանյայց բարեխնամ կառավարության բացարձակ վստահության. Ձեր պատկառելի և պաշտելի ան-

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐՆ ՈՒ ՀՅՈՒՐԵՐԸ ԱՂՈԹՈՒՄ ԵՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՍՈԹՔ ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔԻՆ

ձին հանդեպ: Ազգովին հպարտ ենք, տեսնելով, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիմագիծը այսօր նիմնովին փոխված է, բարեզարդված և ծաղկազարդված են պատմական արժեք ներկայացնող հնադարյան վանքեր ու եկեղեցիներ, հսկա կոթողները մեր նախնյաց: Կրոնասեր և եկեղեցասեր ոգին սկսած է նույնպես վերանորոգվիլ Ձերդ Վեհափառության հոգածության շնորհիվ:

Ձեր ծննդյան հիսնամյակի և գահակալության երրորդ տարեդարձի առթիվ հանուն Կիլիկիո Կաթողիկոսության օրինապահ միաբանության և հավատացյալ ժողովուրդին, ի սրտե կմաղթեմ Ձերդ Վեհափառության ա-

ռեշատություն, կար ու կարողություն, կորով և եռանդ՝ ազգաշեն և աթոռաշեն Ձեր ձեռնարկներուն մեջ։

Թող հավետ ծաղկի և զարգանա Մայր Աթոռ Լուսո Խորան Ս. Էջմիածինը։ Թող հավետ վերածաղկի հայ ժողովուրդի և մանավանդ սփյուռքահայության իդեալ Մայր Հայրենիքը»։

Գերագույն Հոգևոր Խորհրդի անունից արոֆ.-դոկտ. Առարատ Ղարիբյանը ողջունեց Վեհափառ Հայրապետին հետևյալ խանդավառ ճառով.

«Վեհափառ Տե՛ր.

Երկար ժամանակ ունկնդիր ենք եղել Ձեր մտքերին, Ձեր խոսքերին՝ երբեք տարվա մեր գործակցության ընթացքում, տեղյակ ենք եղել Ձեր խորհրդածություններին, ականատես ենք եղել Ձեր հայրենանվեր գործունեության, և ի տես և ի լուր ամբողջ հայության հայտարարում ենք ու վկայում՝ բարի են նպատակները Ձեր, Վեհափառ Տե՛ր, դի այդ նպատակները ուղղված են մեր ժողովրդի բարօրության։

Վեհ են ձգտումները Ձեր, Վեհափառ Տե՛ր, որովհետև Ձեր ձգտումն է միասնական պահել հայ ժողովրդին։ Մեծ է Ձեր հայրենանվեր գործունեությունը, որովհետև Ձեր գործունեությունը ուղղված է մեր ժողովրդի պահպանման, ազգապահպանման նպատակներին։

Արծիվը, մեր ժողովրդի ավանդական սովորության և ազգային հասկացողության համեմատ, մեր ժողովրդի հոգեկան բարձր սլացումն է։ Իզուր չէ, որ մեր մեծագույն կաթողիկոսներից մեկը կոչվում էր «Արծիվ Վասպուրականի»։ Մենք Ձեզ կոչում ենք «Արծիվ Հայաստանյաց», որ սավառնում եք մեր Ազգային Եկեղեցու երկնակամարում, լայն բացած Ձեր թևերը, Ձեր հովանու տակ առած մեր հավատացյալ ժողովրդին, մեր սփյուռքահայության և Ձեր խորահատ և իմաստուն հայացքով որոնում եք պատմության կիրճերում արահետներ, որոնք տուն կբերեն Սփյուռքի հայությանն, տուն կբերեն տարագիր եղբայրներին։ Օհնյա՜լ լինեն այն օրը և ճանապարհը, երբ և որով Դուք կառաջնորդեք մեր սփյուռքահայ եղբայրներին դեպի երկնակարկառ Էջմիածինը։

Օրհնյա՜լ լինի Ձեր ծնունդը, Վեհափառ Տե՛ր։

Օրհնյա՜լ լինի Ձեր գահակալությունը, Վեհափառ։

Արեշատությո՜ւն, երկար կյա՜նք Ձեզ, Վեհափառ։

Կգործակցենք Ձեզ ի փառս Աստուծո և ի միասնություն և հերյանկություն մեր ժողովրդի։

Վեհափառ Տե՛ր, ընդունեցեք Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմից այս նվերը»։

Պրոֆ. Ղարիբյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմից, Վեհափառ Հայրապետին նվիրում է ոսկյա ադամանդակուռ արծիվ։ Ապա նա շարունակում է.

«Թույլ տվեք, Վեհափառ Տե՛ր, Ձեզ անվանել Արծիվ, Արծիվ Հայաստանյաց»։

Դահլիճով մեկ թնդում է զվարթ ու խանդավառ ծափահարությունների որոտը։

Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Մելքիսեդեկ Գ-ի և Վրացական Օրթոդոքս Եկեղեցու և հավատացյալների անունից Մաղկյա դահլիճում ողջույնի սրտագին և ջերմ խոսք ասաց գերապատիվ Տ. Զիեովի եպիսկոպոսը.

«Ձերդ Սրբությո՛ն.

Համայն Վրաց Կաթողիկոս-Պատրիարք Մելքիսեդեկ Գ-ն անձամբ Իր անունից և Վրացական Ուղղափառ Եկեղեցու և ամբողջ վրաց ժողովրդի անունից շնորհավորում է Ձեզ Ձեր հիսնամյա հոբելյանի առթիվ և անկեղծորեն ցանկանում Ձեզ երկար կյանք, քաջառողջություն և հոգևոր հաջողություն Ձեր առաքելական ճանապարհին։ Թող Ձերդ Սրբությունը բարեզարդի հայոց հնադարյան Առաքելական Եկեղեցին։ Ուրախացրեք Ձեր հոգևոր հոտը և ողջ հայ ժողովրդին Ձեր բարի գործերով։ Դուք ընտրյալն եք Ձեր ժողովրդի և սիրեցյալը Ձեր հավատացյալ հոտի։

Համայն Վրաստանի Պատրիարք Մելքիսեդեկ Գ-ը Ձեզ հետ միասին ուրախակից է Ձեր հոբելյանական տոնակատարությանը և խորապես ցավում է, որ Իր վատառողջության պատճառով հնարավորություն չունի Ձեզ և բովանդակ հայ ժողովրդի համար սույն բերկրալի օրը անձամբ ներկա լինելու։ Ուղարկում է նա Ձեզ այս ցնծալի օրը ֆբրև նվեր Աստվածամոր պատկերը։

Թող Տեր Աստված պահպանի Ձեզ բազում տարիներ ի բարօրություն Հայոց Եկեղեցու և բոլոր հայերի։ Մենք, Վրաց Եկեղեցու պատվիրակներս՝ Զինովի և Լեոնիդ եպիսկոպոսներս՝ միացնում ենք մեր ձայնը Վրաստանի մեր Պատրիարք Մելքիսեդեկ Գ-ի ձայնին և սրտանց ցանկանում Ձեզ հաջողություն և երկար կյանք։ Մենք մեզ երջանիկ ենք համարում, որ մասնակցում ենք Ձեր հոբելյանի տոնախմբությանը։

Թող ամրապնդվեն հայ և վրաց եղբայրական ժողովուրդների փոխադարձ սերն ու բարեկամությունը առհավետ։ Միասին աղոթենք Աստծուն համայն աշխարհի խաղաղության համար, որպեսզի Տերը փրկի բովանդակ մարդկությունը պատերազմի սպառնացող լուրջ վտանգից։

Թող լինի խաղաղություն ամբողջ աշխարհում։

Անդրկովկասի մուսուլմանների հոգևոր վարչության նախագահ Շեյխ-ուլ-Իսլամ Հ. Մ. Հաքիմզադեի անունից ողջույնի հետևյալ ուղերձը կարդաց Ռզան Ալի Աբասը.

«Հայոց Ազգի Սրբազնագույն Պատրիարք, Հայոց Եկեղեցու իմաստուն ղեկավար, Անդրկովկասի մուսուլմանների հավատարիմ բարեկամ, բոլորի կողմից մեծարված կաթողիկոս, Սրբազնագույն Վազգեն Ա.

Նեությունը կրոնի և եկեղեցիների ղեկավարման, բարեկամության, եղբայրության ու անկեղծ սիրո ամրապնդման ասպարեզում՝ ոչ միայն Անդրկովկասի հայերի և մուսուլմանների մեջ, այլև բոլոր ազգերի և ժողովուրդների մեջ։

Անդրկովկասի մուսուլմանների Հոգևոր վարչության նախագահ Շեյխ-ուլ-Իսլամը, Անդրկովկասի մուսուլմանների Հոգևոր վարչության անդամները, ինչպես և Անդրկովկասի բոլոր մուսուլմանները ջերմորեն աղո-

ՊՐ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆԸ, ՊՐ. Ն. ԿՅՈՒԼԳԵՆԿՅԱՆԸ ԵՎ ՊՐ. Ա. ՔՅՈՒՐՔՃՅԱՆԸ ՍԱԼԿՅԱ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Թույլ տվեք այս նշանակալից օրը շնորհավորելու Ձեզ անձամբ Անդրկովկասի մուսուլմանների Շեյխ-ուլ-Իսլամ Հաքիմզադեի անունից, ինչպես նաև Անդրկովկասի մուսուլմանների Հոգևոր վարչության անդամների և Անդրկովկասի բոլոր մուսուլմանների անունից, Ձեր ծննդյան հիսնամյակի և գահակալության երրորդ տարեդարձի առթիվ և Ձեզ մաղթելու նրանց եղբայրական սալամը։

Ապարդյուն կլիներ փնտռել Անդրկովկասի հայ և մուսուլման ժողովուրդների բարեկամության ու եղբայրության սկզբնավորման թվականը պատմության էջերում։ Անտարակույս, մի քանի դարերից հետո հարգանքով և երախտագիտությամբ կնշեն Ձեր գործունեությամբ են միակ Ալլահին, որպեսզի Նա ի վերուստ պարգևի Ձեզ, Սրբազնագույն Հայր, երկար կյանք, քաջառողջություն և ամրակուռ տոկունություն հոգևոր ասպարեզում։

Թո՛ղ Նա այս տոնը դարձնի երջանիկ ու նշանակալից օր բոլոր ժողովուրդների համար, հատկապես եղբայրական հայ ժողովրդի համար։

Թո՛ղ ամենատեսորմած Ալլահը օգնի Ձեզ, որպեսզի Դուք միասնական ծաղկեփունջ ստեղծեք այն բացված ծաղիկներից, որ Դուք աճեցրել եք եղբայրության, բարեկամության և սիրո երփներանգ սերմերից։

Արտասահմանի մեր թեմերի, թեմական կազմակերպությունների, ազգային-եկեղեցական իշխանությունների անունից Վեհա-

Դեռ Հայրապետին ողջունում է Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ գերապատիվ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյանը.

«Վեհափա՛ռ Տեր.

Արտասահմանեն եկող ներկայացուցչի մը համար շատ դժվար է արտահայտիլ այս նվիրական պահուն, բայց կվստահեցնեմ Ձերդ Սրբությունը, թե այսօր, երբ էջմիածնի սուրբ կամարն՝ բուն տակ կտոնենք Ձեր ծննդյան և գահակալության տարեդարձը, և նույնիսկ այս պահուս, այս պատմական դահլիճին մեջ բոլորված, մեր սերն ու մեր հավատարմությունը կներկայացնենք Ձերդ Սրբությանը։ Վստահ եղեք, որ ամբողջ աշխարհի հայության զգացումները և սերը վերադրոնացած են Ս. Էջմիածնին և Ձերդ Վեհափառության անձին վրա։ Ս. Էջմիածինը, իբրև հոգևոր կեդրոն ամբողջ հայության և Ամենայն Հայոց Հայրապետը իբրև Հայր և Հովվապետ՝ թանկագին են և սրտի մոտ ամեն հայ մարդու համար։ Այսպես եղած է մեր ամբողջ պատմության ընթացքին։ Հայ ժողովուրդը կապված է Էջմիածնին և անոր Հայրապետին իր ամբողջ պատմության ընթացքին։ Բայց, Վեհափառ Տեր, թույլ տվեք ըսել, որ թերևս մեր ամբողջ հայրապետներու շարքին Դուք բացառիկ անձնավորություն մը և պարագա մը կներկայացնեք։ Մինչև հիմա Սփյուռքի հայության, օտար երկինքներուն տակ գտնվող հայերուն համար Էջմիածինը և Ամենայն Հայոց Հայրապետությունը խորհրդանշաններ էին, երազներ էին, միայն զգացումներ էին, բայց Ձեր գահակալության առաջին օրեն իսկ, մասնավորաբար արտասահմանի հայության համար, անոնք դառնան շոշափելի իրականություններ, վասնզի Դուք, տեսակ մը խզելով այն ավանդական կապը, առաջին իսկ առթիվ այցի ելաք օտար աստղերու, օտար երկինքներու տակ ցրված Ձեր սիրեցյալ ժողովուրդին։ Կրոնասիրության, հայրենասիրության, էջմիածնասիրության հզոր ալիք մը տարիք Ձեր հետ ամբողջ Սփյուռքի հայության, և այդ զգացումներով ողողեցիք և խռովեցիք զանոնք։ Անկե ի վեր անոնց մտածումները, անոնց զգացումները արևածաղկի մը պես դարձած են դեպի Ս. Էջմիածին՝ մեր հոգևոր կեդրոնը և դեպի մեր Հայրենիքը։ Բայց այդ խանդավառությունը ժամանակավոր չեղավ, վասնզի անոնք այլևս կապվեցան Ս. Էջմիածնին և կապվեցան Ձեր պատվական անձին հետ, և անկե ի վեր միշտ հետաքրքրությամբ կհետևին այն բոլոր գործունեությանց, որոնք տեղի կունենան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մեջ, իբրև Հոգևոր Ճեմարանի գործ, իբրև մշակութային գործ, իբրև շինարարական գործ, և այդ ամբողջը կավելցնեն սերը անոնց և հավատարմությունը դեպի Ս. Էջմիածին։ Յուրաքանչյուր քար, որ կդրվի Ս. Էջմիածնի շրջապատին մեջ, իբրև շինություն և իբրև նորոգություն, տեսակ մը հավատարմության նոր զգացում մը կավելցնե արտասահմանի ամեն հայու սրտին և հոգիին մեջ։

Այսօր, այս նվիրական պահուն, իմ տկար անձովս և իմ տկար ձայնով, Վեհափա՛ռ Տեր, ընդունեցեք ամբողջ արտասահմանի հայության որդիական սերը և հավատարմությունը հանդեպ Ս. Էջմիածնին և հանդեպ Ձեր անձին, անոնց մաղթանքները Ձեր առողջ և երկար կյանքին համար, անոնց աղոթքները Ձեր բարի ծրագիրներուն իրագործման համար, անոնց երազները Հայ Ոգեղեցիկ և հայ ժողովրդի միասնականության համար։ Թերևս իրենց փափագները, իրենց երազները, իրենց մաղթանքները ամբողջությամբ արտահայտած չեմ ըլլար, եթե այս հանդիսավոր և նվիրական պահուն չհիշեմ նաև այն թեթև ամպը, այն տխուր զգացումը որ կտիրե տակավին արտասահմանի մեջ։ Ես, ինչպես միշտ սիրած եմ ըսել, այն արդյունք է թյուրիմացություններու և անհասկացողությանց։

Վեհափա՛ռ Տեր, ամբողջ հայությունը, կրնամ ըսել առանց խտրության, փափագեցավ, որ այս բարեբաստիկ տոնակատարությանց առթիվ, երբ հոս եկած են արտասահմանի հոգևոր և աշխարհիկ ներկայացուցիչները, Ձեր բարի խորհուրդներովը, Ձեր հայրական սիրովը այդ ամպերը փարատին արտասահմանի հայ երկնքեն, պայծառանա արտասահմանի հայության երկինքը այնպես, ինչպես պայծառ և արևաշող է Ս. Էջմիածնի երկնակամարը և մեր ամբողջ Հայրենիքը։ Անոնց ամենուն հավատարմության զգացումները կրկին ներկայացնելով Ձերդ Վեհափառությանը, ընդունեցեք բոլորի մաղթանքները Ձեր երջանկության, արևշատության և Ձեր հովվապետական տարիներու գործունեության համար։»

Ներքին թեմերի անունից, վրահայոց թեմական առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոսն իր ելույթում ասաց.

«Վեհափառ Հայրապե՛տ.

Այս պատմական օրերին, ինձ վրա քաղցր պարտականություն է դրված Մայր Աթոռի ներքին թեմերի, Արարատյան, Շիրակի, Վրաստանի, Ադրբեջանի, Նոր-Նախիջևանի, Մոսկվայի և թեմական խորհուրդների, քահանայից դասի և համայն հայ հավատացյալ ժողովրդի անունից շնորհավորել Ձեր ծննդյան հինգամյակը և գահակալության երրորդ տարեդարձը։

Ինձ բառեր պակասում են արտահայտելու համար մեր հավատացյալ ժողովրդի Ձերդ Վեհափառության հանդեպ տածած սիրո չափը, նրանց հույսերն ու հույզերը և մանավանդ նրանց խորին հավատը հանդեպ Ձեզ։ Դուք անձամբ համոզվեցիք դրանում, երբ Ձեր գահակալությունից մի տարի անց, այցելեցիք նրանց։ Ամենուրեք ժողովուրդը պաշտելու աստիճան սիրեց Ձեզ և էջմիածնի խորհուրդը մի անգամ ևս Ձեր անձի մեջ զգեցավ մարմին, դարձավ շոշափելի բոլորի համար ու վերակերտվեց որպես մեր բազմաչարչար ժողովրդի անցյալ փառքը ու շքեղ ներկան կամրջող անխորտակելի ամրոց։ Ո՛ւր էլ որ եղաք՝ Երևան, Լենինական, Թբիլիսի, Բաքու, Նոր-Նախիջևան, Ձեր ջարոզներով և խրատներով արթնացրիք Ձեր զավակների սրտերում Ս. էջմիածնի սերը, Հայրենիքի գաղափարը ու մանավանդ ազգային-եկեղեցական միասնության ոգին։

Այսօր Մայր Հայրենիքի և Սովետական Միության մեջ գտնվող թեմերը ղեկավարվում են Մայր Աթոռի միաբան շնորհունակ, երիտասարդ և անձնդիր հոգևոր առաջնորդներով, և նրանց կողքին կանգնած են հավատավոր մարդկանցից կազմված թեմական-եկեղեցական խորհուրդներ, որոնք իրենց կարելին չեն խնայում՝ զորացնելու Մայր Աթոռի հեղինակությունը, շենացնելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին՝ ի մխիթարություն Ձեզ ու բովանդակ հայության։

Այս պատմական րոպեին, երբ տոնվում է Ձեր ծննդյան հիսնամյակը և գահակալության երրորդ տարեդարձը, մեր բոլորի սրտագին մաղթանքն է, որ ամենակարող Աստված պարգևի Ձեզ արևաշատ ու երկար օրեր, որպեսզի Ձեր նախաձեռնած բոլոր եկեղեցաշեն ու հայրենանվեր գործերը կատարվեն ի բարին։

Մեկի եկած Իշման Ս. Սեղանի առաջ, աղոթում ենք՝ ամերկար կյանք տուր Հայրապետին, երկար օրեր Հայոց Հոգու։

Ընդունեցե՛ք մեր ներքին թեմերի անունից ամենաջերմ համբույրներ Ձեր Ս. Աջին։

Խոսք է տրվում նաև ՍՍՌՄ ժողովրդական նկարիչ, կախարդիչ գույների մեծ վարպետ Մարտիրոս Սարյանին.

«Վեհափառ Տե՛ր.

Մենք այսօր գոհունակությամբ տոնում ենք Ձեր ծննդյան հիսնամյակը և գահակալության երրորդ տարեդարձը։ Մեր հավատացյալ ժողովուրդը երջանիկ է, որ ունի ազգընտիր արժանավոր Կաթողիկոս, որի ամբողջ գործունեությունը նվիրված է մեր ժողովրդի բարօրությանը և մեր եկեղեցու թաղկմանը։ Ս. էջմիածինը, որ 1600 տարվա հնություն ունի, եղել է մեր ժողովրդի ամրության և տոկունության նշանը։ Այսպես էլ մնում է ցայսօր։ Դրան ավելացել է նաև այն, որ այժմ Ս. էջմիածինը խորհրդանիշն է մեր հայրենաբնակ և սփյուռքահայ ժողովրդի միասնության և եղբայրության։

Մենք հույսով ենք, որ Ձեր իմաստուն առաջնորդությամբ մեր հավատացյալ ժողովուրդը, ինչպես միշտ, այժմ էլ կմնա միասնական և մեկ ժողովուրդ Ս. էջմիածնի շուրջը համախմբված։

Շնորհավորում եմ Ձեր ծննդյան հիսնամյակը և գահակալության եռամյակը։ Ցանկանում եմ Ձեզ երկար տարիներ և առողջություն, որպեսզի Դուք այդ ծանր պարտականությունը, որ մենք դնում ենք Ձեզ վրա, կատարեք սրբությամբ։

Ապա Մաղկյա դահլիճում կայացած հանդիսության վերջում, հանդիսավոր ու վեհ լռության մեջ, շնորհակալության սրտառուչ խոսք է ասում հոբելյար Վեհափառ Հայրապետը.

«Մեծ առաւէ զՏէր ինն, և բարձր առաջուն զանուն նորա ի միասին»։

(ՍԱՂՄ. ԼԴ 4)։

Դոհություն Աստուծո ամենակալին, որ Մեր կյանքի հիսուն տարիներու հանգրվանին, այսօրվան առավոտը կողջունեմ Ս. էջմիածնի շնորհներուն ներքև, Հայրենի սրբազան Հողի վրա, մեր սիրեցյալ ժողովուրդի ծոցին մեջ, հարազատներով շրջապատված։

Այս օրը մեծ պարգև մրն է մեզ բոլորիս համար։ Պարգև, վասնզի Մեր անձին ու Մեր համեստ գործունեության հետ կապված այս հանդիսությունը կվերածվի Մայր Աթոռ Ս. էջմիածինը օրհնելու և փառաբանելու հանդեսի, երբ Հայ Պետության ներկայացուցիչներ, Հայաստանյայց Եկեղեցվո նվիրապետական Աթոռներու և հայ հոգևորականության բարձրաստիճան սպասավորներ, հայ մտավորականության ու ժողովուրդի ներկայացուցիչներ Մայր Հայրենիքեն և արտասահմանեն, բոլորը մեկ սիրտ մեկ հոգի, տոնական ցնծությամբ, անգամ մը ևս կուգան հոչակելու հայ ժողովուրդին հավատքի և սիրո միությունը։

Սրտագին շնորհակալություն Մեր սրբազան եղբայրներուն, որոնք, գլխավորությամբ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Տեղապահ ամենապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոսի, այնքան անկեղծ ու հոգեպարար շգացումներ և բարի մտածումներ ընծա բերին Մեզ, ընծա Ամենայն Հայոց Հայրապետության։

Ջերմագին շնորհակալություն տիար Սարգիս Դաստպարյանին, որ հանուն մեր Հայրե-

նի կառավարության արտասահման իր հարով, շարժեց մեր սրտերը, առավել հույս ու լավատեսություն շնորհելով Մեզ Մեր հետագա գործունեության հանապարհին: Մենք հետզհետե ավելի ու ավելի կհամոզվինք, թե մեր օրերուն, այստեղեն սկիզբ առած եկեղեցաշեն գործը, շնորհիվ Տիրոջ օգնականության և մեր Պետական իշխանության աստիճանն ու բարյացակամ վերաբերմունքին. պիտի շարունակվի ու պիտի հասնի իր լրումին՝ ի փառս Աստուծո, ի փառս հայ հավատավոր ժողովուրդին:

Մենք բոլորս, սիրելինե՛ր, տեսե՛ք ինչքան երջանիկ ենք, ինչքա՜ն արևեր կծագին մեր հոգիներու աշխարհեն ներս և ինչքա՜ն սրբազան մտածումներ, հույզեր, տենիլքներ կծաղկին այնտեղ: Ո՞վ է հավատը մեզ այստեղ՝ հեռու աշխարհներեն: Ի՞նչ հրաշագործ զորություն է այդ ամենակարող:

Աստուծո խոսքն է այդ, ո՞վ ժողովուրդ հայոց: Միածնի լույսն է այդ, որ այստեղ իջավ շատ դարեր առաջ անեղ զորությամբ, ու փայլատակեց հայոց հոգիները բոլոր:

Ամեն հայ երկու հազար տարիներե ի վեր իր սրտին ու երակներուն մեջ շող մը կկրե այդ աստվածառաք լույսեն:

Ամեն հայ, անխիր, Ս. էջմիածինը կսիրե երկու հազար տարիներե ի վեր:

Ոչ մեկ մարդկային ձեռք և ոչ մեկ նյութական ուժ չեն կրնար բաժնել հայը ի՛ր էջմիածնեն և ոչ ալ էջմիածի՛նը հա՛յ ժողովուրդեն:

Եվ Ս. էջմիածինը, Աստուծո կամքով, իր առաքելությունը պիտի շարունակե անհանգիստ կերպով իրև քրիստոնեության սյուն, իրև լուսավորիչ ու դաստիարակ հայ ժողովուրդին, իրև գանձարան հոգևոր ու բարոյական արժեքներու, իրև հանապարհ դեպի հավիտենականություն:

Ս. էջմիածինը պիտի շարունակե նաև իր պատմական առաքելությունը իրև հայ ժողովուրդի միության հզոր ախոյան և մանավանդ ի սփյուռս աշխարհի ցրված մեր Ազգին իրև փրկության լաստ:

Մենք պիտի պաշտպանենք, պիտի զորացնենք, պիտի ծաղկեցնենք էջմիածինը սուրբ, մեր Հայրենի երկրի ժողովուրդին և Սփյուռքի հայության համար հավատարապես: Ս. էջմիածնով պիտի բարձրացնենք փոքրիկը հայ ժողովուրդի խղճին և պիտի հաղթենք:

Հայե՛ր, հարազատնե՛ր Մեր, աշխարհի բոլոր համբաներեն, բոլոր ծագերեն, եթե իրավ հավատ կա ձեր մեջ, եթե նշմարիտ զավակներն եք մեր խաչված Ազգին, բոլորդ անխտիր եկե՛ք, միացե՛ք Ս. էջմիածնով. օրհնեցի սուրբ հաղթանակը ըլլա կատարյալ և մեր ապագան՝ պայծառ, ապահով:

Այս սրբազան պահուն, այս սուրբ կամարներուն տակ կաղոթենք ձեռադիր ձեզ բոլորիդ համար, սիրելի՛ հավատացյալ զավակներ Մեր: Կաղոթենք ձեր բոլորիդ առողջության ու բարօրության համար: Կաղոթենք մեր Ս. եկեղեցվո անսասանության ու հինության համար, կաղոթենք մեր Ազգի ու Հայրենիքի խաղաղ ծաղկումին ու հառաջընթաց վերելքին համար:

Կաղոթենք համայն աշխարհի խաղաղության ու ժողովուրդներու եղբայրության համար:

«Փրկեա՛, Տէր, զժողովուրդս քո և օրհնեա՛ զժառանգութիւնս քո, հովուեա՛ և բարձրացո՛ զնոսա մինչև յաւիտեան» (Սաղմ. ԻԷ 8—9):

Լուսո խորան Ս. էջմիածնեն Ձեզ բոլորիդ սիրո ողջո՛ւյն հայրական և օրհնությո՛ւն. բյո՛ւր օրհնություն կենարար: Ամեն»:

Վեհափառ Հայրապետի բարեբաստիկ ծննդյան հիսնամյա և գահակալության երրորդ տարեդարձի հոբելյանական հանդիսությունները Ծաղկյա դահլիճում վերջացան Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով։ Հոբելյար Հայրապետը ընդունեց հայ հավատացյալ ժողովրդի անայլայլ հարգանքի և երախտագիտության տուրքը, արևաշատ կյանքի և բազմարդյուն գահակալության սրտագին մաղթանքներով։

Աջահամբույրից հետո բոլոր ներկաները հյուրասիրվեցին կոնյակով և շոկոլադով։

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՇԿԵՐՈՒԹ

Հոկտեմբերի 12-ին, կիրակի օր, երեկոյան ժամը 6-ին, Երևանի «Հայաստան» հյուրանոցի շքեղ հաշասրահում, Գերագույն Հոգևոր Խորհուրդը և Հոբելյանական կենտրոնական հանձնաժողովը, ի պատիվ Վեհափառ Հայրապետին, կազմակերպել էին հոբելյանական ընդունելություն, որին հրավիրվել էին ավելի քան 250 հոգի, Վեհափառ Հայրապետի ծննդյան հինգամյակի և գահակալության երրորդ տարեդարձի հոբելյանական հանդիսություններին մասնակցող արտասահմանյան հոգևորական և աշխարհական բոլոր պատգամավորները, հյուրերը, տփտավորները, ինչպես նաև արվեստի, գրականության, մամուլի ներկայացուցիչներ և թղթակիցներ։

Հրավիրյալների թվում էին նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը և Խորհրդի անդամներն ու այլ պաշտոնական անձավորություններ։

Հոբելյանական սեղանը օրհնեց Վեհափառ Հայրապետը։

Հայրենի երկրի բազմազան բարիքներով զարդարված սեղանների շուրջ ստեղծվել էր հայկական ջերմ ու սրտագին մթնոլորտ։ Հոբելյանական սեղանը ղեկավարում էր Եգիպտոսի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը։

Առաջինը խոսք առավ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը և ասաց.

«Այս հանդիսավոր սեղանը տրված է Նորին Վեհափառություն Վազգեն Ա-ի պատվին։

Թույլ տվեք, Վեհափա՛ռ, մի անգամ ևս ջերմորեն շնորհավորել Ձեզ։ Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն և Ձեր հետագա գործունեության ընթացքում Ձեր գործերին լիակատար հաջողություն։

Այսօր էջմիածնի Մայր Տաճարում և ապա Վեհարանի Ծաղկյա դահլիճում շատ հետաքրքիր ելույթներ եղան։ Ես չեմ սխալվի ասելով այն, որ այդ ելույթների հիմնական թեման, հիմնական բովանդակությունը հայրենասիրությունն էր։

Այս սեղանը մեզ շատ բան է ասում նրա կազմի տեսակետից։ Այս սեղանի շուրջը նստած են աշխարհի բոլոր Մայր Ցամաքներից եկած մեր սփյուռքահայ ժողովրդի ներկայացուցիչները։ Այս սեղանը արդեն շատ բան է ասում հայ ժողովրդի հակատագրի մասին, ժողովուրդ, որ ցրված է ամբողջ աշխարհով մեկ։ Եվ հա այսօր Սփյուռքի հայ ժողովրդի ներկայացուցիչները եկել են մեր հայ պետականության կենտրոնը, եկել են Մայր Հայրենիք։ Ես ուզում եմ այսօր, երբ նստել ենք այս հանդիսավոր սեղանի շուրջ, մեր խոր գոհունակությունը արտահայտել մեր սփյուռքահայ ժողովրդին, որը հնշող մեծամասնությամբ գործում է մեր Հայրենիքի կողքին, ուրախանում է նրա հաջողություններով։ Եվ եթե առանձին դեպքեր լինում են, երբ նրա հակառակորդները փորձում են վնասել նրան, նրանք կանգնում են Սովետական Հայաստանի կողքին։ Մենք

կցանկանանք, որ այդ հայրենասիրությունը, այդ կապը մեր Մայր Հայրենիքի հետ ավելի ճզոռանա: Մենք՝ Հայրենի բնաշխարհի մարդիկս, կանենք ամեն ինչ որ մեզնից կախված է, որպեսզի այդ կապերը ընդլայնվեն, որպեսզի դրանք էլ ավելի սերտանան:

Մի ցանկություն ևս և ես կավարտեմ: Ցանկանանք, որ մեր բոլորի հայրենասիրությունը կոնկրետ լինի, որովհետև իսկական հայրենասիրությունը միշտ կոնկրետ է և ոչ թե վերացական: Բավական չէ հիանալ մեր Հայրենիքի հին ու նոր կառույցներով, հայրենասիրությունն միայն պոեզիայի թեմա չէ, նա միայն ճարտարգության թեմա չէ: Հայրենասեր այն անձը, այն քաղաքացին, Հայրենիքում թե նրա սահմաններից դուրս, եթե նա իսկական հայրենասեր է, ապա նա անպայման պետք է մի քար ավելացնի Հայրենիքի երջանկության և բարգավաճության շենքի վրա: Ուրեմն Հայրենիքը միայն հիացմունքի առարկա չէ, Հայրենիքը դժվարություններով, պայքարով և շինելով պետք է սիրել: Նա է իսկական հայրենասերը, ով իր բոլորիքը բերում է ի մասնակցություն այդ շինության: Այդ մասնակցությունը կարող է լինել գրականության մեջ, կարող է լինել երաժշտության մեջ, կարող է լինել մշակույթի մեջ և այլ բնագավառներում: Բայց նա միշտ մնում է որպես լոմա, որպես հայրենաշինական աշխատանք:

Թույլ տվեք այս բաժակը բարձրացնել կենացը Ամենայն Հայոց Կաթողիկոսի, նրա հայրենասիրական գործունեության համար, և ցանկանալ, որպեսզի մենք բոլորս՝ դրսի և ներսի աշխարհի հայերս, մեր կյանքի ընթացքը ունենանք հայրենասիրությունը, հայրենասիրությունը և միշտ հայրենասիրությունը:

Ապա խոսք առավ Հյուսիսային Ամերիկայի հարց Արևելյան թեմի բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը և ողջունելով Վեհափառ Հայրապետին հանուն ամերիկահայության, ասաց.

«Սիրո ողջո՜ւյն Ազգիս Վեհափառ Հայրապետին։

Ողջույններ եմ բերեր նաև Ամերիկայի մեր թեմի հավատացյալ ժողովուրդին։

Եկեր ենք մոտիկ և հեռավոր ոստաններե, այսպես համախմբվելու Ձեր շուրջը, Ս. Էջմիածնի շուրջը, Մայր Հողին վրա, դիմացը մեր պատմության կերտումի վկաներուն՝ Արարատին և Արագածին, քաղցր ցնծերքով փառավորելու Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո ազգընտիր Հայրապետիդ գահակալությունը, երրորդ տարեդարձին առթիվ։

Այսպես մեկտեղվելով կամարներուն ներքևը մեր պատմական Տաճարին և այստեղ միասնաբար մեզի հետ ունենալով ամբողջ գաղութները ազգին բոլոր խավերուն, ջերմապես կողջունենք ծննդյան հինգամյակին հասած Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա Հայրապետը, և մեր սրտեն, մեր հոգիեն արձակված մաղթանքներով կբարբառենք, «Թող պայծառ ու շեն մնա Սրբազնագույն Գահը Հայրապետական, թող անսասան մնա Հայաստանեայց Ս. Եկեղեցին, թող երկա՜ր, քաջառողջ կյանք ունենա մեր բոլորին շատ սիրելի Նորին Ս. Օծությունը։

Ունինք օգտակար այն բարի օրինակները, զորս առատությամբ բաշխած է և կշարունակե բաշխել Ազգիս Վեհափառ Հայրապետը, Անոր իմաստուն քայլերուն, Անոր ջերմությունին դառնալու, հաղորդվելու մեր առաջին փորձին մեջն անգամ պիտի ոգևորվինք այնքան շատ, որ խանդավառությամբ, նոր ավյունով պիտի կարողանանք կառչիլ, փարիլ բարձր նպատակին—Եկեղեցին, ինչպես եղած է անցյալին, ընել խարիսխը մեր միության աշխարհի մեջ։

Իրավ է, որ բախտին կարգադրությամբ սա վեցերորդ անգամն է, որ օտարության մեջ թափառելեն հոգնած քայլերս դիս բերած են Ս. Էջմիածին և Հայրենիք, բայց կզգամ, թե ուրախությենե կհորդի սիրտս, երբ հայացքս պտույտ կրնե կատարված համայնական շինություններուն և նորոգումներուն վրա, երբ կդիտեմ հիսնամյա, բայց առույգ ու կորովի Հայրապետը, երբ Անոր մոտն ու շուրջը կտեսնեմ կանգնիլը Երիտասարդ վարդապետներուն և այն պատանիներուն, որոնք պիտի ըլլան վաղվան սպասավորները մեր Եկեղեցվույն ու ժողովուրդին։

Հրաշք է կատարվեր անցնող երեք տարվան մեջ ինչպես Հայրենի երկրի ամեն մեկ անկյունը, այնպես և հոգ Մայր Աթոռին սա իրականությունը անշուշտ կարելի եղած է ընծայված պատեհություններուն շնորհիվ։

Իրենց խմբագրատունը «Էջմիածին» ամսագիրին կամ անցնիլ դասարանները Հոգևոր Ճեմարանին՝ կնշանակե ունենալ հոգեկան լայն բավարարություն։ Կարգապահությունը կուտա վեհություն մը վանական կյանքին, որուն համար բերած է ու կշարունակե բերել Վեհափառ Հայրապետը Իր աստվածատուր շնորհները։

Անգին ահա պատրաստ եղած է տպագրատունը, ուր հետզհետե պիտի գան տեղ գրավել կազմածները տպագրական մեքենաներուն, որոնք պիտի բանին լույսին բերելու ոչ միայն «Էջմիածին» ամսագիրը, դասագրքերը, Ավետարանի տպագրված օրինակները,

ապա նաև ունենան պիտի մեծ դեր մը լուսավորության մարզին մեջ։ Այս տպարանը, որ երեք տարի առաջ, Վեհափառի գահակալության առթիվ խոստացված է Ամերիկայի հայոց թեմի անունով, այսօր արդիական լրիվ սարքով ուրախություն կպատճառե նախ Նորին Ս. Օծության և ապա զայն իրականացնողին՝ Ամերիկայի մեր հավատացյալներուն, և գործին ղեկավար անձին՝ մեր թեմական խորհուրդի ատենապետ Երվանդ Աղաճանյանին։

Ս. Էջմիածնի սրբազան Սեղանին առջև աղոթքի պահուն մանավանդ կհայցեի Աստվածն պարգևել Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետին արևշատություն, քաջառողջություն և գործոց հաջողություն, որպեսզի ամեն անգամուն այսպես ուխտի գալով հոգեպես մխիթարվին մեր հավատացյալները։

Իր ծննդյան հիսնամյակին առթիվ իմ խոնարհ մաղթանքս է, որ Նորին Ս. Օծությունը ըլլա միշտ շրջապատված բացում միաբաններով, ուսանողներով, համայն հայ ժողովուրդով, որպեսզի ամեն տարեդարձի, սիրտերը հայ հոգիներուն լեցվին ցնծությամբ՝ ի տես անսասան Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվոյ։

Կմաղթեմ մանավանդ, որ Հայրենի հողին վրա մեր ժողովուրդը պետական իր կյանքով կատարե ամեն տեսակ նվաճումներ և օր մեն ալ կարենա ստեղծել պատեհություն՝ Սփյուռքի լորս ծագերուն ցրված իր եղբայրներն ու քույրերը դարձյալ կանչե տուն՝ միասնաբար նստելու այն մեծ սեղանին, որ լեցված ուխտի ըլլա բարիքներովը ամենքին վաստակով։ Այդպիսով, հայ հոգիներեն ճառագայթած լույսով պիտի ողողվի աշխարհն Հայաստան, ինչպես որ կբաղձար շարականագիր մեկ Հայրապետը մերս։

Վեհափառ Հայրապետի հոբելյանը սրտագին ու եղբայրական ճառերով շնորհավորե-

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՅՈՒՐԵՐՈՒ ՀԵՏ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ, ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄՈՏ

տուծմե պարգևել Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետին արևշատություն, քաջառողջություն և գործոց հաջողություն, որպեսզի ամեն անգամուն այսպես ուխտի գալով հոգեպես մխիթարվին մեր հավատացյալները։

Իր ծննդյան հիսնամյակին առթիվ իմ խոնարհ մաղթանքս է, որ Նորին Ս. Օծությունը ըլլա միշտ շրջապատված բացում միաբաններով, ուսանողներով, համայն հայ ժողովուրդով, որպեսզի ամեն տարեդարձի, սիրտերը հայ հոգիներուն լեցվին ցնծությամբ՝ ի տես անսասան Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվոյ։

Կմաղթեմ մանավանդ, որ Հայրենի հողին վրա մեր ժողովուրդը պետական իր կյանքով կատարե ամեն տեսակ նվաճումներ և օր մեն ալ կարենա ստեղծել պատեհություն՝ Սփյուռքի լորս ծագերուն ցրված իր եղբայրներն ու քույրերը դարձյալ կանչե տուն՝ միասնաբար նստելու այն մեծ սեղանին, որ լեցված ուխտի ըլլա բարիքներովը ամենքին վաստակով։ Այդպիսով, հայ հոգիներեն ճառագայթած լույսով պիտի ողողվի աշխարհն Հայաստան, ինչպես որ կբաղձար շարականագիր մեկ Հայրապետը մերս։

Վեհափառ Հայրապետի հոբելյանը սրտագին ու եղբայրական ճառերով շնորհավորեցին նաև քույր ժողովուրդների ներկայացուցիչներ՝ Վրաց Եկեղեցու և ժողովրդի ներկայացուցիչ գերապատիվ Տ. Լիոնիդ եպիսկոպոսը և Անդրկովկասի մուսուլմանների կրոնական վարչության ներկայացուցիչ Ռզան էլ-Արասին։

Արևմտյան Եվրոպայի թեմի Հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի առաջնորդ գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյանն իր ելույթում ասաց.

«Երկրորդ անգամ է, որ կայցելեմ Մայր Հայրենիք և Ս. Էջմիածին, շատ կարճ ընդմիջումով, ընդամենը երեք տարի միայն։ Սակայն կտեսնեմ իրական հառաջդիմու-

թյուն բոլոր մարզերու մեջ և մանավանդ շինարարական ասպարեզի մեջ։ Երևան կարծես ամբողջությամբ շինարարական փայտահանքերու մեջ առնված է։ Նույն հառաջդիմությունը նաև մտավորական գետնի վրա։ Դպրոցական, համալսարանական սերունդը հրճվանքով միայն կարող է լեցնել հայրենասեր հայու սիրտը։

Մեր Հայրենիքի մեջ աշխատող, ստեղծագործող պատվական մեր քույրերն ու եղբայրները հաջողությամբ կվերակառուցեն մեր անցյալը, անոր տալով մեր օրերու բովանդակությունն։ Մեր ճարտարապետությունը, մեր երաժշտությունը, մեր գեղարվեստը մեր անցյալ փառքի բոլոր նշխարները կհամադրվին, կմիաձուլվին այսօրվան կենսունակ նորածին Սովետական Հայաստանի ստեղծագործական բուռն թափին մեջ, անոր մերօրյա դիմագծությունը հագցնելով, անոր բացառիկ կերպով հայեցի դրոշմը կբխի մեր մեն-մի շարականեն, մեր մեն-մի պատմիչեն, ազգագրագետներեն, մագաղաթներեն, քարերեն, մեզ նայող կիսավեր վանքի մը կամ բերդի մը հպարտ պատերեն։ Այսօրվան սերունդին Երևանը նոր թարմություն, կենդանի ավիշ է դրած այդ բոլորին մեջ ու քով-քովի շարած՝ Արևելյան մայրուղիներու եզերքին բարձրացող շենքերը, իբրև կրթության վարարան, իբրև արտադրության կեդրոն, իբրև Հասարակական սպասարկության սահմանված շինություն։

Եթե լավ սերտենք մեր պատմությունը, այդտեղ մեր աչքին կհանդիպի շատ հատկանշական երևույթ մը։ Այդ եկեղեցիի և Պետության համերաշխ գործունեությունն է, որ կարմիր լուսե պես կձգվի հայ պետականության ամբողջ տևողության ընթացքին։ Պետությունն և եկեղեցի քալած են ձեռք-ձեռքի տված, սիրտ-սրտի միաձուլված, իրենց ե՛ուրախության և՛ տառապանքի օրերուն, գործած են միասին ու պահպանած են մեր Ազգի գոյությունը։ Այդ իսկ պատճառով, երբ հայ պետականությունը անցյալի մեջ կկործանի, հայերու համար, նույնիսկ տիրող այլակրոնները աչքին, Հայ եկեղեցին կկատարեր պետականության դեր հայ ժողովուրդին համար։ Անցյալին մեջ իր եկեղեցիեն հրաժարողը կնկատվեր նաև ազգեն հրաժարող։

Երբ մենք կտոնենք Նորին Ս. Օծության վազգեն Ա ազգընտիր Հայրապետի ծննդյան հինգամյակը և գահակալության երրորդ տարեդարձը, սրտագին փափագ մը, չերմ մաղթանք մը շարունակ կբխի իմ մտքի և սրտի դռները։ Այդ մնայուն միտքը այն է, որ միշտ շարունակե եկեղեցիի և Պետության ավանդական և արդյունավետ հարաբերությունը, այսինքն անխորտակ և ամուր հիմերու վրա դրվին Պետության և եկեղեցիի փոխհարաբերությունն ու գործակցությունը։ Մեկը առանց մյուսին մեկ ձեռքով ծափ տվողի դիրքին մեջ կըլլա։ Ուրեմն բոլորս աշխատինք, որ եկեղեցին և Պետությունը այժմ և ապագային մեջ ևս գործեն նույն ոգիով։ Այն ժամանակ անոնց այդ սերտ գործակցությենեն հրաշալի արդյունքներ կբացվեն հայ մշակույթի, ճարտարապետության, դիտության համար։ Հայ ժողովուրդը կըլլա երջանիկ ու բարեկեցիկ։ Համոզվելու համար այս բանին, Դուք բարի եղեք հետադարձ ակնարկ մը նետել մեր անցյալին վրա և այնտեղեն հավաքել մեր եկեղեցիի, անոր ստեղծած վանական սիստեմի նվաճումները։

Միակ եզրակացությունն մը դուրս կուգա այս բոլորեն։ Այդ ալ ան է, ինչ որ ունինք մենք որպես հոգեկան կամ նյութական արժեք. կյանքի տրված բնագավառի իբր նվաճում, բոլորն ալ պարտական ենք մեր վանքերուն ու եկեղեցականներուն։ Եվ այդ ոչ միայն հեռավոր անցյալին մեջ։ Մինչև համաշխարհային առաջին պատերազմը այդ այդպես էր, հարության երկու մայր քաղաքներուն համար ալ, Արևելյան թե Արևմտյան Հայաստանի մեջ։ Այդ այդպես է որոշ չափով նաև այսօր Սիրիոյի մեջ։ Եվ եթե օտարացման առջև հզոր պատվար մը կա, ան ալ Հայ եկեղեցին է, որուն շուրջն ու մեջը կամփոփվին հայ լեզուն, մշակույթը, միտքը, անցյալն ու ներկան։

Հիմա ալ եկեղեցին կրնա և պետք է շարունակե տանիլ իր պատմական դերը։

Ապա խոսք առավ Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի թեմական խորհրդի ատենապետ և Ս. Էջմիածնի տպարանի հանգանակության հանձնախմբի նախագահ պր. Երվանդ Աղաեանյանը, որը կարդաց հետևյալ ուղերձը.

«Վեհափա՛ռ Հայրապետ, հոգևո՛ր հայրեր, սիրելի՛ քույրեր և եղբայրներ.

Հանուն Ամերիկայի թեմի հայ հավատացյալ ժողովուրդին, կուգամ հայտնելու մեր որդիական ակնածանքն ու սերը Նորին Ս. Օծության ծննդյան հինգամյակի և գահակալության երրորդ տարեդարձի առթիվ։ Ամենուրեք ուր հայ մարդը կապրի, որուն հոգին և սիրտը տակավին անաղարտ մնացած է և մոռցած չէ մեր հայրերուն ուխտը, ան այսօր

կաղոթե առ Աստված Նորին Վեհափառության կյանքի արեւշատության, առողջության համար և կհայցե պայծառություն Մայր Աթոռին, որուն Գահակալն է, ի շարս մեր արժանավոր և հավատավոր հայրապետներուն՝ Վազգեն Ա-ը։

Հայ ժողովուրդի մեկ մասը քանի պանդխտության դատապարտված է, կապրի Հայրենիքի կարոտով, սրտին մեջ հույսի լույս մը, որ կուգա հայուն գրության խարիսխ և խորհրդանշան Ս. Էջմիածնեն, որ կանգնած է այսօր ալ Արարատի կողքին, խրոխտ ու վեհապանծ։

ցիին և մեր հայրերուն սուրբ հավատքին, մեր ազգային գիտակցության վրա խոսքված։

Այո՛, խորապես համոզված ենք ազգովին, որ իզուր չէր մեր հայրերուն գարերու զոհաբերությունը դեպի Ս. Էջմիածինը։ Հայաստանյայց Եկեղեցին և Հայ Ազգը պիտի ապրին։ Միայն հոգիով կույրերը չեն տեսներ մեր հայ եղբայրներուն և քույրերուն հսկայական նվաճումները հայուն սուրբ հողին վրա կատարված, ինչ որ մենք տեսանք մեր կենդանի աչքերով։ Հայուն երկիրը, որ անցյալին բզկտված և ոտնակոխ եղած էր.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ ՄԻ ԽՈՒՄԲ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ

Վեհափա՛ռ Հայրապետ.

Այսօր այդ լույսը Դուք առավել ևս վառեցիք մեր հոգիներուն մեջ Ձեր հայրական հորդորներով, որոնք հիմնված են հոգեկան և բարոյական բարձր սկզբունքներու վրա։ Այդ շինարար գործունեությամբ, ըլլա ան վարչական-վանական, հոգևոր կամ մշակութային, Դուք նոր կյանք տված եք Մայր Աթոռին։ Այսպիսով, Դուք մեզի բերիք նոր հույս, հավատք և ապրելու կամք, հայ մտայնությամբ և հայ զգացումով։ Որով, Ձերդ Ս. Օծության ծննդյան հիսնամյակը և գահակալության երրորդ տարեդարձը հոմանիշ է հոգևոր-իմացական վերաշինության և վերակենդանության, Հայաստանյայց Եկեղե-

այսօր ոչ միայն բուրաստանի մը վերածված է, այլ նաև հայ ազգային մշակույթի, գիտության, արվեստի վառ օջախ մը դարձած է մեր հայրենի եղբայրներու սուրբ աշխատանքով։

Հայ հոգևորականը, Հայաստանյայց Ս. Եկեղեցին միջոցով, դարերով հայ ժողովուրդի առաջնորդը եղած է։ Այդ հոգեբանությունը, որ մեր պապերեն ժառանգ ինկած է մեզի, կստիպե մեզ իբրև տիպար հայ մարդ ապրելու, սիրելու մեր Մայրենի Եկեղեցին, համախմբվելու անոր սուրբ հովանիին տակ, որովհետև Հայ Եկեղեցին տվավ հայուն Ա Թ Գ-ը՝ ազգապահպանման ամենակարևոր ազդակը։ Հայ Եկեղեցին օրհնեց ազատագրու-

թյան խորհրդանշան քաջն Վարդանի սուրը։ Մեր ճարտարապետությունը, նկարչությունը և երաժշտությունը ստեղծվեցան, զարգացան և պահվեցան վանքերու մեջ, մեր եկեղեցիի հովանիին ներքև, մեր արժանավոր վարդապետներու ձեռքով։ Արույան, այն մեծ հայրենասերը, երբ ըսավ, թե «Մեկ ազգի պահողը, իրար միացնողը լեզուն է ու հավատքն, ան չէր խոսեր միայն մեկ անհատի կողմե, այլ կարտահայտվեր ամբողջ ազգի մը համոզումով, հիմնված անցյալի փորձառության վրա։

Այսօր հայ մեծ զանգված մը, ցրված աշխարհի ամեն անկյունները, Հայրենիքեն դուրս, դատապարտված է կորուստի, ազգային տեսակետով։ Այս հայ զանգվածը այս Սուրբ Հողին հարազատ զավակն է, թեև կապրի որպես տարբեր երկիրներու քաղաքացի, կապված մեր նվիրական Հայրենի այս Հողին և Ս. Էջմիածնին։ Որով, այսօր Հայաստանյայց եկեղեցին նորեն ինքզինքը կգտնե մեծ և լուրջ պատասխանատվության մը առջև, այն է՝ ըլլալ օջակ մը, ամենուրեք ցրված պանդուխտ հայ մարդուն և այս Սուրբ Հողին միջև, որ ներկված է մեր պապերուն արդար և անմեղ արյունով։ Ճշմարիտ հայու արյուն կրող ամեն մի անհատի պարտքն է զորացնել մեր հավատքը, գեղեցկացնել մեր լեզուն, պահել մեր գրականությունը, քանզի դարերու փորձառությենեն մենք սորված ենք, թե միայն այս է միջոցը իբրև հայ կարենալ ապրելու և մեր ազգային գոյությունը շարունակելու համար։ Ես վստահ եմ, որ մեր եղբայրներն ու քույրերը, որոնք բախտն ունին ապրելու մեր Հայրենի Հողին վրա և վայելելու անոր պայծառ ու ջերմ արևը, խմելու անոր հստակ ու քաղցր ջուրը, ծծելու անոր մաքուր և առողջ օդը, այս գիտակցությամբ է, որ Հայրենիքի վերաշինության տուրը դարձին նվիրված են և իրենց աշխատանքով կնվաճեն նոր հորիզոններ և կկերտեն հայ ժողովուրդին եկարագիրը քաղաքակրթության համբուն վրա։

Մենք ազգովին երախտապարտ ենք անոնց։ Անոնց եղբայրական անունները փորագրված են մեր սրտերուն վրա և անջնջելիորեն պիտի ապրին մեզ հետ։

Ֆրանսացի մեծ բանաստեղծ մը ըսած է, թե այն անհատը, որ իր Հայրենիքեն կհեռանա, ան մեռած կըլլա իր Հայրենիքին համար։ Մենք, որպես ժողովուրդ, բացառություն չենք կազմեր այս օրենքեն և Հայրենիքեն դուրս ստուգ կորստյան կդատապարտվինք, եթե մեր սրտերուն մեջ չըլլա Հայրենիքի սերը և Ս. Էջմիածնի չգժգունող պատկերը։ Աշխարհի ամեն ծայր ցիրուցան եղած համայն հայության աչքերը Ձեր վրա դարձած են։ Դուք եք մեր հույսը, մեր լույսը, մեր ճանապարհը, միլիոնավոր հայ նահատակներու արյունով և կտակով։ Անոնք երեկ զոհաբերվեցան, որպեսզի այսօր հայը ապրի։

Մենք՝ պանդուխտ հայերս, ունինք մեկ երազ և մեկ իղձ միայն։ Եթե մեր ոսկորները պիտի թաղվին օտար երկինքներու տակ, դուն Դուք, երդվյալ պահպանները մեր երկրին, ընդունեցեք մեր ոգիները. որ գան և ապրին մեր հայրերուն և Ձեր ոգիներուն մոտ, հայուն երկինքին տակ, հայուն Սուրբ Հողին վրա։

Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի թեմի Հայրապետական պատվիրակ և առաջնորդ գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը, հանուն իր թեմի խոսք առնելով պաշտոնական ընդունելության ժամանակ, ասաց.

«Հեռավոր Արևելքի, ի մասնավորի Հնդկաստանի հայությունը, որ դարեր շարունակ սերտորեն կապված է եղեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և անոր լուսավորչաշառավիղ հայրապետներուն, այսօր և այս բարդապատեհ առթիվ չէր կարող մնալ անտարբեր իրեն ուղղված հրավերի կոչին։

Մենք բոլորս, պատգամավորներ թե ուխտավորներ, պահ մը եկած ենք բոլորվելու Ձերդ Վեհափառության և Լուսավորչի հնադարյան ու պատկառելի Գահին շուրջը, ցույց տալու, որ մեր բոլորին սրտերը կբաբախեն հավիտենական այս տաճարին և անոր Գահակալին համար, հանձին Ձերդ Վեհափառության։ Եկած ենք ծունկի գալու Իշման Սեղանին առաջ, մենք ալ մեր ճակատները խոնարհեցնելու, համբուրելու այս սրբատաշ ու լուսափայլ Սեղանին մարմարյա քարերը, հաղորդվելով մեր այն բարեպաշտ նախնիքներու հոգիներու հետ, որոնք դարուց Ի դարս քարավան առ քարավան եկան երկյուղածությամբ և գլխահակ այս կամարներուն տակ խնկարարը ու պանծալի, իրենց մտքին ու հոգիին տուրքը տվին, ու ասկե լեցուցին փոխադարձաբար իրենց սրտին կանթեղը և ամանը հոգիին, Ս. Լուսավորչի լույս հավատքին յուղովը։

Օրերու օրն է մեր բոլորին համար նվիրական ու պատմական այս օրը, և փղուր չէ, որ մենք, ծովեր ու ցամաքներ կտրած, Մայր Հայրենիք և Մայր Աթոռ եկած ենք ուխտի, այլ թեմերու պատգամավորներուն հետ։

Ձերդ Վեհափառության հովանիին ու շուքին տակ, մենք ականատես վկաները կըլլանք նոր շունչով ու նոր եռանդով սկսած եկեղեցական-հոգևոր վերածնունդի նոր դարաշրջանի մը Մայր Աթոռին ներս, որ անհուն ուրախությամբ մը կլեցնե մեր բոլորին սրտերը։

Մենք ուրախ ենք, որ Մայր Հայրենիքի սահմաններեն ներս, մեր եկեղեցին ու մեր ժողովուրդը խաղաղ ու շինարար կյանքի փարած, կկերտեն իրենց լուսավոր ապագան։ Նույնը չէ սակայն մեր ազգային ու կրոնական կյանքը Հայրենիքեն դուրս։ Փոթորիկներ մերթ կալեկոծեն արտաշխարհի հարուցյան կյանքը և մեր եկեղեցին։ Մեր եկեղեցիին նավը հաճախ ամեհի փոթորիկներու վրա կնավե, բայց մենք հուսահատ չենք, մենք կլսենք Գերագույն Նավապետին ձայնը, որ կըսե՝ «Մի՛ երկնչիք»։ Այդ ձայնին արձագանքը երկրի վրա և անոր ներկայացուցիչը խորհրդավորապես Ձերդ Վեհափառությունն է։

ծնեն, անոր կնայինք և անկե կսպասենք մեր փրկությունը, որ իրրև Աստուծո Աչը համաստսրած կհովանավորե մեզ բոլորս։

Վեհափա՛ռ Տեր.

Հիսուս կբերեմ շնորհակալություններ հայկարավոր սրտերեն բխած, այսօրվան բարեպատեհ տոնին առթիվ, հետո Ձեր Գահույն, մաղթելով երկար և երջանիկ տարիներ Ձերդ Վեհափառության։

Թող Տերը անսասան պահե Մայր Աթոռը և Լուսավորչի Գահը, ինչպես նաև ծաղկող մեր Հայրենիքը, որպեսզի մենք միշտ հընչեցնենք «էջ Միածին ի Հոր և լոյս փառաց ընդ նմա», ի փառս Աստուծո և Ազգի, ի պայծառություն Հայաստանյայց Ս. Եկեղեցվոյ։

ՀՆԴԿԱՀԱՅ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ՝ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄՈՏ

Հեռավոր Օվկիանիո խորերեն, Ցանկցեի և Գանգեսի ափերեն, տասնյակ հազարավոր ժողովներ հեռուներեն, Ձեր զավակները Ձեզի հառած են իրենց աչքերը և մեր դարավոր փորության ֆիրև խորհրդանշան՝ այս լուսափառ Տաճարին և Մայր Հայրենիքին։

Այսօր Սփյուռքի հայությունը, ցրված աշխարհի չորս հովերուն, մխիթարություն կփնտռե Ս. Էջմիածնի և Մայր Հայրենիքի մեջ։

Արտասահմանի մեջ մենք ուրիշ փրկության ճանապարհ չունինք բացի Ս. Էջմիածնի հայց Թեմական խորհրդի անունից խոսք առնելով պր. Հովհաննես Քեճյայանն ասաց.

«Վեհափա՛ռ Տեր.

Սրտագին շնորհակալություններ կհայտնեմ Ձերդ Վեհափառության և Գերագույն Հոգևոր Խորհրդին, որ մեզի այս բացառիկ պատեհությունը ընծայեց, սրտի անհոգ ուրախությամբ և բերկրանքով ներկա գտնվելու Ձերդ Վեհափառության ծննդյան հինգերորդ և գահակալության երրորդ տարե-

դարձին առիթիվ տեղի ունեցող այս փառահեղ հանդիսությանց։

Վեհափա՛ռ Տեր.

Մենք հոս կգտնվինք Ս. Էջմիածնի հովանիին տակ, մեր ուխտը նորոգելու համար հանդեպ Ս. Էջմիածնի և մինչև վերջ հավատարիմ մնալու անոր։

Մենք հոս կգտնվինք զՁեզ՝ առաքելանման Հայրապետդ շնորհավորելու այս կրկնակի հանգիստությանց առիթիվ և աղոթելու, որ Տերը անսասան պահե Ամենայն Հայոց Հայրապետությունը, անոր շնորհազարդ Գահակալը՝ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսը, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և հոն բոլորված միաբանությունը։

Վեհափա՛ռ Տեր.

Ի սրտե կմաղթենք, որ իրականանան եկեղեցաշեն Ձեր բոլոր ծրագիրները։ Կմաղթենք, որ անոնք պսակվին կատարյալ հաջողությամբ, ի շինություն և ի պայծառություն Հայաստանյայց Ս. Եկեղեցվո։

Արտասահմանի հեռավոր գաղութներեն, հայ ժողովուրդի չախչախիչ մեծամասնությունը Ձեզ հետ է և կաղոթե Ս. Էջմիածնի և Հայրենիքի բարօրության համար։

Կրկին անգամ շնորհավորելով Ձերդ Վեհափառությունը, բոլոր սրտով կմաղթենք, որ բարձրյալն Աստված Ձեզի պարգևե առողջ և երկար կյանք, որպեսզի մեր եկեղեցվո պատմության այս ալեկոծ օրերուն վայելենք Ձերդ Վեհափառության իմաստուն առաջնորդությունը։

Դամասկոսի թեմական առաջնորդ գեր-շնորհ Տ. Շավարշ եպիսկոպոս Գույումճյանը պաշտոնական ընդունելության ժամանակ ասաց.

«Աստվածարյալ Ս. Հայրապետ և Վեհափա՛ռ Տեր.

Իբր հոգևոր ներկայացուցիչը Դամասկոսի աղքատիկ և սահմանափակ թվով ժողովուրդ ունեցող թեմի, երբ Կալիֆոռնիո, Նյու-Յորքի, Լոնդոնի կամ Եգիպտոսի ներկայացուցիչներու կարգին կանցնիմ Ս. Էջմիածնի գանձանակի առջևեն, ինքզինքս եկուն կզգամ կարծեք... Կմխիթարվիմ, սակայն, վերհիշելով Ավետարանի աղքատ կինն ու անոր երկու լումաները։

Նմանապես կսիրեմ մեր հոգևոր պատկերը տեսնել անմահ վարպետի այն խորհրդաստ տողերուն մեջ, որոնց մեջ կնկարագրե մեռած մոր մը հանդեպ անոր զավակներուն ի հայտ բերած հոգեկան ապրումները։ Վաճառական որդին գանձ մը բերավ մորը հոգակուլտին, զինվորականը՝ սուրը, քահանան՝ սրտաբուխ աղոթքը, խեղճուկ որդին՝ սիրտը։

Սիրտը... մտեղեն այդ բուսական կծիկը, շնչավորներու կեդրոնական գործարանը... ընդունարանը հոգևոր և բարոյական լավագույն հղացքներու, մշտարծարծ խնկաման, ուր կՀեՀեՀերի կրոնական հրայրքի և ազգասիրական հուրքի կնդրուկը։

Դամասկյան սիրտը, մասնավորաբար, կտրուկե ի սեր Հայ Եկեղեցվո միասնականության և հայ ժողովուրդի միության, այն, որ կգեղու սիրով, բաժակի մը նման պատարան և թաթաղուն, հանդեպ Ս. Էջմիածնի, անոր Վեհափառ Հայրապետին և Սովետական Մայր Հայաստանի հանդեպ, ընդհանրապես։

Դամասկյան սրտի երկու խոռոչները կներկայացնեն տեղվույն առաջնորդարանը, ինչպես նաև 1957 մայիսեն ի վեր հոն փոխադրված Կիլիկյան Կաթողիկոսարանը՝ տեղապահությամբ բարձրապատիվ Տ. Խաչ սրբազան հոր, և որոնք բարձր բռնած են Հայ Եկեղեցվո միասնականության և ժողովուրդի միության դրոշակը պատնեշին վրա, պայքարի մեջ։

Դամասկյան սիրտը, Մաքսիմ Գորկիի Դանգոյի սրտի նման, կոչված է փարատելու Հայ Եկեղեցվո և ժողովուրդի ծոցին մեջ գոյացած արվեստական խավարը և լուսավորելու Կիլիկյան շրջանակը դեպի միություն և միասնականություն, Ս. Էջմիածին և Սովետական Մայր Հայաստան առաջնորդող ճանապարհները։

Եվ մենք ուրախությամբ և հպարտությամբ կբերենք այդ սիրտը առ ոտս Գահույից Ձերդ Վեհափառության։

Պայծառ մնաք, Վեհափա՛ռ Տեր, երջանիկ արևշատությամբ։

Պաշտոնական ընդունելության ժամանակ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անունից Վեհափառ Հայրապետի ծննդյան հիանամյակը և գահակալության երրորդ տարեդարձը շնորհավորեց Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ դոցենտ Արտաշես Տիրացյանը.

«Մենք, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներս, Վեհափառ Հայրապետի առաջին պաշտոնական խորհրդականներն ենք. իբրև այդպիսիք, մենք կոչված ենք գործակցելու Նորին Վեհափառության հետ նրա ազգային-եկեղեցական բոլոր աշխատանքների ընթացքին։ Եվ իբրև այդպիսին, ուզում եմ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների և իմ կողմից վստահեցնել ձեզ, թե մեր երեք տարիների գործակցությունը Վեհափառ Հայրապետի հետ մեզ բերած է ա՛յն կատարյալ համոզման,— և այս՝ ուրախ ենք մենք այստեղ ևս հայտարարելու,— թե հանձին Նորին Սրբության՝ Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռի վրա բազմել է այսօր մի Հայրապետ, բառիս լավագույն իմաստով մի գաղափարական Կաթողիկոս, որի հայրենասիրությունը, եկեղեցաշեն ու ազգային լայն ծրա-

գրերի իրականացմանը գործակցելը մեզ համար ո՛չ միայն հոգեկան և բարոյական մեծ գոհունակություն է, այլ նաև մեծ պատիվ։

Արդարև մենք, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներս, միշտ գործակցել ենք Վեհափառ Հայրապետի հետ այն բոլոր աշխատանքներում, որոնց յուրաքանչյուր հանգրվանին մենք ունեցել ենք հրճվալից ու ոգևորիչ ապրումներ, որպիսին ունենք այսօր դուք, այս պատվո սեղանի շուրջը հավաքված։

«Վեհափա՛ռ Տեր.

Հանուն ռումանահայ թեմին, նվիրական ու հաճելի պարտականությունը ունինք մասնակցելու այս հանդիսությանը, ուր Հայաստանյայց Ս. Եկեղեցին և հայ ժողովուրդը կտոնեն իրենց Հովվապետին՝ Ձերդ Ս. Օծության ծննդյան հիսնամյակը և գահակալության երրորդ տարեդարձը, մատուցանելով մեր սրտագին շնորհավորությունները։

Մենք՝ ռումանահայերս, բոլորս հուզմամբ կհիշենք այն տարիները, երբ վայելեցինք

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՔՅՈՒՐՋՅԱՆՆԵՐԻՆ ՆՎԻՐՈՒՄ Է «ՎԱՂԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՅՈՑ» ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՅՈՐԸ

Ուստի, հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի առաջարկում եմ հոտնկայս բաժակ բարձրացնել Նորին Վեհափառություն Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի կենացը, մաղթելով Նրան քաջառողջ և երկար կյանք, իրականացնել կարողանալու համար այն խոշոր ծրագրերը, որոնցով ա՜յնքան հարուստ է Նորին Վեհափառության միտքն ու սիրտը։

Կեցցե՛ Վեհափառ Հայրապետը։

Ռումինահայ թեմական խորհրդի անունից, Բուխարեստի պատգամավոր պր. Հովհաննես Գալփամյանը կարդաց հետևյալ գեղեցիկ ուղերձը.

Զեզ շատ մոտեն։ Ճանչցանք Ձեր կյանքը, Ձեր մտքի արժեքը, Ձեր կարծիքները Հայ Եկեղեցիի և հայ ժողովուրդի մասին, հայ դպրոցի մասին և հայ մամուլի մասին, և ամեն մեկ աշխատանքի կամ պաշտոնի մեջ. ուսուցիչ, գրող, կղերական, մենք տեսանք Ձեր մեջ տիպար պաշտոնյան, նվիրյալ դաստիարակը, տիպար վարդապետը՝ հավատարիմ Ի՛ր ուխտին և իր կոչումին։

Մնած Բուքրեշի մեջ ուր և զարգացաք, Դուք ստացաք որպես ժառանգական հարստություն ֆիզիկական և հոգեկան բացառիկ կորով, պահպանված և մշակված խնամքով, մեկը՝ խիստ դաստիարակու-

թյամբ, ուր գլխավոր բաժինը պիտի ունենար Ձեր մայրը, մեր Տիրամայրը, ուշադիր հսկողությամբը իր որդիին վրա, մյուսը՝ բազմակողմանի մշակույթով և մնայուն մտածումի կեդրոնացումովը։

Ուժեղ բնավորության տեր, Դուք չվատնեցիք այս ուժը փոքր և անպետք գործերու մեջ. այլ, ինչ որ ըրիք, եղած է լուրջ, լավ մտածված և մեթոդիկ իրագործված, որոնք ապացույցը կհանդիսանան բարձր և հաստատուն հոգիի մը և լայն տեսողության, նեղաց ոգիի և ներողամիտ բոլորին հետ. սխալները հարվածեցիք ճակատեն, բայց միշտ ալ խնայեցիք զոհերը։ Արդարության և ճշմարտության ծառայեցիք անշեղորեն։ Ջերմ և սիրալիր եղաք եղբոր մը պես, ունենալով յանկեղծ բարեկամության պաշտամունքը։ Ձեր տված խորհուրդները լույս ճառագայթեցին, փսկ Ձեր հոգվույն ջերմությունն կարծեք թե բոլորիս մեղքերը հալեցան։ Ձեր գաղութներուն մեջ Ձեր պատկառելի ներկայությամբը ստեղծվեցավ շինիչ և խաղաղ մթնոլորտ մը։ 1945-են սկսյալ, Ձեր ականատեսի վկայությունները մեր վերածնած, ծաղկող ու զարգացող Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի մասին արթնցուցին և սնուցին մեր հայրենասիրական զգացումները։

Մեր գաղութի տարեգրությանց մեջ անանխընթաց է Ձեր գործունեությունը և ռումանահայ գաղութը երախտապարտ է այն բոլոր թանկագին ծառայություններուն համար, որ մատուցիք այն երկար տարիներու ընթացքին, զորս անցուցիք մեզ մոտ։

Հուզումով միշտ հետևեցանք Ձեր այն աշխատանքներուն, ուր ի սրտե ջանացիք նորոգել ու վերահաստատել սերտ կապերը արտասահմանի բոլոր թեմերուն հետ, մասնավորապես Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հետ։ Գնահատեցինք Ձեր երիտասարդական կորովը, հրեշտակային համբերությունը և իսկական հայրական սերը. և եթե կատարյալ բավարարություն չգտաք ու դեռ կշարունակեք փոյթություն ունենալ անչատող միտը, այս հետևանքն է այն պարագաներուն, որոնք կհետապնդեն անձնական շահեր ու կփորձեն շարադեռ քաղաքական ցանցի մեջ առնել, մեր ժողովուրդի զավակներեն ընելու համար վարձկաններ օտարներու ծառայության, և հակառակ մեր ժողովուրդի և Եկեղեցիի հարազատ շահերուն։ Սակայն և այնպես, մենք հավատացած ենք, որ համագործակցությունը տկարացնող այս պառակտումները շուտով կվերանան և գաղութավայրերու մեջ հայ ժողովուրդը, հեռու Մայր Երկրեն, ինչ որ ալ ըլլան անհատական տեսակետները ընկերային խնդիրներու մասին, պիտի միավորվի Մայրենի Եկեղեցիին և դպրոցներու շուրջ, կատարելու համար նվիրական պարտականության ամենեն կենսականը՝ հայ ժողովուրդը պահպանել ու ներկայացնել որպես ազգային ամբողջություն, առնելով սնունդի և ուժի առատ ճարակ Մայր Հայրենիք Սովետական Հայաստանի շարունակական նվաճումներեն։

Ողջունելով այս հոբելյանը, կմատուցանենք Ձերդ Վեհափառության՝ ռումանահայության անվերապահ համակրանքն ու խոնարհ որդիական սերը և կմաղթենք արևշատություն և առողջություն, լի խաղաղությամբ, շարունակելու Ձեր եկեղեցանվեր և հայրենանվեր բարի գործերը, ի շահ Հայաստանյայց Եկեղեցվո և հանասանության Մայր Աթոռ Ս. Էջմիածնիս։

Մանոթ մտավորական և բազմավաստակ պատմաբան-բանասեր պր. Արշակ Ալպոյաճյանը իր բովանդակալից ողջույնի խոսքին մեջ կանգ առավ մանավանդ Սփյուռքի պայմաններում ապրող հայ ժողովուրդը ձուլումից փրկելու անհրաժեշտության և միջոցների վրա.

«Հայ Ազգին ամենեն կարևոր հատկանիշներեն մեկը եղած է իր տոկալու կարողությունը, հակառակ բոլոր աննպաստ պայմաններուն, որոնցմով շրջապատված էր անցյալին մեջ։

Մեր գոյության տևականության մեջ, մասնավորապես վերջին վեց հարյուր տարիներու ընթացքին, ամենակարևոր դերը կատարած է Հայ Եկեղեցին, որ պահպանած է հայ լեզուն և հայ գրականությունը և հայ մշակույթին բոլոր մյուս տարրերը, և որքան հնարավոր եղած է պահած է Հայ Ազգին գոյությունը, որ վտանգված էր, ձուլման վտանգին ենթարկված ըլլալով։

Այսօր, շնորհիվ Խորհրդային Հայաստանի Հանրապետության, Հայաստանի մեջ հայ Ազգին որևէ վտանգ չսպառնար և գոյություն չունի ձուլումի և այլասերումի հարցը և Հայ Եկեղեցին իր հոգևոր և բարոյական գործը կրնա կատարել անվրդով, պետական պաշտպանության տակ։

Հիմա Հայ Ազգին վտանգի տակ գտնվող մասը կկազմե արտասահմանի հայությունը։ Հայ Եկեղեցին ուրեմն արտասահմանի մեջ տանի կատարելիք կարևոր դեր մը, վասնզի արտասահմանի հայերը կգտնվին հայությենե ուծանելու վտանգին տակ։

Արտասահմանի հայերը հետևարար մեծ ակնկալություններ ունին էջմիածնեն և ուրախ են տեսնելով, որ Վեհափառ Վազգեն Ա Կաթողիկոս ինչ ջանքեր կթափե Եկեղեցին վերանորոգելու, որպեսզի ան ձեռնհաս ըլլա իր դերը կատարելու և փրկելու արտասահմանի հայերը կորուստեն։

Ս. Էջմիածին պետք է ըլլա հոգևոր ներշնչարան մը արտասահմանի հայության համար և միևնույն ատեն կապ մը՝ հայերը զոդելու համար Հայաստանի և Հայ եկեղեցվո կեդրոնին հետ։

Ուրեմն կեցցե՛ն Վեհափառ Վազգեն Ա Կաթողիկոս և Խորհրդային Հայաստան, որ միասին ապահովեն հայոց ապագան և հայերը հայ պահեն։

Հոգևոր Ճեմարանի փոխ-տեսուչ ճոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանը ընդունելության ժամանակ խոսեց հետևյալ գեղեցիկ և բովանդակալից ճառը.

ծայրահեղ ավանդապահության և եկեղեցաշեն ոգու, Ձերդ Վեհափառության չընկրկող սկզբունքայնության և մանավանդ Ձեր բարձր բարոյականության օժտվածությամբ, կույր պիտի լինել չտեսնելու համար այն բոլոր նվաճումները, որոնք կատարվել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մեջ, իրեն քանդակ ու մարմար, կույր պիտի լինել և հոգվով, չտեսնելու համար նաև հոգեկան ու բարոյական այն վերածնունդը, որ կատարվել է Մայր Աթոռի միաբանության յուրաքանչյուր անհատի մեջ և Հոգևոր Ճեմարանի յուրաքանչյուր ուսանողի հոգում։

ՊՐ. ՆՈՒՊԱՐ ԿՅՈՒԼԲԵՆԿՅԱՆԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԵՐԳՉԱԽՄԲԻ ՀԵՏ

«Շատ սիրելի Վեհափառ Հայրապե՛տ.

Այսօրվա արտակարգորեն խորհրդավոր և նույնչափ էլ հուզիչ արարողություններն ու խոսքերը Ձեզ բերում են հայ ժողովրդի սրտի անհուն երախտագիտությունը։

Ձեր կյանքի յուրաքանչյուր ակնթարթը մեկ օղակն է այն ադամանդակուռ մանյակի, որը կազմում է ոսկետառ պատմությունը Ձեր եռամյա գործունեության և Մայր Աթոռի հրաշափառ զարթոնքի։ Այդ մանյակի մեկմի օղակը իր բյուրեղյա պարզության մեջ արտացոլում է այն բոլորը, ինչը նվաճվել է շնորհիվ Ձերդ Վեհափառության կասեի

Մենք բաժանելով Ձեր հոգեկան տվայտանքները, խորունկ ցավով ենք վերհիշում, որ մեր եկեղեցու նկատմամբ ուխտադրուժ և կործանարար գործունեություն է ծավալվել։ Սակայն, եթե այսօր քաղաքական աննպաստ կացությունը հնարավորություն է տալիս որոշ փոքրոգիների խաղալու համար, կամ ավելի շուտ կրկնելու համար իրենց խաղերը եկեղեցու դեմ, այդ դեռևս ոչնչով չի խաթարում Ձերդ Վեհափառության հայրենանվեր, անձնվեր և եկեղեցաշեն գործունեության վեհությունը։ Աստված միայն գիտե՝ եթե Լուսավորչի հնադարյան Գահը իր վրա չունենար Ձերդ

Վեհափառությանը, ինչպիսի՞ն կլիներ Հայաստանյայց Եկեղեցու ճակատագիրը։ Ահա այս համոզմունքը, այս աննահանջ հավատը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությանը թելադրում է կրկին ու կրկին անգամ հավատացնել Ձեզ և Ձեզանով նաև ողջ հայ ժողովրդին, որ նա անսասան է իր ուխտի և երդման մեջ և անձնվիրաբար կրնկակոխ հետևում է ազգօգուտ, եկեղեցաշեն և հայրենանվեր գործունեության։

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը այսօր ինձ աղերսել է բերելու համար իրենց մատաղ, իրենց մատդաշ հոգու լավագույն զգացումները ոչ միայն իբրև Հայոց Հայրապետի, այլ մանավանդ իբրև իրենց ուսուցչապետի։ Եվ համոզեցին ինձ կրկին անգամ հավաստիացնել Ձեզ ողորի առաջ, որ իրենք իրենց հոգին պիտի նվիրաբերեն Ձեր գործին, որ իրենք իրենց կյանքը պիտի ընծա բերեն հայրենաշինության գործի համար, որ իրենք պիտի լինեն այն, ինչ որ եղել են մեր երբեմնի մեծ վարդապետները։

Սան-Պաուլոյի արժանապատիվ Տ. Եզեկիել ավագ քահանա Վարդանյանը իր ողջույնի խոսքի մեջ գրել էր.

«Վեհափա՛ռ Տեր.

Հարավային ամերիկահայոց Ձերդ Վեհափառության արժանավոր պատվիրակը՝ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը, իր կամքեն անկախ պատճառներով, այս անգամ չկարողացավ ներկա գտնվիլ Ձերդ Վեհափառության բարեբաստիկ ծննդյան հիսնամյակի և գահակալության երրորդ տարեդարձին առթիվ կազմակերպված այս փառավոր հանդիսակատարությանց, ու ինձի, Հայաստանյայց Եկեղեցվո համեստ մեկ սպասավորին, Մայր Աթոռի, լուսավորչակերտ Ս. Էջմիածնին ցմահ հավատարիմ ծառային հանձնեց Ձերդ Վեհափառության Ս. Աչը համբուրելու և իր շնորհավորություններն ու հարգանքները մատուցելու պատիվը։

Վեհափա՛ռ Տեր.

Ձերդ Սրբության և այսքան բարձրաստիճան հոգևորականներու, պետական ներկայացուցիչներու և մտավորականներու ներկայության, ինձ պես պարզ քահանայի մը կողմե խոսք առնելը ինքնին հանդգնություն մըն է, բայց կհուսամ, թե Ձերդ Վեհափառությունը պիտի ներե Իր զավակի այս համարձակությունը, որ կուգա Ձեզ հանդեպ անոր զգացած խորունկ հարգանքեն։

Ծովերով ու ցամաքներով բաժնված, հազարավոր մղոններով հեռու, Հարավային Ամերիկայի մեծագույն ու փառավոր երկրեն՝ Բրազիլիայեն կուգամ, ուր կապրի թվով փոքր. բայց պատվական հայերե կազմված գաղութ մը։ Հայրենակարոտ այդ ժողովուրդը ինձի պարտականություն տված է, մեր սիրելի Հայրենիքի Սուրբ Հողը համբուրելե վերջ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Ս. Աչն ալ համբուրել։ Անոնք այդ համբույրին մեջ դրած են իրենց հայրենատիրական ու որդիական ամբողջ սերն ու հարգանքը։ Բրազիլիայի ամբողջ հայերը, մեկ սիրտ մեկ հոգի, կաղոթեն, որ բարձրագույն Աստված անխախտ պահե իրենց Մայր Հայրենիքն ու անոր կենսունակ և շինարար Հանրապետությունը, պայծառ ու անսասան պահե մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը առողջ, երջանիկ, ու երկար կյանք պարգևե մեր արժանավոր Հայրապետին, Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին։

Հայաստանեն դուրս չելլող հայ մը բնավ չի կրնար ըմբռնել ուժգնությունը այն կրակին, որ կայրե օտարության մեջ տվայտող հայերու սրտերը, չի կրնար ըմբռնել այն սրբազան ոգևորությունը, որ կունենա առաջին անգամ ըլլալով իր Մայրենի Ս. Հողը համբուրելու բախտավորությունը ունեցող վտարանդի հայը, չի կրնար չափել ուժգնությունը այն անսահման ոգևորության, երբ ան իր աչքերով կտեսնե մեր շենշող Հայրենիքի մտքե չանցած հառաջդիմությունը, չի կրնար ըմբռնել հիացմունքի այն աստիճանը, որ ան կունենա իր Մայր Հայրենիքը կերտող եղբայրներու և քույրերու հանդեպ, որոնց քրտինքներու մեջեն ծնած է այս ապշեցնող հառաջդիմությունը, չի կրնար ըմբռնել այն խորունկ երախտագիտությունը, որ անոնք կզգան մեր Հայրենիքի իմաստուն, հանճարեղ ու շրջահայաց Պետության հանդեպ, որ այնքան ձեռնհասությամբ կկառավարե մեր երկիրը ու արդյունավոր կդարձնե մեր եղբայրներու ու քույրերու թափած քրտինքները, չի կրնար ըմբռնել շերմությունը ուրախության այն արցունքներուն, որոնք կլեցնեն անոնց աչքերը, երբ կտեսնեն մեր լուսավորչակերտ Ս. Էջմիածնի, հայու անխորտակելի և անխախտ հավատքի խորհրդանիշը եղող Մայր Աթոռի վերածնունդն ու հառաջդիմությունը, չի կրնար ըմբռնել որդիական սիրո ու հարգանքի այն խորությունը, որ անոնք կզգան հանդեպ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, որու իմաստության ու ժրաջան գործունեության շնորհիվ կվերածնի ու կհառաջդիմե մեր հոգևոր կյանքը։

Վեհափա՛ռ Տեր.

Մեր պապերը, դարեր շարունակ, ազատություն երազեցին ու այդ կարոտով ալ մեռան, իսկ այսօր արտասահմանի հայությունը իր ազատ Հայրենիքը փոխադրվիլ կե-

բազմ, ու այդ կարոտով ալ կմաշի։ Բրազիլիո ամբողջ հայությունը, առանց բացառության, նույնպես հայրենասեր է. ան ըմբռնած է խաղաղության արժեքը և միասիրտ ու միաբերան կաղոթե, որ բարձրյալն Աստված աշխարհին տա խաղաղություն, ազգերու մեջ զորացնե եղբայրության զգացումը, իսկ այդ խաղաղությենեն ու եղբայրական զգացումներեն կախված է ինչպես բոլոր ազգերու, նույնպես և մեր Ազգի երազներու իրականացումը, բարգավաճումն ու երջանկությունը։

Կեցցե՞ մեր երիտասարդ ու ծաղկյալ Սովետական Հայաստանը, կեցցե՞ն մեր Հայրենիքի իմաստուն ղեկավարները, կեցցե՞ն խոր հավատքով վերաշինության սրբազան աշխատանքին լծված մեր եղբայրներն ու քույրերը, կեցցե՞ ու հավետ ապրի ու անսասան մնա հայու անխորտակելի հավատքին աղբյուրն ու խորհրդանիշը եղող լուսավորչակերտ Ս. Էջմիածինը, կեցցե՞ և իր գահակալության հինգամյակը տոնելու շատ ապրի Ամենայն Հայոց արժանընտիր Հայրապետը։

ՆԿԱՐԻՉ ՊՐԻՍԻՈՐ ՇԻԼԻՔՅԱՆԸ ՀՐԱԺԵՇՏ Է ԱՌՆՈՒՄ ՎԱՀԱՓԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Վեհափա՞ռ Տեր.

Հայրենակարոտ բրազիլահայերու անունով, խոնարհաբար կխնդրեմ Ձերդ Վեհափառությենեն, որ հաճիք հիշել մեզ Ձեր սուրբ աղոթքներուն մեջ. օրհնեցե՞ք մեզ, Վեհափառ

փա՛ռ Տեր, մենք Ձերդ Սրբության օրհնություններուն պետք ունինք։

Ամերիկահայ Ազգային խորհրդի նախագահ պր. Օգսեն Սարյանը, շնորհավորելով Վեհափառ Հայրապետի ծննդյան հինգամյակը և գահակալության երրորդ տարեդարձը ի դիմաց Ամերիկահայ Ազգային խորհրդի, իր ելույթում ասաց.

«Վեհափա՛ռ Տեր.

Այս նվիրական պահուն ինձի համար մեծ պատիվ և հաճույք է բոլոր ամերիկահայերու կողմե ներկա գտնվիլ այս ճոխ ճաշկերույթին, հայրենական այս շքեղ դահլիճին մեջ, և քաղցր պարտականությունը ունենալ շնորհավորելու Ձերդ Սրբության ծննդյան հինգամյակը և գահակալության երրորդ տարեդարձը։

Կարճ պիտի խոսիմ, բայց այդ սեղմ բառերուս մեջ Ձերդ Վեհափառությունը կարող է գտնել ամերիկահայոց որդիական սերն ու նվիրումը, անվերապահ և հավիտենական հնազանդությամբ և գործակցությամբ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցիին հետ։

Մենք հպարտ ենք Սովետական Հայաստանով։ Սովետական Հայաստանը Մայր Հայրենիքն է համայն հայության։ Հպարտ ենք նաև մեր ազգընտիր ու շինարար Վեհափառով՝ Նորին Ս. Օծություն Վազգեն Ա Կաթողիկոսով, որովհետև Ան իրապես հայրենասեր է, հայրենաշեն է և Իր այդ արարքներով իսկապես որ Վեհափառ է, վեհ է Իր փառքին մեջ։

Ուրախացանք տեսնելով, որ մեր սիրելի Հայրապետը կապրի Իր ժողովուրդով, անոր հետ ու անոր համար։ Ասոր մեկ գեղեցիկ ապացույցն էր Իր հովվապետական այցելությունը Սփյուռքի հայության մեկ կարևոր մասին, երբ մոտեն շփվեցավ ու ծանոթացավ Միջին Արևելքի, Արևմտյան Եվրոպայի լայնատարած հորիզոններուն վրա սփռված, երբեմն պանդուխտի երջանկությամբ, հաճախ պանդուխտի դժվարություններով պաշարված Իր հոտը մխիթարեց, մխիթարվեցավ և լայն հեռանկարներու ոգեշնչող լույսի տակ վերադարձավ Մայր Աթոռ։

Մենք՝ ամերիկահայերս, կսիրենք հուսալ, որ նման շնորհաբեր այցելություն մը կտրվի նաև մեզ։

Մենք խաղաղություն կմաղթենք ամբողջ աշխարհի համար։ Այդ խաղաղության միջոցով է, որ փոքրիկ Սովետական Հայաստանը պիտի կարողանա աճիլ ու դառնալ իսկապես Մայր Հայրենիք բոլոր հայության համար, ի մի խմբելով Սփյուռքի տարագիր հայությունը և իրականացնելով հայ ժողովուրդի դարավոր հույսերն ու արդար բաղձանքները։

Վեհափա՛ռ Տեր.

Թույլ տվեք, որ իմ ձայնը միացնեմ Ձերդ Սրբության համար արևշատություն և երկար կյանք հայցողներու ձայնին, մաղթեմ հաջողություն և բարօրություն ի փառս մեր Ս. Եկեղեցիին և Մայր Հայրենիքին և բանաստեղծի հետ կրկնեմ.

«Ձեր շուքը միշտ և հանապազ
Մեր գլխիցը անպակաս»։

Պաշտոնական ընդունելության ժամանակ խոսք առավ նաև Բեյրութի «Երիտասարդ հայուհի» պարբերաթերթի խմբագիր և ծանոթ հասարակական գործիչ ու մտավորական տիկին Սիրան-Սեզա Քյուփելյանը.

«Սիրելի՛ և թանկագի՛ն Վեհափառ.

Թեև վերջինը, բայց կվստահեցնեմ Ձեզ, թե ոչ ամենափոքրն եմ Ձերդ Վեհափառության զինվորագրյալներեն։

Գիտեմ, Լիբանանը խոցած է Ձերդ Վեհափառության հայրական սիրտը, բայց այդ դիտումնավոր չէ եղած։ Ես կխոստանամ բոլորի անունեն, որ մենք կբուժենք ակամա հասցված այդ խոցը Ձերդ Սրբության սրտին, որ խոցն ու վիշտն է ոչ միայն Հայաստանյայց Եկեղեցվո, այլ ամբողջ հայության։ Դուք շատ շատով հպարտ կըլլաք լիբանանցի Ձեր հոգեհատոր ժողովուրդով։

Ձարագործությունը եթե մեծ է, անոր հաջորդող զղջումն ալ նույնքան մեծ և խորունկ կըլլա։ Թեև լիազորված չեմ Լիբանանի հայության անունով խոսելու, բայց վստահ եմ, որ անոնք ալ ունին իմ սրտի և մտքի պես սիրտ ու միտք, անոր համար ամբողջ դպրության անունեն համարձակաձայն կրնամ հայտարարել, նույնիսկ հերձվածող, մոլորյալ խմբակի անունեն, որ ես, ի դիմաց Լիբանանի հայության, երջանկություն և հաջողություն կմաղթեմ Ձերդ Սրբության։

Միասնական այս ոգին, որ կտիրե այստեղ, հայրենական այս շքեղ դահլիճին մեջ, զոգելով Սփյուռքի բոլոր հայերը Մայր Հայրենիքի մեջ ազատ և իբրև հայ ապրող իրենց քույրերուն և եղբայրներուն հետ, ինձի համարձակություն կուտա լավատես և քաջ ըլլալ։

Վեհափա՛ռ Տեր, հաջորդ տարին թող ներկա պատգամը հուշի վերածված ըլլա հայ ժողովուրդի միասնությամբ և Մայր Հայրենիքի մեջ ապրող հայ ժողովուրդի երջանկությամբ։

Արգենտինայում հրապարակվող «Հայ Մամուլ» թերթի խմբագիր պր. Գրիգոր Կյոնեյանն իր ելույթում ասաց.

«Արժանտինի մեջ հաստատված մեծամասնությամբ կիլիկեցի հայերու անունեն

կողջունեմ Ս. Էջմիածնի Մայր Աթոռի Գահակալ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա ազգընտիր Հայրապետը՝ Իր ծննդյան հիսնամյա և գահակալության երրորդ տարեդարձի առթիվ։

Այս սեղանը պատմական է։ Ան կխորհրդանշե Մայր Հայրենիքի և Սփյուռքի հայության միասնությունը Ս. Էջմիածնի և Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հետ։ Սովետական Հայաստանը, իբրև մեկ անդամը Սովետական մեծ Միության, խաղաղության միջնաբերդն է։ Աշխարհի մեջ տարաբաղնված հայ ժողովուրդը խաղաղության ծարավի է։ Այդ է պատճառը, որ խաղաղությունը պաշտպանողները թանկ ու սիրելի են հատկապես տառապած հայ ժողովուրդի զավակներուն համար։

Արժանտինի հայությունը հոգվով և սրտով կապված է Ս. Էջմիածնի հետ շատ մը պատճառներով, որոնցմե մեկն է նաև այն,

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ Ա ԿԱՐԳԻ ՈՍԿՅԱ ԱԴԱՄԱՆԴԱԿՈՒՄ ՇՔԱՆՇԱՆՈՎ ԶԱՐԴԱՐՈՒՄ Է ՊՐ. ԵՐՎԱՆԴ ԱՂԱՃԱՆՅԱՆԻ ԿՈՒՐԾՔԸ

որ Ս. Էջմիածինը խաղաղություն կմաղթե համայն աշխարհին։ Խաղաղություն կմաղթենք մենք բոլորս, որովհետև միայն խաղաղության մեջ կարելի է իսկապես ստեղծել, վերաշինել և ձեռք բերել հայ ժողովուր-

դի հողմացրիվ եղած որդիներու մեկտեղումը իր Հայրենի Հողերուն վրա։

Մեր եկեղեցական կյանքին մեջ ժամանակավոր ճեղքվածքներ կան։ Անոնք խորթ և դրսեն պարտադրված երևույթներ են։ Չենք կրնար ըսել, թե Հայ Եկեղեցիի եռավը սանձազերծ փոթորկի բռնված է։ Մենք կզգանք, և հավատանք, որ մեր Եկեղեցին կենտանակ է, միածուլ է և ի վիճակի՝ հաղթահարելու իր ծոցին մեջ խլրտացող բուռ մը մարդոց ոչ հայկական գործունեությունը։ Կրնանք այդ ներքին դժվարություններուն ալ հաղթել, եթե ունենանք խաղաղություն։ Մենք կհավատանք, որ Հայ Եկեղեցիի ծոցին մեջ գոյացած հերձվածը երկար չի կրնար տևել, եթե խաղաղություն տիրե աշխարհի մեջ։

Կյուպենկյան հաստատության ներկայացուցիչ և Փարիզի համալսարանի ճարտարապետության ֆակուլտետի դասախոս պր. Եդվարդ Ուքուեյանը ասաց, որ ինքն այսպիսի բազմաժողով և բազմատաղանդ մի հավաքույթի առջև խոսելու «համարձակությունը» չունի, մանավանդ երբ «Մեր մեջ ունինք Կյուպենկյանի հարազատը՝ իր զավակը։ «Ես տեսա՛,— շարունակեց պր. Ուքուեյանը,— երկրորդ անգամ ըլլալով, իմ ճարտարապետ եղբայրներու նվաճումները, տեսա մեր շինարար Վեհափառ Հայրապետի գործը, տեսա Հայաստանի շինարարությունը։ Ուստի բաժակս կբարձրացնեմ Հայ Եկեղեցվո փառքին, հարատևության և Հայ Հայրենիքի անմահության համար։

«Երբ ցանկանում եմ Վեհափառ Հայրապետի ծննդյան հիսնամյակի և գահակալության երրորդ տարեդարձի առթիվ երկու խոսք ասել որպես առաջնորդական տեղապահը Ադրբեջանի հայոց թեմի և որպես Մայր Աթոռի միաբանության Բենեֆամինը,— ասաց եպիսկոպոս Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը,— միտքս է գալիս Պողոս առաքյալի հետևյալ խոսքը. «Ընթանալ, ամենեքին ընթանալ, բայց մի ոք առնու զյաղթութեանն պսակ» (Ա Կորնթ. Ի 24)։ Ձեր կյանքը անընդհատ «ընթանալ» է եղել։ Դուք, ընտանեկան խոնարհ հարկից մինչև վարդապետական աստիճանը, ապա և մինչև Լուսավորչի Ս. Գահը, ընթացել եք միշտ հավատով, անսահման լավատեսությամբ և վստահությամբ ու եռանդով, Ձեր ապագայի նկատմամբ վառ հույսերով։ Շատերն են «ընթացեալ» և «ընթանում» են, սակայն դժվարության ճանապարհին՝ կես ճանապարհից դառնում են հետ, հազիվ իրենց ձեռքը դրած մահի վրա։ Սակայն Դուք ընթացել եք միշտ առաջ և արժանացել փառքի պսակին։ Ձեր կուրծքը այսօր զարդարվում է փառքի պսակով, որովհետև Դուք երկարատև գործունեություն ունեք և այսօր Ձեր սիրելի միաբանությունը, Ձեր հավատացյալ ժողովուրդը և Ձեզ սիրող բարեկամները կգան իրենց բացավառ սրտերը դնելու Ձեր շինող և շինարար Հայրապետի կրծքին, որպես անթառամ պսակ։

Մենք Ձեզ հետ ենք, Վեհափառ Տե՛ր, և միշտ պիտի լինենք Ձեզ հետ, և Դուք մի գեղեցիկ օր իրավամբ պիտի հայտարարեք Ձեր հավատացյալ ժողովրդին, մեզ ցույց տալով նրան. «Ահա Ես և մանկունք Իմ»։ Ընտանիքի համար մեծագույն պսակը զավակն է, եվ մենք, Ձեր որդիները, պիտի աշխատենք արժանի լինել Ձեր սիրող սրտին։

Դուք, որպես զգօրագլուխ առաքինեցաք, պիտի առաջնորդեք մեզ դեպի աշխատանք և մենք, Ձեր ղեկավարությամբ, պիտի աշխատենք նորանոր պսակներ, հաղթանակներ ձեռք բերել Մայր Աթոռի պայծառության և Ձերդ Վեհափառության փառքի համար։

Սիսիանցի սիրված բանաստեղծ պր. Վահե-Վոհյանը իր ողջույնի ջերմ խոսքերի մեջ ասաց.

«Վեհափա՛ռ Տեր.

Ձեր երջանկաբեր ծննդյան հիսնամյա հոբելյանին և գահակալության երրորդ տարեդարձին բարեբաստիկ առթիվ, կխնդրեմ ընդունել՝ անայլայլ հարգանքիս ու հիացմունքիս հետ՝ արևշատ կյանքի ու բազմարդյուն հովվապետության իմ սրտագին մաղթանքներս։

Ս. Էջմիածնի սրբավանդ Տաճարին ներս և անոր խնկաբույր խորանին առջև հոգևին մասնակից եղա այն սրտաբուխ տոնակատարության, ուր Ազգը, Հայրենիքն ու Եկեղեցին միացան իրենց սիրույն ու հարգանքին մեջ՝ հանդեպ իրենց լուսաժառանգ ու լուսաբաշխ Հայրապետին։

Տնա՛ս չահազարդ խորանը Մայր Տաճարին, ուր երախտագետ հավատացյալներու բազմությունը կգար իր վերև հրճվագին ներկայությունը Հայաստանյայց Եկեղեցվո պայծառանուն հայրապետներու հոգիին, միասնարար ողջունելու նոր լուսարարը Լուսավորչի կանթեղին։

Ցավով ու սրտմտությամբ կմտածեմ սակայն, թե անխառն չէ ցնծությունը Ուխտյային, ինչպես ուխտավորներուն, որովհետև այս օրերուն վիրավո՛ր է սիրտը Հայ Ազգին ու Եկեղեցիին՝ անոպա այն հարվածներեն, որոնք անխնա մոլեգնությամբ մը տրվեցան ու կտրվին՝ մարդու կոչումին ու հայ անունին անարժան մորոյլներու սև ձեռքերով։

Ձերդ Վեհափառության ընծայված մեծարանքի այս համազգային արտահայտության մեջ ես կտեսնեմ նաև միակամ դատապարտություն անո՛նց, որ դավեցին ու կշարունակեն դավել ընդդեմ Ազգին ու Եկեղեցիին միասնականության, վաճառելով իրենց խիղ-

ՆԸ ԵՐԵՍՈՒՆ արծաթի։ Կհավատամ նույն ատեն, թե Ձեր իմաստությունն ու անվերածելի սրբությունները հավատարիմ մեր ժողովուրդին կամքը պիտի հաջողին զգաստացնել գոնե անո՛նք, որ իրենց մեջ կկրեն դեռ նշույլ մը հայ հոգիեն, ու պիտի վերադարձնեն զանոնք գիրկը հայության և անոր հոգևոր մայր Ս. Էջմիածնին։ Իսկ անոնցմե ո՛վ Հայրենիքին, հովանիին տակ հայ հարազատ Պետության ու մեծաշնորհ ջանքերովը մեր առաքելատիպ հայրապետներուն, որոնց արժանավոր շառավիղը կողջունեմ Ձեր խորահավատ անձին մեջ։

Որդիական ակնածանքով ու հավատարմության անդառնալի ուխտով կմատչիմ ի համբույր Ձեր Սուրբ Աջին։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՐԵՆԹՅԱՆ ՀԻՇԱՏԱԿ ԱՓՍԵ Է ՆՎԻՐՈՒՄ ՊՐ. ԵՐՎԱՆԴ ՀՅՈՒՍԻՍՅԱՆԻՆ

որ համառի մնալ իր մոլորության մեջ, պիտի դառնա փոշի՝ ժամանակի հոսքին դեմ։

Էջմիածինը, որպես միաձույլ էություն հայության հավատքին, մնացեր է ու կմնա անսասան, Արարատին պես, ու կպայծառանա հավետ՝ ծոցին մեջ մեր վերածաղկող ՕՆԱՐԻՔ շաբաթաթերթի խմբագիր բանաստեղծ պր. Անդրանիկ Մառուկյանը ընդունելության ժամանակ խոսք առնելով, ասաց հետևյալը.

«Առիթը հանդիսավոր է, բայց պիտի ջանամ որ իմ խոսքս ոչինչ ունենա հանդիսա-

կան։ Կանգնած ենք ահա տասնվեց անգամ կան։ Կանգնած ենք ահա տասնվեց անգամ հարյուրամյա մեր սրբատեղիին մեջ, երջանիկ հուզումով և նախանձելի բախտավորությամբ, ու միակ արժանավոր կերպը՝ որով կրնանք երախտահատույց ըլլալ, ամեն մեկուս շնորհված այս բախտին և պատվին համար, անկեղծությունն է հանդեպ մեր Վեհափառ հյուրընկալին և մանավանդ մեր իսկ խղճին։

Ուրեմն թույլ տվեք հիշեցնել կարգ մը ճշմարտություններ։

Աշխարհը բաժնված է երկու ճակատների, երկու հոսանքներու, երկու գաղափարախոսություններու։ Մենք չբաժնեցինք աշխարհը երկու մասի։ Բայց մեր տաժանելի ճակատագիրը դասավորեց այնպես, որ մեր ժողովուրդին կեսը ապրի այստեղ, Հայրենիքին մեջ, և մյուս կեսը մնա այնտեղ, Հայրենիքեն դուրս, ենթակա տարբեր ուժերու, աշխարհագրական և քաղաքական տարբեր պայմաններու ազդեցությանց։ Անժխտելի և պայծառ իրականություն է այլևս Հայրենիքը այստեղ, բայց նվազ շոշափելի փաստ չէ նաև Սփյուռքը իր մասյալ իրականությամբ։ Հայրենիքը գտած է իր ճամբան, հստակ, որոշ և անսայթաք իր ուղին։ Սփյուռքը բաժնված է Հայրենիքեն ու բաժանված ինքնիր մեջ։ Կոտորակված և տարտղնված հայությունը կպահե դեռ միացման միակ կետ մը, հոգեկան կամուրջ մը՝ շնորհիվ Ս. Էջմիածնի։ Արդ, բոլոր դիտակից հայերուն նվիրական պարտքն է պահել Էջմիածինը իր պատմական դերին և նվիրական կոչումին մեջ։ Հարգել, սիրել և պաշտպանել՝ բովանդակ հայությունը հավաքական ապրումի մեջ պահող այս սուրբ հաստատությունը։ Ըսած է մեկը. «Վերցուր Արարատը՝ Հայաստանը կփլի։ Կավելցնենք. «Վերցուր Էջմիածինը՝ հայ հոգին կմեռնի։

Հետևաբար, մեր դժբախտ պայմաններուն և թշվառ վեճերուն մեջ Էջմիածինը կողմ մը չէ, այլ՝ կողմնացույց մը, պատնեշ մը չէ ուրիշ պատնեշի մը դեմ՝ այլ հոգեկան ամրոցը հավաքական մեր ապրումներուն, փաստաբան մը չէ ի պաշտպանություն ճակատի մը՝ այլ դերագույն դատավորը բոլոր ճակատներեն վեր ու ճակատներուն վերև, և վերջապես՝ Էջմիածինը Հայրենիքը չէ ընդդեմ Սփյուռքին՝ այլ բովանդակ հայությունը ընդգրկող ոգեկան ծիածան մը՝ ի սփյուռս աշխարհի և ի Մայր Երկրի։

Ու մենք, որ եկած ենք ողջունելու տարեդարձը արդեն իսկ հինսամյա, բայց Իր հանգամանքին համար դեռ երիտասարդ Գահակալը Ս. Էջմիածնի, դիտնա՛նք անաղարտ և մաքուր պահել Իրմե մեզի փոխանցվող ներշնչումը և մեզի հետ տանինք արտասահման Իր խոսքերն ու զգացումները՝ Մեռոնի պես սուրբ և լույսի պես անարիծ։

Եվ ի՞նչ կթելադրե մեզի Վեհափառը, և ի՞նչ կթելադրեն ահավասիկ մեր Պետության ներկայացուցիչները, որ կրազմին Իր շուրջ։ Ոչ ոք կպատվիրե մեզի՝ որ երթանք արտասահման և պաշտպանենք Հայրենիքն ու Էջմիածինը իրար դրկտելով և օրնիբուն իրարու դեմ նիզակ ճոճելով։ Վազգեն Վեհափառը և մեր Պետության ղեկավարները ուրիշ բան չեն ցանկար Սփյուռքի հայությենեն, եթե ոչ մեր խաղաղությունը, դաշտ ու ներդաշնակ կենցաղը, մեր սերը Հայրենիքին հանդեպ ու Հայրենիքին սերը մեզի համար։ Այսպես կըսեն իրենց հանդիսավոր խոսքով, այսպես կըսեն հրապարակի վրա, մտերմության մեջ, պաշտոնապես թե անպաշտոն։

Տանինք ուրեմն մեզի հետ իրենցմե մեզի փոխանցված այս ազնիվ և ազնվացնող ներշնչումը, հայրենասիրական այս ջերմ ու վարակիչ պահը։ Մենք շատ վեճեր և ճղճիմ պայքարներ ունինք այնտեղ։ Երբեմն դպրոցի մը շուրջ, եկեղեցիի մը կամ ակումբի մը շուրջ, թաղականի մը կամ երեսփոխանի մը հաշվույն։ Այդ բոլորը կկազմեն հայրենազուրկ դաղութահայու մեր առօրյան, այդ բոլորը կկազմեն հայրենազուրկ մարդու մեր արատը, ու չընենք այնպես, որ սուրբ բաներ և սրբազան խորհրդանիշներ տրորվին ու լորձվին, մեր անսուրբ պայքարներուն և անհեթեթ տագնապներուն մեջ։

Կրնանք իրարու դեմ ցցվելու բաղում պատճառներ ունենալ, և մեր ուժերեն վեր՝ ճակատագրական ստիպողություններ, մնալու այնպես, ինչպես որ ենք։ Բայց կա՛ ու կմնա գերագույն պատճառը, նվիրականորեն շքեղ իրողությունը, որ մեզ բոլորս կմշե, ազգովին խոնարհելու ազգային հավիտենական մեր սրբատեղիին առջև, Ս. Էջմիածնի դարավոր խորհուրդին մեջ, Արարատի շուքին տակ և Օշականի ուխտավայրին այնքան մոտիկ։ Ու այս բոլորին մեջ, եկող ու անցնող մահկանացու կաթողիկոսներու անմահ շարանի դեմ, ահավասիկ հերթական ընտրյալը, հստակ, մաքուր, բարի և անուշ մեր Վազգեն Վեհափառը, որուն հինսամյակին ի հարգանս եկած ենք ծովեր և օվկիանոսներ կտրելով ու մեզի հետ բերելով սերն ու հարգանքը տարագիր հայության։ Կատարենք հրապարակով ավանդական մաղթանքը՝ երկար կյանք, ուժ և համբերություն մաղթելով Իրեն, բայց և չմոռնանք տանիլ Իրմե լավագույն մասնիկը Իր անձեն որպես նշխար արտասահմանի հայության։

Բարեկամ մը ըսավ քիչ առաջ. «Լույս կա մեր Վեհափառին դեմքին վրա։ Կտեսնենք բոլորս այդ լույսը, որ կուգա ազնիվ արյու-

նի մը և մաքուր ծնունդի մը բնական օրենքով։ Այդ լույսը տեսանելի է բոլոր այն աչքերեն՝ որոնք կույր չեն, չիլ չեն, ամպամած չեն։ Լույսը վիճելի չէ։ Լույսը լույս է ու կտեսնենք։

Բայց գիտնա՛նք տեսնել նաև լույսը Վազգեն Վեհափառին հոգիին մեջ։ Այդ լույսը կճառագայթե յովանդակ հայության վերև։ Հայաստանի մեջ ապրող հայության, աշխարհի բոլոր անկյուններուն մեջ ցրված հայերուն համար, առանց խտրության։

Այստեղ կերած մեր աղն ու հացը արդար պիտի չըլլա երբեք մեզի համար, եթե ուրիշ բան տանինք մեզի հետ Ս. Էջմիածնեն, Վազգեն Վեհափառեն և Մայր Հայրենիքեն։

Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարյանը, հանուն իր թեմի շնորհավորելով Վեհափառ Հայրապետին, ասաց, որ Արարատյան թեմը, Վեհափառ Հայրապետի ծննդյան հինգամյա հոբելյանի և գահակալության երրորդ տարեդարձի բարեբաստիկ առիթով, Վեհափառ Հայրապետին նվիրում է «ԶԻԼՕ մարկայի հայրենական մի ավտոմեքենա։

Արարատյան թեմի հավատացյալների այս նվերը ընդունվեց որոտագին և ցնծալից ծափահարություններով։

Լիբանահայ ծանոթ մտավորական և հասարակական գործիչ մեր Հարգ Սեդրակյանը իր ողջույնի խոսքում ծանրացավ Սփյուռքի հայության դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ունեցած հավատարմական զգացմունքների վրա։ Նա ասաց.

«Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Վազգեն Ա-ի ծննդյան հինգամյակի և գահակալության երրորդ տարեդարձի տոնակատարություններու առիթով անհրաժեշտ է մի անգամ ընդմիշտ հավաստիացնել բոլորին, որ արտասահմանի հայությունը, իր բացարձակ մեծամասնությամբ, հավատարմորեն կապված է և կապված կմնա Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության Մայր Աթոռին, կխոնարհի անոր վեհության առջև, կներշնչվի և անկե կստանա իր հոգևոր ու ազգային սնունդը։ Ս. Էջմիածինը մեզ համար ոչ միայն հոգևոր կեդրոն է, այլ նաև ազգապահպանումի ազնվագույն ներշնչարանը, հույսի և լույսի անսպառ աղբյուրը։

Մենք, արտասահմանի զանազան երկրներու մեջ ցիրուցան ապրող հայերս, ձուլման և ազգային կորստին վտանգին դեմ մեր պայքարի ճանապարհին, ուժ և կորով կքաշենք Մայր Աթոռի աստվածարյալ Հովվապետի հորդորներեն, կոգևորվինք ու կխանդավառվինք մեր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի մշակութային, տնտեսական և նյութական նվաճումներեն։ Մեր հույսն ու ապավենը ունենալով Ս. Էջմիածինն ու Երևանը, առաջ կընթանանք լուսավոր ճանապարհով, հաջողությամբ կհաղթահարենք բոլոր վտանգները և մեր սրտերու մեջ վառ կպահենք հայրենասիրական ազնվագույն զգացումները։ Մենք պիտի շարունակենք հայ մնալ նաև ապագային, և այս՝ շնորհիվ Ս. Էջմիածնի բարի հովվության, շնորհիվ մեր Հայրենիքի պետության և ժողովուրդին հերոսական հաջողություններուն։

Մեր սերը Մայր Երկրին և Ս. Էջմիածնին հանդեպ նոր չէ, այլ ամրակուռ, խորը ու գործոն։ Մենք Էջմիածնին և Հայրենիքին հավատարիմ ենք և՝ սրտով և՝ մտքով։ Մենք այդ սերն ու հավատարմությունը կըմբռնենք որպես ոսկի կամուրջ՝ հայ ժողովուրդի երկու մեծ հատվածներուն՝ Մայր Երկրի և Սփյուռքի հայության միջև։ Պատմական շարք մը դեպքերու բերումով, ֆիզիկապես միայն բաժնված են իրարմե հայության այդ հատվածները։ Այդ բաժանումը ժամանակավոր է, որովհետև Մայր Հայրենիքի և Սփյուռքի միջև կա, գոյություն ունի հոգեկան միասնականություն մը։ Այնքան ժամանակ, որ գոյություն ունին մեր սրտերուն, մեր մտքերուն, մեր հոգիներուն անխորտակելի փոխադարձ կապերը, մեր անքակտելի միասնականությունը, արտասահմանի մեջ մենք կդիմադրենք դժվարություններու և ամեն տեսակ հարձակումներու, կպահպանենք մեր հայկական գոյությունն ու դիմագիծը։ Մեր նպատակը բարի է ու ազնիվ, կուզենք մնալ հայ, ապրիլ որպես հայ։

Հայաստանյայց Եկեղեցվո մեջ այժմ ծագած տագնապը լուրջ է, մտահոգիչ և ցավալի։ Բայց այդ տագնապը էապես արհեստական է, հրահրված քաղաքական նպատակներով և զուրկ՝ ազգային, պատմական և իրավական հիմքերե։ Մենք հաստատ համոզված ենք, որ հայ ժողովուրդի դեպի Ս. Էջմիածինը ունեցած սիրո և հավատարմության զգացումներու առջև կփշրվին բոլոր արգելքները և Սփյուռքի մեջ կվերականգնվի մեր ազգային-եկեղեցական միասնությունը Ս. Էջմիածնի Մայր Աթոռին շուրջ։

Մայր Աթոռը ունի իր արժանավոր դահակալը հանձին Վազգեն Ա Վեհափառ Կաթողիկոսի։ Անոր եռամյա իմաստուն գործունեությունը մեծապես բարձրացուց Էջմիածնի հեղինակությունը ի սփյուռս աշխարհի, և մենք որդիական հարգանքով կխոնարհինք Անոր առջև, փափագելով, որ Ան շարունակե մնալ բարի Հովվապետը մեր հավատացյալ ժողովուրդին, միշտ մնա ծաղկազարդ և ամուր

կամուրջ մը արտասահմանի և Մայր Հայրենիքի միջև։

«Արարատ» թերթի խմբագիր պր. Արսեն Կիտուրը իր բաժակաճառի մեջ վեր հանելով Վեհափառ Հայրապետի հոգևոր-մշակութային, ազգային-եկեղեցական գործունեությունը, ասաց.

«Այսօր իր փայլուն գործունեությամբ Նորին Ս. Օծության Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը մեզ կենդանի որպես մեր ազգային-եկեղեցական նշանավոր դեմքերեն մեկը։

Այսօր Խրիմյան Հայրիկին տրված երբեմնի «Արծիվ Վասպուրականի» տիտղոսը վերածված է «Ամենայն Հայոց Արծիվ»-ի։

Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Ա-ը Սփյուռքի հայության տված Իր այցելությամբ և Հայ Եկեղեցվո կազմակերպության հետ կապված Իր ծրագրած հեռանկարներով ցույց տվավ, որ Ինքը Իր առաքելական բարձրության վրա է՝ հայ ազգային-եկեղեցական միասնականության առնչությամբ։

Ամենայն Հայոց Արծիվը, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, Իր կողքին ունի Հայրենի կառավարության բարոյական օժանդակությունը։

Մենք Նորին Ս. Օծության ծրագրային հեռանկարի մեջ կտեսնենք երեք միլիոն հայ ժողովուրդի միասնացած հավաքականությունը, որ միակ դրավականն է հայը դարձնելու տակուն և ընդունակ՝ ընդդեմ ամեն տեսակ և ամեն կողմե եկած հարվածներուն։

Այսօրվան համազգային այս հավաքույթին մեջ կուզեմ տեսնել որոշումներ՝ իրականացնելու մեր երազը, որով միայն չքացած և խորտակված կտեսնենք Մայր Աթոռի դեմ ուղղված հարվածները։

Կմաղթենք ուժ և կարողություն և կյանքի հարատևություն Նորին Ս. Օծության Վազգեն Ա Կաթողիկոսին, որպեսզի իրականացած տեսնենք մեր երազը, որ նաև Իրն ալ է։

Հոբելյանական ճաշկերույթին ջերմ և սրտագին հնչեց նաև Մայր Աթոռի աշխարհական աշխատողների շնորհավորության անկեղծ ձայնը պր. Հմայակ Սեդգարյանի ողջույնի խոսքում։

Շնորհավորության ջերմ, սրտառուչ խոսք ասաց նաև «Էջմիածին» ամսագրի խմբագիր պր. Արթուն Հատիսյանը հանուն Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի հաղարավոր ընթերցողների, որոնք շատ հաճախ խմբագրության ուղղված իրենց նամակներով իրենց ուրախությունն ու երախտագիտությունն են հայտնել Վեհափառ Հայրապետի ազգաշեն և եկեղեցաշեն գործունեության համար։

Ընդունելությունն անցավ ջերմ, խանդավառ ու հայրենասիրական մթնոլորտում։

Ընդունելությանն իրենց շնորհալի մասնակցությունը բերեցին երգով՝ գերաշնորհ Տ. Կոմիտաս սրբազանը, բարեշնորհ Պետրոս, Կարապետ և Հակոբ սարկավագները, երգչուհի օրիորդ Մարիա Գեղոմին, արտասանություններով՝ բարեշնորհ Սանդրո սարկավագը և ուրիշներ։

Հոբելյանական զվարթ սեղանների շուրջ ժամերն անցնում էին արագ ու հաճելի։

Այժմ ոտքի է կանգնել թամադա գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրոնյանը՝ իր վերջին խոսքն ասելու։ Սրբազանը խոսում է խանդավառ, համոզկեր շեշտով ու ձայնով.

«Վեհափա՛ռ Տեր.

Բոլոր խոսք առնողները վեր հանեցին Ձեր անձնավորությունը Իր բազմակողմանի արժանիքներով։ Ես ասելց մասին պիտի չխոսիմ. ճշմարտություններ կան, որոնք ապացույցի կարոտ չեն, ճշմարտություններ կան, որոնք ի հառաջագունե ընդունված են մարդոց կողմե։ Միայն այս մեկ քանի օրվան մեջ ապրած մեր խանդավառ վիճակը մտածել կուտա ինձի, թե ի՞նչ երևույթ է այս։ Մենք անցուցինք ահավոր դժվարություններ, ահավոր տագնապներ։ Մեկը ես եմ, որ քալած եմ տարագրության արյունոտ ճամբաներեն և հիացումով տեսած եմ մեր ժողովուրդի հատատակամությունը ապրելու, մեր ժողովուրդի հավատքը և այս հավատքն էր, որ փրկեց զայն ու այսօր այդ ժողովուրդն է, որ ոտքի կեցած է իր Հայրենիքին մեջ ազատ, անկախ իր Հայրենի հողին վրա, իր Կառավարությամբ, իր Կաթողիկոսությամբ, և ան ցույց կուտա բովանդակ աշխարհին և մարդկության, թե հայ ժողովուրդը մեռնելու ժողովուրդ չէ, այլ հավիտենապես ապրելու։ Ո՞ւր են անոնք, որ մեր մահվան վճիռն ստորագրեցին։ Մեռած են անոնք, բայց մենք կանք և գոյություն ունինք և պիտի մնանք այժմ և հավիտյան։

Այս Երկիրը սուրբ Երկիր է։ Մեր բանաստեղծը որքա՞ն իրավամբ երգած է. «Մեր երկիրն է սուրբ. մեր հողին վրա Աստված է քալեր, ստեղծելով զԱդամ, մեր լեզուն, և խոսեր նախ Ինքը Եղրա՛րք, հա՛յ ապրինք»։

Եվ ժողովուրդ մը, որուն Հայրենի Հողին վրա Աստված քալեր է, ես կհավատամ այդ ճշմարտության, ժողովուրդ մը, որուն լեզվով Աստված խոսած է, այդ ժողովուրդը ո՛չ թե մեռնելու ժողովուրդ է, այլ հավիտենապես ապրելու։

Եվ այսօրվան պատգամը պիտի ըլլա մեզի ամենուս, դարձյալ բանաստեղծին շատ իմաստալից հետևյալ խոսքը. «Հայ ապրինք,

որ մեր որդիք ալ, եղբա՛ր, կարենան պարծիլ, որ զմեզ ունին հարքդ։

Ջրլանք հայ անվան անարժան, Հայաստանի մեջ ապրող հայեր, Սփյուռքի մեջ ապրող հայեր. հա՛յ ապրինք և հա՛յ մեռնինք։

Խանդավառ Ծափահարությունների տակ, թամադա գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը հրավիրում է Վեհափառ Հայրապետին՝ Իր պատգամը և հայրապետական օրհնությունը տալու բոլոր ներկաներին։

Վեհափառ Հայրապետը, *խորապես հուզված Իր անձի հանդեպ ցուցաբերված այսքան ջերմ և սրտառուչ հարգանքի և սիրո արտահայտություններից, խոսեց Իր ամենապերճախոս, բովանդակալից և հուզումնաշատ ճառերից մեկը.*

«Մեծաճարտ պր. Սարգիս Գասպարյան, գերաշնորհ սրբազան եղբայրներ և ճարտարժան պատգամավորներ, սրբազան ներկայացուցիչներ քույր եկեղեցիներու և դուք բոլորդ, սիրելիներ Մեր.

Կխորհիմ. թե ձեզմե ամեն մեկը կպատկերացնե իր մեջ այն հոգեկան հուզումը, այն խռովքը, որ կապրի Մեր անձը այս պահուս։ Զափազանց զգածված եմ անշուշտ և պարտիմ Ձեզ բոլորիդ Մեր խորին շնորհակալության խոսքը ըսել այնքան ջերմ ու անկեղծ խոսքերուն համար, որ ուղղված էին Մեր անձին։ Հավատացեք, որ պահ մը Մեզ այնպես կթվի, թե այս բոլոր խոսքերը իրականության մեջ Մեր անհատական անձին հետ աղերս մը չունին։ Այնքան մեծ է և սուրբ այն գաղափարը և այն հավիտենական հաստատությունը, որուն կծառայենք, որ մեր չնչին անձնավորությունները կդժգունին, կանհետանան և կկորսվին նույնիսկ։ Մենք բոլորս, նյութերեն իրականություններ, իբրև մարմնական գոյություն և նույնիսկ իբրև իմացական գոյություն, մտածող էակներ, շատ նվազ նշանակություն ունինք այն հոգևոր և բարոյական իրականություններուն առջև, ինչպիսին են մեր սուրբ հավատքի վեմ Ս. Էջմիածինը, մեր Ազգը իր պատմությամբ, իր հոգևոր-բարոյական, մշակութային արժեքներով և մեր Հայրենիքը հավիտենական։ Այս բոլորը իբրև բարոյական իրականություններ, ավելի հշմարիտ իրականություններ են քան թե ինքը տեսանելի նյութական իրականությունը, և անոր ինչու Մենք Մենք չենք, այլ կմտանինք Ձեզի՝ փառաբանելու համար Ս. Էջմիածինը և Ամենայն Հայոց Հայրապետությունը։

Սիրելի՛ հայ ժողովուրդի զավակներ, ձեզմե շատ շատերու նման սփյուռքահայ մը ենք, ծնողքս ալ սփյուռքահայ եղած է, և այսպես ո՛վ գիտե քանի սերունդ դեպի ետ։ Մենք ձեզմե շատերուն նման եղած ենք օտարական մը, թեև բարի հողի մը վրա ճյուրընկալ, որուն հանդեպ միշտ երախտագիտական զգացումներ պիտի մնան Մեր մեջ, այնպես, ինչպես դուք բոլորդ ձեր սրտերուն մեջ երախտագիտության, հարգանքի և հավատարմության զգացումներ և մտածումներ ունիք և պետք է ունենաք ձեր պատկանած երկիրներուն նկատմամբ, ուրկե դուք այսօր կուգաք։

Իբրև այդպիսին, իբրև հայ պատանի մը, մեծցած ենք հայկական ընտանեկան մթնոլորտի մեջ, Հայ Եկեղեցվո օրհնության ներքև և հայ ազգային կյանքի շրջանակին մեջ. 13—14 տարեկանեն սկսած եղած ենք և մինչև այս պահուս հավատական այս հայկական կյանքին մեջ կապրինք զանազան վիճակներե, ձևերե և ասպեհանքներե անցնելե հետո։ Եվ տիրական զգացում մը գոյություն ունեցած է Մեր մեջ փոքր տարիքեն ի վեր, տարօրինակ զգացում մը, փնտռտուք մը դեպի ինչ որ Մենք ալ չէինք գիտեր ինչ։ Բան մը կպակսեր Մեր մեջ, կամ ավելի ճիշտ, բանով մը ինքզինքնիս ամբողջացնելու անհրաժեշտությունը կզգայինք, իբրև իմացական և բարոյական էակ, և այս բոլորը կրսենք ոչ իբրև անհատական արժանիք, որովհետև վստահ ենք, որ բոլոր հայ երիտասարդներու պարագան է այս. Մեր ընկերներն ալ այսպես կպատրեին։ Ամեն անգամ, երբ օտար դպրոցներու մեջ «Արմենիա» բառը կլսեինք, թունդ կելներ մեր սիրտը։ Ամեն անգամ, երբ Արարատ բառը կարտասանվեր, կխենթանային կարծեք, և եթե, Աստված մի՛ արասցե, պատահեր որ մեկը ծիծաղով կամ հեգնանքով վիրավորեր այս սուրբ բառերը, նույնիսկ մեր արյունը պատրաստ էինք թափելու։ Օտար համբաներու վրա, այսօր ալ շատ շատերը Սփյուռքի պայմաններուն մեջ՝ երիտասարդներ, մտավորականներ, պատանիներ փնտռտուքի մեջ են, և երբեմն ինքզինքնին կկորսնցնեն։ Մենք ալ այդ թափառումները ունեցած ենք, որովհետև ոգեբանորեն բնական երևույթ է. վերացական գաղափարներ կուգան և երբեմն բնազդական զգացումներու ուղղությունը կփոխեն կամ կշեղեն։ Եթե պատվեր մը կուզեմ տանիլ ձեզ հետ, մանավանդ մեր երիտասարդ սերունդին, մանավանդ մտավորականության, երիտասարդ մտավորականության, այդ պատվերն է՝ հետու մնալ միայն վերացական գաղափարներե առաջնորդվելու փորձութենեն։ Մենք մտավորական մրն ենք, այնուամենայնիվ կկրկնենք, որ միայն վերացական գաղափարներով առաջնորդվիլ մեզ կտանի դեպի անհույս հանապարհներ և դեպի կորուստ։

Երբ 1945 թվականին Մենք առաջին անգամ Մեր ոտքը դրինք Մայր Հայրենիքի հողին վրա, այդ տարիքին կարծեք տարիներու այդ ապասումը Մեր մեջ հանկարծ պայծառացավ և Մենք ինքզինքնիս գտանք, եղանք այն, ինչ որ կրնանինք ըլլալ, զգացինք, որ Մենք հայ ժողովուրդի զավակ ենք, և Մեր հակատագիրը այդ պահեն սկսյալ պիտի չկրնա բաժնվիլ Մայր Հայրենիքեն, Մայր հողեն, հայ ժողովուրդի կյանքեն և հակատագիրեն, ինչ որ ալ պատահի:

Վստահ ենք, թե ձեզմե ամեն մեկդ կարդացած է Ֆրանց Վերֆելի վեպը: Այնտեղ հոյակապ պատկեր մը կա. Գաբրիել Բագրատյան եկած է Ցողուն-Օլուգ, իր որդվույն՝ Ստեփանի հետ, որուն մայրը ֆրանսուհի մը էր, ինչպես գիտեք: Ստեփանը օր մը առանց մորմեն հրաման առնելու, կբարձրանա Մուսա լեռան վրա, վայրի ժայռերեն վեր, ուր նույնիսկ իր կյանքը վտանգի տակ կըրնար ըլլալ, և հոգնելե վերջ, բմբուլյուն մը կուգա իր վրա և անուշ քունի մը անձնատուր կըլլա: Հեղինակը, որ մեծ հոգեբան մըն է, կրսե. «Այդ պահուն հայոց Աստվածը եր ձեռքը դրավ Ստեփանի վրա, և այդ պահեն անիկա դարձավ այդ հողին զավակը իսկապես»: Մենք կխորհինք, թե ամեն մեկ հայ մարդ, ամեն մեկ հայ երիտասարդ մանավանդ, նույն ապառումը կունենա, երբ այստեղ կուգա: Ձեզմե շատեր Մեր անձին մեջ գտան զանազան հատկություններ, արժանիքներ գուցե: Ձենք գիտեր, թե այդ բոլորը ինչ չափով Մենք կրնանք արդարացնել, բայց եթե թույլ տամ ինչ մը անհամեստ ըլլալ, կուզենք ընդգծել, համենայն դեպս, հատկանիշ մը, որ կրնդունինք, թե Մերը պետք է ըլլա: Այն է՝ Մենք մեր ուխտին հավատարիմ մնացինք, այսինքն չրաժնվիլ մեր Մայր Հողի կանչեն, չրաժնվիլ մեր ժողովուրդի հույզերեն, չրաժնվիլ մեր բազմադարյան և աստվածակառույց Ս. Էջմիածնի լույսեն: Վստահ եղեք, Մենք ձեզի անկեղծությամբ կրսենք, որ բացառիկ կարողություններով անձնավորություն չենք եղած և չենք, սակայն կխորհինք, թե երբ որոշ ընդունակություններ կամ կարողություններ մեր մեջ ի հայտ եկան, այդ շնորհիվ Մեր այս հոգեկան վիճակին է: Երեի կրցանք ինքզինքնիս նվիրել մեր նկեղեցիին, մեր Ազգին ճշմարտապես և ամբողջապես: Մենք գրեթե տեսակցորեն այն զգացումն ունինք, որ մանավանդ Մեր Կարողիկոս ըլլալեն այս կողմ Մենք Մենք չենք, այլ կա միայն Ամենայն Հայոց Հայրապետությունը, որուն խոնարհ և հավատարիմ ծառան ենք և պիտի մնանք: Եթե կուզեք, Մեր կյանքն ու Մեր գործունեությունը իրենք իրենց մեջ իրականություն մը չեն, իրենք իրենց մեջ արժեք մը չեն, այլ պատասխան մը այն ձայնին, որ կուգա մեր հողի ընդերքներեն և մեր սուրբ հավատքի բարձունքներեն: Եվ Մեր այս հոգեկան ապրումին մեջ, մեր սուրբ հավատքի բարձունքներեն եկող լույսը և հողին ձայնը գրեթե նույն իրականությունն են, անբաժանելի մեկը մյուսեն, ինչպես ճառագայթը իր լույսեն:

Սիրելիներ՝ երեք տարիներու Մեր գործունեությունը ձեզի ծանոթ է արդեն որոշ չափով գոնե, և ավելի հանգամանորեն խոսելու տրիբը պիտի ունենանք ըստ մեր ծրագրի հինգշաբթի օր, երբ կխնդրենք ձեզմե բոլորդ, որ բարի ըլլաք համախմբվելու Ս. Էջմիածին՝ լսելու համար Մեր զեկուցումը, նշգրիա թիվերու վրա հիմնված, ի մասին Մեր երեք տարիներու գործունեության և համեստ աշխատանքին: Ուրեմն այս բոլորին Մենք չենք անդրադառնար այս պահուս:

Վերջացնելե առաջ սակայն կուզենք անգամ մը ևս Մեր սրտի խոսքը ըսել դեպի մեր Ս. Էջմիածինը: Այստեղ որոշ խոսողներ ակնարկներ բրին որոշ դժվարություններու նկատմամբ, որոնք ստեղծվեցան արտասահմանի մեջ քանի մը տեղեր: Անշուշտ այդ բոլորը ճշմարիտ իրականություն են, սակայն կուզենք Ձեզ հավաստիացնել, որ այդ բոլորը Մեզ վրդովեցնելե, վշտացնելե կամ զայրացնելե, կամ Աստված մի՝ արասցե՝ հուսահատեցնելե ավելի կոխարեցնեն, կտրխարեցնեն անոնց հակատագրին համար: Այդպիսի պահեր թեև հանախ կպատահին, սակայն անոնք Մեր գիտակցության մեջ խորունկ վերքեր չեն բանար, որովհետև ի վիճակի չեն բանալու: Եվ ամեն անգամ երբ Մենք Վեհարանեն դուրս կուգանք, քալելով և կամ ինքնաշարժով, և մեր զանազան հիմնարկությունները, կայցելենք՝ եկեղեցիներ, վանքեր, Հոգևոր Ճեմարան, ինքը՝ Մայր Տաճարը, մեր աշխատանոցները, բոլոր մշուշները կանհետանան ակնթարթի մը մեջ: Մենք մի քար էջմիածնի քարերուն վրա շարված, ավելի կարժե, քան թե անոնց ամբողջ աղմուկը:

Եվ թույլ տվեք, որ չկարողանանք անցնիլ այն ուրախության, հուզումի հզոր պահին վրայեն, որ մեր վրա հետք թողուց գրական և բարերար իմաստով այն օրը, երբ ամերիկահայության նվերը՝ պր. Աղանանյանի ջանքերով ձեռք բերված տպագրական մեքենաները, առաջին անգամ Մայր Աթոռեն ներս մտան: Այդ օրը մեր հոգիներուն կիրակին էր: Եվ պատահմամբ բարձրաստիճան հյուր մը ունենինք Մոսկվայեն, եպիսկոպոս մը, որուն հետ սեղանի առջև էինք, երբ լուրը ստացանք, թե առաջին մեքենաները ներս մտան Մայր Աթոռի դարբասեն: Ոտքի

ելանք և գրեթե արտասվեցինք: Եվ այնքան հուզված էինք երևի, որ Մեզի հետ ռուս եպիսկոպոսն ալ հուզվեցավ և գեղեցիկ հատ մը արտասանեց: Ահա՛ Մեր հոգեկան վիճակը, ահա Մեր իրական կյանքի ապրումներուն մեկ ճշմարիտ պատկերը:

Մենք լավատես ենք, ինչպես առաջին վայրկյանին էինք, որովհետև կհավատանք ստեղծագործ, շինարար աշխատանքին, գրական գործին, կհավատանք հոգևոր-բարոյական շինության: Եվ այդ աշխատանքը Մենք պիտի շարունակենք: Եվ այն ժամ խոսքերը, որ կլսենք ձեր շրթունքներեն, և կտեսնենք ձեր աչքերուն մեջ մեծ ուրախությունը, երբ կզգանք մեր ժողովուրդի սրտին զարկը, Հայաստանեն ներս թե Հայաստանեն դուրս, Մենք ավելի լավատես կդառնանք, Մեր ուժերը կբազմապատկվին. Մեր հառնելը կանի, և վստահ եղեք, որ Մենք, երբ այդպիսի հոգեկան վիճակի մեջ ենք ձեզմով շրջապատված, դուք Մեր կողքին, Մեզի հետ ցույց բարոյապես և նյութապես, Աստված Մեզի հետ, Հայասանի կառավարությունը բարյացակամ, ա՛յ ինչե՞ կրնանք վախնալ:

Մեր եկեղեցաշեն աշխատանքները ծրագրված են և քայլ առ քայլ, կետ առ կետ պիտի իրագործվին: Կրնան երբեմն դանդաղիլ անոնք արտաքին հանգամանքներու բերումով, կամ բեռնիք պատճառներով, սակայն անոնք երբեք կանգ պիտի չառնեն, և Մենք հաջորդաբար պիտի կարողանանք Մեր հավատացյալ ժողովուրդին ներկայացնել Մեր նոր աշխատանքներուն, Մեր շինարարական նոր գործերու ապացույցը հառաջիկային:

Սիրելի՛ ներկայացուցիչներ արտասահմանի հայության. Մենք կփափագինք, որ դուք, վերադառնալով ձեր երկրները, տանիք ձեզի հետ զմայլելի հիշատակներ մեր Հայրենիքեն և մեր վերաշինվող գեղաձիծաղ Երևանեն, Տանիք սուրբ հիշատակներ և մխիթարություն և օրհնություն Ս. Էջմիածնեն, ձեր բոլոր սիրելիներուն, ձեր բարեկամներուն: Պատմեցե՛ք նաև անոնց այն, ինչ որ տեսաք իբրև դրական և շինարար աշխատանք Մայր Աթոռեն ներս, խոսեցե՛ք անոնց Մեր ապագա ծրագիրներուն մասին, խոսեցե՛ք նաև Մեր մտածումներուն և Մեր իղձերուն մասին: Եվ այնպես թող ըլլա, որ բոլոր Մեր և ձեր տեսիլները մեկ կետի վրա հանդիպին և միասին հառաջդիմենք, նույնիսկ իրարմե անջատ և հեռու քայլելով, միասին հարվածենք, մեր ընդհանուր գործին ի խնդիր: Կփափագինք նաև, որ ամեն մեկդ տանիք ողջույն և օրհնություն Հայոց Հայրապետին կողմե, քրիստոնեության սյուն Ս. Էջմիածնեն: Ս. Էջմիածինը հայկական ըլլալով մեկտեղ, չմոռնանք երբեք, որ ան նաև համաքրիստոնեական հավատքի վեմ է և «սիւն լուսոյ», անա մոտ երկու հազար տարիներե ի վեր: Եվ այդ հնադարյան Ս. Տաճարեն կփափագինք, որ ողջույն և օրհնություն տանիք ձեր երկրներուն և այն ժողովուրդներուն, որոնք Ձեզ կնյութերնկալեն: Ոչ միայն դուք, այլ Մենք ալ ձեզի հետ երախտապարտ ենք անոնց, բոլոր այդ պետություններուն: Մեզի համար պետական իշխանություններու միջև տարբերություններ չկան: Բոլորին հանդեպ ունինք նույն և հավասար վերաբերմունքը՝ հարգանքի, հավատարմության՝ ամեն մեկս այն երկրին հանդեպ, ուր կապրինք: Հայաստանյայց եկեղեցին կրոնական հաստատություն է և այդպես ալ կուզենք որ մնա: Այնպես ինչպես մեր եկեղեցին ա՛յստեղ, Սովետական իշխանության մեջ քաղաքականությամբ չի զբաղիր և պետք չէ զբաղի, այլ միայն մեր հոգևոր և եկեղեցական աշխատանքներով, այնպես ալ կուզենք, որ Մեր օրինակին հետևիք բոլորդ, մեր բոլոր հոգևորականները, մեր բոլոր եկեղեցական իշխանությունները, որպեսզի մեր եկեղեցին ըլլա այն սուրբ հաստատությունը, որու նկատմամբ ոչ ոք ոչ մեկ կասկած մտածելու իսկ առիթ չունենա: Եվ այս ոգիով աշխատելով, կխորհինք, թե մենք պիտի զորացնենք մեր եկեղեցիները արտասահմանի մեջ, այս ոգիով գործելով, պիտի հաղթահարենք բոլոր դժվարությունները, որ կան և նույնիսկ եթե մեր դեմ պատերազմի դուրս գալ ուզեն, մենք զանոնք պիտի հաղթենք խաղաղության ոգիով և ճշմարտությամբ:

Ահա, սիրելի՛ք, այն պարգամը, որ կուզենք որ ձեզ հետ տանիք ձեր երկրները:

Մենք անսասան հավատքով և նվիրումով ու հավատարմությամբ, Ս. Էջմիածնով պիտի իրականացնենք մեր ժողովուրդի միությունը, որպեսզի պարծանքով, հպարտությամբ, ամեն մեկը, ո՛ր երկրին մեջ ալ որ ըլլա, ի՛նչ վարչաձևի, իշխանության ներքև ալ որ ըլլա, կարենա դավանիլ իր սուրբ հավատքը, պաշտել իր Ս. Էջմիածինը և սիրել իր Մայր Հայրենիքը, իր սուրբ հողը նվիրական: Մենք կհորդորենք բոլորը, որ ըլլան իմաստուն, բայց միաժամանակ համարձակ, որովհետև Մեր գործը սուրբ է և Աստված Մեզ հետ, և, ինչպես Պողոս առաքյալը կըսե, «Եթէ Աստուած ի մեր կոյս է, ո՞վ իցէ մեզ հակառակ»:

Սիրելի՛ պատգամավորներ, սիրելի՛ եղբայրներ, սիրելի՛ հյուրեր. կվերջացնենք Մեր խոսքը, անգամ մը ևս Մեր երախտագիտությունը հայտնելով ձեզ բոլորիդ և օրհնելով այս օրը, որ մեզի պարգևվեցավ և միասին

ապրեցանք և ուրախացանք Ս. Էջմիածնի շնորհներուն ներքև:

Հավե՛տ ապրի մեր շարչարված և խաչված բայց այսօր փրկության և խաղաղության ափին հասած հայ ժողովուրդը իր վերածնած Մայր Հայրենիքով:

Հավե՛տ ապրի արտասահմանի հայ ժողովուրդը՝ Ս. Էջմիածնի շուրջ:

Խաղաղությո՛ւն և օրհնությո՛ւն ի սիրուս աշխարհի ցրված Մեր բոլոր զավակներուն անխտիր:

Խաղաղությո՛ւն և օրհնությո՛ւն Հայ Հայրենիքին, Ս. Էջմիածնին: Ամենակարող Աստված թող լսե Մեր աղոթքը և թող շարունակե ընալ Մեզ նեցուկ, պահապան և օգնական և առաջնորդ, շարունակելու համար Մեր եկեղեցիին գործը, ի փառս Աստուծո և ի փառս հայ հավատացյալ ժողովուրդի, ամեն:

***

Երկուշաբթի, երեքշաբթի և չորեքշաբթի, հոկտեմբեր ամսի 13—15-ին, պատվարժան պատգամավորներն ու հյուրերը, խմբերի բաժանված, այցելություններ տվեցին Երևանի տեսարժան վայրերին և մայրաքաղաքի գիտական և ուսումնական հաստատություններին, եղան Մատենադարանի նորակառույց շենքում, համալսարանում, թանգարաններում:

Հոկտեմբերի 14-ին և 15-ին Նորին Ս. Օծությունն Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունեց թեմական առաջնորդներին և պատգամավորներին առանձին-առանձին ըստ թեմերի և նրանց հետ ունեցավ զրույց՝ Սփյուռքի թեմերի և ազգային-եկեղեցական կյանքի շուրջ:

Հոկտեմբերի 14-ի երեկոյան, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, բոլոր պատգամավորներն ու հյուրերը, Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում, ներկա եղան համերգի: Դիրիժոր Օհան Դուրյանի ղեկավարությամբ կատարվեցին դասական երաժշտության ընտիր կտորներ:

ՄԱՂԹԱՆՔ ԵՎ ՔԱՐՈԶ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄԱՑՐ ՏԱՃԱՐՈՒՄ.—Հոկտեմբերի 15-ին, չորեքշաբթի, երեկոյան ժամը 5-ին, Մայր Տաճարի զանգերի սուրբ դողանջով, հոգևորական և աշխարհական պատգամավորները, ուխտավորներն ու հյուրերը, Մայր Աթոռի միաբանության հետ, հավաքվեցին Մայր Տաճար, Իջման Ս. Սեղանի առաջ ծնրադիր աղոթելու համար «վասն խաղաղութեան ամենայն աշխարհի»:

Հսկման հուզիչ և խորհրդավոր արարողություն Մայր Տաճարում: Նախագահում է Վեհափառ Հայրապետը: Հոգևոր Ճեմարանի սաները, աղերսալից քաղցրությամբ, երգում են հակման երգերն ու շարականները: Ամբողջ եկեղեցին ծունկի եկած երգում է հայոց «Տէր ողորմեա»-ն և բոլորի սրտերից բարձրանում է սուրբ աղաչանքը՝ «Տո՛ւր աշխարհիս խաղաղութիւն»:

Արարողության վերջում խաղաղության մասին ոգեշունչ քարոզ է խոսում Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ՝ նոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը.

«Խաղաղութիւն բողում ձեզ,
զխաղաղութիւն զիմ տամ ձեզ»:

«Խաղաղությունը դարերի երազն է: Մարդկությունը միշտ աղոթել է աշխարհի խաղաղության և ժողովուրդների միջև հաճության և համերաշխության համար:

Այսօր էլ խաղաղությունը մարդկության համար կարևորագույն անհրաժեշտություն է: Առանց խաղաղության պատկերացնել անդամ կարելի չէ ո՛չ ճշմարիտ հասարակական կյանք երկրի վրա, ո՛չ առաջադիմություն, ո՛չ հանգստություն:

Հիսուս, որ եկել էր աշխարհ՝ ուղղելու համար կյանքի խոտոր ընթացքը, հաստատելու մարդկային բոլորովին նոր հարաբերություններ սիրո, խաղաղության, արդարության սկզբունքների վրա, տեսական խաղաղության ամուր հիմքերի վրա էր խարսխում Իր վարդապետությունը. «Երանի՜ խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին»:

Աստուծո Որդին, մարդկության փրկության համար աշխարհ գալով, երկնային սիրո հուրը և ճշմարիտ խաղաղության սերմերը ցանեց ամենուրեք: Բայց աշխարհ հաճախ մոռացավ Նրա խաղաղության պատգամը:

Թեև անցել են դարեր ու հազարամյակներ, սակայն քրիստոնեական սիրո և խաղաղության վսեմ սկզբունքները չեն իշխում ամենուրեք, այլև հաճախ անգթորեն բռնաբարվել են ու բռնաբարվում են տակավին:

Մի՞թե այս մասին չի վկայում մարդկության ողջ տարեգրությունը՝ լի զարհուրելի անարգարություններով, արյունահեղ պատերազմներով, ծանր զրկանքներով ու թշվառությամբ:

Այսօր էլ համաշխարհային պատերազմի ահավոր սարսափը Դամոկլյան սրի նման կախված է մարդկանց գլխներին:

Որքա՜ն բախտավոր ու երջանիկ պիտի լիներ մարդկությունը, եթե նրա բոլոր ուժերն ու միջոցները ուղղվեին միայն կյանքի խաղաղության և շինության վեհ նպատակին:

Հսկման և աղոթքի այս սուրբ ու խորհրդավոր պահին, հայոց հավատի այս Մայր կենտրոնից, որտեղից դարերով լույս, ջեր

և խաղաղություն են բաշխվել մեր ժողովրդին, արտաքին մաղթանքներ են արվել համայն մարդկության երջանկության համար, այսօր ևս այստեղից մեր հոգիների խնկաբույր աղոթքն է բարձանում դեպի վեր՝ իջեցնելու համար երկնային բարձունքներից սիրո, արդարության և խաղաղության շնորհներ աշխարհի վրա, բոլոր մարդկանց մտքերի և հոգիների վրա, որովհետև մարդկանց ներքին, հոգևոր աշխարհի խաղաղությամբ և երջանկությամբ են պայմանավորված և՝ արտաքին աշխարհի խաղաղությունն ու երջանկությունը։ Ինչպես ասում է առաքյալը՝ մարդկանցից են ելնում և՝ նախանձ, և՝ ագահություն, և՝ թշնամություն, սպանություն, ամեն արհավիրք և ավերածություն։

Մենք հավատով և հույսով յի աղոթում ենք առ Աստված «վասն խաղաղութեան ամենայն աշխարհի» և հաստատապես համոզված ենք, որ այս է իգեալը նաև բոլոր ժողովուրդների, որոնք մանավանդ քիչ են տեսել ուրախ և արևոտ օրեր։

Աշխարհում չկա մի ժողովուրդ, որն այնքան ծարավի և կարոտ լինի խաղաղության, որքան մեր ժողովուրդը։ Եվ սա ճշմարիտ իրականություն է, որովհետև ո՛չ մի ժողովուրդ չի տեսել այնքան անասելի թշվառություններ ու տառապանքներ, որքան մեր փոքրիկ, բայց հերոսական ժողովուրդը։ Բացե՛ք բազմադարյան պատմության էջերը և կտեսնեք այնտեղ դառն տանջանք, ծով արյուն ու արցունք։ Հայաստանը բարձրարերձ լեռների աշխարհ է։ Սակայն ավելի բարձր են եղել հայոց վշտի լեռները։

Մեր ժողովուրդը իր ծով ցավերի միջից շարունակ փափագել ու խաղաղություն է աղերսել երկնքից. «Ամենասուրբ Երրորդութիւն, տո՛ւր աշխարհիս խաղաղութիւն, Ազգիս հայոց՝ սէր, միութիւն։ Հայ ժողովուրդն աղոթել է միշտ, որպեսզի ալոհեսցին պատերազմունք, դադարեսցին հարձակմունք թշնամեաց, տնկեսցի սէր և արդարութիւն ի յերկրիս»։

Խաղաղությունը հանապազորդ հացի, ջրի, օդի չափ անհրաժեշտ է եղել մեր ժողովրդի համար։

Աստվածապարգև խաղաղության շնորհիվ է, որ մեր շինարար ու արիակամ ժողովուրդը կարողացավ ընդամենը մի քանի տասնամյակում վերաշինել ու ծաղկեցնել իր Մայր Հայրենիքը։

Աստվածապարգև խաղաղության շնորհիվ է, անշուշտ, որ մեր եկեղեցին իր ազգանվեր Հայրապետի իմաստուն հովվապետության ներքո նոր հասակ է առել ու գեղեցկացել, կյանք ու մարմին են առել մեր հազարամյա վանքերն ու եկեղեցիները, փթթում ու ծաղկում է ընդհանրապես մեր եկեղեցական-հոգևոր կյանքը։

Մեզ պետք է երկարատև և կայուն խաղաղություն, որպեսզի է՛լ ավելի բարգավաճի մեր սիրելի Հայրենիքը, իրականություն դառնան մեր տարագիր եղբայրների նվիրական երազները՝ մեկտեղվելու հայոց կենսավառ արևի տակ, Ս. Էջմիածին և Հայրենի շեն օջախների շուրջը, այստեղ հավիտյան միասին աղոթելու, միասին շինելու և ստեղծագործելու։

Մեզ պե՛տք է կայուն խաղաղություն, որպեսզի համերաշխություն, միասնականություն վերահաստատվեն նաև մեր եկեղեցական կյանքից ներս և է՛լ ավելի ծաղկի ու հզորանա Մայր Աթոռ Ս. Էջմիածինը։

Միայն խաղաղության պայմանների մեջ է, որ ամեն մի ազգ, ամեն մի ժողովուրդ պիտի կարողանա գտնել իր արդար ձգտումների իրականացումը, կերտել իր երջանկությունը և իր ապագան։

Մեզ համար մեծապես հաճելի և ուրախալի է նշել, որ բոլոր ազնիվ մարդկանց կողքին, բոլոր քրիստոնեական եկեղեցիների կողքին Հայաստանյայց եկեղեցին ևս, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և իր աստվածարյալ Հայրապետի գլխավորությամբ, իր արժանի տեղն է գրավում խաղաղության պահպանության սրբազան գործում, Եվ դա՝ Իր մշտական աղոթքներով, իր հետևողական խաղաղասիրական կոչերով և քարոզներով, քրիստոնեական արդարության և եղբայրության վսեմ գաղափարների տարածումով, Իր բոլոր խաղաղ և շինարար գործերով։ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ը խաղաղության Իր կոչերից մեկում, արտահայտելով մեր Եկեղեցու և համայն հայ ժողովրդի զգացմունքներն ու խորունկ ցանկությունը, ասում է. «Հայ եկեղեցին և հայ ժողովուրդը չեն ցանկանում պատերազմ։ Չեն կամենա պատերազմ ոչ ոմի համար, աշխարհի ոչ մի անկյունում։ Մեր իղձն ու մեր իդեալն է «խաղաղութիւն հեռաւորաց, խաղաղութիւն մերձաւորաց, խաղաղութիւն ամենեցուն»։

Սիրելի հավատացյալնե՛ր. հավատում ենք, որ Աստուծու բարի կամքը պիտի թագավորի երկրի վրա ամենուրեք, և ըստ մարգարեի անսուտ վկայության, գայլն ու գառը, առյուծն ու ինձը միասին պիտի ճարակեն, պատերազմական բոլոր զենքերը պիտի փշրվեն և վերածվեն աշխատանքի և կառուցման գործիքների, պիտի գա հավիտենական խաղաղության երջանկարեր շրջանը։

Աղոթենք, որ այս բաղձալի օրը շուտով գա, այլևս երբեք չարյունոտվի խաղաղության սպիտակ աղավնին և պատմությունն

այլևս միայն հաջողություն, ուրախություն և երջանկություն արձանագրի իր էջերում։

Աղոթենք նաև սիրո և խաղաղության վերահաստատման համար մեր Ազգի և մեր Եկեղեցու ծոցում, Ս. Էջմիածնի հովանու տակ։

Թո՛ղ Աստված միշտ անշարժ պահի Իր իսկ հիմնած այս Ս. Աթոռը, շնորհելով Նրա Գահակալին երկար օրեր։

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ.— Հսկման արարողության ավարտին, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, բոլորը առաջնորդվում են Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահը, ներկա լինելու համար Հոգևոր Ճեմարանի կողմից նորին Ս. Օծության ծննդյան հիսնամյա և գահակալության երրորդ տարեդարձին նվիրված հանդեսին։

Հնչում է Հայաստանի Պետական Հիմնի նվագը։ Բոլորը ոտքի են։ Հանդեսի բացման խոսքն է ասում Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գեղաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը, ապա ընթերցում է իր ինքնագիր զրարար բանաստեղծությունը՝ ձոնված Նորին Վեհափառությանը։

Հոգևոր Ճեմարանի սանները երգում են փոխ-տեսուչ նոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անբարյանի բառերով և պր. Մովսես Շարպաբյանի երաժշտությամբ գրված Վեհափառին նվիրված խմբերգը։

Այնուհետև Հոգևոր Ճեմարանի ողջ ուսանողության անունից երախտագիտական խոսունկ ու ջերմագին զգացմունքներով զեղուն ուղերձ է կարդում բարեշնորհ Սանդրո սարկավագ Բենբուլյանը.

«Վեհափառ Տե՛ր.

Պատմական օրեր ենք ապրում։ Համայն հայ ժողովուրդը տոնում է շնորհազարդ և առաքելատիպ Հայրապետիդ ծննդյան հիսնամյա հոբելյանը։ Մենք, Քեզդ Սրբության հոգեծին կավակներս, խորին սիրով ու հարգանքի ջերմ զգացումով լցված էջմիածնաշեն, ժողովրդանվեր և հայրենասեր Հայրապետիդ հանդեպ, շտապում ենք մեր սրտի ծաղիկը ավելացնել այն երփներանգ մեծ ծաղկեփնջի վրա, որ հայ ժողովրդի կողմից ներկայացվում է Քեզ Քեզ ծննդյան հիսնամյա հոբելյանի և գահակալության երրորդ տարեդարձի առթիվ։

Վեհափառ Տե՛ր, Քեզդ Սրբության հանդեպ մենք լցված ենք որդիական սիրո ակնածալից ոգով։ Սիրո քաղցրարույր ծաղիկ է երախտագիտությունը, իբրև անուշահոտ խունկ, շնորհընկալի կողմից մշտավառ և մշտաշարժ բուրումով ուղղվում և բարձրանում է դեպի բարերարը։ Մեր Բարերարը Դուք եք, Վեհափառ Տե՛ր, մեր Հայրն ու սիրելի Ուսուցիչը Դուք եք, որի շուրջ մենք համախմբված ենք սիրո և երախտագիտության ջերմ զգացմունքներով։

Մենք, Մայր Աթոռի սարկավագներս, ունենք մեկ նպատակ այս սուրբ հարկի տակ. դա այն է, որ մենք կարողանանք Քեզդ Սրբության հավատով հավատալ, Քեզ սրտով զգալ, Քեզ սիրով սիրել և Քեզ սուրբ ներշնչումով գործել։

Քեզ կյանքի ու աշխատանքի օրինակով մենք մշտապես մեր ուշադրության կենտրոնումն ենք պահում մեր կոչման բարձրությունը, մեր պատասխանատվության զգացումը։ Որդի հարազատ զնմանությամբ հոր քթքվ։

Քեզ հանդեպ մեր հոգիների անկեղծ և անայլայլ որդիական սերը պիտի կազմի մեր կյանքի խորհուրդն ու իմաստը։

Քեզդ Վեհափառության հայրական շնչի տակ սրավուր աճում և հասունանում ենք, մտքով զարգանում, ազնիվ բաղձանքներով լցնում մեր ամբողջ էությունը, որպեսզի վաղը, Քեզ օրհնությամբ, անբասիր և օրինակելի վարք ու բարքով հոգևորականներ դառնանք և բարձր պահենք այն վեհ և նվիրական կոչումը, որը ճշմարիտ հայ հոգևորականինն է։

Փա՜ռք և պատի՜վ Վեհափառ Հայրապետիդ, որ այս օրերին Հայ Եկեղեցու պատմության մեջ լուսաշավիղ ճանապարհ է բացում մեկ համար, ինչպես հրեղեն սյունը՝ անապատում թափառող իսրայելացիներին։

Ուրախության ու վերացման այս պահին, մենք, սարկավագներս մեր որդիական ձայնը խառնում ենք ամբողջ հայ ժողովրդի ձայնին և աղերսում ենք Ամենակալից.

«Ամեն նայի սրտից բխած,
Լսի՛ր այս ձայն, ո՛վ Աստված.
Երկա՜ր կյանք տուր Հայրապետին,
Երկա՜ր օրեր Հայոց Հոր»։

Սրտառուչ ուղերձ է կարդում նաև Գ դասարանի ուսանող Խաչիկ Աբրահամյանը.

«Վեհափառ Տե՛ր.

Բացառիկ ուրախ ու ցնծալի օր է այսօր, որովհետև բովանդակ հայ ժողովուրդը հանդիսավորապես նշում է Քեզդ Ս. Օծության ծննդյան ու գահակալության զուգ տարեդարձները։ Համաժողովրդական ցնծությունը համակել է նաև մեզ՝ Հոգևոր Ճեմարանի ուսանողներիս, որովհետև հանձին Քեզ մենք այսօր ողջունում ենք Լուսավորչի Տան արժանավոր Գահակալին, որի իմաստուն ղեկավարության և հայրական հոգատարության շնորհիվ Հոգևոր Ճեմարանը դարձել է այն լուսավորության կենտրոնը, որը մեզ հաղորդակից է դարձնում հայրենի ավան-

դությանց բոլոր սրբություններին։ Մենք այստեղ սովորում ենք ճանաչել ու սիրել մեր ժողովրդին, զինվել ու զորանալ հոգեկան ու մտավոր այն բոլոր արժեքներով, որ մեր ժողովուրդը ստեղծել է իր բազմադարյան գոյության ընթացքում։

Հայաստանյայց Եկեղեցին, իր անվան վկայությամբ իսկ, գերազանցապես հայ է։ Հայաստանյայց Եկեղեցին այն միակ հաստատությունն է, որի մեջ շնչում է հայ հավատացյալ ժողովրդի ամբողջական սիրտը։ Էջմիածինն ու նրա աստվածընտիր հայրապետներն են եղել այն արքուն և խիզախ նավապետները, որոնք մեր անցյալի դաժան ու փոթորկոտ օրերին իրենց իմացական կորովով և տգու առաջնությամբ հայ ժողովրդին հասցրել են խաղաղության և ապահով ու երջանիկ կյանքի նավահանգիստը։ Նրանք պահել, զարգացրել ու մեզ են հասցրել մեր հանճարեղ նախնիների կերտած նյութական, իմացական ու հոգեկան բոլոր արժեքները, որոնցով մենք այսօր արդար իրավամբ հպարտանում ենք։

Այսօր, շնորհիվ Ձերդ Ս. Օծության իմաստուն ղեկավարության և հայրենանվեր գործունեության Ս. Էջմիածինը առավել ևս գեղեցկացել է՝ հասնելով իր հրբեմնի փառքի ու շքեղության օրերին։ Այսօր Էջմիածինը դարձել է այն լուսավոր միացման կետը՝ դեպի որը ուղղված են բովանդակ հայության՝ հույսով ու հավատով աչքերը։

Այս հանդիսավոր պահին, Ձերդ Ս. Օծության ծննդյան և գահակալության զույգ տարեդարձների երջանիկ առիթով, արտահայտելով մեր խնդակցությունն ու որդիական սերը, ուսանողներս միաժամանակ ուզում ենք հավաստիացնել Ձերդ Սրբությանը, որ մենք ոչինչ չենք խնայի Ձեր հույսերը լիովին արդարացնելու համար, մենք կսովորենք գերազանց, մեր ամբողջ միաքն ու լուսաբաղձ հոգու յուրաքանչյուր մասնիկը կլցնենք հոգևոր գիտելիքներով, անշեղորեն և անենահանջ կերպով կկատարենք հայ հավատացյալ ժողովրդի՝ մեզ հետ կապած նրազանքները, կլինենք Հայաստանյայց Եկեղեցու խիզախ և անսկուն մշակները, մեր ուժերի ներած չափով կմատուցենք մեր ժողովրդին այն ամենը, ինչ այս սուրբ հաստատությունը, շնորհիվ Ձեր ամենօրյա լծակցող հոգատարության, մեզ տալիս է՝ սնվելով մեր ժողովրդի սրտի ու հոգու անցամաքելի ակունքներից։

Ահա այս գիտակցությամբ, մեր Ճեմարանի ամբողջ ուսանողության անունից շնորհավորում եմ Ձերդ Ս. Օծությանը իր ծննդյան և գահակալության զույգ տարեդարձների առթիվ, խնդրելով, որ ընդունեք մեր երախտիքներով ծրարված սրտագին շնորհակալությունները մեր նկատմամբ ցուցաբերված հայրական սիրո և հոգատարության համար։

Ամեն օր մեր աչքի առաջ Ձերդ Վեհափառության ծավալած գործունեությունն ու անձնական օրինակները մեզ ավելի ևս ամրապնդում են մեր ուխտի մեջ, մեզ մղում են անձնվիրաբար ծառայելու այս տուրք հաստատությանը՝ ի փառս մեր ազգին և հայրենյաց։

Ուրեմն, մեզ մնում է շարունակել ընթանալ Ձեր հարթած լուսաշող ուղիով, մինչև վերջին շունչը մեր կյանքի, այս հազարամյա, երկնարերձ Աստուծո տան մեջ։

Մաղթում ենք, որ Տերը Ինքը վարձահատույց լինի՝ Ձերդ Սրբությանը պարգևելով երկար, երջանիկ ու բեղմնավոր կյանք, Ձեր սրտի և հոգու առավել պայծառությամբ ծառայելու մեր Առաքելական Ս. Եկեղեցուն և մեր հանճարաշատ ու ստեղծագործ հայ ժողովրդին։

Գ դասարանի ուսանող Նուպար Պալյանի բառերով և Բ լսարանի ուսանող ուրարակիր Խորեն Մելխանաջյանի երաժշտությամբ Նորին Վեհափառության ձոնված մաղթերգի շատ հաջող և ծափահարված կատարումից հետո, ամբիոնին է մոտենում «Էջմիածին» ամսագրի խմբագիր և Հոգևոր Ճեմարանի դասախոս Արքուն Հատիսյանը.

«Սրտագին բայց միաժամանակ մի շատ դժվարին պարտականություն է ծանրանում ինձ վրա,— ասում է նա,— այս հանդիսավոր պահին, խոսելու մեր բոլորին սիրելի Վեհափառ Հայրապետի կյանքի և գործունեության մասին։ Ու ես վախենում եմ, որ չկարողանամ ըստ արժանվույն և խղճի մտոք Ձեզ ներկայացնել այդ կյանքը իր գրավիչ պարզության, օրինակելի համեստության և սրբատառուշ վեհության մեջ, մի կյանք՝ որի վրա որորոցից հակել են հրեշտակները և որին առաջնորդել է Նախախնամության Աչը, ընտանեկան խոնարհ հարկից մինչև Լուսավորչի Աթոռը։

Հոբելյանական այս տոնական օրերին մեր հարգանքի և երախտագիտության առարկա է դառնում հիսուն տարիների վրա բաշխված մի կյանք, որի 35 տարիները եղել են ճշմարտապես հայ գրի և գրականության, հայ նոր սերնդի դաստիարակության, և վերջապես, ամբողջովին հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու բոլորանվեր ծառայության նվիրված, հավատի և գործի կյանք։

Մնունդները միշտ ուրախություն են բերում ընտանիքին և հարազատներին։

Մնունդներ էլ կան, որոնց ուրախությունը դուրս է գալիս ընտանեկան շրջանակից, օրհնություն և մխիթարություն դառնալու հասարակության, Ազգին և Եկեղեցուն։

Ահա այսպիսի մի օրհնաբեր ծնունդ տեղի ունեցավ Բուխարեստում, 1908 թվականի սեպտեմբերի 20-ին, երբ ծնվեց ապագա Վեհափառ Հայրապետը։

Վեհափառի հայրը՝ Աբրահամ Պալճյանը, իր արդար քրտինքով։ Ապագա Վեհափառ Հայրապետը իր հորից ժառանգել է աշխատանքի սերը, նամուսն ու դայրաթը, իսկ նրա մայրը՝ խարդախ կաթի հետ իր որդուն է շամբել հավատի հուրը, հայրենասիրության շունչը և հայ մշակույթի սերը։

Վեհափառ Հայրապետը հայ մեծաքանչ լեզվի գաղտնիքը սկսել է ճանաչել ուսուցչուհի մորը ծնկների առաջ, ապա հաճախել է հայկական, գերմանական, ռումինական վարժարաններ։ Նրա ծնողները ոչ մի զոհողության առաջ կանգ չեն առել, գիշեր և ցերեկ ասեղ են ծեծել՝ իրենց միակ զավակին տալու համար բարձրագույն ուսում։ 1929 թվականին հազիվ վերջացրած միջնակարգը, ուսումնատենչ պատանին ուզում է մտնել կյանք՝ տնտեսապես թև ու թիկունք լինելու համար իր ծնողներին։ Բայց ոսման սերը նրան տանում է դեպի համալսարան։ 1931 թվականին, հաջողությամբ հանձնելով ընդունելության քննությունները, մտնում է համալսարանի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետը՝ մասնագիտություն ընտրելով հոգեբանությունը, մանկավարժությունը և հասարակական գիտությունները։ Համալսարանը վճռական դեր է կատարում նրա մտավոր զարգացման, մտահորիզոնի ընդլայնման և հայացքների ձևավորման ընդավառում։

1936 թվականին, բազմակողմանիորեն զարգացած, կայուն և խոր գիտելիքների տեր, մտնում է կյանք՝ իր ժողովրդին ծառայելու եռանդով և ուխտով։ Նույն տարիներին նա Բուխարեստում ծավալում է հրապարակագրական գործունեություն՝ հրատարակելով «Հերկ» ամսագիրը, աշխատելով նոր ու թարմ մտածումներով, ապրումներով ու գործունեությամբ տեղ գրավել հայ կյանքում։ Դա երիտասարդական այն տարիքն է, երբ նրա ամբողջ մտասևեռումը դառնում է հայ մշակույթի, հայ հոգու, Ս. Էջմիածնի, Մայր Հայրենիքի շուրջ։ Այդ շրջանը Վեհափառ Հայրապետի կյանքի մեջ որոնումների շրջան է հանդիսանում։ Նա, ստեղծագործական երկունքից բռնված արվեստագետի նման, նոր ճանապարհներ է որոնում՝ իր ժողովրդին լավագույնս ծառայելու համար։ Եվ ահա 1943 թվականին ուսուցիչը դառնում է վարդապետ, հոգևոր ուսուցանող, ինչպես Մեսրոպը, երբ հրաժարվեց զինվորական իր փայլուն համազգեստից, և, պատմիչի բացատրությամբ՝ «աշխարհազրույց զբաղմունքս»-ներից և հագավ վանականի կնգուղը՝ բոլորանվեր ծառայելու իր ժողովրդին։ «Ոչ թէ ոք անձամբ առնու զպատիւ [պաշտպան], այլ կոչեցեալն յԱստուծոյ»։

1943 թվին նա Աստուծո կանչով և իր ժողովրդի ընտրությամբ, «զի պարտ է վկայութիւն բարի և յարտաքնոցն ունել», Աթենքում Տ. Կարապետ Մազլումյան արքեպիսկոպոսից ձեռնադրվում է վարդապետ, և Սուչավայի պատմական Հաճկատար վանքում, աղոթքի, հսկման, ինքնամփոփման 40-օրյա շրջանից հետո, հոգով պայծառացած և աճած, իմաստությամբ պսակված և իր կոչման արժանավայել գիտակցությամբ գտնում է իր ժողովրդին ծառայելու հարազատ ճանապարհը։

1943—1955 թվերին Վազգեն վարդապետը, ապա եպիսկոպոս, ռումինահայ թեմում ծավալում է առաջնորդական հովվական անաղմուկ, բայց արդյունավետ գործունեություն, իրեն հատուկ լրջությամբ, համեստությամբ, հանդես բերելով կազմակերպչական ընդունակություն և վարչական շնորհ։

1955 թվականի սեպտեմբերին, «կամօքն Աստուծոյ և ընտրութեամբ Ազգի», կոչվում է բազմելու Լուսավորչի Գահի վրա։

«Զի ոչ թէ որ զանձն իւր ընծայեցուցանէ, նա է ընտրեալ, այլ զոր Տէրն ընծայեցուցանէ»։ Որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, Իր օծումից հետո ընդունելով եկեղեցու ու ողջ Ազգի միահամուռ հավատարմությունն ու հպատակությունը, որպես աստվածարյալ Հայրապետ, բարձրանում է Ս. Լուսավորչի պատմական Աթոռի վրա, ոչ թե փառավորվելու, այլ այդ Աթոռը նոր փառքով ծածկելու։

Ապա հարգելի բանախոսը ծանրանում է Վեհափառ Հայրապետի հոգևոր նկարագրի հիմնական գծերի վրա, Նրան ներկայացնելով հավասարապես իբրև հավատի և գործի մարդ, խորապես հայրենասեր և լավատես անձնավորություն։

Պր. Արթուն Հատիտյանի մեկ ժամ տևող բանախոսությունը լսվում է ոգևորությամբ, որից հետո երգչախումբը դաշն ու վեհ երգում է «Տէ՛ր, կեցո՛ Գու զհայսս մաղթերգը։ Ապա Ա լսարանի ուսանող Ռուբիկ Մկրտչյանը արտասանում է Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի «Ծնունդ» երկուրդ կրոնաշունչ բանաստեղծությունը։ Բ լսարանի ուսանող բարեշնորհ Հակոբ սարկավագ Պոզապալյանը ապրումով երգում է «Ինայրը» (խոսք՝ Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի, երաժշտությունն՝ Շահան Պերպերյանի)։ Սիլվա Կապուտիկյանի «Մեր քարերը» գեղեցիկ բանաստեղծությունը արտասանում է հաջողությամբ Գ դասարանի ուսանող Կ. Սերայդարյանը և ապա իր ինքնագիր

քերթված է ընթերցում Գ դասարանի ուսանող Նուպար Պալյանը, նվիրված Վեհափառ Հայրապետին՝ «Աղբիւր կենաց» շարականի կատարումից հետո, խանդավառ ծափերի տակ, խոսք է առնում հոբելյար Վեհափառ Հայրապետը.

«Կխոստովանիմ, թե Մեզ հետ համաձայն եմ երբ ըսենք, թե հիմա դժվար է խոսիլը այնման ցերմ խոսքեր լսելե հետո: Շնորհակալ ենք անկեղծորեն, բոլորին շնորհակալություն:

Հանդեսը Մեզ ուրախացուց մանավանդ մեր սիրելի աշակերտներու ելույթներով, որոնք ամենաթանկագին նվերներ են Մեզ համար: Նկատելի է Հոգևոր Ճեմարանի ուսանողության քայլ առ քայլ հառաջդիմությունը, պայծառակերպումը: Շնորհը, պայծառությունը, լույսը կերևա անոնց աշխատանքին մեջ, անոնց երեսներուն վրա, անոնց շարժումներուն մեջ, և շափազանցություն բոլոր չրվի, եթե ըսենք՝ իրենց ստեղծագործություններուն մեջ նույնիսկ. օրինակ՝ Խորեն Մելիքանաջյանի գրած երաժշտությունը: Նույնն է պարագան նաև մյուս ելույթ ունեցողներուն: Երբ մենք այսօր ականատես ենք այսպիսի տաղանդի ակնհայտ կայծերու, ուրեմն վստահորեն կարող ենք ըսել, որ Հոգևոր Ճեմարանը կգտնվի իր ճշմարիտ ճանապարհին վրա: Եթե ուսանողները Մեզմե պատգամ, նորդոր կսպասեն այս ոստին, Մեր հայրական խոսքը պիտի ըլլար միայն՝ «շարունակել սկսված աշխատանքը»:

Աստված շնորհներ կրաշխե բոլորին առատիր, բայց եթե կառնե ծույլերու ձեռքեն: Լեոնարդո դա Վինչին, իտալական վերածնունդի այդ բազմահանճար արվեստագետը կվկայե՝ «Հանճարը աշխատանք է»:

Դուք կոչված եք, սիրելի՝ աշակերտներ, ըլլալու Մեր աշխատակիցները, ըլլալու Ս. Էջմիածնի սպասավորները: Դուք այդ բանի մեջ տեսեք ոչ միայն ձեր կյանքի հաջողությունը, այլ նաև պատիվը և փառքը: Անեցե՛ք ու ծաղկեցե՛ք, որպեսզի երջանիկ օր մը, ձեր հայացքը դարձնելով Մեր Ազգին, Մեր եկեղեցիին, նահատակ բանաստեղծին հետ կարենաք ըսել. «Մենք, զավակներդ օգոստափառ, պիտի կերտենք նո՛ր արշալույս»:

Թող Աստուծո օրհնությունը անպակաս ըլլա ձեր բոլորիդ վրայեն»:

Վեհափառ Հայրապետի ծննդյան հինգամյակի և գահակալության երրորդ տարեդարձի հոբելյանական հանդիսություններին նվիրված այս հույժ գեղեցիկ և դաստիարակիչ գրական գեղարվեստական երեկույթը վերջացավ խմբովին երգված Տերունական աղոթքով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

Հարգարժան պատգամավորներն ու հյուրերը հոգեկան բարձր տրամադրությամբ ու հարուստ ապրումներով մեկնեցին Հոգևոր Ճեմարանից, իսկ ուսանողնե՞րը...: Այնքա՞ն լեցուն է նրանց հոգին այսօր, այնքա՞ն խորն են նրանց հուզումները այս դիշեր: Տե՛ր Աստված, թող չխաթարվեն Քեզ ընծայաբերված այս մատղաշ հոգիների սրբազան հույզերն ու տեսիլները...:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՌԱՄՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՑՄԸ.— Հինգշաբթի օրը, հոկտեմբերի 16-ին, առավոտյան ժամը 10-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում բոլոր պատգամավորների, Մայր Աթոռի միաբանության, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմի և Մայր Աթոռի պաշտոնեության և այլ պաշտոնական անձնավորությունների ներկայության Վեհափառ Հայրապետը զեկուցեց Իր եռամյա գործունեության և ապագա ծրագրերի և շինարարական հեռանկարների մասին:

Նորին Ս. Օծությունը եկեղեցական թափորով Վեհարանից առաջնորդվեց Հոգևոր Ճեմարան և ընդունվեց բոլորի սրտագին ծափողջույններով:

Գերագույն Հոգևոր խորհրդի առենապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, բաց անելով ժողովը, հրավիրեց Վեհափառ Հայրապետին զեկուցելու Իր եռամյա գործունեության մասին: Վեհափառ Հայրապետը հանգիստ ու հանդիսավոր տոնով, խանդավառ շեշտով կարդաց Իր զեկուցումը, որը լսվեց խորին գոհունակությամբ և երախտագիտությամբ, հաճախ ընդմիջվելով խանդավառ ծափերով:

Զեկուցման վերջավորության, գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը, հանուն բոլոր ներկաների, շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետի եռամյա գործունեության շուրջ, առաջարկեց հետևյալ բանաձևը.

«Բոլոր ներկաները, խորունկ գոհունակությամբ և շնորհակալությամբ լսելով Նորին Ս. Օծության զեկուցումը, իրենց որդիական երախտագիտությունը կհայտնեն Վեհափառ Հայրապետին, Անոր եռամյա բեղմնավոր և արդյունավետ գործունեության համար»:

Մամբրե սրբազանի առաջարկը բոլոր ներկաների կողմից ընդունվեց հոտնկայս, ուրախ ծափահարություններով և սրտի տնկեղծ գոհունակությամբ:

ՀԱՐԻՍԱՅԻ ՍԵՂԱՆ Ի ՊԱՏԻՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ.— Ժամը 3-ին, Հոգևոր Ճեմարանում, Վեհափառ Հայրապետը, ի պատիվ պատգամավորներին, տվեց ճաշկերույթ: Սեղանի զարդն էր հայկական ավանդական հարիսան:

Վեհափառ Հայրապետը, սեղանը օրհնելուց հետո, բացատրեց Հարիսայի ծագման պատմությունը։

«Ս. Լուսավորչի օրով, այս նույն պատմական սուրբ տեղյաց մեջ, մեծաճանդես տոն էր։ Ներկա էին բազմաճոխ նավատացյալներ՝ հոգևորական ու շինական, ինչպես այսօր։ Ս. Լուսավորիչ կմտածե բոլորը կերակրելու մասին։ Ու կմտաբերե, որ Մայր Աթոռի մառանները լիքն են ցորենով։ Կհրամայե բանալ մառանի դռները և ցորենը վանքի աշխատավորներուն ցույց տալով կրսե. «Հարէ՛ք զսա»։ Անա այս «հարէ՛ք զսա» բառերեն հառաջ կուգա մեր պատմական հարիսան։

Սիրելի սեղանակիցներ. բոլոր ավելի այս առիթով խոստովանություն մը ընել։ Այսօրվան այս հաշը նախատեսված չէր, և հետևաբար պատրաստված չէինք։ Երեկ երեկոյան է, որ որոշեցինք և անա այս շատ կարճ ժամանակամիջոցին մեջ Մայր Աթոռ, միմիայն իր ուժերով, կրցավ քանի մը ժամվան մեջ 70—80 հոգի համար այս սեղանը կազմակերպել, որմե կխորհինք, թե դժգոհ չեք։ Այս ցույց կուտա, թե Ս. Էջմիածնի մառանները լեցուն են և մատակարարը՝ ժիր։ Արդ, սիրելի՛ք Մեր, հաշակեցե՛ք խաղաղությամբ, անո՞ւշ ըլլա»։

Մայր Աթոռի բարիքներով ծանրաբեռնված սեղանների շուրջ մի անգամ ևս ստեղծվեց հայկական ջերմ ու խանդավառ մթնոլորտ։

Խոսք առին Տ. Մամբրե, Տ. Սերովբե, Տ. Հայկազուն, Տ. Զգոն, Տ. Վարդան սրբազանները, արժանապատիվ Տ. Վահան ավագ քահանա Գրիգորյանը և արժանապատիվ Տ. Եղնիկ ավագ քահանա Վարդանյանը, պարոնայք Նուպար Կյուպենկյանը, տիկին Մարի Կյուպենկյանը, Սարգիս Քյուրքճյանը, մեթր Հրաչ Սեդրակյանը, Երվանդ Հրաչիսյանը, Գրիգոր Շիլթյանը, Անդրանիկ Մառուկյանը, Սեդրակ Քարյանը, Եդվարդ Ուլուճյանը և շատ ուրիշներ։

Հարիսայի սեղանը փակվեց Վեհափառ Հայրապետի Տերունական աղոթքով։

Երեկոյան պատգամավորներն ու հյուրերը ներկա եղան Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնում «Արծվաբերդ» օպերային։

Հոկտեմբերի 17-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 11-ին, Վեհարանի դահլիճում, տեղի ունեցավ Episկոպոսական խորհրդակցական ժողովի Ա նիստը, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ։

Նույն օրը պատգամավորները, առանձին-առանձին խմբերի բաժանված, եղան Մայր Աթոռում և ծանոթացան Մայր Տաճարի եկեղեցա-հնագիտական թանգարանին, Հոգևոր Ճեմարանին, տեղադրման ընթացքի մեջ գտնվող տպարանին և շինարարական աշխատանքներին։ Այցելեցին նաև Ս. Հռիփսիմեի և Ս. Գայանեի վանքերը։

Երեկոյան պատգամավորներն ու հյուրերը եղան «Սրտի արատ» թատերական ներկայացմանը Ստանդուկյանի անվան Պետական թատրոնում։

Հոկտեմբերի 18-ին, շաբաթ, առավոտյան ժամը 11-ին, բոլոր պատգամավորները, հյուրերն ու տեխնավորները Հոգևոր Ճեմարանի դահլիճում լսեցին Ճարտարապետ Միքայել Մազմանյանի բովանդակալից զեկուցումը Մայր Աթոռի կատարված, կատարվող և կատարվելիք շինարարական վիթխարի աշխատանքների մասին։

Ճարտարապետ Մ. Մազմանյանի զեկուցումը լսվեց մեծ գոհունակությամբ և հետաքրքրությամբ։

Նույն օրը, ժամը 3-ին, տեղի ունեցավ Episկոպոսական խորհրդակցական ժողովի Բ նիստը։

Երեկոյան ժամերգությունից հետո բոլորը ներկա եղան համերգի։

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԵՎ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՇՔԱՆՇԱՆԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ ԾԱՂԿՅԱ ԴԱՇԼԻՃՈՒՄ

Հոկտեմբերի 19-ն է, կիրակի։ Աշնանային չերմ, պայծառ առավոտ։

Ժամը 11-ին զանգերի օրհնյալ ղողանջը ավետում է հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագի սկիզբը։ Խուռն և ծովածավալ բազմություն է Մայր Տաճարում և վանքի բակում։ Հայ հավատացյալ հոգիների համազգային ցնծատոնն է նորից, Ս. Էջմիածնի հովանավորության ներքո։

Հանդիսաքայլ եկեղեցական թափորը Վեհարանից սկիզբ է առնում և ձգվում դեպի Մայր Տաճար, ժողովրդի բացված հունի միջով։ Հնչում է «Հրաշափառ»-ի հանդիսավոր մեղեդին և Ամենայն Հայոց Հայրապետը առաջնորդվում է Մայր Տաճար՝ ամպհովանու ներքո։ Մեր թե մանուկ, կին թե երիտասարդ, բոլորն անխտիր, իրենց հայացքները սևեռել են սիրեցյալ Հայրապետին, որն օրհնություն է սփռում Իր շուրջ։

Երկու դասերում տեղ են գրավել պատգամավորները, հյուրերն ու տեխտավորները, ինչպես նաև պաշտոնական անձնավորություններ։ Մայր Տաճարը լիքն է հավատացյալներով։

Սկսվել է հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագը։ Վեհափառ Հայրապետին սպասարկում են Տ. Բարգեն և Տ. Կոմիտաս եպիսկոպոսները, Տ. Բարգեն, Տ. Եղիշե, Տ. Մեսրոպ վարդապետները, Տ. Գյուտ աբեղան և ողջ սարկավագների խումբը։

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. *—Հոկտեմբերի 19-ի և նոյեմբերի 10-ի կիրակիները, հայրապետական սուրբ պատարագի ընթացքում, Վեհափառ Հայրապետը կատարեց եպիսկոպոսական ձեռնադրություններ։ Հոկտեմբերի 19-ին եպիսկոպոս ձեռնադրվեց Իրաքի հայոց առաջնորդ հոգեշնորհ Տ. Զգոն ծայրագույն վարդապետ Տեր-Հակոբյանը, իսկ նոյեմբերի 10-ին՝ հոգեշնորհ Տ. Գնել ծայրագույն վարդապետ Ճերեճյանը։*

Հոկտեմբերի 18-ի և նոյեմբերի 9-ի շաբաթ օրերը կատարվեց նորընծաների «ընտրություն և ուխտադրություն» ըստ սահմանի Հայաստանեայց Եկեղեցւոյ։ Իսկ հոկտեմբերի 19-ի և նոյեմբերի 10-ի կիրակի օրերը Մայր Տաճարում կատարվեցին ձեռնադրությունները, Վեհափառ Հայրապետի շնորհաբաշխությամբ։ Հանդիսությանց արարողապետ-խարտավիլակն էր գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը։

«Ողջույն»-ից առաջ Վեհափառ Հայրապետը կատարում է օծման կարգը, որը լրումն է և պսակը եպիսկոպոսական ձեռնադրության։ Վեհափառ Հայրապետի Ս. Աջով օծվում են նվիրյալների ճակատն ու բութ մատը և օրհնությամբ տրվում է նրանց եպիսկոպոսական գավազան, մատանի և Ս. Ավետարան։

Ավարտվում է եպիսկոպոսական ձեռնադրության և օծման իրապես խորհրդավոր և հոգեպարար արարողությունը։

Հոկտեմբերի 19-ին, «Հայր մեր»-ի ժամանակ, քարոզում է Վեհափառ Հայրապետը.

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»:
«Խորհուրդ Յեռաձայն Հաւատոյ»:
(ՍԱՂՄՈՍ ԼԹ 11)

Սաղմոսերգուի այս շատ պարզ և կարճ խոսքին մենք կնավատանք ամբողջապես, իր լրիվ իմաստով: Այսինքն թե, ամեն խորհուրդ, ամեն իմաստ, որ աստվածային է, կմնա հավիտյան և կդառնա մեր մարդկային տկար մարմնույն առաջնորդ, ուժ և պատվեն և ստեղծագործող ոգի և հավիտենականությունը, անմահությունը պատճառող հանապարհ: Մենք կնավատանք, որ ամեն բան անցավոր է մարդկային կյանքին մեջ, բայց Աստուծո խոսքն է, որ կմնա հավիտյան և այն ամենը, ինչ որ ստեղծված է Աստուծո խոսքով և Աստուծո շնորհներով:

Սիրելի՛ հավատացյալներ.

Քանի մը ամիս առաջ Վեհարան ներկայացավ և Մեզ մոտ եկավ ծերունի հայ մը, բնիկ գաւառցի, մոտ 80 տարեկան: Ան դողդողալով, երկչոտությամբ և երկյուղածությամբ մոտեցավ Մեզ, գրպանեն հանեց փոքրիկ մետաղ դրամի նման տարեկա մը, գայն հանձնեց Մեզ ըսելով. «Այս ոսկյա մեն փոքր մոտոնգ մնացել է իմ մեծ մորից և ես նվիրում եմ այն Ս. էջմիածնին»: Սերունդն կրսեր, թե ինքը կնիշեր, ինչպես իր մեծ մայրը, Գարսի մեջ, իր ճակատեն կկախեր այդ ոսկե նշանը իբրև զարդ: Ոսկյա շքանշան մը էր այդ. մեկ երեսին վրա կար Ս. Գրիգոր Լուսավորչի պատկերը Աթոռին վրա նստած փառավոր կերպով, և ներքեւը թվական մը՝ 1558. ուղիղ 400 տարի առաջ պատրաստված: Իսկ մյուս երեսին վրա կար գեղեցիկ փորագրված Ս. էջմիածնի Տաճարի նկարը և վերեւը գրված՝ «Էջ Միածինն ի Հօրէ անեղ զօրութեամբ»:

Անա, սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ, այն խորհուրդը, որ մեր ժողովուրդի կյանքին մեջ կա ու կմնա հավիտյան: Պատմաբանները գրեթե կզարմանան, սիրելի՛ հավատացյալներ, թե ինչպես այսքան դրժբախտ և ողբերգական պատմութենեն մը հետո հայ ժողովուրդը տակավին կա ու կապրի, և ոչ միայն կապրի, այլ մոխիրներեն վերածնած, նոր ուժերով իր նոր կյանքը կկառուցանե իր սեփական Հայրենիքին մեջ ու կկազմակերպե իր հոգևոր և մշակութային կյանքը, և վերստին կգտնվի ստեղծագործելու ճանապարհին վրա: Արևմտյան լեզվաբան մը, անցյալ դարու վերջերուն, հայ լեզվի մասին խոսելով, կրսեր, ի նպատակություն մեզ անշուշտ. «Հայերեն լեզուն այնքան գեղեցիկ է և վեհ, որ եթե նույնիսկ պան մը հայ ժողովուրդը բնաջնջվեր աշխարհի վրայեն, պետք է նոր ժողովուրդ մը ստեղծվեր, որպեսզի այս լեզվով խոսի»: Նույն բանը, սիրելի՛ հավատացյալներ, կրնանք ըսել և պետք է ըսենք Ս. էջմիածնի մասին: Ասված մի՛ տրասցե, եթե մենք չըլլայինք, վստահ եմ, որ Աստված նոր ժողովուրդ մը պիտի ստեղծեր էջմիածնի փառքին համար, որովհետև էջմիածինը զուտ ազգային նշանակություն մը չունի միայն, այլ իսկապես ան քրիստոնեության սյուն մըն է նաև ամբողջ աշխարհի համար: Այսպիսի նշանարյան տաճարներ քիչ կան այսօր կանգուն իրենց լրիվ փառքին մեջ: Բայց Ս. էջմիածինը, քրիստոնեության այս սյունը, է նաև վեմը հայ ժողովուրդի հավատքին, ապավեներ անոր և գրավականը ապագայի գոյատևման: Անա թե ինչո՞ւ տրտաստեմանի մեջ մեր եկեղեցիեն ներս ծայր ված անիմաստ ու վնասարեր տագնապի հետևանքով Մենք ոչ միայն չենք հուսահատիր, ոչ միայն չենք կրնար տկարանալ, ոչ միայն կպահենք մեր ամբողջական լավատեսությունը, այլ Ս. էջմիածնի զորությամբ կգտնենք զՄեզ երբեմն ավելի զորավոր: Մեր ամբողջ տարածաշրջանի հոգևորականությունը, մանավանդ Կիլիկիոյ, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսոյ նվիրապետական Աթոռներով, մեր եպիսկոպոսներով, վարդապետներով, մեր քաջարի քահանա հայրերով և տրտաստեմանի մեր ամբողջ հավատացյալ ժողովուրդը, կնավատանք, թե պիտի հաղթանակենք և Ս. էջմիածինը պիտի մնա անսասան, ծաղկյալ, շեն ու հզոր, այժմ և հավիտյան:

Ինչպես Պողոս առաքյալը կրսե իր առաքելության սուրբ հանապարհի վրա՝ «ես աշխարհը Ավետարանով լեցուցի». Մենք ալ Մեր խոսքով ու գործով Հայոց Աշխարհը և հայոց հոգիները Ս. էջմիածնով պիտի լեցնենք, զի «Էջ Միածինն ի Հօրէ անեղ զօրութեամբ»:

Այդ անեղ զորութենեն շնորհներ կստանանք մենք տևական կերպով, ամեն մեկս մեր չափով. ինչքան բնաիր են անոնները մեր հոգիներուն, այնքան ավելի արժանի կդառնան անոնք այդ անեղ զորութենեն հառագայթ մը, լույս մը ընդունելու: Եվ այդ ավշությունը մանավանդ տեղի կունենա սրբազան բացառիկ տաճարներով, հատուկ աղոթքներով, ծիսական կերպերով, համաձայն մեր Ս. եկեղեցվո կանոններուն և պավանդություններուն:

Անա այդպիսի պահ մը ապրեցանք բոլորս այսօր, երբ Աստուծո ողորմությամբ Մենք Մեր քահանայապետական իշխանությամբ եպիսկոպոս ձեռնադրեցինք և օծեցինք Բաղդադի առաջնորդ Զգոն ծայրագույն վարդապետը, որ այսօրվընե սկսյալ եպիս-

կոպոս է, այսինքն այսուհետև ունի լրությունը Հայ եկեղեցվո իշխանության, հոգեվոր իշխանության: Զգոն սրբազանը այսօր Մեր, ձեր բոլորի ներկայությամբ և Մեր աղոթքներով և Մեր միջնորդությամբ ընդունեց իր հոգիին մեջ, իր սրտին մեջ մասնիկ մը, շող մը այդ անեղ զորությունեն: Վստահ

դության գործին: Զգոն սրբազանը նանչցած ենք նաև Մենք իբրև հավատարիմ Մայր Աթոռ Ս. էջմիածնին և մեր վերածնած Մայր Հայրենիքին: Մենք, հայ հոգևորականներս, երբեմ մեր սուրբ հավատքը չենք բաժներ այն սուրբ տեղեն, ուր կգտնվի այդ հավատքին վեմը՝ Ս. էջմիածինը: Եվ երբեմ այդ վեմը

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՍԵՂԱՆԻ ԱՌԱՋ

եղեմ, սիրելինե՛ր, որ Զգոն սրբազանը այսօրվընե սկսյալ նոր մարդ մը է և ինքը, վստահ ենք, թե կգա այդ: Զգոն եպիսկոպոսը Մենք կճանչնանք իբրև հավատավոր և բարեջան սպասավոր Եկեղեցիին ու ժողովուրդին: Վստահ եղեմ, թե Զգոն եպիսկոպոսը վերածնած նոր ուսերով, պիտի նվիրվի մեր սուրբ գործին, մեր Եկեղեցվո շինության, մեր ժողովուրդի հոգևոր լուսավորության և առաջնոր-

չենք կրնար բաժնել այն հողեն, որուն վրա բարձրացած է, որուն վրա կանգուն է Ան մոտ 2000 տարիներե ի վեր: Մեր Հայրենիքի հողը սրբազան հող մը է մեր Ս. Եկեղեցվո աղոթքներով, մեր սուրբ հայրերու կյանքով ու գործով ու նահատակությամբ և մեր ժողովուրդի մարդասիրությամբ: Մեր Հայրենի Հողը սրբազան է նաև բոլոր այն սուրբ տաճարներով, որ հայ ժողովուրդի

ճանճարը կանգնեցուցած է այս սուրբգրա-կան երկրին մեջ, Արարատի սառոտին: Ա-ճա թե ինչո՞ւ մեր քրիստոնեական և հայկա-կան գիտակցության ոգեն Հայաստանյայց Եկեղեցին, այսինքն հայաստանցիներու Եկեղեցին, Հայաստան երկիրը և անոր սրտին մեջ բարձրացած Մայր Տաճար Ս. Էջմիա-ծինը, մեկ ճոգեոր ամբողջություն կկազմեն:

կերպով կապված այս Ս. Տաճարին և այս Սրբազան Հողին:

Սիրելի՛ սրբազան եղբայր. այս մտա-ծումներով և զգացումներով Ձեզ կշնորհա-վորենք և կմաղթենք, որ իրոք Դուք ընտիր անոր մը դառնաք, ինչպես Պողոս առաք-յալն էր և ընդունիք շնորհներ Ս. Հոգվույն և Ձեր գործունեության մեջ այսուհետև բոր-

ՄԵՍՍԱՆԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆԴՐԻՆ
(Գործ՝ քանդակագործ Ն. Նիկողոսյանի,
նվիրված Վենետիկ Հայրապետին, Իր հորելյանի տոթիվ):

Մենք մեր քրիստոնեությունը կնոչակենք Ս. Էջմիածնով: Մեր սուրբ հավատքը անհայրենիք չէ, ոչ ալ թափառական: Ժամանակավոր կերպով պանդուխտ կրնան ըլլալ մեր գավակներեն ոմանք, և սակայն իրենց սուրբ հավատքով անոնք կմնան անբակտելի

բոքեք հավատքին ճուրը, անեղ զորությամբ, և նույնիսկ, եթե արտասահմանի կյանքին մեջ, հանախ դժվարին պայմաններու մեջ պատվարներու հանդիպի՛ր, թումբերու առաջ գտնվիք, աներկյուղ առաջ բերացեք, վասնզի, Ս. Էջմիածնի զորությունը Ձեր սրտին մեջ

կա, և երբ Ս. Էջմիածնով զինված եմ Դուք, ոչ մեկ երկյուղ պիտի չունենամ, նույնիսկ երբ անցավոր կերպով դժվարություններու առաջ գտնվիմ: Անա մենք այստեղ կանք և կմնանք բոլորս Ձեզի հետ: Դուք այ մնացեք հավատարիմ Ձեր ուխտին, հավատարիմ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, մեր վերածնած ժողովուրդին, մեր Մայր Հողին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕԹՈՒՄ Է Տ. ԶԳՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԱԿԱՏԸ

«Աստուածային և երկնային շնորհ» եղիցի ընդ Ձեզ այժմ և հավիտյանս, ամեն:

Եվ դո՛ւք, սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ, արտաստմանի պատգամավորներ և նյուրեր, և դո՛ւք, հայաստանցի եղբայրներ և քույրեր, Մեզ հետ միասին աղոթեցե՛ք առ բարձրյալն Աստված, որպեսզի Տերը իր զորությամբ պահե-պահպանե հավիտյան հայ ժողովուրդի լույս հավատքի Տաճար Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, մեր Ս. եկեղեցին, մեր ամբողջ ժողովուրդը, մեր Մայր Հայրենիքը շեն, երջանիկ, խաղաղության մեջ: Խաղաղությո՛ւն ոչ միայն մեր Աշխարհին, այլ նաև խաղաղությո՛ւն հեռավորաց և մերձավորաց և խաղաղությո՛ւն համայն աշխարհին, եղբայրությո՛ւն բոլոր եկեղեցիներուն և բոլոր ժողովուրդներուն, այժմ և հավիտյան, ամեն»:

Հավարտ սուրբ պատարագի դարձյալ Թափոր է կազմվում, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վեհարան, Հավատացյալ ժողովուրդը խուռներամ հետևում է իր սիրեցյալ Հայրապետին, երգվում են շարա-

կանները և նրանց դաշն հնչյունների տակ բոլորը ներս են մտնում Սաղկյա դահլիճ։

Վեհափառ Հայրապետը բազմել է Իր Գահին։ Հանդիսավոր լռություն է։ Բոլորը սպասողական անհամբեր վիճակ են ապրում։ Խոսում է Նորին Ս. Օծությունը և սրտի գոհունակությամբ հայտնում, որ Իր եռամյա գործունեության ընթացքին քիչ չի եղել թիմը հոգով ազնիվ ազգայիններ, որոնք իրենց բարոյական և նյութական մեծ աջակցությամբ սատարել են Մայր Աթոռի վերածնդյան և շինարար գործին։ Մայր Աթոռը շնորհակալությամբ է ընդունել նրանց նպաստը և հզել է նրանց իր օրհնությունները և երբեմն էլ պարգևատրումները։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը կանգառնելով նյութաբանակ մեր ազգայիններից մեծարգո պր. Երվանդ Աղաճանյանի կյանքի և գործունեության վրա, հանգամանորեն դրվատեց նրա եռանդուն և ինքնազոհ ծառայությունները Հայաստանյայց Եկեղեցուն ընդհանրապես և ի մասնավորի Մայր Աթոռ Ս. Էջմիածնին։

Մայր Աթոռը արդիական տպարանով օժտելու սուրբ ձեռնարկը ինքնին հրաշալի է, սակայն ձեռք բերված հաջողությունները ավելի քան մեծ են ու նվիրական։ Այնուհետև Վեհափառ Հայրապետը, շարունակելով Իր դրվատանքի ջերմագին խոսքերը, ի մասնավորի ասաց.

«Մեծարգո պր. Աղաճանյան, սիրելի՛ և հարազատ զավակը Մեր.

Մենք կտեսնենք Ձեր անձնուրաց նվիրվածությունը, ենեռանոց հավատարմությունը դեպի մեր պապերու խորունկ հավատի լուսեղեն կեդրոն Ս. Էջմիածինը և դեպի ժողովուրդը մեր։ Մենք զՁեզ կայլունենք մեծ գոհունակությամբ, հոգևին կգնահատենք Ձեր գործը և կոտանք Ձեզ Մեր հայրապետական ողջույնը և կօրհնենք զՁեզ և համայն ամերիկահայ եկեղեցանվեր զավակները Մեր»։

Ապա բուռն ծափահարությունների տակ Նորին Ս. Օծությունը մեծարգո պր. Աղաճանյանի կուրծքը զարդարում է Ս. Լուսավորչի Ա կարգի ադամանդակուռ ոսկյա շքանշանով և հայրապետական ջերմ համբույր դրոշմում ճակատին։

Հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը ընթերցում է հայրապետական սրբատառ կոնդակը.

«ՄԵԾԱՊԱՏՈՒ ՏԻՐ ԵՐՈՒԱՆԴ ԱՂԱՃԱՆՅԱՆԻՆ, ՀԱՐԱՁԱՅ ՈՐԴՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ, ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՇՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ։

Հայրապետական ողջո՛ւյն և օրհնությո՛ւն Ձեզ, սիրելի՛ և հարազատ զավակ Մեր։

Փա՛ռք Տիրոջ, որ եկավ անա ժամը, երբ ուրախությունը ունենք Ձեզ հղելու այս կոնդակը Ձեր եկեղեցաշեն մեծ գործի լրումին առթիվ։

Փա՛ռք Տիրոջը, որ շնորհիվ Ամերիկայի Միացյալ Նահանգաց Մեր թեմի առաջնորդարանին կողմին Ձեր նախագահությամբ կազմված հանձնախումբին, փառավոր հաջողությամբ պսակվեցավ Ս. Էջմիածինը արդիական ապարանով մը օժտելու ծրագիրը։ Ձեր հանգանակած պատկառելի գումարով արդեն ստացված են մեքենաները և շուտով Մայր Աթոռի տպարանը կսկսի գործել։

Մեզ քաջ ծանոթ է Ձեր անձնախրնքացորեն եռանդուն աշխատանքը մեր սուրբ գործին իրականացման ի խնդիր։ Ձեր ծառայությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնին՝ փայլուն օրինակ մը պիտի մնա անձնվիրության, կազմակերպչական ոգիի և հայ հավատավոր մարդու գիտակցության։

Այսուհետև, հայրենի պայծառ երկնքի տակ Միածնաէջ Մայր Հայաստանի սրբազան կամարներուն ներքև, Մենք և Մեր հայրենակիցները և հայ հավատացյալ ժողովուրդը հպարտությամբ և երախտագիտությամբ պիտի հիշենք անունը Խարբերդի բարեհամբավ Աղաճանյան գերդաստանի հարազատ զավակ Երվանդի։ Դուք մեր Ս. Եկեղեցվո պարծանքն եք և Մեր ուրախությունը։

«Գիտասցիք, զի ի Տեառնէ առնուցուք զհատուցումն ժառանգութեան ձերոյ, քանզի Տեառն Քրիստոսի ծառայէք» (Կողոս. Գ 24)։

Ի գնահատումն Ձեր եկեղեցաշեն մեծ աշխատանքին, սույն հայրապետական կոնդակով կպարգևատրենք Ձեզ Ս. Գրիգոր Լուսավորչի Առաջին կարգի ադամանդակուռ ոսկյա շքանշանով և կաղոթենք, որ Տերը Ձեզ շնորհեն քաջառողջ երկար տարիներ, Ձեր բարի գործոց լիակատար հաջողությամբ, խաղաղությամբ ու խնդությամբ։

«Ողջ լերուք, զօրացեալ Ս. Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ»։

Հուզիչ է պահը բոլորի համար էլ, սակայն, շատ հասկանալի պատճառով, խորապես հուզված է շքանշանակիրը ինքը և գրեթե դողդոջուն ձայնով հայտնում է իր անսահման երախտագիտությունը իրեն տրված բարձրագույն պատվի համար։ Իր հաջողությունները Մայր Աթոռը լավագույն տպարանով օժտելու գործում խոնարհաբար վերագրելով համայն ամերիկահայության, հայտնում է, որ հայրապետական այս բարձր պարգևն ընդունում է իբրև պարգևը հանուր ամերիկահայ եկեղեցասեր գաղութի։

Այնուհետև Նորին Ս. Օծությունը հանդիսավոր կերպով հայտարարում է ի բացակայության պարգևատրումը Ս. Լուսավորչի Ա կարգի ադամանդակուռ ոսկյա շքանշանով մեծարգո պարոնայք Գևորգ Նսայանի և Սարգիս Տիարպեքիրյանի, հանգամանորեն ներկայացնելով նրանց նյութական և բարոյական ծառայությունները Հայաստանյայց Եկեղեցու շինության և պայծառության սուրբ գործում։

***

Հոկտեմբերի 21-ին, երեքշաբթի, առավոտյան ժամը 12-ին, Հոգևոր Ճեմարանի դահլիճում, պրոֆ.-դոկտ. Բ. Առաքելյանը պատգամավորների համար զեկուցում է կարդում վերջին տարիների ընթացքում Հայաստանում կատարված պեղումների արդյունքների մասին։ Զեկուցումը լսվում է հետաքրքրությամբ՝ նյութի խիստ շահեկանության, մեր հինավուրց Հայրենիքի և ստեղծագործ ժողովրդի հեռավոր անցյալի հարուստ մշակութային ապժեքները բավարարելու ներկայացնելու տեսակետից։

ՀՐԱԺԵՇՏԻ ՃՇԵԿԵՐՈՒԹԻՒՆ — Հոբելյանական օրերը անցնում էին հանդեսի, հետաքրքիր, բովանդակալից, հայրենասիրական և եկեղեցասիրական խոր ապրումներով և անմոռաց տպավորություններով լեցուն, բայց արագաթռիչ, երազանման։

Մոտենում էր հրաժեշտի տխուր ժամը։ Ամեն բաժանում իր մեջ ունի անանուն մի թախիծ։

Վեհափառ Հայրապետը ցանկացավ վերջին անգամ ևս Մայր Աթոռում վանական սեղանի շուրջը հավաքել Իր որդիներին՝ հոգևորական և աշխարհական բոլոր պատգամավորներին, հյուրերին, նրանց տալու հայրական Իր վերջին պատգամը և բարի ճանապարհ մաղթելու։

Հինգշաբթի օր, հոկտեմբերի 28-ին, ի պատիվ պատգամավորների, Մայր Աթոռում կազմակերպվեց հրաժեշտի ընդունելություն։

Հրաժեշտի սեղանը օրհնեց Վեհափառ Հայրապետը։ Մի անգամ ևս սեղանների շուրջը ստեղծվեց հայրենասիրական տաքուկ մթնոլորտ։ Հրաժեշտի, շնորհակալության և երախտագիտության անկեղծ ու ջերմ խոսքեր ասացին ներկաներից շատերը, որոնց թվում գեղաշնորհ Տ. Խաչ արքեպիսկոպոս Աջապահյանը և Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը, գեղաշնորհ Տ. Սերովբե և Տ. Բարգեն սրբազանները, հոգեշնորհ Տ. Գյուտ և Տ. Զավեն վարդապետները, պարոնայք Երվանդ Հյուսիսյանը, Սարգիս Քյուրքճյանը, մեր Սեդրակ Քարյանը, մեր Հրաչ Սեդրակյանը, ճարտարապետ Եդվարդ Ուրուճյանը, Իսահակ Թասխելյանը, Գևորգ Ավշյանը և ուրիշներ։ Մայր Աթոռի սարկավագները իրենց երգերով և արտասանություններով իրենց մասնակցությունը բերեցին հրաժեշտի այս ընդունելության։

Վերջում խոսք առավ Վեհափառ Հայրապետը, հանրագումարի բերելով հոբելյանական այս հանդիսությունների երջանիկ առիթով արտահայտված բովանդակ հայ ժողովրդի էջմիածնասիրական անայլայլ, շինարար և խանդավառ զգացմունքներն ու ապրումները, բաղձանքներն ու հույսերը, շնորհակալություն հայտնեց դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, դեպի Ամենայն Հայոց Հայրապետությունը և դեպի մեր պանծալի Հայրենիքը, բոլոր պատգամավորների ունեցած ջերմ սիրո, խորին երախտագիտության և ազգային հպարտության զգացմունքների համար, որհնեց նրանց վերադարձի ճանապարհը, թելադրելով որ բոլոր պատգամավորները, որպես բարի կուսակներ Հայոց Եկեղեցի և Ս. Էջմիածնի, հանդիսավոր ու խանդավառ խորհրդիներ տանեն Ափշուրքի հայության, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գրեթե ամենայն Հայաստանների և Հայրենիքի հայ ժողովրդի ազգությունի մեջ։

Վեհափառ Հայրապետի ուշադրությամբ ուրախության շինիչ արդյունքը կար այդ բոլորին, երբ օրհնում էր Իր որդիների ճանապարհը։

Հրաժեշտի այս շատ շինիչ, անմոռաց սեղանը վերջացավ Վեհափառ Հայրապետի պահպանիչով և խմբովին երգված «Հայր մեր»-ով։

Հաջորդ օրերին պատգամավորները սկսեցին հրաժեշտ առնել Մայր Աթոռից, Վեհափառ Հայրապետից և մեկնել։

Հոբելյանական օրերին, բոլոր այն պահերին, երբ պատգամավորներն ու հյուրերը պաշտոնական արարողություններից ազատ էին, ամեն հնարավորություն ունեցան իրենց ժամանակն անցկացնելու շահեկան և հետաքրքիր այցելություններով և ուխտագնացությամբ դեպի մեր բազմադարյան Հայրենիքի հնամյա ու նվիրական վանքերն ու եկեղեցիները, բնության հիասքանչ գեղեցկությունները, հայրենի տեսարժան քաղաքներն ու գյուղերը, մեր ուսումնական ու մշակութային հիմնարկները։ Նրանք կարոտակեզ շրթներով և ծնրադիր համբուրում էին մեր սուրբ վանքերի մամռապատ քարերը, իջնում Ս. Խոր Վիրապի ավանդական քարայրը, հիանում Ս. Գեղարդի վանքի զարմանալի վիմաքար տաճարներով, հրճվում Ս. Հաղարծինի վանքով և շրջապատի չքնաղ ու անկարագրելի գեղեցկությամբ, զմայլվում սիրելի Սևանով, մշտա-

ժպիտ Արագածով և ապանդուխտ Արարատով... Անսահման հպարտությամբ և երջանկավետ հուզումներով էր համակվում նրանց հոգին Հայրենիքի շքեղ վերելքի, Երևանի սրընթաց բարգավաճման, ժողովրդի օրաստ բարեփոխվող առօրյային ականատես լինելով։ Մասնավորապես նրանց հոգեկան խորին հրճվանք է պատճառում Հայրենիքի նվաճումների, որոնք մեր փոքրիկ երկրին և մեր լավագույն մարդկանց համաշխարհային նոր ճանաչում ու փառք են բերում։ Այցելելով Գիտությունների ակադեմիան, Պետական համալսարանը, Բժշկական և այլ ինստիտուտներ, Հանրային գրադարանը և մանավանդ Պետական մատենադարանը, թանգարանները, նրանց սիրտը լցվում էր

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՍՏՈՒՄ Է Ց. ԳՆԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԱԿԱՍԸ

հարուստ մշակութային կյանքը։ Ո՞ր ճշմարիտ հայը, մանավանդ տարագիր պանդուխտ հայը, իրեն անհունորեն երջանիկ պիտի չզգա ի տես գիտական, ուսումնական և մշակութային բազմաթիվ այն հաստատությունների և նրանց մեջ ուռճացող ստեղծագործ ու մեղվաբան աշխատանքի և այն վիթխարի խանդավառ զգացումներով և պայծառ լավատեսությամբ դեպի մեր տոհմիկ գիտության, գեղարվեստի և մշակույթի ապագան։

Պատգամավորներն ու հյուրերը ներկա եղան նաև օպերային և թատերական ներկայացումների, զանազան համերգների և ապրեցին գեղարվեստական խոր հաճույք՝

լավագույնս գնահատելով իրենց տեսածներն ու լսածները։

Պատգամավորներն ու հյուրերը զանազան առիթներով սիրալիր հանդիպումներ ունեցան Հայրենիքի անվանի գիտնականների և արվեստագետների ու գրողների հետ։ Այս հանդիպումները նույնպես երջանկությամբ են համակում նրանց հոգիները։

Հարգարժան պատգամավորները, հյուրերն ու ուխտավորները ներկա եղան Մայր Աթոռում կատարված բոլոր եկեղեցական ու հոբելյանական արարողություններին, բարձր գոհունակությամբ ականատես եղան և հաստատեցին Մայր Աթոռում ձեռք բերված նվաճումները շինարարական, վարչական-կազմակերպչական, հոգևոր և բարոյական ասպարեզներում Նորին Վեհափառության հոգեռանդ ջանասիրության, մշտարթուն հսկողության շնորհիվ։ Բոլորն էլ այցելեցին Հոգևոր Ճեմարան, ներկա եղան հանդեսներին, դասավանդություններին, ծանոթացան դասախոսական կազմի և ուսանողության հետ, դիտեցին ննջարանները, ճաշարանը, հանգամանորեն հետաքրքրվեցին Ճեմարանի ուսանողական և դաստիարակչական կյանքով, նրանց վարքով և կենցաղով։ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը պատվարժան պատգամավորների, հյուրերի և ուխտավորների վրա թողել է լավագույն տպավորություններ և այնտեղ տարված աշխատանքը արժանացել է բոլորի գնահատանքին և գովեստի։

Պատգամավորներն ու հյուրերը ծանոթացան նաև Մայր Աթոռի միաբաններին և նրանց կյանքին։ Բոլորն էլ միահամուռ հաստատեցին նրանց եռանդուն աշխատասիրությունը, հավատարմությունն ու անձնվիրությունը Հանուն Մայր Աթոռի վերաշինության և Հայաստանյայց Եկեղեցու հաստատության։

Պատգամավորների և հյուրերի ամենալավագույն տպավորությունների և հույզերի ոուն ակունքներն հանդիսացան Մայր Տաճարը իր Իշման Ս. և աստվածակառույց Սեղանով և Ամենայն Հայոց աստվածարյալ Հայրապետը՝ Իր վեհ հոգով և ազնվավեր գործունեությամբ, Իր եկեղեցաշեն, շինարարական, վարչական տաղանդով, Իր անձի վեհափառ հմայքով, Իր լայնասիրտ հյուրընկալությամբ, գուրգուրալից և ազնվական ժպիտով...։

Նորին Վեհափառության ծննդյան հինգսամյա և գահակալության երրորդ տարեդարձի հոբելյանական տոնակատարությունները անցան խանդավառ և սրտառուչ իրադրությանց մեջ։

Վեհափառ Հայրապետի հոբելյանը պատմական խոշոր իրադարձություն է մեր ազգային և եկեղեցական կյանքում։

Բովանդակ հայ ժողովրդի սրտագին մաղթանքն այն է, որ երկա՜ր, երկա՜ր տարիներ, Վեհափառ հոբելյարի սուրբ ձեռքերում, մշտ ծաղկած մնա ազգաւազան իշխանությեան մերոյ Հայրապետին։

ՁՈՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Խոսք՝ ՆՈՒՐԱ՝ ՊԱՌՅԱՆԻ

Երաժշտություն՝ ԽՈՐԵՆ ՄՈՍԵՍԱՆՋՅԱՆԻ

ԴԱՆԴԱՂ, ՈԳԵՎՈՐՎԱԾ

Ձայնք I — Օրհ-նեա՜լ թող լի - նի եր-կուն-մն այն բա - րի. ո - ղով հայ ազ-

Ձայնք II — Օրհ-նեա՜լ թող լի - նի եր-կուն-մն այն բա - րի, ո - ղով հայ ազ-

Ալտ I — Օրհ-նեա՜լ թող լի - նի եր-կուն-մն այն բա - րի. ո - ղով հայ ազ-

Ալտ II — Օրհ-նեա՜լ թող լի - նի եր-կուն-մն այն բա - րի. ո - ղով հայ ազ -

- զին մայ - ր-ը կա-թո - ղին հեզ ըն - ծա բե - ռեց սր - տով սի - ռա զեղ.

- զին մայ - ր-ը կա-թո - ղին հեզ ըն - ծա բե - ռեց սր - տով սի - ռա զեղ.

- զին մայ - ր-ը կա-թո - ղին հեզ ըն - ծա բե - ռեց սր - տով սի - ռա - զեղ.

- զին մայ - ր-ը կա-թո ղին հեզ ըն - ծա բե - ռեց սր - տով սի - ռա - զեղ.

ԱՇԽՈՒՅԺ, ՈԳԵՎՈՐՎԱԾ

այս տո - նա - կան վեհ հան-դե - սին ցըն-ծու - թյուն է մեր սր -տե - ռում

այս տո - նա - կան վեհ հան-դե - սին ցըն-ծու - թյուն է մեր սր -տե - ռում

այս տո - նա - կան վեհ հան-դե - սին ցըն-ծու - թյուն է մեր սր -տե - ռում

այս տո - նա - կան վեհ հան-դե - սին ցըն-ծու - թյուն է մեր սր -տե - ռում


եր - կաբ ո - բեր Հայ - բա - պե - տին ողջ նոգ-վով ենք բա - բե - մաղ - թում
եր - կաբ ո - բեր Հայ - բա - պե - տին ողջ նոգ-վով ենք բա - բե - մաղ - թում
եր - կաբ ո - բեր Հայ բա - պե - տին ողջ նոգ - վով ենք բա բե - մաղ - թում
եր - կաբ ո - բեր Հայ - բա - պե - տին ողջ նոգ-վով ենք բա - բե - մաղ - թում
մե - ռա-նա-թույր իր սուրբ ա - ջին, մեր ազ-գա-զան ուխտն ենք թե - բում
մե - ռա -նա- թույր իր սուրբ ա - ջին, մեր ազ-գա-զան ուխտն ենք թե - բում
մե - ռա-նա-թույր իր սուրբ ա - ջին, մեր ազ-գա-զան ուխտն ենք թե - բում
rit.
հեզկյա՜նք, մաղ - թում կբ-կին հեզ կյա՜նք, հեզ փա՜ռք նա վեհ փա՜ռք, փա՜ռք:
ա մաղ - թում ենք, մաղ - թում կբ-կին հեզ կյա՜նք, հեզ փա՜ռք նա վեհ փա՜ռք, փա՜ռք:
ա մաղ- թում ենք, մաղ - թում կբ-կին հեզ կյա՜նք, հեզ փա՜ռք նա վեհ փա՜ռք, փա՜ռք:
մաղ - թում կբ - կին հեզ կյա՜նք, հեզ փա՜ռք նա վեհ փա՜ռք, փա՜ռք:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ Ի ՊԱՏԻՎ ՀՈՐԵԼՅԱՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ

Հոկտեմբերի 20-ին, երկուշաբթի օրը, երեկոյան ժամը 7-ին, Երևանի «Հայաստան» հյուրանոցի շքեղ ճաշասրահում, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը Հայ Եկեղեցու գործերի խորհրդի անունից կազմակերպել էր պաշտոնական ընդունելություն Նորին Ս. Օծությունն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց հայրենասեր Հայրապետի պատվին, նրա ծննդյան հիսնամյա հոբելյանի և գահակալության երրորդ տարեդարձի բարեբաստիկ առիթով։

Ընդունելությանը ներկա էին հոբելյանական հանդիսություններին մասնակցող արտասահմանյան հոգևորական և աշխարհական բոլոր պատգամավորներն ու հյուրերը, ներքին թեմերի և թեմական խորհուրդների անդամներ, արվեստի, գրականության, մամուլի ներկայացուցիչներ և այլ պաշտոնական անձնավորություններ, ավելի քան 150 հրավիրյալներ։

Հոբելյանական սեղանների շուրջ ստեղծվել էր ջերմ ու սրտագին մթնոլորտ։ Սեղանը ղեկավարում էր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը։ Ավելի քան սրտահույզ և խոր հայրենասիրական էր շրջանակը։

Առաջարկվում են սրտագին կենացներ Հայրենի կառավարության է՛լ ավելի հզորության և բարգավաճման, հայ շինարար ժողովրդի պայծառ ապագայի, Վեհափառ Հայրապետի թանկագին կենաց արևշատության, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պայծառության, աշխարհի խաղաղության և ժողովուրդների բարեկամության հաղթանակի համար։

Ընդունելության ժամանակ խանդավառ, հուզիչ ու հայրենասիրական ճառեր են խոսում Վեհափառ Հայրապետը, Խոր արքեպիսկոպոս Աչապահյանը, Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը, Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը, Զգոն եպիսկոպոս Տեր-Հակոբյանը, Բագրեն եպիսկոպոս Վարժապետյանը, բանաստեղծներ Վահե-Վահյանը, Անդրանիկ Ծառուկյանը, Սիլվա Կապտիկյանը, Գևորգ Էմինը, պատգամավորներ և հյուրեր պր. Նուպար Կյուպենկյանը, պր. Երվանդ Հյուսիսյանը, պր. Օգաբեն Սարյանը, պր. Արսեն Կիտուրը և ուրիշներ։

Ընդունելությանը իրենց փայլուն մասնակցությունը բերեցին երգերով գերաշնորհ Տ. Կոմիտաս սրբազանը, ժողովրդական արտիստ Շարա Տալյանը, վաստակավոր արտիստուհի Օֆելյա Համբարձումյանը, վաստակավոր արտիստներ Էդվարդ Բաղդասարյանը, Հովհաննես Բագալյանը և Թամարա Դեմուրյանը՝ իր ասմունքով։

Ավելի քան 3 ժամ տևող այս հաճելի սեղանը մի գաղջը առիթ եղավ մի անգամ ևս ապրելու Ս. Էջմիածնի խորհրդով, Վեհափառ Հայրապետի գործով, մեր պանծալի Հայրենիքի նվաճումներով և հայ ժողովրդի սիրով։



ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌԻԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ

Հոկտեմբերի 20-ին, Երկուշաբթի, երեկոյան ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետը Կառավարական Տան մեջ այցելություն տվեց Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Նախագահ պր. Ա. Քոչինյանին:

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին Իր ծննդյան հիսնամյակի ու դահակալության երրորդ տարեդարձի տոնակատարությանը մասնակցող արտասահմանյան հոգևորական և աշխարհական պատգամավորներ, որոնց թվում Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Տեղապահ ամենապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոս Աջապահյանը, թեմական առաջնորդներ և այլ աշխարհական ներկայացուցիչներ:

Ընդունելությանը ներկա էին նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Ս. Գասպարյանը, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի գործերի կառավարիչ պր. Դ. Վարդանյանը և պաշտոնական այլ անձինք:

Վեհափառ Հայրապետի և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Նախագահ պր. Ա. Քոչինյանի և պատգամավորների միջև տեղի ունեցավ սրտագին զրույց:

Վերջում Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար և հրաժեշտ առավ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Նախագահ պր. Ա. Քոչինյանից:

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

1958 թվականի հոկտեմբեր ամսի 16—23 օրերին Մայր Աթոռում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ և հանդիսավոր իրադրության մեջ, գումարվեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Եպիսկոպոսական խորհրդակցական ժողով։

Վեհափառ Հայրապետի բարեբաստիկ ծննդյան հիսնամյակի և գահակալության երրորդ տարեդարձի հոբելյանական հանդիսությունների առթիվ Մայր Աթոռում գումարված եպիսկոպոսական խորհրդակցական ժողովը քննության առավ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հետագա կազմակերպման և զարգացման հետ կապված մի շարք հրատապ և այժմեական հարցեր և ընդունեց համապատասխան որոշումներ։

Մայր Աթոռում գումարված Եպիսկոպոսական խորհրդակցական ժողովը ունեցավ հերթական 6 նիստ։

Եպիսկոպոսական խորհրդակցական ժողովին մասնակցում էին 14 բարձրաստիճան հոգևորականներ, որոնց թվում.

1) Կիլիկյան Աթոռի Կաթողիկոսական տեղապահ ամենապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոս Աջապահյան.

2) Եգիպտոսի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյան.

3) Հյուսիսային Ամերիկայի Հայոց Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սամբրե արքեպիսկոպոս Գալֆայան.

4) Մայր Աթոռի միաբան գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյան.

5) Գերագույն Հոգևոր խորհրդի ատենապետ և Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյան.

6) Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյան.

7) Եվրոպայի Հայոց Հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի առաջնորդ գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյան.

8) Գերագույն Հոգևոր խորհրդի անդամ գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյան.

9) Գերագույն Հոգևոր խորհրդի անդամ գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Ազնավուրյան.

10) Դամասկոսի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Շավարշ եպիսկոպոս Գուլյումճյան.

11) Հեռավոր Արևելքի Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյան.

12) Կալիֆոռնիայի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Բարգեն եպիսկոպոս Վարժապետյան.

13) Վրաստանի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյան.

14) Իրաքի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Զգոն եպիսկոպոս Տեր-Հակոբյան։

Մայր Աթոռում գումարված Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Եպիսկոպոսական խորհրդակցական ժողովի Ա նիստում կազմվեց և միաձայն հաստատվեց հետևյալ օրակարգը.

1) Վեհափառ Հայրապետի եռամյա գործունեության զեկուցագրի ընթերցում.

2) Ազգային-եկեղեցական Սահմանադրության նախագծի քննարկում.

3) Ազգային-եկեղեցական ժողովի գումարում.

4) Կիլիկյան Աթոռի տագնապ.

5) Երուսաղեմի հայոց Պատրիարքական Աթոռի կացություն և Եղիշե եպիսկոպոս Տերտերյանի հարց.

6) Հայ և քույր եկեղեցիների հարաբերության խնդիր.

7) Հայ եկեղեցու նոր սրբերի սրբացման կանոնների ուսումնասիրություն և հաստատում.

8) Աստվածաշնչի աշխարհաբար թարգմանության և տպագրության խնդիր.

9) Հայ եկեղեցական երաժշտության հրատարակության խնդիր.

10) Մաշտոցի վերանայում (պսակ, մկրտություն, թաղում).

Եպիսկոպոսական ժողովը քննության առավ օրակարգի բոլոր խնդիրները և ընդունեց համապատասխան որոշումներ.

Եպիսկոպոսական ժողովը իր Գ, Դ, և Ի հաջորդական նիստերի ընթացքում հանգամանորեն և հոգված առ հոգված քննարկեց Ազգային-եկեղեցական Սահմանադրության նախագիծը. Մի շարք փոփոխություններից և լրացումներից հետո վերասրբագրված նախագիծը ներկայացվեց Վեհափառ Հայրապետին.

Ազգային-եկեղեցական Սահմանադրության սույն վերանայված նախագիծը, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, կհղվի մեր նվիրապետական բոլոր Աթոռներին և թեմերին ի գիտություն և ի քննարկում, որից հետո Գերագույն Հոգևոր Խորհուրդը, ի նկատի առնելով եղած նոր առաջարկություններն ու դիտողությունները, կկազմի Սահմանադրության վերջնական նախագիծ՝ այն ներկայացնելու համար ի հաստատումն Ազգային-եկեղեցական սրբազան ժողովին, որ գումարվելու է 1960 թվականին.

Մայր Աթոռում գումարված Եպիսկոպոսական խորհրդակցական ժողովը, հոկտեմբերի 23-ին, իր Զ և վերջին նիստում, սպառելով օրակարգի բոլոր հարցերը, միաձայն ընդունեց հետևյալ հաղորդագրությունը.

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Մենք՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո սառագրյալ եպիսկոպոսներս, Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Սրբազնագույն Կաթողիկոսի ծննդյան ճիսնամյա ճոբելյանի և գահակալության երորդ տարեդարձի առիվ հավաքվելով Մայր Աթոռ Ս. Էջմիածին, սրտագին շնորհավորեցինք մեր Վեհափառ Հայրապետը, մասնակցեցանք կատարված փառավոր նանդիսությանց և հայտնեցինք մեր լավագույն բարեմաղթությունները Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի առնչատության, առողջության և գործոց հաջողության համար:

Մենք բոլորս մեծ ուրախությամբ տեղեկացանք, ականատես եղանք և հաստատեցինք հետևյալ իրողությունները.

Մայր Աթոռը ունի ճին սերունդի կողքին հասակ առած երիտասարդ, պատրաստված և նվիրված միաբանություն, որ նշանն է անոր կենսունակության և գրավականը ապագա բարգավաճման:

Մայր Աթոռի միաբանությունը վառ կպահե Ս. Լուսավորչի կանթեղը ամենօրյա պաշտամունքով, խորհրդակատարություններով և Բանին կենաց քարոզությամբ, ի Ս. Էջմիածին և ներքին թեմերու մեջ:

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը, որ կրաղկանա երեք դասարանական և երեք յսարանական բաժիններե, օժտված բարձրորակ ուսուցչական կազմով, լրիվ կկատարե իր կոչումը, 40 ուսանողներու և 10 սարկավագներու շամբելով կրոնական, ազգային առողջ դաստիարակություն և գանոնք պատրաստելով հոգևոր կոչման:

Տպարանի շենքը, վերանորոգված վիճակով, արդեն իսկ ընդունած է կարևորագույն մասը տպագրական արդիական կազմածներու, նվերը Հյուսիսային

Ամերիկայի թեմի, որոնք պիտի սատարեն Ս. Էջմիածնի մշակութային և հոգևոր առաքելության ծաղկման և ծավալման:

Տիեզերական կյանքի ամենեն կարևոր ապացույցն է Ս. Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգումը ամբողջապես: Նմանապես վերաշինված են Ս. Հռիփսիմեի և Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցիները:

Գոհունակությամբ կնշենք, որ շինարարական այս ծրագիրը պիտի տարածվի յոթնամյա շրջանի մը վրա, պիտի ընդգրկե Հայաստանի և դրացի երկիրներու հայ եկեղեցիներն ու կարևորագույն սրբավայրերը:

Բոլոր թեմերը բարվոք և կանոնավոր հարաբերության մեջ են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ:

Ստորագրյալ եպիսկոպոսներս, սակայն, զավով անգրաղարձանք Անթիլիասի հերձվածին, որ Հայաստանյայց Ս. և Առաքելական Եկեղեցվո ծոցին մեջ բացված աննախընթացորեն տխուր պատկեր մը կպարզե, ընդդեմ աներ միության և բարգավաճման:

Մենք հույժ գնահատելի կգտնենք Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Հայաստանյայց եկեղեցվո մեջ անցանումներու առաջքը առնելու համար ցույց տված նախաձեռնությունը և կատարած հաշտարար ջանքերը:

Հաղորդ ենք Նորին Ս. Օծության հուզումներուն և վրդովմունքին՝ ի մասին Կիլիկիո Կաթողիկոսության շրջանակեն ներս հառաջ եկած տագնապին և Ս. Էջմիածնի արտասահմանյան կարգ մը թեմերուն Անթիլիասի կողմե հափշտակման համար կատարված հակականոնական փորձերուն:

Մեր սրտագին ողջույնն է և կոչը, որ Հայ եկեղեցվո բովանդակ պաշտոնեությունը, թեմական մարմիններն ու ամբողջ ժողովուրդը անխտիր, իրենց հավատարմությամբ և սիրալիր գործակցությամբ նեցուկ կանգնին Նորին Ս. Օծության՝ մեր Ս. Եկեղեցիին ներս միություն և համերաշխություն վերահաստատելու համար թափած անխոնջ ջանքերուն:

Եվ որովհետև Հայ Եկեղեցին և ժողովուրդը կկարոտին խաղաղ մթնոլորտի և շինարար աշխատանքի, մեր ջերմագին ողջույնն է և միահամուռ բաղձանքը, որ մեր Ս. Եկեղեցին և ժողովուրդը ապրին սիրով, համերաշխ և հոգևոր շինարարության մեջ:

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՅԱՆ
ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՐՈՒՆՅԱՆ
ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՅԱՆՅԱՆ
ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆ
ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ՍԵՐՈՎԲԵ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԶԱՐԴԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆ
ԵՂՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ
ՇԱՎԱՐՇ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆ
ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՂԱՋԱՐՅԱՆ
ԲԱԲԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ
ԿՈՄԻՏԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ
ՁԳՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՓՅՈՒՌՔԻՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՈՐԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Ամերիկայի Կենտրոնական վարչության նախագահ պր. Աշեքս Մանուկյանը, հանուն Հ. Բ. Ը. Միության շնորհավորելով Վեհափառ Հայրապետի հոբելյանը, իր հոկտեմբեր 6 թվակիր նամակում գրել է.

«...Ձերդ Ս. Օծության ծննդյան հիսներորդ և գահակալության երրորդ տարեդարձի համազգային հանդիսության առիթով կմատչիմ համբուրելու Ձերդ Վեհափառության Ս. Աջը, որդիական սիրով և հարգանքով կմատուցանեմ սրտագին շնորհավորություններս այս բերկրալի զույգ առիթներով՝ մաղթելով արեշատություն Ամենայն Հայոց Հայրապետին, հաստատություն նախամեծար Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և պայծառություն ու բարեկարգություն Հայաստանյայց Առաքելական Ուղղափառ Եկեղեցվոյ։

Վեհափա՛ռ Տեր. Ձեր գահակալությունը դժբախտաբար զուգադիպեցավ մեր Եկեղեցվո ներքին փոթորկալից մեկ շրջանին։ Սակայն ժամանակը պիտի սպիացնե ամեն վերք՝ շնորհիվ հայրական այն իմաստուն ջանքերուն, զորս ցարդ ի գործ դրիք՝ վառ պահելու համար Ս. Լուսավորչի պլպլուն կանթեղը՝ ներշնչելով Հավատք, Հույս և Սեր Ս. Եկեղեցվո վայրավատին ժողովուրդին։

Ձերդ Ս. Օծության այս առաջին երեք տարիներու գահակալությունը թեև կարճ միջոց մըն էր, բայց կատարված վիթխարի աշխատանքը և ձեռք բերված գովելի արդյունքը բաղմիցս երեք տարիներու կկարոտեին։

Իսկ Ձերդ Վեհափառության ծննդյան հիսներորդ տարեդարձը մեծապես կխանդավառե բոլորս նկատել այս սկզբնավորությունը մի երկրորդ 50 տարիներու քաջառողջ, կայտառ ու գործոն կյանքի, հորում Աստուծո օգնականությամբ մաղթենք, որ իրականանան Ձերդ Վեհափառության բոլոր երազները, գործադրվին բոլոր ձեռնարկները և ի վերջո վերահաստատվի բաղձալի միասնականությունը Հայաստանյայց Ս. Եկեղեցվո մեջ։

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Եվրոպայի Կենտրոնական հանձնաժողովի և Գործադիր ժողովի անունից ուղարկվել էր 26 սեպտեմբեր թվակիր հետևյալ շնորհավորական նամակը.

Վեհափա՛ռ Տեր.

Ձերդ Վեհափառության ծննդյան հիսներորդ և գահակալության երրորդ տարեդարձը, որ հանդիսավորապես կատնվի 12 հոկտեմբերին Ս. Էջմիածնի Մայր Աթոռի և անոր հավատարիմ բոլոր հայ եկեղեցիներու կողմե ի սիրտս աշխարհի, երջանիկ պատեհություն մըն է մեզի համար, ներկայացնելու մեր ջերմ շնորհավորությունները և բարեմաղթությունները։

Կեդրոնական հանձնաժողովս ուրախ է հաստատելով, որ Ձերդ Վեհափառության գահակալությունը նոր շրջան մը բացավ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո համար, հոգևոր վերազարթնումով և եկեղեցական շինարարությամբ։

Ձերդ Վեհափառության հովանավորությամբ, Ս. Էջմիածնի Ճեմարանը կհասցնե հոգևորականներու նոր սերունդ մը, և ներքին թեմերը կօժտվին եկեղեցական կազմակերպությամբ և հոգևոր առաջնորդներով, Ս. Էջմիածնի Մայր Տաճարի պատմական վանքերը կվերանորոգվին և հետզհետե ավելի թվով եկեղեցիներ կվերաբացվին, հուրախություն հավատացյալ հայ ժողովուրդին։ Այս արդյունքները ձեռք բերելով, Ձերդ Վեհափառությունը արժանավոր հաջորդը կհանդիսանա մեր բաղմերախտ հայրապետներուն։

Կմաղթենք, որ Ձերդ Վեհափառությունը ապրի շատ երկար տարիներ, որպեսզի ավելի ծավալ ստանան ցարդ դրսևորված արդ-

դյունքները իր եկեղեցվո պայծառության համար, և նորանոր գործերով պսակվին իր ազգանվեր ջանքերը, վստահ որ արտասահմանի հայ գաղութները սրտագին նվերներով զորավիգ պիտի ըլլան անոնց։ Հ. Ռ. Ը. Միությունը, ինչպես անցյալին, այսուհետև ևս պիտի չթերանա Ս. Էջմիածնի Մայր Աթոռին և անոր ազգընտիր Գահակալին հանդեպ իր հավատարմության և նվիրումին մեջ։

Եգիպտոսում հրատարակվող «Ջահակիր» պարբերաթերթի շուրջ հավաքված Եգիպտոսի հայ մտավորականության անունից պր. Հայկ Ժամկոչյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագրությանն ուղղած իր սեպտեմբեր 30 թվակիր նամակում գրել էր.

«Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի ծննդյան հիսնամյա և գահակալության երրորդ տարեդարձի հոբելյանին առթիվ, «Ջահակիր» եգիպտահայ պարբերաթերթի շուրջ հավաքված երեց և մանավանդ երիտասարդ մտավորականության կողմե կփութամ ներկայացնել, ձեր միջոցով ևս, շնորհավորություններ և որդիական անկեղծ մաղթանքներ։ Թող երկնավորը և Իր Միածին Որդին առողջություն և բեղուն գործունեություն շնորհեն մեր սիրելի Հայրապետին, որուն կոչումն ու դերը անհունորեն մեծ և պատմական կշիռ ունեցող հանգամանքներ են այս գորշ օրերուն։ Համայն Սփյուռքահայության ակնարկը դարձած է դեպի Ս. Էջմիածին և Սովետական Հայրենիքը, այնտեղ միայն տեսնելով մեր ազգին ապագային փրկությունը։ Առանց Հայրենիքին ու Ս. Էջմիածնին, մենք դատապարտված պիտի ըլլանք կորուստի։

Ու Վեհափառին հոբելյանը առիթ մը ևս կհանդիսանա այս անողոք ու վերջնական ճշմարտությունը փրկին անգամ շեշտելու սփյուռքահայ զանգվածներու գիտակցության մեջ և առ այդ գոտեպնդվելու դեպի նոր ուխտառություն, անտեղիտալի հավատքի և անխորտակելի հավատարմության համար, ի Ս. Էջմիածին և ի Մայր Աթոռ։

Կխնդրեմ, որ բարի ըլլաք եգիպտահայ մամուլի խորունկ ակնածանքները դուք ևս ներկայացնել Վեհափառ Հայրապետին, Իր հոբելյանի բարեբաստիկ եղելության առիթով։ Երկինք վարձատրե նաև Սովետական լայնախոհ և հոգածու իշխանությունները, որոնք ազատություն և կարելիություններ կշնորհեն հայության, իր հավատքին ծառայելու անվաշկանդ կերպով։ Հայությունը ապերախտ ժողովուրդ չէ և իր աշխատավոր զավակներուն, իր Եկեղեցիին, իր Կաթողիկոսին և բոլոր եկեղեցականներուն ընծայված այս բարեկամությունն ու պատիվը երբեք պիտի չմոռնա։

Կեցցե՛ ուրեմն մեր Վեհափառ Հոբելյարը...»

ՄԱՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՎԱԶԱՆԻ ԻԵԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԿԶՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 18-ին, շաբաթ օր, Մայր Աթոռում հոգևոր ուրախության և բերկրանքի տոն էր։

Վեհափառ Հայրապետի հոբելյանի երջանիկ առիթով, Մեծի Տանն Կիլիկիո ծերունազարդ Տեղապահ ամենապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոս Աջապահյանը, Կիլիկյան Աթոռի երիտասարդ և շնորհալի միաբան հոգեշնորհ Տ. Գևորգ աբեղա Կարպիսյանին և հոգեշնորհ Տ. Զավեն աբեղա Արզումանյանին, և նոյեմբերի 8-ին՝ հոգեշնորհ Տ. Գյուտ աբեղա Նագգաշյանին, շնորհեց մասնավոր վարդապետական գավազանի իշխանություն, Մայր Աթոռի միաբանության, Հոգևոր Ճեմարանի ուսանողության և հավատացյալների ներկայության, երեկոյան ժամերգությունից հետո։

Շնորհաբաշխությանն այդ նվիրական օրերին ուրախության արցունք կար բոլորի, և մանավանդ գերաշնորհ Տ. Խաչ արքեպիսկոպոսի աչքերում, այն խորունկ համոզմամբ, որ ամրապնդվում է Կիլիկյան օրինապահ միաբանությունը։ Ավելի քան մխիթարական և քաջալերիչ էր այն հանգամանքը, որ չեն մեռել Կիլիկյան Աթոռի դարավոր ավանդությունները, նախանձախնդրությունը, հավատարմությունն ու նվիրման ոգին, արդարության և իրավունքի պաշտպանությունը Կիլիկյան օրինապահ միաբանության երիտասարդ նոր սերնդի սրտերում, որոնք կոչվել են ժառանգորդներ լինելու Կիլիկյան հայրապետների և մեծանուն վարդապետների սուրբ վաստակով ձեռք բերված հոգևոր արժեքների, ավանդների։

Խաչ սրբազանի «Պահպանիչ»ով վերջանում է այս արտառուչ արարողությունը։ Ապա նա իր հայրական քաջալերական և խրատական խոսքն է ուղղում նորընծա վարդապետներին, որպեսզի նրանք միշտ պահեն ազգատուէր օրինադրությանցն հարցն մերոց՝ ողջամիտ վարդապետությամբ ըստ Հայաստանեայց Եկեղեցւոյ։

Վեհարանում Վեհափառ Հայրապետը հայրական գուրգուրանքով ընդունում է նորընծա վարդապետներին և Իր սուրբ ձեռքով նրանց կուրծքը զարդարում վարդապետական լանջախաչով, հորդորելով, որ հպարտությամբ և արժանավորությամբ կրեն Տիրոջ խաչը, և հավատարմությամբ ու սիրով ծառայեն Եկեղեցիին, Ազգին ու Հայրենիքին։

Հանուն նորընծաների, երախտագիտության և շնորհակալության խոսք է ասում հոգեշնորհ Տ. Գևորգ վարդապետ Կարպիսյանը։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է մեր նորընծա վարդապետներին, մաղթելով նրանց կարողություն և ուժ իրենց հետագա ազգային-եկեղեցական գործունեության ճանապարհին։

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԶԳՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

Նորապսակ Տ. Զգոն եպիսկոպոսը, ավանի անունով Ներսես, ծնվել է 1904 թվականին Վանի Քյոչանի գյուղում։ Նա իր նախնական կրթությունն ստանում է ծննդավայրի ծխական դպրոցում։ Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին կորցնում է իր հարազատներից շատերին և 1918—1922 թվականներին որպես որբ ընդունվում է նախ Բաղդադի Տարագրելոց, Բաքուբայի, Նահր-Օմարի և ապա Երուսաղեմի Արարատյան որբանոցները։

1922 թվականին ընդունվում է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանը։ 1927 թվականին հաջողությամբ ավարտում է Ժառանգավորաց վարժարանի դասարանական բաժնի քառամյա դասընթացը և սարկավագ է ձեռնադրվում Եղիշե Դուրյան պատրիարքից։

Սաղմոսական ուսանողության տարիներին ալքի է ընկնում իր աշխատասիրությամբ։ Աշակերտել է Դուրյան պատրիարքին և Բաբդեն եպիսկոպոս Կյուլեսերյանին (ապա աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո)։

1930 թվականին ավարտելով ընծայարանը, կուսակրոն քահանա է ձեռնադրվում լուսարարապետ Տ. Մեսրոպ եպիսկոպոս Նշանյանից և Ս. Աթոռից ներս կատարում է վանական-վարչական և ուսուցչական աշխատանքներ 1932—1937 թվականներին։

1937—1940 թվականներին վարում է Հարավային Ֆրանսիայի թեմի (Մարսել) առաջնորդական տեղապահի պաշտոնը։

1940 թվականին անցնում է Հյուսիսային Ամերիկա և որպես հոգևոր հովիվ պաշտոնավարում է Չիկագոյում, Նյու-Յորքում և Սան-Ֆրանցիսկոյում մինչև 1950 թվականը։

Ամերիկայում գտնված տարիներին Զգոն վարդապետը հետևում է Մգկորմիկ, Յունիքն պասիֆիկ սքուլ ավ ռելիջըն աստվածաբանական ճեմարանի դասընթացներին և վկայվում է որպես ամերիկյան աստվածաբանության, փիլիսոփայության, մանկավարժության և հոգեբանության։

1940—1943 թվականներին խմբագրում է Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց առաջնորդարանի պաշտոնաթերթ «Հայաստանյայց Եկեղեցի» ամսագիրը։

1943 թվականին Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանից ստանում է ծայրագույն վարդապետության աստիճան։

1952—1956 թվականներին նշանակվում է հոգևոր հովիվ հայոց Միլանոյի, որտեղից 1956 թվականին անցնում է Իրաք՝ որպես Հայրապետական պատվիրակ և ընտրվում առաջնորդ Իրաքի հայոց։

Զգոն ծայրագույն վարդապետը 1930 թվականից սկսյալ վանական-վարչական, ուսուցչական և հասարակական իր գործունեությանը զուգակցել է նաև գրական աշխատանքը։ Նա աշխատակցել է «Սիոն»-ին, «Հայաստանի կոչնակ»-ին։ Նրա գրչին են պատկանում մի շարք արժեքավոր կրոնական-աստվածաբանական տպված և անտիպ

հայերեն և անգլերեն ուսումնասիրություններ, ինչպես՝ «Սեր և ամուսնություն» (գործնական աստվածաբանություն, տպ. Վենետիկ 1954 թ.), անտիպ՝ «Հոգեշահության ճամար», «Քրիստոնեության վարդապետությունը», «Քրիստոնեական», «Ավետարանի շունչով» (քարոզներ), «Աստվածանց ուղիով», «Մարդը՝ Քրիստոնեական ըմբռնումով» և այլն։

Իրաքում նրա առաջնորդական պաշտոնավարության օրերին գլուխ է բերվել Բաղդադի Հայոց Մայր Եկեղեցու, ինչպես նաև նրա կողքին նոր առաջնորդարանի շինությունը և Սիմոն Ղարիբյանի բարերարությամբ կառուցված առաջնորդարանի տնտեսությունը ապահովող կառուցումը։ Կյուպենկյան հիմնարկության օգնության շնորհիվ զգալի թափ են առել նաև Բաղդադի, Բասրայի, Մուսուլի և Քերքուքի աղգային վարժարանների շինությունն ու ուսումնական մակարդակի բարձրացումը։

Նշելի է այն հուսադրիչ հանգամանքը, որ Զգոն վարդապետի առաջնորդության տարիներին Իրաքի հայությունը ապրում է հոգևոր և մտավոր կազմակերպվածության և վերելքի մի շրջան։ Զգոն վարդապետի գլխավորությամբ խմբագրվում են «Իրաքի հայոց անձնական իրավանց» և «Ապահովության հիմնադրման կանոններ»-ի նախագծերը։

1955 թվականի սեպտեմբերին Զգոն վարդապետը առաջին անգամ ուխտի է եկել Մայր Հայրենիք, իբրև Միլանոյի հոգևոր հովիվ։

1958 թվականի հոկտեմբերին նա մասնակցեց Վեհափառ Հայրապետի հոբելյանական հանդիսություններին և հոկտեմբերի 19-ին ձեռնադրվեց եպիսկոպոս ձեռամբ Ազգիս Վեհափառ Հայրապետի։

Զգոն սրբազանը մեր պատրաստված և հավատավոր հոգևորականներից է, լի եռանդով և հավատով, ծառայելու համար մեր Ս. Եկեղեցուն և ժողովրդին։ Նա գտնվում է իր ուժերի և գործունեության հասունության շրջանում։ Եկեղեցին և Ազգը նրանից սպասում են նորանոր ծառայություններ։

Սրտանց հաջողություն ենք մաղթում նորապսակ Զգոն սրբազանին՝ իր պատասխանատու պաշտոնավարության մեջ։

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳՆԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԵՐԵՃՅԱՆ



Նորապսակ Տ. Գնել եպիսկոպոսը ծնվել է 1915 թվականի դեկտեմբերին Կիլիկիայի Ադանա քաղաքում, Վանեցի ծնողներից։ Աշխարհական անունը եղել է Թովմաս։

Սրբազանի հոր՝ Հովսեփի՝ հորեղբորորդին է եղել Աղթամարի վերջին կաթողիկոս Խաչատուր Շիրոյանը։

Պատանի Թովմասը իր նախնական կրթությունն ստացել է Լավոդիկե քաղաքի (Սիրիա) հայոց Սրբոց Հակոբյանց ազգային վարժարանում։

1928 թվականին նա ընդունվում է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանը, որի քառամյա դասընթացը ավարտելով 1934 թվականին, Թորգոմ պատրիարքից ձեռնադրվում է սարկավագ։ 1937 թվականի հունիսին Հալեպի թեմի երրեմնի առաջնորդ Տ. Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմեյանից, Հալեպի Ս. Քառասնից մանկանց եկեղեցում, ձեռնադրվում է կուսակրոն քահանա, վերանվանվելով Տ. Գնել աբեղա, և ապա Հալեպի թեմին ենթակա մի շարք շրջաններում հովվական և տուգեշական պաշտոններ է վարում մինչև 1941 թվականը։ Նույն տարին ընդունվում է Կիլիկյան Կաթողիկոսության միաբանության շարքերը և Կաթողիկոսարանից ներս նշանակվում է կարևոր պաշտոնների՝ որպես տպարանի տեսուչ, Անթիլիասի Մայր Տաճարի դպրապետ, Դպրեվանքի ուսուցիչ և «Հասկ» ամսագրի խմբագրական կազմի անդամ և յուրովանն աշխատում է օգտակար լինել Կիլիկյան Աթոռին։

1942—1943 թվականներին հաճախում է նաև Բեյրութի Ամերիկյան համալսարանի Ս. Գրքի գրականության, Ընդհանուր Եկեղեցու պատմության և երաժշտության դասընթացներին։

1948 թվականին երջանկահիշատակ Տ. Գարեգին Կաթողիկոսից ստանում է ծայրագույն վարդապետի աստիճան։

1943 թվականից սկսյալ վարում է քարոզչական պաշտոն Բեյրութի հայոց Նոր Հաջըն թաղամասի Ս. Գեորգ եկեղեցում, միաժամանակ հայոց լեզու դասավանդելով Բեյրութի ազգային Սահակ-Մեսրոպյան վարժարանի վերին դասարաններում։

Հիշատակության արժանի են Գնել վարդապետի հատկապես Կիլիկյան Կաթողիկոսության տպարանի տեսչության տարիները։ Նրա ջանքերով և հսկողության ներքո հրատարակվում են Բարգեն աթոռակից Կաթողիկոսի «Անկյուրիո ձեռագրաց ցուցակ»-ը, Ստեփանոս Սյուենեցու «Մեկնութիւն լորից

Աւետարանչաց» և «Մեկնութիւն Եղեկիէլի» գործերը և մի շարք այլ արժեքաւոր հրատարակութիւններ։

Գերապատիվ Տ. Գնել եպիսկոպոսը Կիլիկիայեան Կաթողիկոսութեան օրինապահ միաբանութեան աչքի ընկնող անդամներից մեկն է, որպես էջմիածնասեր և հայրենասեր հոգևորական։

Գնել եպիսկոպոսը մեր պատրաստված հոգևորականներից մեկն է, գտնվում է իր ուժերի հատունության շրջանում և լի է եռանդով՝ ծառայելու մեր եկեղեցուն և հավատացեալ ժողովրդին։

Մեր բոլորի հավատն այն է, որ սրբազանը իր ապագա գործունեությամբ ևս կարդարացնի իր հավատացյալ ժողովրդի բարձր վստահությունը։

Շնորհավորելով Ներապատիվ Տ. Գնել եպիսկոպոսին, մաղթում ենք նրան հաջողություններ իր նոր և պատասխանատու կոչման մեջ։